ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 1171 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2.10-րդ ու 8.4-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման 4-րդ ու 5-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

Հավելված 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
հուլիսի 12-ի N 1171 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԱՍ Ի. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 8

ԳԼՈՒԽ 1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 9

1.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ 9

1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 15

1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 19

1.3.1. ԹԻՐԱԽԱՅԻՆ (ԲԱՐՁՐ) ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՍՑԵՆԱՐ 19

1.3.2. 2022-2024թթ. ՄԺԾԾ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՑԵՆԱՐ (ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ) 25

1.4. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 43

1.5. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ 46

1.6. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ 48

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ..... 51

2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ 51

2.2. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 53

2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 55

2.4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ 65

2.5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ 68

2.6. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ 72

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2022–2024ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 75

3.1. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 75

3.2. ՀՀ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ 76

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ 81

4.1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ 81

4.2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2022-2024ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 82

4.3. 2022-2024ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 83

4.4. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 90

4.5. 2022-2024ԹԹ ՄԺԾԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ 96

4.6. 2022-2024ԹԹ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ 97

ՄԱՍ II. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 98

ՀՀ 2022-2024ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 99

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ 99
2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 112
3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 115
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ 118
5. ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ 120
6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 122
7. ԷԿՈՆՈՄԻԿԱ 125
8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ 129
9. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ 132
10. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 135
11. ՖԻՆԱՆՍՆԵՐ 139
12. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 140
13. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ 140
14. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 142
15.ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 144
16. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ 145
17. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 147
18. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ 150
19. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 151
20. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 152
21. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ 154
22. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 156
22.1. ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 156
22.2. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ 157
22.3. ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ 158
22.4. ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ 161
22.5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 162
22.6. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ 163
22.7. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 164
22.8. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 165
22.9. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 167
22.10. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 167
22.11. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 169
22.12. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 171
22.13. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 174
22.14. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ 176

22.15. ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ 177

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 179

1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 181

2. ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ 221

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 222

4. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 230

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 234

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 257

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2022 թվականի բյուջետային գործընթացը մեկնարկել է տարեսկզբին: Գործող օրենսդրությամբ բյուջետային գործընթացը բավականաչափ կանոնակարգված է թե՛ բովանդակության և թե՛ ժամկետների առումով: Եվ ըստ այդմ՝ 2022 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում նախատեսված է 2022-2024 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի (այսուհետև՝ ՄԺԾԾ) հաստատումը, որը ներառում է նաև 2022 թվականի պետական բյուջեի նախագծի նախնական տարբերակը:

ՄԺԾԾ-ը եռամյա ժամանակահատվածի համար բացահայտում է կառավարության տնտեսական, հարկաբյուջետային, պարտքային և ոլորտային քաղաքականությունների հիմնական ուղղությունները, դրանց շրջանակում իրականացման ենթակա միջոցառումները՝ արտացոլելով վարվող պետական քաղաքականությունները: Վերջիններս ձևավորվում են հանրային պահանջով և կոչված են զարգացնելու երկրի հանրային կյանքը: Այդ առումով, անառարկելի է, որ պետական քաղաքականությունների հաջողությունը էականորեն կախված է դրանց իրականացմանը հանրության և բոլոր շահագրգիռ տնտեսական միավորների ներգրավվածության ու համագործակցության աստիճանից: Իսկ հանրության լայն շերտերի մասնակցությունը նախ, ԱԺ ընտրությունների ժամանակ իրենց քվեով քաղաքական իշխանության ձևավորման մանդատի տրամադրումն է և երկրորդ, ընտրությունների արդյունքում ձևավորված կառավարության ծրագրին որպես սեփականի վերաբերվելը: Եվ այսպիսի արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է, որպեսզի պետության (կառավարության) վարքագիծը լինի թափանցիկ և կանխատեսելի, որի ապահովմանն ուղղված միջոցառումներից է ՄԺԾԾ-ի հաստատումը և հանրայնացումը:

ՀՀ ներկա իրողությունն այն է, որ վերջերս տեղի է ունեցել հանրային կյանքի տեսակետից ամենանշանակալի իրադարձությունը՝ ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունները: Ընտրությունների արդյունքներով՝ իշխանություն ձևավորելու և ներկայացված նախընտրական ծրագիրն իրագործելու մանդատ է ստացել Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը: Կուսակցության նախընտրական ծրագրում նախանշված են առաջիկա հնգամյա ժամանակահատվածի համար թիրախային ուղենիշերը, որոնց հասնելուն է միտված լինելու առաջիկայում ձևավորվելիք կառավարության ծրագիրը: Գործող կարգավորումների համաձայն նորընտիր ԱԺ կձևավորի նոր կառավարություն և կհաստատի ՔՊ կուսակցության նախընտրական ծրագրի վրա խարսխված կառավարության ծրագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ ՀՀ ժողովրդի հավանությանն արժանացած նախընտրական քաղաքական ծրագրի իրագործման ելակետը ՀՀ ներկա իրավիճակն է, ՄԺԾԾ նախագծվել և հաստատվել է գործող կառավարության ծրագրի հիման վրա: Այսպիսի մոտեցումը հիմնավորվում է ինչպես իրավական տեսակետից, քանի որ դեռևս առկա չէ նոր կառավարության հաստատված ծրագիր, այնպես էլ՝ բովանդակային տեսակետից, քանի որ նոր կառավարության ծրագրի առկայությունը ձևական պայման չէ, այլ ճիշտ հակառակը՝ այն պետք է ամբողջությամբ համահունչ լինի քաղաքական մեծամասնության հանձնառություններին: Իսկ ինչ վերաբերում է քաղաքականությունների բյուջետավորմանը, ապա մեր երկրում գործող բյուջետային գործընթացը սահմանող կարգավորումները բավարար ճկուն են և որևէ պահի, ըստ անհրաժեշտության վերանայված քաղաքականությունները կարող են արտացոլվել բյուջեներում՝ ապահովելով հանրային կյանքի անընդհատության միջավայրում քաղաքական հանձնառությունների լավագույնս կատարումը:

Ըստ այդմ, ՄԺԾԾ հիմքում ընկած, կառավարության գործող ծրագրով նախանշված հիմնական ուղենիշը՝ Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսության կառուցումը, շարունակում է մնալ արդիական: Այդ ճանապարհին արձանագրվել են հետևյալ հիմնական խնդիրները՝ մարդկային ներուժի զարգացման և հուսալի ենթակառուցվածքների ձևավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև պետական կառավարման արդյունավետության բարձրացման ու տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրական հնարավորությունների համար նախադրյալների ստեղծումը: Մշտապես փոփոխվող արտաքին և ներքին մարտահրավերների միջավայրում՝ հենց այս առանցքային խնդիրների լուծմանն են միտված կառավարության լիազորությունների շրջանակում իրականացվող միջոցառումները:

Պետք է հաշվի առնել, որ նույնիսկ բնականոն համարվող ժամանակահատվածներում առկա են ծրագրերի և քաղաքականությունների հիմքում դրվող կանխատեսումների ռիսկեր, բայց դրանք էապես աճում են ճգնաժամերի ժամանակ, ինչպիսին դեռևս գնահատվում է համաշխարհային իրականությունը՝ կապված համավարակի ու դրանով պայմանավորված անորոշության բարձր աստիճանի հետ: Այդ առումով, ՄԺԾԾ կարևորագույն հատկանիշ է համարվում դրա իրատեսականությունը: Մյուս կողմից, ակնհայտ է նաև, որ արդարացված չի այն մոտեցումը, ըստ որի պետք է հնարավորինս ցածր նշաձող թիրախավորվի միջոցառումների իրականացման տեսակետից, որպեսզի նվազագույնի հասցվի իրականացման ռիսկը: Այս մոտեցումը խնդրահարույց է հատկապես հավակնոտ զարգացում ենթադրող նպատակադրումների իմաստով, հետևաբար, ճշմարտությունն այս երկու մոտեցումների հավասարակշռության կետում է:

Հարկ է նշել, որ ՄԺԾԾ-ում հիմնական գծերով ներկայացված է մակրոտնտեսական և հարկաբյուջետային քաղաքականությունների նկարագիրը, որն ընկած է արտահերթ ընտրություններում ժողովրդի մեծամասնության հավանությանն արժանացած՝ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական ծրագրի հիմքում: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ նշյալ քաղաքականություններն իրենց միջոցառումներով վերջնականացման կարիք ունեն, իսկ բյուջետային գործընթացը՝ անընդհատության, ՄԺԾԾ բյուջետային շրջանակը մշակված է՝ նվազագույնի հասցնելով հարկաբյուջետային և ֆինանսական կայունության անկառավարելի ռիսկերը: Ինչը նշանակում է, որ քաղաքական մեծամասնության նախընտրական ծրագրային դրույթների ապահովման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումները նյութական արտացոլում կգտնեն բյուջետային փաստաթղթերում: Այս ընթացքում պիտի որոշակիանա նաեւ Եվրոպական միության կողմից Հայաստանին 2.6 միլիարդ եվրոյի աջակցություն ցուցաբերելու մասին որոշումը, որի ազդեցությունները արտահայտված չեն ընթացիկ փաստաթղթում:

Ըստ այդմ ՄԺԾԾ 2022-2024թթ ընթացիկ ծախսերը նշված ժամանակահատվածում ծրագրավորվել են սահող հենքով (rolling baseline) բյուջետավորման սկզբունքով՝ հիմք ընդունելով 2020թ փաստացի, 2021թ ծրագրված ելակետային ցուցանիշները, որոնք ճշգրտվել են համապատասխան շահառուների, պահանջարկի գնահատված գործոններով, ինչպես նաև իրավական ակտերով ի հայտ եկած և կարգավորվող նոր դրույթներով:

2022-2024թթ ՄԺԾԾ փաստաթղթում առանձին հավելվածով ներկայացված են ռազմավարություններից բխող նախաձեռնությունները, որոնց առաջնահերթությունները՝ նոր կառավարության ծրագրի շրջանակում վերահաստատումից կամ վերանայումից հետո, հնարավոր կլինի իրականացնել հավելյալ ռեսուրսներ գեներացնելու ճանապահով:

Այդ առումով, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ թեև ՄԺԾԾ համար հիմք հանդիսացող քաղաքականությունները բովանդակային առումով կարող են վերանայվել, այդուհանդերձ՝ ՄԺԾԾ նախագծման գործընթացի տրամաբանությունը մշտապես կիրառելի է, քանի որ ՄԺԾԾ մշակումը շարունակական գործընթաց է և, ըստ էության, իրենից ներկայացնում է «քաղաքականությունների ձևակերպում - պլանավորում – բյուջետավորում» տրամաբանական ամբողջական շղթա:

Բացի վերոնշյալը, ՀՀ օրենդրությամբ նախատեսված հարկաբյուջետային կանոնների շրջանակում, ՀՀ կառավարությունը պարտավորություն ունի ՀՀ Ազգային ժողով և հանրությանը ներկայացնել՝ հնգամյա ժամանակահատվածում կառավարության պարտքի բեռը կառավարելիության ավելի բարձր աստիճանի տիրույթ տեղափոխելու վերաբերյալ ծրագիր, որը նույնպես սույն փաստաթղթի մաս է:

ՄԱՍ Ի. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Մակրոտնտեսական կանխատեսումներն իրականացրել է ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետև՝ ՀՀ ՖՆ)՝ կիրառելով տնտեսաչափական մոդելներ, ինչպես նաև առանձին շոկերի և հարկաբյուջետային միջոցառումների ազդեցությունների գնահատման համար՝ ՀՀ ՖՆ հարկաբյուջետային քաղաքականության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (The Fiscal Strategy Model: A Structural Framework for Fiscal Policy Analysis in Armenia) մոդելը[1]: Վերջիններիս համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ և արտաքին ֆինանսատնտեսական զարգացումները, Արցախյան պատերազմի տնտեսական հետևանքների վերաբերյալ ՀՀ ՖՆ գնահատականները, ինչպես նաև ՀՀ գործընկեր երկրների (միությունների) տնտեսական զարգացումների և հումքային ապրանքների համաշխարհային գների համար միջազգային հեղինակավոր կառույցների կողմից արված կանխատեսումները:

1.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ

- Ներկայումս աշխարհը դեռևս շարունակում է կրել համավարակի բացասական հետևանքները, սակայն դրանց աստիճանական չեզոքացման սպասումով: Արժույթի միջազգային հիմնադրամը (այսուհետև՝ ԱՄՀ) ապրիլին վերանայել է 2021 թվականի համաշխարհային տնտեսական աճի կանխատեսումը դեպի վերև՝ հաշվի առնելով ընթացիկ զարգացումները և տարվա հաջորդ ամիսներին տնտեսական ակտիվության աճի սպասումները: Վերջիններս ամրապնդվել են ի հաշիվ պատվաստանյութերի առկայության և որոշ խոշոր երկրներում 2021թ. համար հայտարարված լրացուցիչ օժանդակության միջոցառումների: ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունների համար կանխատեսվում է իրենց պոտենցիալ աճերից բարձր տնտեսական աճեր՝ նախանշելով վերականգման գործընթացը: Պատվաստանյութերը 2021թ. ամռանը լայնորեն մատչելի կլինեն զարգացած երկրներում և որոշ զարգացող երկրներում, իսկ մնացած երկրների մեծ մասում՝ 2022թ. երկրորդ կեսին: Մինչև 2022թ. ավարտը կանխատեսվում է, որ վարակի տարածումն ամենուր կնվազի:
- 2020թ. սկիզբ առած նոր տիպի կորոնավիրուսի համավարակի, ինչպես նաև սեպտեմբեր-նոյեմբերին սանձազերծված Արցախյան պատերազմի ազդեցություններով պայմանավորված ՀՀ տնտեսության բացասական զարգացումները շարունակվեցին նաև 2021թ. տարեսկզբին:

[1] *ՀՀ ֆինանսների նախարարության հարկաբյուջետային քաղաքականության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելը մշակվել է 2018-2020թթ. ընթացքում՝ ԱՄՀ կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակներում, Առավել մանրամասն տե՛ս ՀՀ կառավարության 2021թ. բյուջետային ուղերձ, Երևան 2020, էջ՝ 84, ներդիր 2:*

Համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունների մեղմմանն ու տնտեսության վերականգնմանն ուղղված կառավարության կողմից իրականացված և իրականացվող հարկաբյուջետային միջոցառումների, ինչպես նաև Համավարակի համաշխարհային ճգնաժամի աստիճանական հաղթահարման պայմաններում տնտեսական աճը 2021թ. կվերականգնվի և միջնաժամկետ հատվածում կմոտենա իր ներուժային մակարդակին՝ վերջինիս բարձրացման համար նախադրյալներ ձևավորելով:

- ՀՀ կառավարությունը միջնաժամկետ հատվածում թիրախավորում է միջինում առնվազն 7% տնտեսական կայուն աճը: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է ձևավորել ճանապարհային քարտեզ՝ համապատասխան միջոցառումների ծրագրով և դրա իրագործմամբ բեկում մտցնել ՀՀ տնտեսության զարգացման մեջ: Այդուհանդերձ, մինչ նշյալ միջոցառումների արդյունքների արձանագրումը, միջնաժամկետ ծախսերի ծրագրի բյուջետային շրջանակը նախագծված է մակրոտնտեսական կայունության համար կառավարելի ռիսկեր պարունակող՝ ՀՀ ներկա ներուժի գնահատականների հիման վրա:
- Տնտեսական ակտիվության և ներքին ու արտաքին պահանջարկների աստիճանական վերականգնման պայմաններում կանխատեսվում է, որ 2021թ. տեղի կունենա և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալների աճ: Հիմնականում դրամական փոխանցումների արագ վերականգմամբ պայմանավորված 2021թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կբարելավվի, իսկ միջնաժամկետ հորիզոնում կմոտենա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:
- 2021թ. ՀՀ Կառավարությունը կիրականացնի սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ նպատակ ունենալով չխաթարել տնտեսության վերականգնումը և ապահովել պարտքի բեռի աճի տեմպի դանդաղում, իսկ միջնաժամկետում՝ տնտեսության վերականգնմանը զուգահեռ հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի ՀՆԱ-ի մեջ պարտքի մակարդակի նվազեցմանը և կայունություն պահպանմանը, ինչպես նաև երկարաժամկետ տնտեսական աճի խթանմանը՝ շեշտադրվելով պետական ներդրումների մասնաբաժնի մեծացումը և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացումը:
- Կարճաժամկետ հատվածում ՀՀ կենտրոնական բանկը կշարունակի իրականացնել գնաճային սպասումների արագացման ռիսկերի չեզոքացմանն ուղղված դրամավարկային քաղաքականություն՝ միևնույն ժամանակ ապահովելով հնարավորին նպաստավոր պայմաններ ամբողջական պահանջարկի վերականգնման համար, իսկ միջնաժամկետ հատվածում գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու համար՝ ռիսկերի դրսևորման պարագայում պատրաստ է համապատասխանորեն արձագանքել:
- Պետք է նշել, որ համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը մեծապես կախված է COVID-19 համավարակի հաղթահարմանն ուղղված առողջապահական միջոցառումներից, աջակցության փաթեթներից և պատվաստումների ծրագրերից: Այս պայմաններում, ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ ՄԺԾԾ շրջանակում ՀՀ տնտեսական աճի կանխատեսումների համար ռիսկերը գնահատվում են հավասարակշռված:

Ստորև՝ Աղյուսկա 1.1-ում և 1.2-ում ներկայացված են թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենարի և ՄԺԾԾ (բյուջետային) մակրոտնտեսական շրջանակները բնութագրող հիմնական ցուցանիշների համեմատականները և ՄԺԾԾ մակրոտնտեսական շրջանակը:

Աղյուսակ 1.1. 2022-2024թթ. Թիրախային տնտեսական աճի սցենարի և ՄԺԾԾ (բյուջետային՝ ներառյալ 2022թ. պետական բյուջեի) հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների համեմատական

Տարեթիվ	2020	2021	2022		2023		2024	
	Փաստ	Բյուջետային սցենար	Թիրախային սցենար	Բյուջետային սցենար	Թիրախային սցենար	Բյուջետային սցենար	Թիրախային սցենար	Բյուջետային սցենար
1	2	3	4	5	6	7	8	9
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,181.7	6,880.2	7,707.6	7,570.8	8,584.9	8,171.1	9,553.1	8,835.4
Իրական ՀՆԱ աճ,%	-7.4	6.0	7.1	5.2	7.1	3.7	7.0	4.0
ՀՆԱ դեֆլյատոր, %	2.0	5.0	4.6	4.6	4.0	4.0	4.0	4.0
1 շնչին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար	4269	4561	5054	4964	5601	5331	6202	5736
Սպառում, % ՀՆԱ-ում	91.4	93.1	93.4	93.3	92.7	93.2	91.0	92.7
Հիմնական միջոցներում ներդրումներ, % ՀՆԱ-ում	16.6	16.5	17.7	17.0	18.6	17.1	19.4	17.4
Արտահանում, % ՀՆԱ-ում	30.2	33.4	37.4	35.3	40.9	36.8	43.8	37.8
Ներմուծում, % ՀՆԱ-ում	39.6	43.1	48.6	45.6	52.2	47.2	54.3	47.9

Աղյուսակ 1.2. 2022-2024թթ. ՄԺԾԾ (ներառյալ 2022թ. պետական բյուջեի) մակրոտնտեսական շրջանակ

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	**2018**	**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024**
	փաստ	**փաստ**	**փաստ**	**սպասում**	**ծրագիր**	**կանխ.**	**կանխ.**
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,017.0	6,543.3	6,181.7	6,880.2	7,570.8	8,171.1	8,835.4
Տնտեսական աճ, %	5.2	7.6	-7.4	6.0	5.2	3.7	4.0
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	2.8	1.0	2.0	5.0	4.6	4.0	4.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	1.8	0.7	3.7	5.2	4.0	4.0	4.0
Գնաճ (միջին), %	2.5	1.4	1.2	5.3	4.1	4.0	4.0
<u>ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %</u>							
Արդյունաբերություն	4.9	11.9	-1.7	4.9	6.0	4.3	4.4
Գյուղատնտեսություն	-6.9	-5.8	-4.1	3.1	2.5	2.3	2.5
Շինարարություն	0.6	6.5	-6.7	5.5	6.3	3.2	5.2
Ծառայություններ	9.1	10.0	-9.7	7.0	5.3	3.9	4.0
Զուտ հարկեր	8.0	7.1	-10.0	6.5	5.3	3.8	3.9
<u>ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %</u>							
Վերջնական սպառում	3.8	11.7	-10.1	7.7	6.0	3.8	3.6
Պետական	-3.0	12.9	15.2	9.2	-3.1	2.4	9.1
Մասնավոր	4.8	11.5	-13.9	7.4	8.0	4.1	2.5
Հիմնական միջոցներում ներդրումներ[2]	4.8	4.4	-8.6	5.8	8.2	4.5	5.4
Պետական	3.4	13.7	7.5	4.9	28.8	7.5	9.7
Մասնավոր	5.1	2.6	-12.0	6.0	3.0	3.5	4.0
Արտահանում	5.0	16.0	-32.4	7.0	12.7	9.0	7.1
Ներմուծում	13.3	11.6	-31.7	8.7	12.1	8.1	6.8
<u>Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար)</u>							
Ընթացիկ հաշիվ	-875.9	-1,002.3	-478.7	-281.3	-421.6	-556.9	-641.3
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-1,699.8	-1,794.8	-1,256.1	-1,388.9	-1,609.5	-1,740.7	-1,833.1
Արտահանում	4,941.7	5,718.1	3,762.6	4,446.8	5,112.6	5,727.1	6,322.7

[2] *Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019թ.-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:*

Փոփոխություն, %	12.1	15.7	-34.2	18.2	15.0	12.0	10.4
Ներմուծում	6,641.5	7,512.9	5,018.7	5,835.7	6,722.0	7,467.8	8,155.8
Փոփոխություն, %	17.5	13.1	-33.2	16.3	15.2	11.1	9.2
Դրամական փոխանցումներ	1,136.2	1,143.8	1,040.2	1,404.3	1,474.5	1,548.2	1,625.6
ՀՆԱ-ի նկատմամբ %							
Ընթացիկ հաշիվ	-7.0	-7.4	-3.8	-2.1	-2.9	-3.5	-3.8
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-13.6	-13.2	-9.9	-10.3	-10.9	-11.0	-10.8
Արտահանում	39.7	42.0	29.8	32.9	34.8	36.3	37.2
Ներմուծում	53.3	55.2	39.7	43.2	45.7	47.3	48.0
Դրամական փոխանցումներ	9.1	8.4	8.2	10.4	10.0	9.8	9.6

1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համաշխարհային տնտեսությունը՝ կորոնավիրուսի համավարակի (COVID-19) հետևանքով առաջացած խորը անկումից հետո, սկսել է արագ վերականգնվել: Համավարակը խաթարեց համաշխարհային տնտեսության բնականոն զարգացումն ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում՝ հանգեցնելով ամբողջ աշխարհում առողջապահական և տնտեսական ճգնաժամի: ԱՄՀ գնահատականներով 2020թ. համաշխարհային տնտեսական անկումը կազմել է 3.3%, իսկ ՀՀ հիմնական գործընկեր երկրներից ՌԴ-ում գրանցվել է 3.1% անկում, Եվրոգոտում 6.6%, ԱՄՆ-ում 3.5% և միայն Չինաստանի տնտեսությունն է գրանցել 2.3% աճ:

2021թ. առաջին եռամսյակում ՀՀ հիմնական գործընկեր երկրների մեծ մասում գրանցվել է տնտեսական աճ: Այսպես, 2021թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա համապատասխան եռամսյակի նկատմամբ ԱՄՆ տնտեսությունը գրանցել է 0.4% աճ, որին նպաստում են ունեցել իրականացված խթանող մակրոտնտեսական քաղաքականությունները և սահմանափակումների աստիճանական վերացումը, իսկ Չինաստանի տնտեսությունը գրանցել է 18.3% աճ: 2021թ. առաջին եռամսյակում Եվրոգոտու տնտեսությունը ունեցել է 1.3% անկում՝ սահմանափակումների որոշակի խստացման պայմաններում, իսկ ՌԴ տնտեսությունը գրանցել է 0.7% անկում[3]:

<u>Կանխատեսում:</u> ԱՄՀ ապրիլ ամսվա կանխատեսումների համաձայն 2021թ. ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսություններում տեղի կունենան վերականգման գործընթացներ՝ պայմանավորված կորոնավիրուսի ճգնաժամին հակազդելու նպատակով լայնածավալ հարկաբյուջետային միջոցառումների իրականացմամբ, դրամավարկային պայմանների մեղմացմամբ, սահմանափակումների աստիճանական վերացմամբ, համավարակի հաղթահարման նպատակով պատվաստանյութերի զանգվածային կիրառմամբ և հանքահումքային ապրանքների միջազգային գների բարձրացմամբ: 2021թ. ՌԴ-ում կանխատեսվում է 3.8%, Եվրոգոտում՝ 4.4, ԱՄՆ-ում՝ 6.4, իսկ Չինաստանում 8.4% աճ: ԱՄՀ կանխատեսումների համաձայն 2022թ. համաշխարհային և ՀՀ գործընկեր երկրների տնտեսություններում հիմնականում կգրանցվեն ավելի բարձ տնտեսական աճեր, քան ներուժային աճերը և նախաճգնաժամային 2019թ. աճերը: Ընդ որում, ինչպես համաշխարհային տնտեսության, այնպես էլ ՀՀ հիմնական գործընկեր երկրների 2021 և 2022թթ. ապրիլյան կանխատեսումները՝ հունվարի[4] կանխատեսումների համեմատ վերանայվել են հիմնականում դեպի վերև (ավելի մանրամասն տե՛ս Աղյուսակ 1.2 -ում), պայմանավորված ընթացիկ տնտեսական զարգացումներով: Այնուամենայնիվ, սպասվում է, որ միայն 2022թ. վերջում տեղի կունենա համաշխարհային տնտեսության վերականգնում, այն էլ նոր՝ նախաճգնաժամային մակարդակից ցածր ներուժային

[3] Աղբյուրը՝ ԱՄՆ առևտրի դեպարտամենտի տնտեսական վերլուծությունների բյուրո, Չինաստանի վիճակագրության ազգային բյուրո, Եվրոստատ և ՌԴ պետական վիճակագրական ծառայություն:

[4] Այս ՄԺԾԾ կանխատեսումները հիմնված են ապրիլի կանխատեսումների վրա: Առավել մանրամասն տես 1.4 բաժնում:

մակարդակի պայմաններում, իսկ գործընկեր երկրներից (միություններից) ԵՄ-ը կվերականգնվի 2022թ. հետո:

Աղյուսակ 1.3. ԱՄՀ կանխատեսումներ

	2020	2021 թ.-ի կանխատեսում						2022թ.-ի կանխատեսում	
	Փաստ	2020 Հունվ.	2020 Ապրիլ	2020 Հունիս	2020 Հոկտ.	2021 Հունվ.	2021 Ապրիլ	2021 Հունվ.	2021 Ապրիլ
Աշխարհի տնտեսական աճ, %	-3.3	3.4	5.8	5.4	5.2	5.5	6.0	4.2	4.4
ՌԴ	-3.1	2	3.5	4.1	2.8	3.0	3.8	3.9	3.8
Եվրոգոտի	-6.6	1.4	4.7	6.0	5.2	4.2	4.4	3.6	3.8
Չինաստան	2.3	5.8	9.2	8.2	8.2	8.1	8.4	5.6	5.6
ԱՄՆ	-3.5	1.7	4.7	4.5	3.1	5.1	6.4	2.5	3.5
Համաշխարհային առևտրի աճ, %	-8.5	3.7	8.4	8.0	8.3	8.1	8.4	6.3	6.5

Աղբյուրը՝ ԱՄՀ «World Economic Outlook»

Հումքային ապրանքների համաշխարհային գները կտրուկ աճում են: Համավարակով պայմանավորված ամբողջ աշխարհում պահանջարկի անկումը, անորոշության բարձրացումը և նավթի շուկայում հիմնական խաղացողների միջև տարաձայնությունները 2020թ. հանգեցրել են նավթի միջազգային գների շուրջ 34% նվազման, մինչդեռ պղնձի միջազգային գները, պայմանավորված երկրորդ կիսամյակի զարգացումներով, աճել են 2.7%-ով:

2021թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պղնձի միջազգային շուկայում գներն աճել են 65.5%-ով, ինչին նպաստել է Չինաստանի բարձր տնտեսական ակտիվությունը, իսկ նավթի միջազգային գները 2021թ. առաջին կիսամյակում աճել են 57.6%-ով՝ հիմնականում համաշխարհային պահանջարկի վերականգնմամբ պայմանավորված:

«Բլումբերգ» միջազգային հեղինակավոր կազմակերպությունը՝ իր փետրվարի կանխատեսումները մայիսին[5] վերանայել է դեպի վերև: Մասնավորապես, 2021թ. նավթի և պղնձի բորսային գները կաճեն շուրջ 57%-ով, իսկ 2022թ. նավթի գները կգրանցեն թույլ անկում (2.9%), իսկ պղնձի գները՝ թույլ աճ (2.6%):

[5] *Այս ՄԺԾԾ կանխատեսումները հիմնված են մայիսի կանխատեսումների վրա: Առավել մանրամասն տես 1.4 բաժնում:*

Զարգացող երկրներում ազգային արժույթները թուլացել են, իսկ երկրների ռիսկի հավելավճարները՝ որոշակի կտրուկ բարձրացումից հետո նվազել են և կայունացել: Համավարակն իր բացասական ազդեցությունն է թողել նաև միջազգային ֆինանսական շուկաների վրա, երկրների միջև առևտրային սահմանափակումները, ներդրումային միջավայրի բարձր անորոշությունը թուլացրել են զարգացող երկրների ազգային արժույթները, երկրների ռիսկի հավելավճարներն՝ անցած տարվա կտրուկ բարձրացումից հետո նվազել են և կայունացել[6]:

Միջազգային տնտեսական և ֆինանսական զարգացումները և կանխատեսումները

Գծապատկեր 1.1. Համաշխարհային խոր անկումից հետո տնտեսությունները վերականգնվում են (տնտեսական աճեր, %)



Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.2. Հումքային ապրանքների գների դինամիկան



Աղբյուրը՝ կանխատեսումները ըստ Բլումբերգի

Գծապատկեր 1.3. Համաշխարհային առևտուրը վերականգնվում է



Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.4. Զարգացող երկրներում ազգային արժույթները դոլարի նկատմամբ թուլացել են7



Աղբյուրը՝ Բլումբերգ, ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

---

[6] *ՀՀ երկրի ռիսկի հավելավճարը՝ կորոնավիրուսի առաջին ալիքի ազդեցության որոշակի կայունացումից հետո, 2020թ. սեպտեմբերի 28–ից սկսել է բարձրանալ՝ պայմանավորված Արցախյան պատերազմական գործողություններով, դեկտեմբեր ամսից սկսել է կայունանալ, սակայն ավելի բարձր մակարդակում:*

[7] *Դոլարի ինդեքսը հաշվարկվում է որպես կշռված երկրաչափական միջին՝ հետևյալ արժույթների նկատմամբ. Եվրո, Ճապոնական յեն, Բրիտանական ֆունտ, Կանադական դոլար, Շվեդական կրոն, Շվեյցարական ֆրանկ.*

Գծապատկեր 1.5. Բաժնետոմսերի միջազգային շուկան վերականգնվել է



Աղբյուրը՝ Բլումբերգ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.6. Զարգացող երկրներում ռիսկի հավելավճարները[8] կայունացել են



Աղբյուրը՝ Բլումբերգ

Առողջապահական և տնտեսական ճգնաժամին հակազդելու համար աշխարհում Կառավարությունները և Կենտրոնական բանկերը ավելի «ագրեսիվ» են խթանել տնտեսություններին, քան իրականացրել են համաշխարհային ֆինանսական ճգնաճամի ժամանակ: COVID-19 համարավարակի հետևանքները հաղթահարելու համար հարկաբյուջետային քաղաքականությունը առանցքային դերակատարում ունի: Ընդհանուր առմամբ, համավարակին հակազդելու համար մշակված հարկաբյուջետային փաթեթներն աշխարհի մակարդակով գնահատվում են 16 տրիլիոն դոլար (վերաբերում է ինչպես 2020, այնպես էլ 2021թ. համար նախատեսված միջոցառումներին)[9]: Վերջինից 10 տրիլիոնը վերաբերում է ծախսային և հարկային միջոցառումներին (բյուջեի վրա ուղղակի ազդեցություն ունեցող), իսկ 6 տրիլիոնը՝ պետական վարկերի, կապիտալի ներարկումների և վարկային երաշխիքների տրամադրմանը: Կենտրոնական բանկերը ևս խթանող դրամավարկային քաղաքականությամբ (տոկոսադրույքների նվազեցում և ֆինանսական շուկայից ակտիվների ձեռք բերման աննախադեպ ծրագրերի իրականացում) հակազդել են համավարակի տարածման տնտեսական ազդեցություններին:

Խթանող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում 2020թ. աշխարհում գրանցվել է պետական բյուջեի պակասուրդի և պարտքի բեռի էական աճ: 2021թ. սպասվող վերականգնման պայմաններում Կառավարությունները սկսելու են իրականացնել հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ պետական պարտքի բեռի աճը մեղմելու և հետագայում կայունացնելու նպատակադրմամբ:

---

[8] *Երկրի ռիսկի հավելավճարները հաշվարկված են որպես փվյալ երկրի եվրոպարտատոմսերի (դոլարային արժույթով) և ԱՄՆ համապատասխան ժամկետայնությամբ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունների տարբերություն (պարտատոմսերի մարման ժամկետները նշված են երկրների անվանումների կողքը՝ փակագծերում):*

[9] *2021թ. մարտի 17-ի դրությամբ: Աղբյուրը՝ IMF Fiscal Monitor April 2021.* https://www.imf.org/en/Publications/FM/Issues/2021/03/29/fiscal-monitor-april-2021:

Գծապատկեր 1.7. Համաշխարհային տնտեսության և հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը (% ՀՆԱ-ում) ճգնաժամերի և հաջորդող տարիներին







Աղբյուրը՝ ԱՄՀ, 2021թ. կանխատեսում:

1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.3.1. ԹԻՐԱԽԱՅԻՆ (ԲԱՐՁՐ) ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՍՑԵՆԱՐ

ՀՀ կառավարությունը նպատակադրում է հասնել միջինում առնվազն 7% տնտեսական աճի: Հաշվի առնելով համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքով ՀՀ ներուժային տնտեսական աճի նվազումը՝ այդ աճին հնարավոր է հասնել միայն համապատասխան քաղաքականությունների և միջոցառումների միջոցով լրացուցիչ նշանակալի ջանքեր ներդնելու իրատեսական ճանապահով:

Այդ առումով, սույն բաժնում նկարագրվում է 2022-2026թթ. տնտեսության ներուժի աստիճանական բարձրացման և ավելի բարձր տնտեսական աճի ապահովման մակրոտնտեսական սցենարը: Վերջինս առաջիկա 5 տարիների համար նախանշում է առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների ուղենշային այն մեծությունները, որոնց թիրախավորման դեպքում հնարավոր կլինի ապահովել ՀՀ տնտեսության ավելի արագ տեմպերով զարգացումը: Անհրաժեշտ է նշել, որ այս սցենարը և դրանում ներառված առանցքային ուղենշային ցուցանիշները կարող են ենթարկվել որոշակի փոփոխությունների՝ հաշվի առնելով նախատեսվող քննարկումների արդյունքում ձևավորվելիք տնտեսական քաղաքականության հստակ միջոցառումները և դրանց հնարավոր ազդեցությունները:

<u>Տնտեսական աճ:</u> 2020թ. COVID-19 համավարակի հետևանքով աշխարհի բոլոր տնտեսությունները, այդ թվում՝ ՀՀ տնտեսությունը կրեցին մեծ վնասներ: Իսկ ՀՀ

տնտեսությունը ենթարկվեց նաև երկրորդ՝ Արցախյան պատերազմի ցնցմանը: 2020թ. Համաշխարհային տնտեսությունն իրական արտահայտությամբ նվազեց 3.3%-ով, իսկ ՀՀ հիմնական գործընկեր երկրներից Եվրոգոտում անկումը կազմեց 6.6%, ՌԴ-ում՝ 3.1%, ԱՄՆ-ում՝ 3.5% և միայն Չինաստանի տնտեսությունը գրանցեց 2.3% տնտեսական աճ: ՀՀ տնտեսական անկումը եղավ ավելի խորը՝ 7.4%:

Եվ չնայած 2021թ. ինչպես ՀՀ հիմնական գործընկեր երկրները, այնպես էլ ՀՀ-ն թևակոխել են տնտեսական վերականգման ժամանակաշրջան, համավարակը և Արցախյան պատերազմը սահմանափակել են ՀՀ տնտեսության ներուժը՝ թողնելով միջնաժամկետ «սպիներ»: Այս պայմաններում գնահատվում է, որ ՀՀ տնտեսության ներուժային աճը նախկին 4-5% գնահատված միջակայքից նվազել է՝ հասնելով 3-4% միջակայքի:

Այդուհանդերձ, ինչպես բոլոր ճգնաժամերը, այս ճգնաժամը նույնպես ևս մեկ անգամ ստիպեց վերանայելու, վերաիմաստավորելու ՀՀ-ում տնտեսական, մակրոտնտեսական և կառուցվածքային քաղաքականությունների ուղղությունները և իրականացման մեխանիզմները, ինչպես նաև որոնելու և բացահայտելու տնտեսական նոր հնարավորություններ: **Այս համատեքստում 2022-2026թթ. համար ՀՀ կառավարությունը թիրախավորում/նպատակադրում է ապահովել տարեկան միջինում առնվազն 7.0% տնտեսական աճ:** Այսպիսի բարձր աճերի հասնելու համար ապագա տարիներին ՀՀ տնտեսությունը պետք է զարգանա ՀՀ կառավարության գործող ծրագրով նախանշված առաջարկի վրա հիմնված տնտեսական աճի մոդելով (որն իր կենսունակությունն ապացուցել է աշխարհի բազմաթիվ երկրներում), որտեղ տնտեսական աճի առանցքային շարժիչը պետք է լինի արտահանելի հատվածը և արտահանումը (export-led growth model):

<u>Ներդրումներ և արտադրողականություն:</u> Միջնաժամկետում (2022-2026թթ.) միջինում 7.0% տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է շարունակաբար բարձրացնել տնտեսության ներուժը՝ ինչն իր հերթին կբարձրացնի տնտեսության ներուժային աճը և կհաստատվի նոր՝ առավել բարձր մակարդակում: Վերջինիս ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ ներդրումային քաղաքականություն՝ ներդրումներն ուղղելով տնտեսության արտահանելի հատված, դեպի տեխնոլոգիաներ և ենթակառուցվածքներ, ապահովելով կապիտալի բարձր արտադրողականություն: **Որդեգրված նմանատիպ ներդրումային քաղաքականության պայմաններում միջնաժամկետում 7.0% տնտեսական աճի ապահովման համար անհաժեշտ է հիմնական միջոցներում ներդրումների (և՛ մասնավոր, և՛ պետական) տարեկան միջինում 12.8% իրական աճ (տարեկան լրացուցիչ միջինում շուրջ 280 մլրդ դրամ), ինչը հիմնական միջոցների կշիռը ՀՆԱ-ում 2021թ. համեմատ 2026թ.-ին կբարձրացնի շուրջ 5 տոկոսային կետով:**

Բարձր տնտեսական աճի ապահովման համար կարևոր նախադրյալ է աշխատանքի և կապիտալի արտադրողականության բարձրացումը, ինչը հնարավոր է իրականացնել նոր տեխնոլոգիական լուծումների կիրառմամբ, գործարար և ներդրումային միջավայրի բարելավմամբ, աշխատուժի որակի բարձրացման և կրթական միջոցառումների իրականացմամբ: **Միջնաժամկետում 7.0% տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է միջինում 5.3% ընդհանուր գործոնային արտադրողականության աճ:**

Գծապատկեր 1.8. Տնտեսության ճյուղերի նպաստումները ՀՆԱ-ին (տ.կ.)



Գծապատկեր 1.9. Ծախսային բաղադրիչների նպաստումները ՀՆԱ-ին (տ.կ.)



Գծապատկեր 1.10. Տնտեսության ճյուղերի կշիռները ՀՆԱ-ում (%)



Գծապատկեր 1.11. Ծախսային բաղադրիչների կշիռները ՀՆԱ-ում (%)



Գծապատկեր 1.12. Անհրաժեշտ լրացուցիչ ներդրումներ հիմնական միջոցներում (մլրդ դրամ)



Գծապատկեր 1.13. Հիմնական միջոցներում ներդրումների կշիռը ՀՆԱ-ում (%)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ, գնահատականներ և կանխատեսումներ

<u>Արտահանելի հատված և արտահանում:</u> Բարձր տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է արտահանման տեմպերի արագացում ի հաշիվ ոչ հումքային բարձր ավելացված արժեք ստեղծող ապրանքատեսակների և արտահանելի ծառայությունների: Արտաքին հատվածի զարգացումներն արտահանմանն ուղղված բարեփոխումների ներքո էապես կբարելավվեն: Այսպես, ներդրումների բարձր աճին կհաջորդեն կանխատեսվող հորիզոնում ապրանքների և ծառայությունների արտահանման ավելի բարձր աճերը: Այս զարգացումները կարտացոլեն տնտեսության արտահանելի հատվածի արտադրողական ճյուղերի էական բարելավման ազդեցությունը: Ընդ որում՝ կապահովվի նաև ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման մակարդակի բարձրացումը: Այսպես, բարձր տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է տարեկան միջինում արտահանման 16.5% և արդյունաբերության 8.3% իրական աճեր, ինչը 2026թ.-ին 2021թ. համեմատ կբարելավի արտահանման մակարդակը ՀՆԱ-ում 16.4%-ային կետով:

Գծապատկեր 1.14. Արդյունաբերությունը և արտահանումը 2022-2026թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>Հարկաբյուջետային քաղաքականություն:</u> Հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է միտված լինի կառավարության պարտքի բեռի նվազեցմանը և երկարաժամկետ տնտեսական աճի խթանմանը: Բարձր տնտեսական աճի պայմաններում նախատեսվում է սահուն կերպով նվազեցնել կառավարության պարտքի բեռը՝ մինչև 2026 թվականը հասցնելով այն ՀՆԱ-ի 52.1%-ին: Հարկաբյուջետային կանոններով սահմանված սահմանային շեմից՝ 60%-ից շուրջ 8 տոկոսային կետով պարտքի բեռի նվազեցումը հնարավորություն կտա ստեղծել «հարկաբյուջետային տարածք» կամ կուտակել հնարավոր շոկերին արձագանքելու համար կենսական նշանակություն ունեցող դիմադրողականության անհրաժեշտ պաշար:

Գծապատկեր 1.15. Բարձր տնտեսական աճին նպաստող և հարկաբյուջետային կայունություն ապահովող հարկաբյուջետային քաղաքականության առաջնահերթությունները



Հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացումն ապահովելու համար նախատեսվում է նվազեցնել պետական բյուջեի պակասուրդը, որը կանխատեսվող ժամանակահատվածի վերջում կկայունանա ՀՆԱ-ի 2.5%-ի շուրջ:

Գծապատկեր 1.16. Պետական բյուջեի պակասուրդը և կառավարության պարտքը 2022-2026թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Բարձր տնտեսական աճի պայմաններում միջնաժամկետում ակնկալվում է պետական բյուջեի եկամուտների աճ, որոնք 2024 թվականին կկազմեն կանխատեսվող ՀՆԱ-ի 25.4%-ը, իսկ 2026թ.՝ 26.6%: Հաշվի առնելով առնվազն 3.6% հարկային ճեղքի առկայությունը՝ հարկային վարչարարության լրացուցիչ ջանքի ներդրման միջոցով 2022-2026թթ. անհրաժեշտ է նախատեսել

հարկային եկամուտների բարելավում ՀՆԱ-ի նկատմամբ տարեկան միջինում շուրջ 0.7 տոկոսային կետով՝ 2024թ. հասցնելով 24.7%-ի, իսկ 2026թ.՝ 25.9%-ի: Եթե դրան հնարավոր չլինի հասնել վարչարարության ջանքերով, ապա անհրաժեշտ կլինի իրականացնել տնտեսական աճը չխաթարող հարկային քաղաքականության ճեղքի նվազմանն ուղղված միջոցառումներ: Բարձր տնտեսական աճի տեմպերի պայմաններում լրացուցիչ հարկային եկամուտների հավաքագրումը հնարավորություն կընձեռի ավելի մեծ ռեսուրսներ հատկացնել երկարաժամկետ տնտեսական աճը խթանող կապիտալ ծախսեր իրականացնելու համար:

Միջնաժամկետ կանխատեսվող հորիզոնում նախատեսվում է իրականացնել պետական բյուջեի ծախսերի կառուցվածքի բարելավման քաղաքականություն, ինչի արդյունքում պետական բյուջեի կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում զգալիորեն կաճի, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի (առանց տոկոսավճարների) կշիռը՝ կպահպանվի նույն մակարդակում: Այսպես՝ տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովմանը նպաստելու նպատակով, նախատեսվում է 2022-2026թթ. բարձրացնել կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում՝ 2024թ. հասցնելով շուրջ 4.8%-ի, իսկ մինչև 2026թ.՝ 6.1%: Ընթացիկ առաջնային ծախսերի գծով նախատեսվում է պահպանել ՀՆԱ-ի նկատմամբ կայուն մակարդակ՝ 2022-2026 թվականներին ապահովելով ընթացիկ առաջնային ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության կայունացումը 20%-ի շուրջ: Վերջինս սակայն, ենթադրում է հարկաբյուջետային կանոններով նախատեսվածից ավել ընթացիկ ծախսերի իրականացում, քանի որ հարկաբյուջետային կանոններին համապատասխան հաշվարկված ընթացիկ առաջնային ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կունենան նվազող ուղղություն: Հետևաբար, այս սցենարի իրականացման համար, անհրաժեշտ է որոշակի փոփոխություններ կատարել հարկաբյուջետային կանոնների օրենսդրական կարգավորումներում՝ հնարավորություն ստեղծելով տնտեսական բարձր աճի և բարձր հարկային եկամուտների պայմաններում ավելացնել ընթացիկ ծախսերի կազմում տնտեսության ներուժի և ներուժային տնտեսական աճի բարձրացմանը նպաստող ծախսերը (կրթություն, առողջապահություն, պաշտպանությանն ուղղված ծախսեր և այլն):

Գծապատկեր 1.17. Պետական բյուջեի հարկային եկամուտները և ծախսերը 2022-2026 թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Այսպիսով, թիրախային տնտեսական կայուն աճի կանխատեսումների շրջանակում միջոցառումների իրականացման արդյունքում նախատեսվում է ապահովել ՀՀ տնտեսության կայուն առաջընթացը և մրցունակության բարձրացումը՝ բարելավելով տնտեսության կառուցվածքը ի օգուտ արտահանելի ճյուղերի: Ընդ որում՝ տնտեսության ներուժի բարձրացումը և աճի տեմպերի արագացումը կապահովվի ի հաշիվ ներդրումների բարձր աճի, արտահանման աճի արագացման, պետական բյուջեից ենթակառուցվածքներում կապիտալ ծախսերի ավելացման և կառուցվածքային բարեփոխումների արդյունքում ակնկալվող արտադրողականության աճի:

Ինչ վերաբերում է վերոնշյալ կանխատեսումների համատեքստում ակնկալվող լրացուցիչ բյուջետային հնարավորություններին, ապա դրանք նախատեսվում է իրացնել առաջացման ժամանակ՝ բյուջետային հարաբերությունները կարգավորող իրավական դաշտի պահանջներին համապատասխան:

1.3.2. 2022-2024թթ. ՄԺԾԾ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՑԵՆԱՐ (ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ)

ՀՆԱ և տնտեսական աճ

2018-2019թթ. Հայաստանի տնտեսությունը բնութագրվել է տնտեսական աճի բարձր ցուցանիշներով՝ միջինում գրանցելով 6.4% (2019թ.-ին՝ 7.6%) իրական աճ, սակայն կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցություններով պայմանավորված 2020թ. գրանցվեց 7.4% տնտեսական անկում: 2018-2019թթ. տնտեսական աճին հիմնականում նպաստել են ծառայությունների և արդյունաբերության ճյուղերը՝ միջինում 4.8 և 1.5 տոկոսային կետերով: Պահանջարկի տեսանկյունից աճին նպաստել է ներքին պահանջարկը, ինչը պայմանվորված է եղել հիմնականում վերջնական սպառման (հատկապես՝ մասնավոր

սպառման) աճով: Նշված զարգացումները շարունակվեցին նաև 2020թ. առաջին եռամսյակի ընթացքում, սակայն, 2020թ. մարտի 1-ից սկիզբ առած Կորոնավիրուսի համավարակի բացասական ազդեցություններով պայմանավորված, 2020թ. երկրորդ եռամսյակից տնտեսական աճը վերափոխվեց տնտեսական անկման՝ իր վրա կրելով նաև սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունները:

Կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունները շարունակվեցին նաև 2021թ. տարեսկզբին, սակայն մարտ ամսից արձանագրվեցին տնտեսական ակտիվության վերականգման միտումներ՝ պայմանավորված կիրառված սահմանափակումների վերացմամբ[10], ներքին պահանջարկի վերականգնմամբ, 2020թ. իրականացված խթանող մակրոտնտեսական քաղաքականություններով և 2021թ. շարունակվող խթանող հարկաբյուջետային քաղաքականությամբ: Արդյունքում 2021թ. առաջին եռամսյակում գրանցվեց ՀՆԱ-ի 3.3% իրական նվազում՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների նվազմամբ (նպաստումը՝ 2.2 տոկոսային կետ): Իսկ շինարարության և գյուղատնտեսության ճյուղերում արձանագրված աճերը հակազդեցին ՀՆԱ-ի նվազմանը (նպաստումը՝ յուրաքանչյուրը 0.1 տոկոսային կետ):

Գծապատկեր 1.18. ՀՆԱ աճ (%) և ճյուղերի նպաստումները ՀՆԱ աճին (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.19. ՀՆԱ աճ (%) և պահանջարկի բաղադրիչների նպաստումները ՀՆԱ աճին (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Չնայած հունվար-փետրվար ամիսների բացասական զարգացումներին և կորոնավիրուսի երրորդ ալիքին՝ մարտ ամսից տնտեսության բոլոր ճյուղերը սկսեցին վերականգնվել, իսկ մարտ-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ գրանցվեց տնտեսական ակտիվության (ՏԱՑ) աճ: Արդյունքում, 2021թ. հունվար-մայիսին արձանագրվեց տնտեսական ակտիվության 4.3% աճ: Տնտեսական ակտիվության աճը պայմանավորված է եղել հիմնականում

[10] Կորոնավիրուսի կանխարգելման նպատակով տնտեսական գործունեության որոշ տեսակների նկատմամբ սահմանափակումները սկսել են կիրառվել 2020թ. մարտի 16-ից, որոնք սկսած ապրիլի 13-ից սկսեցին աստիճանաբար հանվել և արդեն մայիսի 18-ից տնտեսական գործունեության բոլոր տեսակների գործունեությունը հիմնականում թույլատրվեց: Պահպանված որոշ սահմանափակումներ ամբողջությամբ հանվեցին հաջորդող մի քանի ամիսների ընթացքում: Առավել մանրամասն տե՛ս ՀՀ կառավարության 2021թ. բյուջետային ուղերձ, Երևան 2020, էջ 67-68, ներդիր 1:

շինարարության (1.1 տոկոսային կետ) թողարկման իրական աճով, առևտուրը, արդյունաբերությունը և ծառայությունները նույնպես ունեցել են դրական նպաստումներ (համապատասխանաբար՝ 0.9, 0.5 և 0.4 տոկոսային կետեր)[11]:

Գծապատկեր 1.20. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.21. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.22. Տնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՑ-ին (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.23. Տնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՑ-ին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցություններով պայմանավորված ներքին պահանջարկի նվազման տեմպերը շարունակվեցին նաև 2021թ. առաջին եռամսյակում: 2021թ. հունվար-մարտին, շարունակելով կրել համավարակի և Արցախյան

[11] ՏԱՑ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են: Գյուղատնտեսության ցուցանիշը ոչ բոլոր տեղերում է ներառված հաշվարկներում, քանի որ հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

պատերազմի բացասական ազդեցությունները, տնտեսական անկումը պայմանավորվել է մասնավոր հատվածի ներքին պահանջարկի (սպառման և ներդրումների) նվազմամբ: Իսկ խթանող հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում պետական սպառման և պետական ներդրումների աճն էականորեն հակազդել է տնտեսական անկմանը: Նույն ժամանակահատվածում արտահանումն ու ներմուծումը շարունակել են նվազել:

Առաջին եռամսյակին հաջորդող ամիսներին նկատվեց ներքին պահանջարկի (մասնավորապես՝ սպառման) վերականգնում՝ պայմանավորված անցած տարի մասնավոր հատվածում կուտակված նախազգուշական խնայողությունների օգտագործմամբ, դրամական փոխանցումների աճով և բարձր գնաճային սպասումներով: Սպառման վերականգնման մասին են վկայում նույն ժամանակաշրջանում առևտրի և ծառայությունների վերականգնումը:

Ներդիր 1. Կորոնավիրուսային համավարակի (COVID-19) զարգացման դինամիկան ՀՀ-ում

ՀՀ-ում կորոնավիրուսի համավարակի տարածումը շարունակվեց նաև 2021թ.:





Աղբյուրը՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Իմունականխարգելման 2021-2025թթ. ազգային ծրագրով նախատեսվում է կորոնավիրուսային հիվանդության բնակչության ռիսկային խմբերի շրջանում զանգվածային պատվաստումների իրականացում, 2021թ. համավարակի աստիճանական չեզոքացում իսկ միջնաժամկետում՝ կայուն համաճարակային իրավիճակ (լաբորատոր հաստատված եզակի դեպքեր): Ընդ որում՝ զանգվածային պատվաստումների իրականացումն արդեն իսկ մեկնարկել է, ինչի շրջանակներում՝

Մարտի 28-ին Հայաստան է ներկրվել «AstraZeneca» պատվաստանյութի առաջին խմբաքանակը՝ 24000 դեղաչափ: Նախատեսված է եղել 65 և բարձր տարիքի մարդկանց, բուժաշխատողների, 16-54 տարեկան քրոնիկ հիվանդների և սոցիալական խնամքի կենտրոնի աշխատողների պատվաստման համար:

Ապրիլի 8-ին ներկրվել է «Sputnik-V» պատվաստանյութի առաջին խմբաքանակը՝ 15000 դեղաչափ՝ 7500 անձի համար:

Ապրիլի 26-ին ներկրվել է «Sputnik-V» պատվաստանյութի նոր խմբաքանակ՝ 14000 անձի համար, իսկ 1000 մարդու պատվաստման համար Ռուսաստանը նվիրել է լրացուցիչ 2000 միավոր դեղաչափ:

Մայիսի 12-ին 14000 երկրորդ դեղաչափ «Sputnik-V» պատվաստանյութ է ներկրվել: Դրանք նախատեսված են եղել 18-54 տարեկան՝ բուժաշխատողների, քրոնիկ հիվանդների, սոցիալական խնամքի կենտրոնների բնակիչների և աշխատակիցների համար:

Մայիսի 1-ին ներկրվել է ՉԺՀ կառավարության կողմից ՀՀ-ին որպես նվիրատվություն տրամադրված «Կորոնավակ» պատվաստանյութը՝ 100 հազար դեղաչափ՝ 50 հազար անձի համար: Պատվաստանյութով կարող են պատվաստվել 18-ից բարձր բոլոր քաղաքացիները՝ ըստ դիմելիության և կամավորության սկզբունքի:

Մայիսի 17-ին ներկրվել է «AstraZeneca» պատվաստանյութի երկրորդ խմբաքանակը՝ 50 հազար դեղաչափ:

«AstraZeneca»-ով կարող են պատվաստվել ՀՀ 18 տարեկանից բարձր բոլոր քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրացիները:

Մայիսի 22-ին «Sputnik-V» պատվաստանյութից օգտվելու հնարավորություններն ընդլայնվել են և քրոնիկ հիվանդների համար հանվել է պատվաստումների մինչև 54 տարիքային շեմը:

Հունիսի 28-ից սկսած ՀՀ-ում 18 տարեկանից բարձր անձիք կարող են պատվաստվել առկա պատվաստանյութերից յուրաքանչյուրով՝ ըստ նախընտրության:

2021թ. հուլիսի 7-ի դրությամբ ընդհանուր առմամբ ՀՀ ներմուծվել է 294,460 դեղաչափ պատվաստանյութ, որից 120,060 դեղաչափ «Sputnik-V», 100,000 դեղաչափ CoronaVac և 74,400 դեղաչափ «AstraZeneca»: Պատվաստումներն իրականացվում են առողջության առաջնային պահպանման կազմակերպություններում ինչպես նաև շարժական պատվաստումային խմբերի կողմից հանրային վայրերում: Կարող են պատվաստվել նաև Հայաստանում բնակվող օտարերկրյա քաղաքացիները: Պատվաստումներն անվճար են բոլորի համար և իրականացվում են միայն կամավորության սկզբունքով:

COVID-19-ի դեմ պատվաստումների մեկնարկից ի վեր հուլիսի 8-ի դրությամբ՝ հանրապետությունում կատարվել է 103,317 պատվաստում, որից 74,479՝ առաջին դեղաչափ (33,850 «AstraZeneca», 17,657 «CoronaVac», 22,972 «Sputnik-V») և 28,838՝ երկրորդ դեղաչափ (6,025 «AstraZeneca», 5,218 «Coronavac», 17,595 «Sputnik-V»): 2021թ. նախատեսվում է պատվաստել բնակչության 10%-ին: Ներկայացված ցուցանիշը կարող է փոխվել՝ համաճարակային իրավիճակով պայմանավորված:

<u>Կանխատեսում:</u> 2020թ. ընթացքում և 2021թ. տարեսկզբին Համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունների մեղմմանն ու տնտեսության վերականգնմանն ուղղված կառավարության կողմից իրականացված և իրականացվող հարկաբյուջետային միջոցառումների, ինչպես նաև Համավարակի համաշխարհային ճգնաժամի աստիճանական

հաղթահարման պայմաններում, 2021թ. կանխատեսվում է 6.0%, իսկ միջնաժամկետում՝ միջինում 4.3% աճ: Բացասական ազդեցությունների աստիճանական չեզոքացման հետ մեկտեղ տնտեսական աճը 2021թ. կվերականգնվի, իսկ միջնաժամկետ հատվածում կմոտենա իր ներուժային մակարդակին: Միջնաժամկետում տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի աճերով: Ամբողջական պահանջարկը նույնպես կաճի՝ պայմանավորված հիմնականում ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճերով:

2021թ. և միջնաժամկետում դեֆլյատորը կաճի՝ պայմանավորված ՍԳԻ-ի և ապրանքների միջազգային գների զարգացումներով:

Վերոնշյալ զարգացումների պայմաններում անվանական ՀՆԱ-ն 2021թ. կկազմի 6,880.2 մլրդ դրամ՝ 484.9 մլրդ դրամով ավել լինելով 2021թ. պետական բյուջեով ծրագրված ցուցանիշից: Իսկ միջնաժակետում անվանական ՀՆԱ-ն կաճի՝ 2024թ. կազմելով 8,835.4 մլրդ դրամ:

Գծապատկեր 1.24. Անվանական ՀՆԱ և տնտեսական աճ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.25. Իրական ՀՆԱ անկումը/աճը տնտեսական ճգնաժամերի և հաջորդող տարիներին



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ կանխատեսում

Գծապատկեր 1.26. Տնտեսության առանձին ճյուղերի նպաստումները տնտեսական աճին



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.27. Տնտեսական աճին պահանջարկի բաղադրիչների նպաստումները



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>ՀՀ կառավարության տնտեսական աճի թիրախը:</u> Չնայած միջնաժամկետ ծախսերի ծրագիրը օբյեկտիվորեն հենվում է մակրոտնտեսական կայունության համար ռիսկեր չառաջացնող ՀՀ տնտեսության հնարավորություններից և ներուժից բխող տնտեսական աճի միջնաժամկետ կանխատեսումների և դրան համապատասխանող մակրոտնտեսական շրջանակի վրա՝ ՀՀ կառավարությունը թիրախավորում է հասնել ավելի բարձր տնտեսական աճի: Միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարությունը նպատակադրում է ապահովել միջինում 7.0% տնտեսական աճ, սակայն վերջինիս իրականացումը պահանջում է բարձր արտադրողական մեծածավալ պետական և մասնավոր ներդրումներ, ինչպես նաև ընդհանուր գործոնային (կապիտալի և աշխատուժի) արտադրողականության կայուն աճ: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել և իրականացնել համապատասխան ներդրումային քաղաքականություն, տնտեսության արտահանելի հատվածի և արտահանման խթանմանը միտված քաղաքականություն, արտադրական գործոնների արտադրողականության բարձրացման քաղաքականություն, ինչպես նաև անհրաժեշտ ռեսուրսներ և միջավայր ձևավորող հարկաբյուջետային, դրամավարկային և ֆինանսական քաղաքականություններ, որոնք թույլ կտան առաջիկա հինգ տարիների ընթացքում էապես բարձրացնել ներուժային տնտեսական աճը[12]: Ըստ էության, նշված նպատակադրումը և դրա իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների շուրջ քննարկումները արդեն իսկ մեկնարկել են, իսկ հետագայում կդառնան առավել մանրամասն քննարկման առարկա՝ նպատակադրելով ձևավորել բարձր տնտեսական աճի հասնելու իրատեսական ճանապարհային քարտեզ՝ համապատասխան միջոցառումներով և գործողություններով: Վերջիններս իրենց արտացոլումը պետք է գտնեն նոր ձևավորվելիք կառավարության ծրագրում, ոլորտային ռազմավարություններում և քաղաքականություններում: Հետագայում դրանց արդյունքները պարբերաբար վերլուծելով հնարավոր կլինի բարձր աճի թիրախավորումը դնել պետական բյուջեների և միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման հիմքում:

Գծապատկեր 1.28. 2022-2024թթ. թիրախային տնտեսական աճի և ՄԺԾԾ (բյուջետային՝ ներառյալ 2022թ. պետական բյուջեի) սցենարներ



[12] Առավել մանրամասն տե՛ս «1.3.1. ԹԻՐԱԽԱՅԻՆ (ԲԱՐՁՐ) ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՍՑԵՆԱՐ» բաժնում:

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ կանխատեսումներ

<u>Համախառն առաջարկի կանխատեսում.</u> 2021թ. համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունների աստիճանական չեզոքացման արդյունքում՝ ներքին և արտաքին պահանջարկի վերականգնմամբ պայմանավորված սպասվում է տնտեսության աճի տեմպերի վերականգնում: Տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների (ներառյալ առևտուրը) և արդյունաբերության աճերով (համապատասխանաբար՝ 7.0%-ով և 4.9%-ով): Շինարարության և գյուղատնտեսության ճյուղերը նույնպես կաճեն (համապատասխանաբար՝ 5.5% և 3.1%)՝ դրական նպաստելով տնտեսական աճին:

Միջնաժամկետում՝ համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունների չեզոքացման հետ մեկտեղ, պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի վերականգնմամբ, պղնձի գների բարձր մակարդակով, տնտեսությունում իրականացվող ներդրումներով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից համավարակի ու Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունների մեղմմանն ուղղված հարկաբյուջետային, ինչպես նաև արտահանման ու ներդրումների խթանմանն ուղղված քաղաքականություններով՝ ծառայությունները կաճեն միջինում 4.4%-ով, արդյունաբերությունը՝ 4.9%-ով, շինարարության ճյուղը՝ 4.9%-ով, իսկ գյուղատնտեսությունը՝ 2.4%-ով:

Գծապատկեր 1.29. Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.30. Ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>Համախառն պահանջարկի կանխատեսում.</u> Համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունների աստիճանաբար թուլացման պայմաններում 2021թ. վերջնական սպառումը կաճի 7.7%-ով, իսկ ներդրումները՝ 5.8%-ով: Սպառման և ներդրումների աճին կնպաստեն տնօրինվող եկամտի աճը, նախորդ տարի մասնավոր հատվածում կուտակված խնայողությունների օգտագործումը, ինչպես նաև 2020թ. իրականացված և 2021թ. շարունակվող ՀՀ կառավարության կողմից վարվող համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքների մեղմանն ու ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունները: Միջնաժամկետում՝ սպառումը միջինում կաճի 4.5%-ով, իսկ ներդրումները՝ 6.0%-ով: Միջնաժամկետում ներդրումների վրա դրական ազդեցություն կունենա ՀՀ կառավարության կողմից ենթակառուցվածքներում ներդրումների նախատեսվող շարունակական աճը:

2021թ. արտահանումը և ներմուծումը կաճեն 7.0%-ով և 8.7%-ով՝ պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի, ինչպես նաև տնտեսական ակտիվության վերականգմամբ: ՀՀ և համաշխարհային տնտեսական աճերի, ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի զարգացումների, տնօրինվող եկամտի աճի, զբոսաշրջության վերականգման, ինչպես նաև արտահանմանը և ներդրումների խրախուսմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության պայմաններում միջնաժամկետում արտահանումն ու ներմուծումը կաճեն միջինում 9.6% և 9.0%:

Աշխատանքի շուկա

2018-2019թթ. տնտեսական աճին զուգահեռ գործազրկության մակարդակը նվազել է, իսկ աշխատուժի մասնակցության մակարդակն աճել է: 2020թ. տնտեսական անկման պայմաններում գործազրկության մակարդակն[13] աճել է 0.2 տոկոսային կետով՝ 17.9%-ից հասնելով 18.1%-ի, իսկ աշխատուժի մասնակցության մակարդակը նվազել է՝ 58.9%-ից հասնելով 57.7%-ի: Նույն ժամանակաշրջանում կրճատվել է ինչպես զբաղվածների, այնպես էլ գործազուրկների թիվը: Նշենք, որ 3.1%-ով աճել է աշխատուժից դուրս բնակչության թիվը[14], ինչը հիմնականում պայմանավորված է ոչ տնտեսական գործոններով (հատկապես պատերազմի ազդեցությամբ):

2021թ. I եռամսյակում գործազրկության մակարդակը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ նվազել է 2.7 տոկոսային կետով՝ կազմելով 17.0%: Գործազուրկների թիվը նվազել է 17.1%-ով՝ կազմելով 193.0 հազար մարդ: Նշենք, որ միաժամանակ 0.2%-ով նվազել է նաև զբաղվածների թիվը՝ կազմելով 943.8 հազ. մարդ: Աշխատուժի առաջարկը (տնտեսապես ակտիվ բնակչություն) ևս նվազել է 3.6%-ով՝ կազմելով 1136.8 հազար մարդ: Աշխատանքի շուկայի ցուցանիշների շարժընթացը հիմնականում բացատրվում է 2020թ. տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժով:

2021թ. տնտեսական վերականգնման պայմաններում աշխատանքի շուկայում կդրսևորվեն դրական զարգացումներ: Այս պայմաններում ակնկալվում է զբաղվածության աճ և գործազրկության նվազում:

---

[13] Ի տարբերություն նախկին մեթոդաբանության, երբ աշխատանքի շուկայի ցուցանիշները հիմնված էին առկա բնակչության թվի վրա, դրանք 2020թ. սկսած հաշվարկվում են՝ հիմք ընդունելով մշտական բնակչության թիվը (ներառում է նաև մինչև 12 ամիս ժամկետով ՀՀ-ից դուրս գտնվող զբաղվածներին և գործազուրկներին): Հետևաբար աշխատանքի շուկայի ցուցանիշները ներկայացնում են ազգային զբաղվածությունը և գործազրկությունը:

[14] Աշխատուժից դուրս բնակչության մեջ ներառվում են անձինք, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում չեն աշխատել և աշխատանք չեն փնտրել՝ չեն եղել զբաղված կամ գործազուրկ, մասնավորապես՝ առկա ուսուցմամբ և արտադրությունից կտրված սովորողները և ուսանողները, տնային տնտեսությամբ զբաղվածները, երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները, անձինք, ովքեր զանազան պատճառներով չեն աշխատում և աշխատանք չեն փնտրում (սեփականության օգտագործումից եկամուտ ստացողներ, պարտադիր ժամկետային զինծառայողներ և այլն):

Գծապատկեր 1.31. Գործազրկություն և զբաղվածություն



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.32. Աշխատուժի մասնակցության մակարդակ և աշխատավարձ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

2018-2019թթ. անվանական աշխատավարձը միջինում աճել է 4.9%-ով՝ պայմանավորված իրական արտադրողականության աճով, սակայն 2020թ. տնտեսական անկման պայմաններում անվանական աշխատավարձի աճի տեմպը նախորդ տարիների համեմատ դանդաղել է և կազմել է 3.9%: 2021թ.՝ հունվար-մայիսին միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.4%-ով՝ կազմելով 195,452 դրամ: Ընդ որում՝ սպառողական գների ինդեքսի 5.5% աճի պարագայում իրական աշխատավարձը նվազել է 1.04%-ով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 3.7%-ով՝ կազմելով 167,568 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 4.6%-ով, կազմելով 208,958 դրամ:

ՀՀ վճարային հաշվեկշիռ, արտահանում և ներմուծում

2018-2019թթ. վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը վատթարացել է՝ միջինում կազմելով ՀՆԱ-ի 7.2%-ը: Նշված տարիներին ընթացիկ հաշիվը բնութագրվել է ապրանքների (հիմնականում՝ ավտոմեքենաների) և ծառայությունների (հիմնականում՝ ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայությունների) ներմուծման աճի հաշվին հաշվեկշռի որոշակի վատթարացմամբ, ինչպես նաև սկզբնական և երկրորդային եկամուտների ծավալների կրճատմամբ:

2020թ-ին համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունների պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ բարելավվել է՝ կազմելով ՀՆԱ-ի 3.8%-ը: Ընթացիկ հաշվի բարելավումը պայմանավորված է եղել ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռի կրճատմամբ՝ հիմնականում համավարակի պատճառով գլոբալ զբոսաշրջության կրճատման և ներքին թույլ պահանջարկի հետևանքով ապրանքների և ծառայությունների ներմուծման ավելի խորը անկման, ինչպես նաև անհատույց տրամադրվող դրամական փոխանցումների (երկրորդային եկամուտների) աճի արդյունքում:

2021թ. առաջին եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ բարելավվել է 5.5 տոկոսային կետով՝ կազմելով ՀՆԱ-ի 3.4%, որը հիմնականում պայմանավորված էր ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռի կրճատմամբ և տնային տնտեսություններին անհատույց տրամադրվող դրամական փոխանցումների

աճով: Ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին տեղի է ունեցել ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված դրամական փոխանցումների զգալի աճ (մոտ 89%-ով):

<u>Կանխատեսում:</u> Հիմնականում դրամական փոխանցումների արագ վերականգմամբ պայմանավորված 2021թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կբարելավվի՝ մոտենալով ՀՆԱ-ի 2.1% մակարդակի: Միջնաժամկետ հորիզոնում ընթացիկ հաշվի պակասուրդը կխորանա՝ ձգտելով իր հավասարակշիռ մակարդակին:

Գծապատկեր 1.33. Ընթացիկ հաշվի պակասուրդը և բաղադրատարրերը (ՀՆԱ-ում %)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ԿԲ և ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>Արտահանում:</u> 2018-2019թթ. միջինում արձանագրվել է ապրանքների և ծառայությունների դոլարային արտահանման 13.9% աճ: Ապրանքների արտահանումը դրսևորել է առաջանցիկ աճ և միջինում կազմել է 17.4%՝ ծառայությունների արտահանման միջինում 9.6% աճի (հիմնականում՝ ճանապարհորդություն) համեմատ:

2020թ. արձանագրվել է արտահանման նվազում՝ հիմնականում պայմանավորված համավարակի հետևանքով տնտեսությունում արտադրության կրճատմամբ և արտաքին պահանջարկի նվազմամբ: Չնայած տարեսկզբի աճի բարձր տեմպերին՝ դոլարային արտահայտությամբ ՀՀ ապրանքների արտահանումը 2020թ. կրճատվել է 19.2%-ով: 2020թ. համավարակով պայմանավորված տուրիզմի կտրուկ անկման հետևանքով ծառայությունների արտահանումը կրճատվել է 54.5%-ով:

2021թ. ՀՀ ապրանքների արտահանումը սկսել է վերականգնվել. հունվար-մայիս ամիսներին աճը կազմել է 20.8%, ինչը տեղի է ունեցել տնտեսական ակտիվության վերականգման, պղնձի համաշխարհային գների աճի և արտաքին պահանջարկի վերականգնման հաշվին: Ծառայությունների արտահանման ոլորտը շարունակում է կրել մեծ վնասներ. ծառայությունների արտահանումը 2021թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա համապատասխան

ժամանակահատվածի նկատմամբ նվազել է մոտ 45%-ով, որը հիմնականում պայմանավորված է զբոսաշրջության մոտ 84.5% անկմամբ:

Գծապատկեր 1.34. 2021թ. ապրանքների արտահանման միտումները, %



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ:

<u>Կանխատեսում</u>: 2021թ. սպասվում է մոտ 18.2% արտահանման աճ, ինչը պայմանավորված է լինելու արտաքին պահանջարկի վերականգմամբ, մետաղների միջազգային գների աճով և դեպի Հայաստան ժամանման սահմանափակումների որոշակի թուլացմամբ: Այդուհանդերձ՝ Սոթքի հանքավայրի շահագործման մասշտաբների կրճատումը և դեպի Արցախ արտահանման հետ կապված կորուստները ապրանքների արտահանման զսպող գործոններ կհանդիսանան, իսկ տուրիզմի հաշվին ծառայությունների արտահանման վերականգնումը կլինի համեմատաբար դանդաղ: Միջնաժամկետ հորիզոնում համաշխարհային և ՀՀ տնտեսական ակտիվության, պղնձի գների բարձր մակարդակով, զբոսաշրջության աստիճանական վերականգնմամբ և արտահանման ու ներդրումների խրախուսմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականությանը համահունչ ակնկալվում է ապրանքների և ծառայությունների արտահանման 12.5% միջին աճ:

<u>Ներմուծում</u>: **2018-2019թթ. միջինում արձանագրվել է ապրանքների և ծառայությունների դոլարային ներմուծման 15.3% աճ,** ընդ որում՝ և՛ ապրանքների, և՛ ծառայությունների ներմուծման աճը եղել է գրեթե համաչափ՝ միջինում շուրջ 15%: Նշված տարիների ընթացքում ներմուծման աճին հիմնականում նպաստել է մարդատար ավտոմեքենաների և միջանկյալ սպառման ապրանքների ներմուծումը, նշանակալի էր նաև կապիտալ բնույթի ապրանքների դերը, իսկ ծառայություններն աճել են հիմնականում ճանապարհորդության հաշվին:

2020թ. արձանագրվել է ապրանքների ներմուծման 20% անկում՝ հիմնականում ավտոմեքենաների ներկրման մաքսատուրքերի բարձրացման սպասումներով պայմանավորված նախորդ տարի ավտոմեքենաների ներմուծման աննախադեպ բարձր աճի հետևանքով 2020թ.դրանց ներմուծման ծավալների նվազմամբ, ինչպես նաև համավարակի ու Արցախյան պատերազմի հետևանքներով տնտեսական ակտիվության անկման պայմաններում ներքին պահանջարկի նվազմամբ: Ծառայությունների ներմուծման նվազումը 2020թ. կազմել է 59.8% և

հիմնականում պայմանավորվել է համավարկի հետ կապված սահմանափակումների հետևանքով ճանապարհորդության կտրուկ անկմամբ (մոտ 80%):

Չնայած տարեսկզբի նվազման տեմպերին 2021թ. հունվար-մայիսին արձանագրվել է ապրանքների ներմուծման 6.7% աճ՝ հիմնականում պայմանավորված տնտեսական ակտիվության աստիճանական վերականգնման պայմաններում ներքին պահանջարկի վերականգնմամբ: 2021թ. առաջին եռամսյակում ծառայությունների ներմուծումը շարունակել է անկում ապրել՝ հիմնականում ճանապարհորդության խորը անկման (շուրջ 90%) հաշվին:

Գծապատկեր 1.35. 2021թ. ապրանքների ներմուծման միտումները, %



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ:

<u>Կանխատեսում</u>: Ապրանքների և ծառայությունների նկատմամբ ներքին պահանջարկի աստիճանական վերականգմամբ պայմանավորված 2021թ. սպասվում է շուրջ 16% ներմուծման աճ: Միջնաժամկետում ՀՀ տնտեսության աճի և ներքին պահանջարկի ինչպես նաև զբոսաշրջության վերականգմանը զուգընթաց ներմուծման աճը միջինում կկազմի մոտ 12%:

Գծապարկեր 1.36.ՀՀ ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման միտումները ՀՖՃ տարիներին և 2017-2023թթ., %



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ:

Փոխարժեքներ

2018-2020թթ. միջինում ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրսևորել է թույլ արժեզրկման վարքագիծ, իսկ ռուբլու նկատմամբ արժևորվել է: Համավարակով պայմանավորված ՀՀ փոխարժեքի շուկայում 2020թ. նկատվել են արժեզրկման ճնշումներ՝ առավելագույն արժեքին հասելով ապրիլի 1-ին, որից հետո ՀՀ ԿԲ-ի համարժեք արձագանքման, ինչպես նաև միջազգային ֆինանսական շուկաների հարաբերականորեն կայունացման արդյունքում դրամն աստիճանաբար կայունացել է. միջին փոխարժեքը կազմել է 489.0 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա միջին փոխարժեքի (480.4) նկատմամբ արժեզրկվելով 1.8%-ով: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի 2020թ. տարեսկզբի արժևորումից հետո հունիս ամսից սկսել է արժեզրկվել. նախորդ տարվա համեմատությամբ 2020թ. միջին արժեքով ՀՀ դրամը եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 3.6%-ով: ՀՀ դրամը ՌԴ ռուբլու նկատմամբ 2020թ. մարտ ամսից սկսել է բարձր տեմպերով արժևորվել և 2020թ. ՀՀ դրամի միջին փոխարժեքը ՌԴ ռուբլու նկատմամբ նախորդ տարվա համեմատությամբ արժևորվել է 9.4%-ով:

2021թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ դրամը շարունակել է արժեզրկվել՝ հիմնականում պայմանավորված համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքով ձևավորված սպասումներով: ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը 2021թ. հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է, համապատասխանաբար՝ 7.4% և 15.4%-ով: Ընթացիկ տարվա վեց ամիսների ընթացքում՝ ՀՀ ԿԲ համապատասխան արձագանքման (վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացում և արտարժույթի ներարկում) ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամը դրսևորել է հարաբերականորեն կայուն վարքագիծ:

ՀՀ դրամի միջին փոխարժեքը ՌԴ ռուբլու նկատմամբ 2021թ. հունվար-հունիս ամիսներին արժեզրկվել է նախորդ տարվա համեմատությամբ 0.5%-ով: Ընդ որում՝ պայմանավորված միջազգային շուկայում ՌԴ ռուբլու արժեզրկմամբ, հունվար-փետրվար ամիսներին ՀՀ դրամը ռուբլու նկատմամբ նախորդ տարվա համապատասխան ամիսների համեմատ արժևորվել (միջինում շուրջ 8%-ով), իսկ մարտ-հունիս ամսիներին՝ պայմանավորված միջազգային շուկայում ռուբլու փոխարժեքի կայունացմամբ, դրամն արժեզրկվել է միջինում մոտ 5%-ով:

ՀՀ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած զամբյուղի նկատմամբ ՀՀ ազգային արժույթն իրական արտահայտությամբ 2018-2020թթ. միջինում արժևորվել է 3.1%-ով: Իրական արդյունավետ փոխարժեքի արժևորման միտումը 2020թ. թուլացել է.դրամն արժևորվել է 1.7%-ով, իսկ անվանական արտահայտությամբ՝ 4.2%-ով:

2021թ.-ի սկզբից դրամը դրսևորել է արժեզրկման վարքագիծ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի արժեզրկումը կազմել է 5.3%, իսկ անվանականը՝ 5.5%, ինչը, այլ հավասար պայմաններում, իր դրական ազդեցությունը կթողնի առևտրային հաշվեկշռի վրա:

Գծապատկեր 1.37. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ (աճ՝ արժեզրկում)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.38. ՀՀ իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների կուտակային պ/պ աճերի դինամիկան (աճ՝ արժևորում)

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ



Գնաճ և դրամավարկային քաղաքականություն

2018-2020թթ. ընթացքում տնտեսությունը գտնվել է չափավոր գնաճային միջավայրում: 2018-2019թթ. ընթացքում գնաճային միջավայրը եղել է ցածր և 12-ամսյա գնաճը գտնվել է նպատակային 4 տոկոս (±1.5) թույլատերի միջակայքից ցածր մակարդակում: Ցածր գնաճին նպաստել են արտաքին հատվածից եկող գնանկումային ազդեցությունները, ինչպես նաև ապրանքային շուկաներում մրցակցության ավելացումը: 2020թ-ին ՀՀ սպառողական շուկայում ցածր գնաճային միջավայրը պահպանվել է մինչև նոյեմբեր ամիսը, իսկ դեկտեմբերին գնաճը մոտեցել է իր նպատակային ցուցանիշին: 12-ամսյա գնաճը դեկտեմբերին կազմել է 3.7%, իսկ միջին գնաճը՝ 1.2%: 2020թ դեկտեմբերի գնաճի կտրուկ արագացումը հիմնականում պայմանավորված էր առաջարկի գործոններով՝ մեծամասամբ ՀՀ դրամի արժեզրկմամբ և միջազգային գների աճով:

2021թ. հունվար-մայիս ամիսներին գնաճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արագացել է՝ կազմելով 5.5%, իսկ 12-ամսյա գնաճը կազմել է 5.9%՝ գերազանցելով ՀՀ Կենտրոնական բանկ կողմից սահմանված նպատակային ցուցանիշը: Գնաճի արագացումը պայմանավորված է մի կողմից արտաքին հատվածից եկող համաշխարհային պահանջարկի վերականգնման դրական սպասումների և մի շարք առաջարկի գործոնների ազդեցությամբ հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներում շարունակվող բարձր գնաճային զարգացումներով, և մյուս կողմից՝ ՀՀ դրամի արժեզրկմամբ:

2018-2020թթ. ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունն ունեցել է խթանող ուղղվածություն: Նշված ժամանակահատվածում ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման (ռեպո) տոկոսադրույքը 0.75 տոկոսային կետով, ինչպես նաև ֆինանսական

շուկայում հանդես է եկել որպես իրացվելիության զուտ տրամադրող: Ֆինանսական շուկայի կարճաժամկետ տոկոսադրույքների՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի շուրջ ձևավորումն ապահովելու համար հիմնականում ամբողջությամբ բավարարվել է իրացվելիության նկատմամբ բանկային համակարգի պահանջարկը: 2020թ-ին գնաճի դանդաղմանը և համավարակի տարածման բացասական ազդեցություններին հակազդելու նպատակով ՀՀ Կենտրոնական բանկն իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով՝ իրականացնելով խթանող դրամավարկային քաղաքականություն: Սակայն 2020թ. դեկտեմբերի 15-ին, պայմանավորված գնաճի արագացմամբ, արտաքին հատվածից սպասվող գնաճային զարգացումներով և գնաճային սպասումների արագացմամբ, ՀՀ ԿԲ-ն կտրուկ բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1.0 տոկոսային կետով՝ սահմանելով այն 5.25%:

2021թ. հունվար–հունիս ամիսներին ՀՀ ԿԲ-ը շարունակել է բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով՝ բարձր գնաճային սպասումները և հասարակության մոտ ձևավորված անորոշությունը նվազեցնելու նպատակով: Փողի շուկայի տոկոսադրույքների ձևավորումը վերաֆինանսավորման տոկոսադրույքի շուրջ ապահովելու համար ԿԲ-ն շարունակել է բավարարել իրացվելիության նկատմամբ բանկային համակարգի պահանջարկը՝ ռեպո գործարքների միջոցով ավելացնելով զուտ իրացվելիության ներարկման չափը:

Կանխատեսում. 2021թ-ին 12-ամսա գնաճը կգտնվի նպատակային թիրախի վերին սահմանում՝ կազմելով շուրջ 5.2%, իսկ միջին գնաճը կկազմի 5.3%: Գնաճի արագացմանը նպաստող հիմնական գործոններ են՝ միջազգային պարենային ապրանքների գների աճը, փոխարժեքի արժեզրկումը, Արցախյան պատերազմի բացասական հետևանքները, մաքսատուրքերի և ակցիզային հարկերի բարձրացումը, ինչպես նաև Էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությունը: Միջնաժամկետում գնաճը կկայունանա ԿԲ թիրախի շուրջ:

ԿԲ-ն կարճաժամկետ հատվածում կշարունակի որդեգրած դրամավարկային քաղաքականությունը, որն ուղղված կլինի գնաճային սպասումների արագացման ռիսկերի չեզոքացմանը՝ միևնույն ժամանակ ապահովելով հնարավորին նպաստավոր պայմաններ ամբողջական պահանջարկի վերականգնման համար, իսկ ցանկացած ռիսկերի դրսևորման պարագայում պատրաստ է համապատասխանորեն արձագանքել՝ միջնաժամկետ հատվածում գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու նպատակով[15]:

[15] Տե՛ս Գնաճի հաշվետվություն, 2021/1, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/Monetary%20policy_I_2021.pdf

Գծապատկեր 1.39. Սպառողական գների աճը, դրամավարկային քաղաքականության հիմնական ցուցանիշները 2017-2021թթ. և գնաճի կանխատեսումները միջնաժամկետ հատվածում



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Ներդիր 2: Դրամավարկային քաղաքականության արձագանքը համավարակին աշխարհում

Աշխարհի ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների կենտրոնական բանկերի զգալի մասը 2020թ. խթանող դրամավարկային քաղաքականությամբ հակազդեց համավարակի տարածման տնտեսական ազդեցություններին՝ նվազեցնելով տոկոսադրույքները և ներդնելով ֆինանսական շուկայից ակտիվների ձեռք բերման աննախադեպ ծրագրեր: Ֆինանսական շուկայից ձեռք են բերել շուրջ 10 տրիլիոն ԱՄՆ դոլար ծավալի ակտիվներ, որը կրկնակի անգամ գերազանցում է 2008թ. համաշխարհային ֆինասական ճգնաժամին հաջորդած երկու տարիների ընթացքում իրականացրած ձեռբերման ծավալը: Կենտրոնական բանկերի գործողությունները մեղմել են միջազգային ֆինանսական շուկաների անորոշությունները, նպաստել են ցածր պահել տոկոսադրույքները և օժանդակել են իրական հատվածի ֆինանսավորմանը:

Սակայն 2021թ.-ին որոշ երկրների (Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ղրղստանի, Տաջիկիստանի և այլն) ԿԲ-երը գնաճի արագացումը նվազեցնելու նպատակով բարձրացրել են վերաֆինասավորման տոկոսադրույքները:



Աղբյուրը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի զեկույցներ (Global Financial Stability Report, April 2021: Preempting a Legacy of Vulnerabilities) և http://www.centralbanknews.info/**:**

Հայաստանի համար դիտարկվել է 2020թ. ընթացքում խթանման չափը, առանց հաշվի առնելու դեկտեմբերի 15-ի ԿԲ ռեպո տոկոսադրույքի 1 տոկոսային կետով բարձրացումը:

1.4. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2022-2024թթ. ՄԺԾԾ մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումներն իրականացվել են ՀՀ ՖՆ կողմից՝ կիրառելով տնտեսաչափական մոդելներ, և առանձին շոկերի և հարկաբյուջետային միջոցառումների ազդեցությունների գնահատման համար՝ ՀՀ ՖՆ հարկաբյուջետային քաղաքականության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (The Fiscal Strategy Model: A Structural Framework for Fiscal Policy Analysis in Armenia) մոդելը[16], որոնց համար տեղեկատվական հիմք են հանդիսացել նեքին և արտաքին ընթացիկ տնտեսական և ֆինանսական զարգացումները, Արցախյան պատերազմի տնտեսական հետևանքների վերաբերյալ ՀՀ ՖՆ գնահատականները, ինչպես նաև ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումների և հումքային ապրանքների համաշխարհային գների միջազգային կառույցների կողմից արված կանխատեսումները: Մասնավորապես՝

1. **Արտաքին գործոններ.**
   - 2021թ. համար հայտարարված խոշոր հարկաբյուջետային աջակցությունը կխթանի զարգացած երկրների տնտեսական ակտիվությունը, ինչը կստեղծի դրական երկրորդային ազդեցություններ առևտրային գործընկերների համար: Համավարակի հաղթահարման նպատակով կիրառվող պատվաստանյութերը լայնորեն մատչելի կլինեն զարգացած երկրներում, ինչպես նաև որոշ զարգացող երկրներում, տնտեսական սահմանափակումներն աստիճանաբար կհանվեն: Այս պայմաններում ԱՄՀ կանխատեսումների համաձայն 2021թ. ՀՀ հիմնական գործընկեր երկրների արտաքին պահանջարկը կաճի 4.6%-ով[17]:
   - 2022թ. պատվաստանյութերը լայնորեն հասանելի կլինեն նաև զարգացող երկրների մեծամասնությունում, արդյունքում մինչև 2022թ. ավարտը վարակի տարածումն ամենուր կնվազի՝ հասնելով ցածր մակարդակի: Այս համատեքստում, և 2021թ.-ից փոխանցվող դրական տենտեսական և հակաբյուջետային միջոցառումների ազդեցությունների պայմաններում, 2022թ. ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունների համար կանխատեսվում է իրենց նախաճգնաժամային պոտենցիալ աճերից բարձր տնտեսական աճեր՝ նախանշելով վերականգման գործընթացը: Արդյունքում, 2022թ. վերջում տեղի կունենա ՀՀ արտաքին պահանջարկի վերականգնումը, սակայն նոր՝ նախաճգնաժամային մակարդակից ցածր ներուժային մակարդակի պայմաններում (գործընկեր երկրներից ԵՄ-ն կվերականգնվի 2022թ. հետո):

---

[16] ՀՀ ֆինանսների նախարարության հարկաբյուջետային քաղաքականության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելը մշակվել է 2018-2020թթ. ընթացքում՝ ԱՄՀ կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակներում, Առավել մանրամասն տե՛ս ՀՀ կառավարության 2021թ. բյուջետային ուղերձ, Երևան 2020, էջ՝ 84, ներդիր 2:

[17] ՀՀ գործընկեր երկրների արտաքին պահանաջարկի ցուցանիշը ՀՀ ՖՆ գնահատականն է, որը հաշվարկվել է որպես Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Չինաստանի և Եվրոգոտու տնտեսական աճերի կշռված միջին՝ ՀՀ արտահանման կառուցվածքին համապատասխան: ՀՀ գործընկեր երկրների տնտեսական աճերի 2021 և 2022 թթ. ԱՄՀ կողմից հրապարակված կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 1.2.-ում

- 2021թ. նավթի և պղնձի բորսային գները կգրանցեն բարձր աճեր, պայմանավորված հիմնականում համաշխարհային պահանջարկի վերականգմամբ, նավթի գների բարձրացմանը կնպաստի նաև OPEC+ անդամների միջև առաջարկի շուրջ պայմանավորվածությունները: Ըստ «Բլումբերգ» միջազգային հեղինակավոր կազմակերպության փետրվարի դրությամբ ամփոփած կանխատեսումների 2021թ. նավթի միջազգային գները կաճեն 56.5%-ով, իսկ պղնձի գները՝ 56.9%: 2022թ. նավթի և պղնձի գների փոփոխությունը կլինեն ոչ նշանակալի:
- Աշխարհում տուրիզմի վերականգնումը տեղի կունենա թույլ տեմպերով, պայմանավորված համավարակի հաղթահարման անորոշություններով: Ըստ տուրիզմի համաշխարհային կազմակերպության (UNWTO) գնահատականների տուրիստական աշխուժությունը 2019թ. մակարդակին կհասնի միայն 2024թ.-ին: ՀՀ համար՝ հաշվի առնելով հետպատերազմյան ազդեցությունները և համաշխարհային տնտեսության նկատմամաբ ավելի դանդաղ վերականգնումը, ենթադրվել է, որ ծառայությունների արտահանումը և ներմուծումը միայն 2025թ.-ին կհասնեն 2019թ. մակարդակին,
- Դրամական փոխանցումների ԱՄՆ-ից դեպի Հայաստան 2020թ. հունիս ամսից սկսված աննախադեպ բարձր աճը, ենթադրվում է, որ կրելու է ժամանակավոր բնույթ և 2021թ. ընթացքում տեղի է ունենալու աստիճանական վերադարձ նախորդ զարգացումներին. 2021թ. գնահատվում է ԱՄՆ-ից դրամական փոխանցումների աճի տեմպի դանդաղում, իսկ ՌԴ–ից դրամական փոխանցումների բարձր աճ՝ պայմանավորված սահմանափակումների վերացման հետևանքով դեպի ՌԴ սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճով և ՌԴ տնտեսական դրական զարգացումներով:

2. **COVID-19 համավարակային իրավիճակ:** Իմունականխարգելման 2021-2025թթ. ազգային ծրագրով նախատեսվում է կորոնավիրուսային հիվանդության բնակչության ռիսկային խմբերի շրջանում զանգվածային պատվաստումների իրականացում, 2021թ. համավարակի աստիճանական չեզոքացում իսկ միջնաժամկետում՝ կայուն համաճարակային իրավիճակ (լաբորատոր հաստատված եզակի դեպքեր): Ընդ որում՝ զանգվածային պատվաստումների իրականացումն արդեն իսկ մեկնարկել է, ինչի շրջանակներում՝ մարտ ամսից սկսած Հայաստան է ներկրվել «AstraZeneca», «Sputnik-V», «Կորոնավակ» պատվաստանյութերը: 2021թ. նախատեսվում է պատվաստել բնակչության 10%-ին, ինչի արդյունքում 2021թ. համավարակի բացասական ազդեցությունները աստիճանաբար կթուլանան, իսկ միջնաժամկետում լրացուցիչ բացասական ազդեցություններ չեն սպասվում:

3. **Արցախյան պատերազմի տնտեսական հետևանքներ:** Արցախյան պատերազմի հետևանքով տնտեսություն փոխանցվող բացասական հետևանքները գնահատվել են հաշվի առնելով հետևյալ հանգամանքները՝
   - ՀՀ գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողատարածքների Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելու և Ադրբեջանի հետ սահմանամերձ դառնալու արդյունքում ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում գյուղատնտեսության ոլորտի, ինչպես նաև Սոթքի հանքավայրի շահագործման մասշտաբների կրճատման հետևանքով արտահանման, զբաղվածության, հարկային եկամուտների նվազման հետևանքով կրած և առաջացող վնասները:

- Արցախյան պատերազմի հետևանքով առաջացած նոր իրողությունների պայմաններում Արցախում ներքին պահանջարկի նվազման արդյունքում ՀՀ-ից դեպի Արցախ արտահանման ծավալների կրճատումը:
- Արցախյան պատերազմի արդյունքում զոհված, վիրավորված, գերեվարված և անհայտ կորած անձանց աշխատուժից դուրս մնալու և մասնավոր պահանջարկի նվազման հետևանքները:

4. **Տնտեսության ներուժ և պաբերաշրջաններ:** 2020թ. համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական անկման պայմաններում ՀՀ տնտեսությունը կրել է ոչ միայն ցիկլային բացասական զարգացումներ, այլ նաև նվազել է տնտեսության ներուժը և ներուժային աճը, պայմանավորված ինչպես արտադրողականության անկմամբ, այնպես էլ արտադրական գործոնների՝ աշխատուժի և կապիտալի, ներուժային մակարդակների նվազմամբ: Միջնաժամկետում՝ պետական կապիտալ ծախսերի մակարդակի թիրախային բարձրացման և արտահանման առաջանցիկ աճի պայմաններում ներուժային աճն աստիճանաբար կվերականգնվի, սակայն այն դեռևս կգտնվի նախաճգնաժամային ներուժային աճից ավելի ցածր մակարդակում: Իսկ ներքին պահանջարկի վերականգնման արդյունքում տնտեսությունում կփակվի ՀՆԱ բացասական ճեղքը:

5. **Հարկաբյուջետային քաղաքականություն.**
   - Նպատակ ունենալով ապահովել հարկաբյուջետային կայունությունը և միաժամանակ աջակցել տնտեսական վերականգնմանը՝ հարկաբյուջետային քաղաքականությունը 2021թ. կլինի զսպող, այնուհետև, միջնաժամկետում վերադառնալով «ոսկե կանոնների» ամբողջական պահպանմանը՝ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա կլինի չեզոք:
   - 2021թ. կառավարության հակաճգնաժամային միջոցառումները կշարունակվեն, իսկ միջնաժամկետում, հարկաբյուջետային կանոնների տրամաբանության համապատասխան կիրականացվի հարկաբյուջետային կոնսոլիդացիա, որի ներքո նախատեսվում է աստիճանաբար նվազեցնել պետական բյուջեի պակասուրդը՝ հասցնելով այն ՀՆԱ-ի 1.3%-ին 2024թ.-ին: Ընդ որում, հարկաբյուջետային կոնսոլիդացիան նախատեսվում է իրականացնել ընթացիկ ծախսերի աճի սահմանափակման և հարկային եկամուտների աճի միջոցով, իսկ տնտեսական ներուժի աճին նպաստող կապիտալ ծախսերի գծով նպատակադրվելու է դրանց կշռի ավելացում, ինչը թույլ կտա ապահովել իրական ՀՆԱ-ի աճի արագացում և կնպաստի կառավարության պարտքի բեռի նվազմանը մինչև «ապահով մակարդակ» (մանրամասները ներկայացված է «ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունը 2022-2024 թվականներին» բաժնում):

6. **Գնաճ և դրամավարկային քաղաքականություն.**
   - 2020թ. դեկտմեբերից արձանագրված գնաճի արագացումը կշարունավի նաև 2021թ-ին պայմանավորված՝ միջազգային պարենային ապրանքների գների աճով, փոխարժեքի արժեզրկմամբ, Արցախյան պատերազմի բացասական հետևանքներով,

մաքսատուրքերի և ակցիզային հարկերի բարձրացմամբ, ինչպես նաև Էլեկտրաէներգիայի սակագների փոփոխության հետևանքներով:

- Դրամավարկային քաղաքականությունը 2021թ. միտված է զսպելու ամբողջական պահանջարկը: Միջնաժամկետում ցանկացած ռիսկերի դրսևորման պարագայում ԿԲ-ն պատրաստ է համապատասխանորեն արձագանքել՝ նպատակ ունենալով ապահովել գների կայունացումը թիրախի շուրջ:

1.5. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են հանգեցնել ինչպես տնտեսական աճի տեմպերի ավելացմանը, այնպես էլ նվազմանը՝ ներկայացված կենտրոնական կանխատեսումների համեմատ: Ռիսկերի տեղի ունենալու դեպքում շեղումներ կարձանագրվեն սույն փաստաթղթի 1.4 բաժնում ներկայացված ենթադրություններից՝ հանգեցնելով մակրոտնտեսական կանխատեսումներից շեղումների և դրա հետևանքով էլ հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշների շեղման այս ՄԺԾԾ շրջանակից:

Պետք է նշել, որ համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը մեծապես կախված է COVID-19 համավարակի հաղթահարմանն ուղղված առողջապահական միջոցառումներից և աջակցության փաթեթներից: Այս պայմաններում, ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումներում ռիսկերը գնահատվում են հավասարակշռված:

1.5.1. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԴԵՊԻ ՆԵՐՔԵՎ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՌԻՍԿԵՐ

Արտաքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանվորված են՝

- Համաշխարհային տնտեսության, մասնավորապես ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունների սպասվածից ավելի դանդաղ վերականգմամբ,
- Համավարակի դեմ պատվաստանյութերի տարածման սպասվածից ավելի դանդաղ ընթացքով, պատվաստումներ կատարելու նկատմամբ բնակչության թույլ պատրաստակամությամբ, երկրների սահմանների բացման և փոխադրումների սահմանափակումների վերացման սպասվածից ավելի դանդաղ ընթացքով, ինչպես նաև համավարակի դեմ պատվաստումների սպասվածից վատ արդյունքներով:

Ներքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորված են՝

- ՀՀ-ում կորոնավիրուսի համավարակի տարածման անորոշություններով, ինչպես նաև նոր շտամի տարածման հետևանքով հետագա տնտեսական կորուստներով,
- ՀՀ կառավարության աջակցության փաթեթների ազդեցության ավելի դանդաղ դրսևորմամբ,
- ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների և ներդրումների խթանման քաղաքականության ակնկալվող արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտմամբ, ինչպես նաև քաղաքական գործընթացներով պայմանավորված ռիսկեր:

1.5.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԴԵՊԻ ՎԵՐԵՎ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՌԻՍԿԵՐ

Արտաքին գործոններից բխող դեպի վերև ռիսկերը պայմանավորված են՝

- ՀՀ գործընկեր երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի, Եվրոգոտու, ԱՄՆ-ի և Չինաստանի արտաքին պահանջարկի վերականգման, ինչպես նաև հանքահումքային ապրանքների, մասնավորապես՝ պղնձի միջազգային գների սպասվածից ավելի դրական զարգացումներով: Վերոնշյալ ռիսկերը, արդեն մայիսի դրությամբ հասանելի տեղեկատվության համաձայն, որոշակիորեն առարկայացել են,
- Աշխարհի մասշտաբով, պատվաստանյութերի առավել ընդգրկուն և մասսայական կիրառման արդյունքում երկրների միջև սահմանափակումների նախատեսվածից արագ վերացման պայմաններում համաշխարհային տուրիզմի սպասվածից ավելի շուտ վերականգմամբ,
- ԱՄՆ-ից դեպի Հայաստան դրամական փոխանցումների բարձր մակարդակի պահպանմամբ,
- ԵՄ աջակցության շրջանակներում 4 տարվա ընթացքում 2.6 մլրդ եվրո ներդրման առարկայացմամբ:

Ներքին միջավայրից բխող դեպի վերև ռիսկերը պայմանավորված են՝

- ՀՀ կառավարության Տնտեսական արձագանքման ծրագրով[18] նախատեսված խոշոր մասնավոր ներդրումային ծրագրերի իրականացմամբ,
- Մասնավոր ներդրումների խթանմանն ուղղված ծրագրի (ANIF) իրականացման՝ տնտեսական ակտիվության վրա հնարավոր լրացուցիչ դրական ազդեցությամբ,
- Ամուլսարի շահագործումից բխող տնտեսական ակտիվությամբ:

Գծապատկեր 1.40. Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը (Fan Chart)



[18] Տե՛ս «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 4-ի թիվ 142-Լ որոշում, հավելված 1:

Աղյուսակ 1.4. Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը[19]

Տնտեսական աճի միջակայքը, %	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը, %			
	2021	2022	2023	2024
1.5 - 3.5	11.6	18.0	25.4	23.9
3.5 - 5.5	27.4	27.6	26.5	27.1
5.5 - 7.5	32.4	25.5	17.2	19.1
7.5 - 9.5	19.2	14.2	6.9	8.4

Ինչպես երևում է Գծապատկեր 1.29-ից, իրական ՀՆԱ-ի տարեկան աճի կենտրոնական կանխատեսումներից շեղման ռիսկերը հավասարակշռված են: 2022-2024թթ. տնտեսական աճի ձևավորման ամենաբարձր հավանականությունը գտնվում է կենտրոնական կանխատեսումները պարունակող համապատասխան միջակայքում (Գծապատկեր 1.29-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 1.3-ում՝ հոծ նշումով), իսկ դեպի ներքև և վերև ռիսկերը հավասարակշռված են:

1.6. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

Աղյուսակ 1.5. ՀՆԱ-ի կանխատեսումները

Ցուցանիշներ	**Ծրագիր**	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024**
		փաստ/կանխ.*	*կանխ.*	*կանխ.*	*կանխ.*	*կանխ.*
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	*Թիրախային սցենար*	6,181.7	6,880.2	7,707.6	8,584.9	9,553.1
	2022-2024 ՄԺԾԾ	6,181.7	6,880.2	7,570.8	8,171.1	8,835.4
	2021 Պետական բյուջե	6,075.9	6,395.3	-	-	-
	2021-2023 ՄԺԾԾ	6,505.1	7,143.0	7,853.5	8,582.5	-
Տնտեսական (իրական	*Թիրախային սցենար*	-7.4	6.0	7.1	7.1	7.0

[19] Աղյուսակի 1-ին սյունը իրենից ներկայացնում է տնտեսական աճի հնարավոր միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները՝ համապատասխան միջակայքերում միջնաժամկետում տնտեսական աճի գտնվելու հավանականությունները: Աղյուսակում ներկայացվել են տնտեսական աճի ամենահավանական միջակայքերը, որոնք միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության շուրջ 80%-ը, այսինքն՝ հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի 1.5%-ից 9.5% միջակայքում, կազմում է մոտ 80%:

ՀՆԱ-ի) աճ, %	*2022-2024 ՄԺԾԾ*	-7.4	6.0	5.2	3.7	4.0
	2021 Պետական բյուջե	-7.9	3.2	-	-	-
	2021-2023 ՄԺԾԾ	-2.6	7.0	6.4	5.1	-
ՀՆԱ-ի դեֆլյատորի աճ, %	*Թիրախային սցենար*	2.0	5.0	4.6	4.0	4.0
	2022-2024 ՄԺԾԾ	2.0	5.0	4.6	4.0	4.0
	2021 Պետական բյուջե	0.4	2.0	-	-	-
	2021-2023 ՄԺԾԾ	1.7	2.7	3.4	4.0	-

** 2022-2024 ՄԺԾԾ համար 2020թ. ցուցանիշները փաստացի են*
Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

Աղյուսակ 1.6. Ընթացիկ հաշվի կանխատեսումները

Ցուցանիշներ	**Ծրագիր**	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024**
		*փաստ*կանխ.*	*կանխ.*	*կանխ.*	*կանխ.*	*կանխ.*
Ընթացիկ հաշիվ, մլն ԱՄՆ դոլար	*Թիրախային սցենար*	-478.7	-281.3	-629.1	-847.2	-881.6
	2022-2024 ՄԺԾԾ	-478.7	-281.3	-421.6	-556.9	-641.3
	2021 Պետական բյուջե	-731.7	-772.3	-	-	-
	2021-2023 ՄԺԾԾ	-1,247.3	-1,020.0	-953.1	-917.7	-
Ընթացիկ հաշիվ, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*Թիրախային սցենար*	-3.8	-2.1	-4.2	-5.1	-4.8
	2022-2024 ՄԺԾԾ	-3.8	-2.1	-2.9	-3.5	-3.8
	2021 Պետական բյուջե	-5.9	-6.1	-	-	-
	2021-2023 ՄԺԾԾ	-9.7	-7.3	-6.3	-5.6	-

** 2022-2024 ՄԺԾԾ համար 2020թ. ցուցանիշները փաստացի են*
Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

ՀՀ կառավարությունը, ժամանակակից աշխարհում կուտակված գիտելիքին ու փորձին համահունչ, նախագծել և իրականացրել է հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականություն: Այսպիսի քաղաքականությունը ենթադրում է, որ տնտեսության վերելքի ժամանակաշրջանում հարկաբյուջետային ազդակը պետք է լինի զսպող, կուտակելով «դիմադրողականության պաշարներ», որպեսզի տնտեսությունը կարողանա դիմակայել անկման ժամանակաշրջաններին, իսկ անկման ժամանակ, խթանող՝ ի հաշիվ կուտակած «դիմադրողականության պաշարների», որպեսզի հնարավոր լինի մեղմել ցնցումների բացասական ազդեցությունները:

2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

- 2018-2019 թվականների բարձր տնտեսական աճի պայմաններում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը միտված է եղել ՀՀ կառավարության պարտքի կայունության ապահովմանը, ինչի արդյունքում հնարավոր է եղել նվազեցնել կառավարության պարտքի բեռը՝ 2019թ. վերջում հասցնելով այն ՀՆԱ-ի 50.1%-ին (մինչ 2021 թվականին ՀՆԱ-ի վերանայումը այն կազմում էր 49.9%):
- 2020 թվականի ընթացքում տեղի ունեցած և իրենց բնույթով աննախադեպ բացասական ցնցումներ պարունակող զարգացումների (կորոնավիրուսի համավարակ և Արցախյան պատերազմ) արդյունքում տեղի ունեցած տնտեսական անկման պայմաններում կառավարությունն իրականացրել է հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականություն, ինչի արդյունքում արձանագրվել է պետական բյուջեի ծախսերի զգալի աճ՝ պայմանավորված պետական բյուջեով նախատեսված, ինչպես նաև հակաճգնաժամային միջոցառումների և ռազմական գործողությունների հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերի կարիքով, ինչը հանգեցրել է պետական բյուջեի պակասուրդի և կառավարության պարտքի աճին:
- COVID-19 համավարակի հետևանքներով առաջացած իրավիճակը և Արցախյան պատերազմը հարկաբյուջետային կանոններով սահմանված կարգով համարվել են «բացառիկ դեպքեր», որի հիման վրա 2020 թվականին կիրառել է պարտքի և ծախսերի բնականոն իրավիճակի համար գործող կանոններից տարբերվող մոտեցումներ: Հաշվի առնելով 2020թ. տեղի ունեցեած բացասական երևույթների երկարատև ազդեցությունները՝ «բացառիկ դեպքի» կարգավորումները շարունակվել են նաև 2021 թվականին:
- 2021 թվականին տնտեսության որոշակի վերականգնման և թույլ պահանջարկի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության նպատակն է ապահովել հարկաբյուջետային կայունությունը՝ միաժամանակ աջակցելով տնտեսական

վերականգնմանը և պայմաններ ստեղծել ՀՀ կառավարության պարտքի նվազման համար: Այդ նպատակով, 2021թ. սկզբում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա եղել է խթանող, ինչն աստիճանաբար կթուլանա՝ տարեկան կտրվածքով դառնալով զսպող:

- Կառավարությունը 2021 թվականին շարունակում է իրականացնել հակաճգնաժամային միջոցառումները ուղղված ինչպես կորոնավիրուսի, այնպես էլ Արցախյան պատերազմի բացասական հետևանքների մեղմմանը:
- Միջնաժամկետում հարկաբյուջետային քաղաքականության նպատակն է սահուն կերպով նվազեցնել կառավարության պարտքի բեռը՝ 2024 թվականին հասցնելով այն 56.8%-ի, այնուհետև հետագա տարիներին ապահովել կառավարության պարտքի բեռի նվազող ուղղությունը՝ մինչև 2026 թվականը հասցնելով այն ՀՆԱ-ի շուրջ 54%-ին, ինչը հնարավորություն կտա ստեղծել «հարկաբյուջետային տարածք» հնարավոր շոկերին արձագանքելու նպատակով:
- Միջնաժամկետ հորիզոնում կանխատեսվող տնտեսական վերականգնման, հարկային վարչարարության բարելավման և հարկային օրենդրության բարեփոխումների արդյունքում ակնկալվում է հարկեր/ՀՆԱ-ի բարելավում՝ տարեկան շուրջ 0.4 տոկոսային կետով:
- Տնտեսության վերականգնմանը զուգահեռ, միջնաժամկետում վերադարձ կկատարվի հարկաբյուջետային կանոններով սահմանված պետական ֆինանսների «ոսկե կանոնների» տրամաբանությանը՝ կայուն հիմքեր ստեղծելով երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար: Մասնավորապես՝ կապահովվի պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազող հետագիծը և ծախսերի կառուցվածքի բարելավումը, ինչպես նաև հետևողական քայլեր կկատարվեն ծախսերի գծով խնայողությունների և եկամուտների ավելացման ուղղությամբ: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա կոնսոլիդացիայի իրականացման պայմաններում, գնահատվում է չեզոք:
- Տնտեսության վերականգնման ընթացքի և տևողության հետ կապված, այնպես էլ հարկաբյուջետային քաղաքականության միջոցառումների չափի և ժամկետների, ինչպես նաև վերջիններիս արդյունավետության գծով առկա անորոշություններից բխող ռիսկերի ի հայտ գալու պայմաններում առաջիկա տարիների հարկաբյուջետային շրջանակը վերանայման կարիք կունենա:

Աղյուսակ 2.1: 2022-2024թթ. ՄԺԾԾ (ներառյալ 2022թ. պետական բյուջեի) հարկաբյուջետային շրջանակ

	2020	2021	2022	2023	2024
մլրդ դրամ	Փաստացի	Սպասում	Բյուջե	ՄԺԾԾ 2022-2024	
1	2	3	4	5	6
Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	**1,560.7**	**1,617.3**	**1,819.2**	**1,966.7**	**2,148.3**
Հարկային եկամուտներ և տուրքեր	1,385.2	1,540.5	1,733.5	1,889.9	2,084.0
Պետական բյուջեի ծախսեր	**1,894.6**	**1,936.0**	**2,000.9**	**2,135.5**	**2,312.0**
Ընթացիկ ծախսեր	1,668.5	1,738.9	1,708.3	1,827.3	1,958.1
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	226.2	197.2	292.6	308.1	353.9
Պետական բյուջեի դեֆիցիտ (-) / պրոֆիցիտ (+)	**-334.0**	**-318.8**	**-181.7**	**-168.8**	**-163.7**
կշիռը ՀՆԱ-ում, %					
Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	**25.2**	**23.5**	**24.0**	**24.1**	**24.3**
Հարկային եկամուտներ և տուրքեր	22.4	22.4	22.9	23.1	23.6
Պետական բյուջեի ծախսեր	**30.6**	**28.1**	**26.4**	**26.1**	**26.2**
Ընթացիկ ծախսեր	27.0	25.3	22.6	22.4	22.2
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	3.7	2.9	3.9	3.8	4.0
Պետական բյուջեի դեֆիցիտ (-) / պրոֆիցիտ (+)	**-5.4**	**-4.6**	**-2.4**	**-2.1**	**-1.9**

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

2.2. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության առաջնահերթությունները և նպատակները արտացոլված են ՀՀ կառավարության ծրագրում ու ըստ անհրաժեշտության առանձին կարգավորումներով սահմանված են նաև ՀՀ օրենսդրությամբ՝

- **<u>Տնտեսական աճի մոդել:</u>** ՀՀ կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) գործունեությունը միտված է լինելու ՀՀ-ում բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսություն կառուցելուն:
- **<u>Հարկային քաղաքականություն:</u>** Հարկային քաղաքականությունը ուղղվում է տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը՝ դրանով իսկ ստեղծելով կայուն նախադրյալներ՝ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային բարիքի վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար: Կառավարությունը հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և ստվերային տնտեսության կրճատման ճանապարհով նախատեսում է միջնաժամկետ հորիզոնում ապահովել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճ առավելագույն հնարավորի սահմաններում:
- **<u>Ծախսային քաղաքականություն:</u>** Ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորում է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և ադյունավետ օգտագործումը: ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում աստիճանաբար հնարավորության սահմաններում կմեծանա մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը:
- **<u>Հարկաբյուջետային կանոններ</u>:** ՀՀ հարկաբյուջետային կանոնների համակարգին համահունչ[20] միջնաժամկետում հարկաբյուջետային քաղաքականության նպատակն է իրականացնել տնտեսական աճը նվազագույնը խաթարող հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ միաժամանակ բարելավելով պետական բյուջեի կառուցվածքը: Դրա ապահովման համար հարկաբյուջետային քաղաքականության հիմքում լինելու են հետևյալ սկզբունքները.
  - ✓ **<u>Հարկաբյուջետային կայունության պահպանում սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիայի միջոցով</u>:** COIVID-19 համավարակի հետևանքներով և Արցախյան պատերազմով պայմանավորված տնտեսական անկման, ինչպես նաև 2020թ.-ին կառավարության կողմից իրականացված հակաճգնաժամային քաղաքականության արդյունքում ՀՀ կառավարության պարտքի բեռը գերազանցել է ՀՆԱ-ում 60% սահմանային շեմը, որի պայմաններում կառավարությունը ծրագրավորել է հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ արտահայտված 2022-2026 թվականների ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման ծրագրով: Վերջինս նախանշում է պարտքի բեռի նվազեցման մեկնարկը 2022թ.-ից՝ մինչև «անվտանգ մակարդակներ» պարտքի բեռի նվազեցման ճանապարհով միջնաժամկետ հատվածում թույլ տալով ապահովել պետական պարտքի կայունությունը: Ըստ այդմ, նպատակադրվել է միջնաժամկետում սահուն կերպով նվազեցնել կառավարության պարտքի բեռը՝ 2024 թվականին հասցնելով այն ՀՆԱ-ի 56.8%-ին, այնուհետև հետագա տարիներին

[20] Տե՛ս «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.2, 8.3 և 8.4 մասերը, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշումը:

ապահովել կառավարության պարտքի բեռի նվազող ուղղությունը՝ մինչև 2026 թվականը մոտեցնելով այն ՀՆԱ-ի շուրջ 54%-ին և ստեղծելով «հարկաբյուջետային տարածք» հնարավոր շոկերին արձագանքելու համար:

- ✓ **<u>Ծախսերի կառուցվածքի բարելավում և տնտեսության պոտենցիալի բարձրացում</u>**: Միջնաժամկետում՝ 2022թ.-ից հարկաբյուջետային քաղաքականությունը կվերադառնա պետական ֆինանսների «ոսկե կանոնի» ամբողջական պահպանմանը, որի շրջանակում կապահովվի պետական կապիտալ ծախսերի դերի բարձրացումը: Դա թույլ կտա խթանել երկարաժամկետ տնտեսական աճը և ՀՆԱ աճի հաշվին երկարաժամկետ հեռանկարում ապահովել պետական պարտքի կայունությունը:
- ✓ **<u>Տնտեսության վերականգնումը չխաթարող հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը:</u>** 2021թ.-ին տնտեսական վերականգնմանը զուգահեռ հարկաբյուջետային քաղաքականության ազդակը կլինի զսպող՝ նպատակ ունենալով հակազդելու համավարակով և ռազմական գործողությունների հետևանքով առաջացած հարկաբյուջետային կայունության ռիսկերին, իսկ 2022թ.-ից հարկաբյուջետային քաղաքականությունը աստիճանաբար կդառնա չեզոք՝ չխանգարելով տնտեսության վերականգնմանը և աճի արագացմանը:

2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

<u>Վերջին երեք տարիների զարգացումներ</u>

2018-2019 թթ.-ին իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը միտված է եղել ՀՀ կառավարության պարտքի կայունության ապահովմանը՝ զուգահեռաբար նպաստելով տնտեսական աճի արագացմանը և մակրոտնտեսական կայունության պահպանմանը: 2020 թվականի պետական բյուջեի ընթացիկ զարգացումների վրա զգալի ազդեցություն են ունեցել համավարակի արագ տարածման և Արցախյան պատերազմի հետևանքները, ինչպես նաև դրանց հակազդմանն ուղղված ՀՀ կառավարության հակաճգնաժամային գործողությունները՝ հանգեցնելով պետական բյուջեի պակասուրդի և կառավարության պարտքի բեռի կտրուկ աճին: 2018-2020 թվականներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ում միջինում կազմել են 23.8%: Ընդ որում՝ եկամուտների կշիռը 2018 թվականին նախորդ տարվա նկատմամբ բարելավել է 0.1, իսկ 2019 թվականին՝ 1.6 տոկոսային կետով և կազմել է 23.9%: 2020 թվականին բյուջեի եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 25.2%՝ 2019-ի նկատմամբ բարելավվելով 1.3 տոկոսային կետով: Վերջինս հիմնականում պայմանավորված է «Հայաստան» համահայկական հիմնադրամից պետական բյուջե մուտքագրված միջոցներով և համավարակի պայմաններում դոնորներից ստացված դրամաշնորհներով:

Հարկային եկամուտները և տուրքերը ՀՆԱ-ի նկատմամբ 2018թ.-ին նախորդ տարվա համեմատ բարելավել են 0.1, իսկ 2019թ.-ին՝ 1.5 տոկոսային կետով և կազմել են 22.4%: Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավումը հիմնականում պայմանավորված է եղել ՀՀ

կառավարության ստվերի դեմ իրականացվող պայքարով, հարկային վարչարարության բարելավմամբ և ավտոմեքենաների ներմուծման ծավալների կտրուկ աճով:

2020թ. բացասական իրադարձությունների արդյունքում ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նկամամբ նվազել են 0.3%-ով և կազմել 1560.7 մլրդ դրամ, իսկ հարկեր և տուրքերը նախորդ տարվա նկատմամբ նվազել են 5.4%-ով և կազմել 1385.2 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ, հարկեր և տուրքերի կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ մնացել է անփոփոխ՝ 22.4% մակարդակում: Ընդ որում, ՀՆԱ-ի նկատմամբ բարելավում է արձանագրվել ներքին տնտեսությունից գոյացած հարկերի հավաքագրման գծով, իսկ ներմուծումից ձևավորվող հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ նվազել են:

2018-2019 թվականներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը ՀՆԱ-ի մեջ միջինում կազմել են 24.5%: 2018 թվականին պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նախորդ տարվա նկատմամբ նվազել է 3 տոկոսային կետով, իսկ 2019 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել 0.9 տոկոսային կետով(պայմանավորված ընթացիկ ծախսերի 0.4 և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 0.5 տոկոսային կետ աճերով): 2020 թվականին արձանագրվել է պետական բյուջեի ծախսերի կտրուկ աճ՝ պայմանավորված պետական բյուջեով նախատեսված, ինչպես նաև հակաճգնաժամային միջոցառումների և ռազմական գործողությունների հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերի կարիքով: Պետական բյուջեի ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 30.6%-ը՝ 2019 թվականի նկատմամբ աճելով 5.7 տոկոսային կետով, որում ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 27.0%՝ աճելով 5.0 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանասական ակտիվների հետ գործառնությունները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 3.7%՝ բարելավվելով 0.7 տոկոսային կետով (որից 0.9%-ը Արցախյան պատերազմով պայմանավորված ռազմական լրացուցիչ ծախսերն են):

2020 թվականի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1894.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.3%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 1668.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.1%-ով, որն իր մեջ ներառում է կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված հակաճգնաժամային ծրագրերի սոցիալական (26.0 մլրդ դրամ) և տնտեսական միջոցառումների[21] (13.0 մլրդ դրամ) իրականացումը, առողջապահական ծախսերի աճը (լրացուցիչ 36.4 մլրդ դրամ՝ ներառյալ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերը) և պատերազմական իրավիճակով պայմանավորված ծախսերը: 2020 թվականին ընդհանուր հակաճգնաժամային հարկաբյուջետային միջոցառումները կազմել են 164.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.7%-ը[22]: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 226.2 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր), ներառյալ Արցախյան պատերազմով պայմանավորված ռազմական ծախսերը, կազմել են 227.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 18.0%-ով: Կապիտալ ծախսերն առանց այդ ռազմական ծախսերի նախորդ տարվա նկատմամբ նվազել են շուրջ 10.3%-ով:

[21] Տնտեսական աջակցության միջոցառումների ընդհանուր ծավալը կազմել է 32.4 մլրդ դրամ, որից 13.0 մլրդ դրամն իրականացվել է բյուջեի ծախսերի աճի միջոցով, իսկ 19.4 մլրդ դրամը՝ դեֆիցիտի ֆինանսավորման գործառնությունների (ներքին վարկավորման) միջոցով

[22] Կառավարության հակաճգնաժամային արձագանքի վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է Ներդիր 4-ում:

2018-2019 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա ունեցել է զսպող ազդեցություն, իսկ 2020 թվականին, պայմանավորված COVID-19-ի և Արցախյան պատերազմի հետևանքներին հակազդելու անհրաժեշտությամբ, հարկաբյուջետային քաղաքականությունը եղել է զգալի ընդլայնող: Ընդ որում 2018-2019 թվականներին ուշադրության կենտրոնում է պահվել ՀՀ կառավարության պարտքի կայունության ապահովումը և պարտքի բեռի նվազեցումը՝ զուգահեռաբար նպատակ դնելով նպաստել տնտեսական աճի արագացմանը և մակրոտնտեսական կայունության ապահովմանը: 2018-2019 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունն իրականացվել է «ոսկյա կանոնի» և նոր հարկաբյուջետային կանոնների տրամաբանության պահպանմամբ, ինչի շնորհիվ կապիտալ ծախսերի չափը գերազանցել է պակասուրդի մեծությունը, իսկ հարկային եկամուտները գերազանցել են ընթացիկ ծախսերը:

2018-2019 թվականներին կառավարության պարտքի կայունության ապահովմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության իրականացման արդյունքում պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է՝ կազմելով համապատասխանաբար 1.8% և 1.0%: Արդյուքնում, 2018-2019 թվականներին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա եղել է միջինում 1.1 տոկոս զսպող:

2020 թվականին տնտեսական անկման հետևանքով հարկային եկամուտների նվազման, ինչպես նաև կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ պայմանավորված ծախսերի աճի արդյունքում տեղի է ունեցել պետական բյուջեի պակասուրդի, ինչպես նաև կառավարության պարտքի կտրուկ աճ: 2020 թվականի ընթացքում ձևավորվել է պետական բյուջեի 334.0 մլրդ դրամ դեֆիցիտ՝ նախորդ տարվա 63.9 մլրդ դրամի համեմատ: ՀՆԱ-ի նկատմամբ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 5.4%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4.4 տոկոսային կետով: Արդյուքնում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա եղել է զգալի ընդլայնող՝ շուրջ 5.1 տոկոսի չափով (տես՝ Գծապատկեր 2.3):

Համավարակի հետևանքով առաջացած իրավիճակը և Արցախյան պատերազմը, հարկաբյուջետային կանոնների տեսակետից՝ համարելով «բացառիկ դեպք» (ինչն արտացոլվել է «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերին հավանություն տալու վերաբերյալ կառավարության՝ 2020թ. ապրիլի 23-ի (587-Ա) և սեպտեմբերի 29-ի (N 1600-Ա) որոշումներում), հարկաբյուջետային կանոնների համակարգին համահունչ («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.3 կետին համապատասխան) 2020 թվականին հնարավոր է եղել կիրառել պարտքի և ծախսերի բնականոն իրավիճակի համար գործող տրամաբանությունից տարբերվող մոտեցում. բյուջեի պակասուրդը եղել է ավելի մեծ, քան կապիտալ ծախսերն են, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճը գերազանցել է նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ-ի աճի միջին տեմպը:

COVID-19 համավարակի և Արցախյան պատերազմի պայմաններում տեղի ունեցած տնտեսական ցնցման, վերջինիս խթանող հարկաբյուջետային քաղաքականությամբ հակազդելու և պետական բյուջեի ծախսերի լրացուցիչ պահանջի ֆինանսավորման պատճառով ՀՀ կառավարության պարտքի բեռը 2018-2019թթ. արձանագրված հարկաբյուջետային

կոնսոլիդացիայից հետո 2020 թվականին կտրուկ աճել է՝ գերազանցելով սահմանային շեմ հանդիսացնող 60% ցուցանիշը և կազմելով 63.5%: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշն աճել է 13.4%-ային կետով, ինչին ամենաշատը նպաստել են տնտեսական անկումը և փոխարժեքի արժեզրկումը՝ յուրաքանչյուրը 3.9 տոկոսային կետով: Առաջնային հաշվեկշռի նպաստումը կազմել է 2.7%-ային կետ, իսկ իրական տոկոսադրույքի նպաստումը՝ 1.7%-ային կետ (տես՝ Գծապատկեր 2.5):

2021թ. ընթացիկ զարգացումներ

2021 թվականի առաջին հինգ ամիսներին տնտեսության որոշակի վերականգնման և թույլ պահանջարկի պայմաններում իրականացվել է հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականություն՝ նպատակ ունենալով նպաստել տնտեսական վերականգնմանը և սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիայի տրամաբանությամբ հիմքեր ստեղծել հաջորդ տարիներին պարտքի հետագիծը նվազեցնելու ուղղությամբ: 2021 թվականի առաջին հինգ ամիսների արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 648.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.7%-ով, իսկ հարկեր և տուրքերը կազմել են 618.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.9%-ով:

Գծապատկեր 2.1. Պետական բյուջեի հարկային եկամուտները 2020-2021 թվականներին ըստ ամիսների



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2021 թվականի հունվար-մայիս ամիսների արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 723.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 13.2%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 657.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 8.9%-ով, որն իր մեջ ներառում է COVID-19-ին և Արցախյան պատերազմի հետևանքների վերացմանն ուղղված ծախսեր: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները հունվար-մայիս ամիսներին կազմել են 65.7 մլրդ դրամ,

որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ 66.3. մլրդ դրամ: Վերջինս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 82.9% և հիմնականում պայմանավորված է պաշտպանությանն ուղղված ծախսերի աճով:

2021 թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում կառավարությունն կորոնավիրուսի հետևանքների մեղմման ուղղված հակաճգնաժամային հարկաբյուջետային միջոցառումների գծով իրականացրել է շուրջ 15.6 մլրդ դրամի չափով ծախսեր, որից տնտեսական աջակցության համար 5.1 մլրդ դրամ, իսկ առողջապահական ծրագրերով՝ 9.8 մլրդ դրամ, իսկ Արցախյան պատերազմի հետևանքներով պայմանավորված ծախսերը նույն ժամանակահատվածում կազմել են 33.3 մլրդ դրամ, որից սոցիալական աջակցությանն ուղղված մասը կազմել է 32.7 մլրդ դրամ:

2021 թվականի հունվար-մայիս ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի պակասուրդ 74.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորված 25.6 մլրդ դրամի դիմաց:

Կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումներ

Հարկաբյուջետային և պարտքային կայուն միջավայր ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ 2021 թվականին ծրագրավորվել է մեկնարկել հարկաբյուջետային կոնսոլիդացիա: 2021թ.-ին, հաշվի առնելով տնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսության վերականգնման ավելի դանդաղ կանխատեսումները, նախատեսվում է ևս մեկ տարի օգտագործել հարկաբյուջետային կանոնների համակարգով նախատեսված բացառիկ դեպքի կարգավորումներից [23] և պետական ֆինանսների «ոսկե կանոնների» տրամաբանությանը վերադառնալ միջնաժամկետ հատվածում՝ վերականգնման արդյունավետ ընթացքն ապահովելու նպատակով: Այդ համատեքստում, պետական բյուջեի կապիտալ ծախսերը ևս մեկ տարի կլինեն ավելի փոքր, քան բյուջեի պակասուրդը: 2021թ.-ին տնտեսության վերականգնումը չխաթարելու և մակրոտնտեսական կայունությանը նպաստելու նպատակով, նախատեսվում է իրականացնել հարկաբյուջետային սահուն կոնսոլիդացիա, ինչի արդյունքում կապահովվի կառավարության պարտքի բեռի նվազում:

2021 թվականին տեղական հարկերի՝ տնտեսական ակտիվության համեմատ ավելի դանդաղ աճի և, միևնույն ժամանակ, ներմուծման գծով հարկերի արագ աճի պայմաններում կանխատեսվում է, որ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2020թ. համեմատ չի փոխվի:

Ելնելով համավարակի և պատերազմական գործողությունների հետևանքներից գնահատվում է, որ 2021թ.-ին տեղի կունենա ընթացիկ ծախսերի աճ՝ պայմանավորված հակաճգնաժամային հարկաբյուջետային միջոցառումներով՝ COVID-19-ին և Արցախյան պատերազմի հետևանքների վերացմանն ուղղված ծախսերով: Սակայն, անվանական ՀՆԱ-ի առաջանցիկ աճի պայմաններում ընթացիկ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ կնվազի 1.7 տոկոսային կետով: Սպասվում է նաև, որ կարճանագրվի կապիտալ ծախսերի որոշակի թերակատարում՝ հիմք ընդունելով նախորդ տարիների կատարողականները և

[23] Առավել մանրամասն ներկայացված է «2.5. Հարկաբյուջետային քաղաքականության համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին» հատվածում

ընթացիկ տարվա զարգացումները: Արդյունքում ընդհանուր ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ 2021թ.-ին 2020թ. համեմատ կնվազեն շուրջ 2.5 տոկոսային կետով:

Պետական բյուջեի պակասուրդը 2021թ.-ին նախորդ տարվա նկատմամբ կնվազի՝ կազմելով ՀՆԱ-ի շուրջ 4.6 տոկոսը: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը ևս կնվազի՝ կազմելով շուրջ 62.3 տոկոս:

Գծապատկեր 2.2. Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը, մլրդ դրամ





Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Միջնաժամկետում հարկաբյուջետային և պարտքային կայուն միջավայր ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ ծրագրավորվում է սկզբնական փուլում իրականացնել զսպող, այնուհետև չեզոք հարկաբյուջետային քաղաքականություն: Միջնաժամկետ հորիզոնում թիրախավորվել է ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ-ի աստիճանական նվազում՝ 2024 թվականին հասցնելով այն 56.8%-ին: 2022-2024 թվականներին, կառավարության պարտքի թիրախին հասնելու նպատակով նախատեսվում է իրականացնել սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ նվազեցնելով պետական բյուջեի պակասուրդը և մինչև 2024 թվականը հասցնելով այն ՀՆԱ-ի նկատմամբ 1.9%-ին:

Գծապատկեր 2.3. Հարկաբյուջետային ազդակը



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատականներ

Միջնաժամկետում, տնտեսության վերականգնմանը զուգահեռ, վերադարձ կկատարվի հարկաբյուջետային կանոններով սահմանված պետական ֆինանսների «ոսկե կանոնների» տրամաբանությանը՝ կայուն հիմքեր ստեղծելով երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար, ապահովելով պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազող հետագիծը և ծախսերի կառուցվածքի բարելավումը, ինչպես նաև հետևողական քայլեր կատարելով ծախսերի գծով խնայողությունների և եկամուտների ավելացման ուղղությամբ: Մասնավորապես նախատեսվել է ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի մասնաբաժնի մեծացում, ինչի արդյունքում կապիտալ ծախսերի ծավալը միջնաժամկետի վերջում զգալիորեն կգերազանցի պետական բյուջեի պակասուրդի մեծությունը: Բացի այդ, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավման և ընթացիկ ծախսերի՝ հարկաբյուջետային կանոններին համապատասխան սահմանափակ աճի պայմաններում, կանխատեսվող հորիզոնի վերջում հարկային եկամուտներ/ՀՆԱ-ն կգերազանցի ընթացիկ ծախսերի մակարդակը շուրջ 1.4 տոկոսային կետով:

Տնտեսության վերականգնման, հարկային վարչարարության բարելավման և հարկային օրենսդրության բարեփոխումների արդյունքում միջնաժամկետում ակնկալվում է ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների բարելավում միջինը տարեկան շուրջ 0.4 տոկոսային կետով: Հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի բարելավումը հնարավորություն կընձեռի ավելի մեծ ռեսուրսներ հատկացնել երկարաժամկետ տնտեսական աճը խթանող կապիտալ ծախսերի իրականացմանը՝ մեծացնելով դրանց կշիռը ՀՆԱ-ում և 2024թ.-ին հասցնելով 4.0%-ի:

Գծապատկեր 2.4. Ոսկե կանոններից շեղումը 2020-2021թթ.-ին և վերադարձը դրանց պահպանմանը միջնաժամկետում



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2020թ.-ին գրանցված կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի պայմաններում ՀՀ հարկաբյուջետային կանոններով նախատեսված հարկաբյուջետային կոնսոլիդացիան կմեկնարկի 2021թ.-ից, ինչի արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը ցածր կլինի կառավարության պարտքի սահմանային 60% շեմից 2023 թ.-ին, իսկ մինչև 2026թ. կմոտենա ՀՆԱ-ի 50% շեմին: Միջնաժամկետում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազմանը նպաստող հիմնական գործոնը կլինի տնտեսական աճը և հարկաբյուջետային քաղաքականության հետևանքով պետական բյուջեի առաջնային հաշվեկշռի բարելավումը:

Գծապատկեր 2.5. ՀՀ կառավարության պարտքի դինամիկան և այն պայմանավորող գործոնները[24]



[24] Կառավարության պարտքի բեռի փոփոխության տրոհումը ըստ գործոնների հաշվարկվել է բաց տնտեսությունում «պարտքի շարժման» բանաձևի օգնությամբ, որտեղ պարտքի փոփոխությունը ֆունկցիա է

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Ներդիր 4: Կորոնավիրուսի ճգնաժամի հաղթահարմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության միջոցառումները

COVID-19 համավարակի տարածման բացասական ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա արտացոլվել են ինչպես արտաքին աշխարհից փոխանցվող շոկերի այնպես էլ ներքին տնտեսական սահմանափակումների տեսքով: Տնտեսական խորը անկումը կանխելու, ինչպես նաև հետագա վերականգնումը խթանելու համար, կառավարությունը 2020 թվականին նախատեսել էր իրականացնել 150 մլրդ դրամ (ՀՆԱ-ի 2.4%-ի չափով) ընդհանուր գումարի չափով սոցիալ տնտեսական աջակցության միջոցառումների ծրագիր:

2020 թվականին փաստացի ծախսվել է 39.0 մլրդ դրամ, իսկ բյուջեից վարկավորումը կազմել է 19.4 մլրդ դրամ, որոնք միասին կազմում են ՀՆԱ-ի 0.95 տոկոսը: Մասնավորապես, սոցիալական աջակցության ծրագրերի գծով հատկացվել է 26.0 մլրդ դրամ, իսկ տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տրամադրվել է 32.4 մլրդ դրամ (որից 13.0 մլրդ դրամը բյուջեի ծախսերի աճի միջոցով, իսկ 19.4 մլրդ դրամը՝ դեֆիցիտի ֆինանսավորման գործառնությունների (ներքին վարկավորման) միջոցով): Երկարաժամկետ տնտեսական զարգացմանն ուղղված, 80.0 մլրդ դրամ նախապես ծրագրավորված ծավալով միջոցառումները 2020 թվականի ընթացքում չեն իրականացվել: COVID-19 համավարակի տարածման կանխարգելման առողջապահական ազդեցությունների մեղմման նպատակով կառավարությունն իրականացրել է նաև լրացուցիչ առողջապահական ծախսեր, որոնց ծավալը դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է մոտ 36.4 մլրդ դրամ (ներառյալ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերը): Առավել մանրամասն ներկայացված է պետական բյուջեի 2020թ.-ի հաշվետվությունում:

Բացի վերոնշյալ ծրագրերից, կառավարության հակաճգնաժամային արձագանքը ներառել է նաև շահութահարկի կանխավճարի գծով հիմնարար փոփոխությունները, որոնց միջոցով աջակցություն է ցուցաբերվել շահութահարկ վճարող տնտեսավարող սուբյեկտներին շրջանառու ֆինանսական միջոցների հետ կապված խնդիրների լուծման նպատակով, որի ընդհանուր ծավալը սկզբնական շրջանում գնահատված 65 մլրդ դրամի փոխարեն ներկայումս գնահատվում է շուրջ 70 մլրդ դրամի չափ (որից տնտեսության մեջ թողնված շահութահարկի կանխավճարները 2020 թվականին կազմել են մոտ 52.0 մլրդ դրամ):

Արդյունքում հակաճգնաժամային հարկաբյուջետային միջոցառումների չափը 2020 թվականին կազմել է 164.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.7%-ը:

Հակաճգնաժամային հարկաբյուջետային միջոցառումները շարունակել են իրականացվել նաև 2021 թվականին: Մասնավորապես՝ կորոնովիրուսի հետևանքների մեղման նպատակով 2021

տնտեսական աճից, բյուջեի առաջնային հաշվեկշռից, փոխարժեքից, իրական տոկոսադրույքից և պարտք առաջացնող այլ հոսքերից (ՀՀ համար՝ զուտ վարկավորում պետական բյուջեից): Հաշվարկման ընթացքում այս գործոններով չբացատրված պարտքի փոփոխության չափը արտացոլվում է որպես «մնացորդ», և, կարող է բնութագրել քրոս (արժույթների միմյանց նկատմամբ) փոխարժեքների փոփոխությամբ պայմանավորված վերագնահատման ազդեցությունները:

թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում կառավարությունն իրականացրել է շուրջ 15.6 մլրդ դրամի չափով ծախսեր, իսկ Արցախյան պատերազմի հետևանքներով պայմանավորված ծախսերը նույն ժամանակահատվածում կազմել են 33.3 մլրդ դրամ, որից սոցիալական աջակցությանն ուղղված մասը կազմել է 32.7 մլրդ դրամ:

Գծապատկեր 2.6. Հարկաբյուջետային քաղաքականությունների արձագանքը տնտեսական ճգնաժամերին



Գծապատկեր 2.7. Հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը համավարակի տնտեսական հետևանքներին առանձին երկրներում



Գծապատկեր 2.8. Հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը համավարակի տնտեսական հետևանքներին առանձին երկրների խմբերում (միայն ծախսային և եկամտային միջոցառումներ)



Ընդհանուր առմամբ, համավարակին հակազդելու համար մշակված հարկաբյուջետային փաթեթներն աշխարհի մակարդակով գնահատվում են 16 տրիլիոն դոլար (2020 և 2021 թվականի համար նախատեսված միջոցառումներ)[25]: Վերջինից 10 տրիլիոնը վերաբերում է ծախսային և հարկային միջոցառումներին, իսկ 6 տրիլիոնը՝ պետական վարկերին, կապիտալի ներարկումներին և վարկային երաշխիքներին: Առավել խոշոր հակազդման փաթեթներով առանձնանում են Ճապոնիան և Գերմանիան, որոնք նախատեսում են իրականացնել ՀՆԱ-ի ավելի քան 40%-ի չափով միջոցառումներ: Հատկանշական է, որ երկրների մեծ մասը կիրառում է պետական վարկավորումը կամ երաշխիքները՝ որպես աջակցության հիմնական գործիքներ:

Սակայն պետք է նշել, որ հակազդման միջոցառումների ծավալները շեշտակիորեն տարբեր են ըստ զարգացող և զարգացած երկրների: Այսպես, զարգացած երկրների գումարային փաթեթները մոտ են ՀՆԱ 24%-ին, մինչդեռ զարգացող երկրներում՝ 6%-ին, իսկ ցածր եկամտային երկրներում՝ 1.8%-ին: Հայաստանի փաթեթը, որը հանրագումարային առումով գնահատվում է ՀՆԱ 4%-ի[26] շրջանակներում, համադրելի է զարգացող երկրների փաթեթների հետ:

2.4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Հարկաբյուջետային կանխատեսումները հիմնված են մի շարք ենթադրությունների և հիմնական դատողությունների վրա, որոնց համար օգտագործվել է տվյալ պահի դրությամբ առկա և հասանելի ամբողջ տեղեկատվությունը [27] : Ինչպես ցանկացած կանխատեսում,

[25] 2021 թվականի մարտի 17-ի դրությամբ: Աղբյուրը՝ IMF Fiscal Monitor April 2021. https://www.imf.org/en/Publications/FM/Issues/2021/03/29/fiscal-monitor-april-2021:

[26] Այս ցուցանիշը ի համեմատ փաստացի 2.3%-ի, իր մեջ ներառում է համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների ամբողջական 150 մլրդ դրամ փաթեթը, քանի որ միջազգային համադրումների համար ԱՄՀ տվյալների բազան վերաբերում է պլանավորված ցուցանիշներին:

[27] Հարկաբյուջետային կանխատեսումների համար հիմք է հանդիսացել 2021թ.-ի ապրիլի վերջի դրությամբ առկա տեղեկատվությունը՝ համավարակի և Արցախյան պատերազմի տնտեսական ազդեցությունների, միջազգային

հարկաբյուջետային կանխատեսումները նույնպես պարունակում են ռիսկեր կապված նրա հետ, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասումներից: 2022-2024թթ. ՄԺԾԾ հիմնական մակրոտնտեսական հարկաբյուջետային ռիսկերը հետևյալն են՝

COVID-19 համավարակի անորոշություններ: Ինչպես ներկայացվել է ՄԺԾԾ «1.5. Մակրոտնտեսական կանխատեսումների ռիսկերը» բաժնում տնտեսական աճի անորոշությունները պահպանվում են և առկա են տնտեսական աճի երկկողմանի ռիսկեր: Տնտեսական աճի բացասական ռիսկերի ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտները այս ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակից ավելի ցածր կլինեն: Հաշվի առնելով նաև այն, որ ընթացիկ ծախսերը, համաձայն հարկաբյուջետային կանոնների, 2022թ.-ին սահմանափակված են հարկային եկամուտներով, իսկ միջնաժամկետում՝ նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ-ի աճի տեմպով, ապա կառավարության հնարավորությունները ընթացիկ ծախսերի իրականացման գծով տնտեսական աճի՝ կանխատեսումներից ավելի ցածր լինելու պարագայում նույնպես կկրճատվեն: Այդ ռիսկերի առարկայանալու պարագայում պետք է վերանայվեն համապատասխան ծախսային ծրագրերը:

Համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքների մեղմանն և **տնտեսության հետագա վերականգնմանն ուղղված ՀՀ կառավարության միջոցառումների ընթացքը:** ՀՀ կառավարության կողմից իրականացվող COVID 19-ի հետևանքների չեզոքացման, ինչպես նաև Արցախյան պատերազմի հետևանքների մեղմանն ուղղված միջոցառումների գծով հնարավոր է նախատեսվեն աջակցության նոր ծրագրեր, որոնց արդյունքում հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշները վերանայման կարիք կունենան: Բացի այդ, 2022-2024թթ. ՄԺԾԾ սցենարում ներառված չէ կառավարության 80 մլրդ դրամի չափով երկարաժամկետ աջակցության ծրագրի իրականացման ազդեցությունները: Վերջինիս իրականացումը 2021 թվականին հանդիսանում է դրական ռիսկ տնտեսական աճի գծով, սակայն միևնույն ժամանակ կարող է հանգեցնել պետական բյուջեի ֆինասավորման կարիքի աճին:

ՀՀ Կառավարության 2021թ. Փետրվարի 4-ի թիվ 142-Լ որոշմանբ հաստատվել է 2021թ. տնտեսկան արձագանքման ծրագիրը, ինչպես նաև ծրագրի գործողությունների պլանը և փաթեթը, որոնցով նախատեսվել է իրականացնել շուրջ 205 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով տնտեսական զարգացմանն ուղղված միջոցառումներ: Այդ գումարից մոտ 50 մլրդ ՀՀ դրամը՝ հանրային ֆինանսական ռեսուրսների հաշվին: Նշված միջոցներից շուրջ 35.0 մլրդ դրամը նախատեսված չէ 2021թ. բյուջեով և պահանջում է լրացուցիչ ֆինանսավորում: Այս ծրագրերի ամբողջական իրականացումը կարող է հանգեցնել տնտեսական աճի արագացմանը, իսկ հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշները վերանայման կարիք կունենան:

Հարկային քաղաքականության լրացուցիչ միջոցառումներ: Հարկային օրենսդրության փոփոխությունների գծով 2022-2024թթ. համար հաշվի են առնվել արդեն իսկ հարկային օրենսգրքով հաստատված փոփոխությունները: Սակայն, հարկային ճեղքի նվազեցման միջոցառումների շրջանակներում քննարկվում են նաև հավելյալ բարեփոխումների իրականացման նպատակահարմարության հարցերը. շրջանառության հարկի շեմի փոփոխություն և դրույքաչափի

կազմակերպությունների կանխատեսումների, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության հակաճգնաժամային միջոցառումների վերաբերյալ:

ճշգրտում, բնապահպանական հարկի ներդրում, գործող բնապահպանական հարկերի դրույքաչափի բարձրացում, ԱԱՀ արտոնությունների վերացում և այլն՝ ուղղված հարկային քաղաքականության ճեղքի կրճատմանը և հարկային եկամուտների՝ ՀՆԱ-ի նկատմամբ մակարդակի բարձրացմանը: Իրականացման ժամկետների անորոշություններով պայմանավորված դրանք 2022-2024թթ. ՄԺԾԾ հիմքում դրվող կանխատեսումներում ներառվել են որպես ռիսկեր, որոնք կարող հանգեցնել հարկային եկամուտների կանխատեսումների դեպի վերև շեղմանը:

Կապիտալ ծախսերի թերակատարում: 2022-2024թթ. ՄԺԾԾ սցենարում նախատեսվել է կապիտալ ծախսերի զգալի աճ՝ մինչև 2024 թվականը հասցենելով դրանց մակարդակը ՀՆԱ-ի 4.0%-ին: Սակայն հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի կատարողականները (չնայած այն հանգամանքին, որ առկա է եղել կատարողականների բարելավման միտում), առկա է ծրագրավորված ցուցանիշների թերակատարման ռիսկ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ տնտեսական աճի վրա, ինչպես նաև ազդել հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշների վրա:

ՀՀ-ում իրականացվող ծրագրերին Եվրոպական Միության կողմից խոշորածավալ ֆինանսական աջակցության տրամադրումը: Ս.թ. հուլիսի 2-ին Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակած աշխատանքային փաստաթղթում[28]՝ «Վերականգնում, կայունություն և բարեփոխումներ» խորագրով ծրագրի համաձայն՝ ԵՄ-ն առաջիկա չորս տարիների ընթացքում շուրջ 2.6 մլրդ եվրոյի չափով նախատեսում է ֆինանսավորում տրամադրել Հայաստանին՝ փոխհամաձայնեցված ուղղություններով ծրագրերի իրականացմանն աջակցելու նպատակով: Նշված ծրագրերի իրականացումը զգալի ազդեցություն կունենա հարկաբյուջետային ցուցանիշների վրա՝ առաջացնելով հարկաբյուջետային քաղաքականության վերանայման կարիք:

Հարկաբյուջետային շրջանակի հնարավոր փոփոխությունները մակրոտնտեսական կանխատեսումների շեղումների դեպքում և սթրես թեստերի ներքո[29].

- **Հարկային եկամուտներ:** Միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա գնահատված է մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի շեղման ամփոփ գնահատականը: Հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 24.3 մլրդ ՀՀ դրամ 2022 թվականին, 40.4 մլրդ ՀՀ դրամ 2023 թվականին և 55.9 մլրդ ՀՀ դրամ 2024 թվականին:
- **Պետական բյուջեի ծախսեր:** Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: ՀՀ

[28] Փաստաթուղթը հասանելի է հետևյալ էլ. հղումով՝

https://eeas.europa.eu/sites/default/files/swd_2021_186_f1_joint_staff_working_paper_en_v2_p1_1356457_0.pdf

[29] Այս հատվածում նկարագրված ռիսկերի առավել մանրամասն վերլուծությունը ներկայացված է այս փաստաթղթի ՄԱՍ IV-ի «Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատում» և «ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծություն» բաժիններում:

պետական բյուջեի ծախսերի վրա գնահատված է ինչպես մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի շեղման ամփոփ գնահատականը, որոնց միաժամանակյա ի հայտ գալու պարագայում 2022-2024 թվականներին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի շուրջ 22.0–50.0 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.3-0.6%-ը: Ընդ որում՝ ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակադրումը լինելու է սոցիալական բնույթի ծախսերի կրճատման բացառումը, իսկ հնարավորության դեպքում՝ բյուջեի ծախսերի ամբողջական իրականացումը:

- **ՀՀ կառավարության պարտք:** ՀՀ կառավարության պարտքը շարունակում է գնահատվել կայուն և կառավարելի, սակայն բավականին շոշափելի են պարտքի բեռի ներկա մակարդակից բխող ռիսկերը: Մասնավորապես, չնայած՝ պարտքը ըստ ԱՄՀ և ՀԲ մեթոդաբանության գնահատվում է ցածր ռիսկային (բայց միևնույն ժամանակ խիստ մոտ միջին ռիսկայնության սահմանագծին), սակայն տնտեսական աճի և փոխարժեքի շոկերի դեպքում պարտք/ՀՆԱ ցուցանիշը բարձ է մնում ՀՀ հարկաբյուջետային կանոններով սահմանված 60% սահմանային շեմից, իսկ տնտեսական աճի շոկի դեպքում՝ նաև ընդհուպ մոտենում է ռիսկայնության 70% շեմին: Բացի այդ, ՀՀ կառավարության պարտքի պորտֆելը շարունակում է մնալ խոցելի՝ պայմանավորված արտարժութային և ոչ ռեզիդետների նկատմամբ պարտքի բարձր մասնաբաժիններով: Պարտքի կայունության ապահովման համար հրամայական է հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացումը և պարտքի բեռի նվազեցումը պարտք/ՀՆԱ սահմանային 60%-ի շեմից: Միևնույն ժամանակ, պարտքի կանխատեսումները ենթակա են էական անորոշության: Այսպես, ըստ հավանականությունների բաշխման գրաֆիկի, 2024թ-ի համար 10-ից 90% հավանականային միջակայքում պարտք/ՀՆԱ ցուցանիշը 45-ից 71 տոկոս միջակայքում է ուրվագծվում:

Ամփոփելով հարկաբյուջետային ռիսկերի նկարագրությունը կարող ենք նշել, որ 2020թ. ճգնաժամային իրավիճակով և դրա դրսևորումների շարունակությամբ պայմանավորված ռիսկերն առավելապես վերաբերում են առկա անորոշություններին: Մասնավորապես, անորոշություններ են առկա ինչպես տնտեսության վերականգնման ընթացքի և տևողության հետ կապված, այնպես էլ հարկաբյուջետային քաղաքականության միջոցառումների չափի և ժամկետների, ինչպես նաև վերջիններիս արդյունավետության գծով: Նշված ռիսկերի ի հայտ գալու կամ անորոշությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության պայմաններում, առաջիկա տարիների հարկաբյուջետային շրջանակը կարող է վերանայվել:

2.5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

ՀՀ հարկաբյուջետային կանոնների ներկա համակարգը գործարկվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 20-ին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պատքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների, ինչպես նաև են ՀՀ Կառավարության՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման ընդունմամբ: Կանոնների համակարգը ներառում է ծախսային կանոններ, որոնք ուժի մեջ են մտնում պարտքի սահմանված շեմերը գերազանցելիս: Մասնավորապես.

- Երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:
- Կառավարության պարտք/ՀՆԱ 50-60% միջակայքում ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:
- Երբ Կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև Կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:
- Ներկայացված սահմանափակումները չեն գործում կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների պարագայում:

2020թ.-ի պետական բյուջեի ինչպես վերանայված ծրագրային ցուցանիշները, այնպես էլ փաստացի ցուցանիշները շեղվել են ծախսային կանոններով բնականոն իրավիճակի համար սահմանված պահանջներից՝ մնալով օրենսդրության շրջանակում, քանի որ տնտեսական ցնցումներով պայմանավորված՝ իրավիճակը ճանաչվել է բացառիկ: Վերջինիս իրավական հիմքերը ձևավորված են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.3 կետով և ՀՀ կառավարության N 942-Ն որոշման 3-րդ կետով նախատեսված դրույթներով, իսկ իրավիճակը բացառիկ է ճանաչվել ՀՀ կառավարության 2020թ.-ի ապրիլի 23-ի 587-Ա և սեպտեմբերի 29-ի 1600-Ա որոշումներով: Այս հանգամանքը հանգեցրել է 2020թ.-ին իրականացված հարկաբյուջետային խթանող քաղաքականության արդյունքում ՀՀ կառավարության պարտքի բեռի շեղմանը 60% սահմանային շեմից, որի պայմաններում կառավարությունը պետք է ծրագրի հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ պարտքի բեռը այդ շեմային ցուցանիշից նվազեցնելու նպատակադրմամբ:

2021թ.-ին նախատեսվել է սկսել սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիա և բյուջեի պակասուրդը կրճատել աստիճանական եղանակով՝ նպատակ դնելով չխաթարել վերականգնման փուլում տնտեսական ակտիվությունը և կառուցվածքային բարեփոխումների ընթացքը: Մասնավորապես, նախատեսվել է դանդաղեցնել կառավարության պարտքի բեռի ավելացման տեմպը, ինչը հիմք կհանդիսանա միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային կանոններին համահունչ «առավել անվտանգ մակարդակներ» պարտքի բեռի նվազեցման ճանապարհով պետական պարտքի կայունության ամրապնդման համար: Միևնույն ժամանակ սպասվում է, որ 2021թ.-ին պետական բյուջեի կատարումը շարունակելու է շեղվել

հարկաբյուջետային կանոններից, քանի որ 2020թ.-ի տնտեսական ցնցման հետևանքների պահպանմամբ պայմանավորված, ՀՀ օրենսդրությանը համապատասխան կարգով, 2021թ.-ին ևս կպահպանվեն բացառիկ իրավիճակի կարգավորումները: Սակայն նախատեսվում է 2021թ.-ին զգալիորեն կրճատել կանոններից շեղման չափը, ինչը հնարավորություն կտա 2022թ.-ից վերադառնալ հարկաբյուջետային կանոնների ամբողջական պահպանմանը:

Միջնաժամկետում նախատեսվում է վերադարձ հարկաբյուջետային կանոնների ամբողջական պահպանմանը: Տնտեսության վերականգնմանը զուգահեռ, ՀՀ Կառավարությունը վերադարձ կկատարի ՀՀ օրենսդրությամբ բնականոն իրավիճակների համար սահմանված ծախսային կանոնների, այդ թվում՝ պետական ֆինանսների «ոսկե կանոնների» և ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպի՝ երկարաժամկետ տնտեսական աճի միջին տեմպով սահմանափակման կանոնի ամբողջական պահպանմանը՝ ապահովելով պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազող հետագիծը և ծախսերի կառուցվածքի բարելավումը: Մասնավորապես, մշակված հարկաբյուջետային շրջանակը նախանշում է կառավարության պարտքի բեռի նվազեցումը 2021թ.-ից՝ մինչև 2024թ.-ը ապահովելով 2020թ.-ի նկատմամբ 6.7%-ային կետով ավելի ցածր ցուցանիշ: 2022-2024 թվականների ծրագրված հարկաբյուջետային զարգացումները հնարավորություն կտան շարունակել հարկաբյուջետային կոնսոլիդացիան ՀՀ կառավարության պարտքի նվազեցման ծրագրի ամբողջ հորիզոնում՝ մինչև 2026 թվականը, և ապահովել կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի 60%-ից ցածր մակարդակ Ծրագրով նախատեսվող ժամանակահատվածում: (առավել մանրամասն տես՝ «Հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները և կանխատեսումները հատվածում»):

Աղյուսակ 2.2. Փաստացի և ծրագրավորված հարկաբյուջետային քաղաքականության համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին

Կանոնի ցուցանիշ	Ուղենիշային ցուցանիշ	2019		2020		2021		2022		2023		2024	
		Սահմ.	Փաստ.	Սահմ.	Փաստ.	Սահմ.	Դրամ	Սահմ.	Դրամ	Սահմ.	Դրամ	Սահմ.	Դրամ
Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	>/= պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	64	193	334.0	226.2	318.8	197.2	181.7	292.6	168.8	308.1	163.7	353.9
Պետական բյուջեի ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպ	</= նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ աճի միջին տեմպ, %	6.1	5.9	5.9	14.8	6.3	10.34	4.1	-0.4	5.6	1.3	6.7	6.6
Պետական բյուջեի ընթացիկ ծախսեր	</= հարկային եկամուտների և տուրքերի ծավալ, մլրդ դրամ**	-*	1437.1	-	1668.5	-	1738.9	1733.5	1708.3	1889.9	1827.3	2084.0	1958.1
Կառավարության պարտք/ՀՆԱ, %		50.1		63.5		62.3		60.5		58.7		56.8	

***Պետական պարտքի առկա չափի դեպքում կիրառելի չէ**

2.6. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 2.3. Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)

Ընդունման տարին	Ծրագիր	2020	2021	2022	2023	2024
-	Փաստացի	1,560.7				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*25.25%*				
2019	ՄԺԾԾ 2020-2022	1,710.6	1,858.8	2,051.1		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*24.5%*	*24.4%*	*24.7%*		
	2020թ. Պետական բյուջե	1,695.0				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*23.9%*				
2020	ՄԺԾԾ 2021-2023	1,488.7	1,669.9	1,885.9	2,082.9	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.9%*	*23.4%*	*24.0%*	*24.3%*	
	2021թ. Պետական բյուջե	1,477.7	1,509.5			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*24.3%*	*23.6%*			
2021	ՄԺԾԾ 2022-2024		1,617.3	1,819.2	1,966.7	2,148.3
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*23.5%*	*24.0%*	*24.1%*	*24.3%*

Աղյուսակ 2.4. Պետական բյուջեի հարկային եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)

Ընդունման տարին	Ծրագիր	2020	2021	2022	2023	2024
-	Փաստացի	1,385.2				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.41%*				
2019	ՄԺԾԾ 2020-2022	1,621.2	1,787.5	1,988.8		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*23.2%*	*23.5%*	*23.9%*		
	2020թ. Պետական բյուջե	1,602.3				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.6%*				
2020	ՄԺԾԾ 2021-2023	1,395.9	1,600.3	1,819.7	2,027.1	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*21.5%*	*22.4%*	*23.2%*	*23.6%*	
	2021թ. Պետական բյուջե	1,349.8	1,440.1			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.2%*	*22.50%*			
2021	ՄԺԾԾ 2022-2024		1,540.5	1,733.5	1,889.9	2,084.0
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*22.4%*	*22.9%*	*23.1%*	*23.6%*

Աղյուսակ 2.5. Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)

Ընդունման տարին	Ծրագիր	2020	2021	2022	2023	2024
-	Փաստացի	1,894.6				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*30.65%*				
2019	ՄԺԾԾ 2020-2022	1,868.2	2,027.7	2,235.5		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*26.8%*	*26.6%*	*26.9%*		
	2020թ. Պետական բյուջե	1,855.7				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*26.2%*				
2020	ՄԺԾԾ 2021-2023	1,850.2	1,879.0	2,026.1	2,241.4	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*28.4%*	*26.3%*	*25.8%*	*26.1%*	
	2021թ. Պետական բյուջե	1,907.4	1,850.9			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*31.4%*	*28.9%*			
2021	ՄԺԾԾ 2022-2024		1,936.0	2,000.9	2,135.5	2,312.0
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*28.1%*	*26.4%*	*26.1%*	*26.2%*

Աղյուսակ 2.6. Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)

Ընդունման տարին	Ծրագիր	2020	2021	2022	2023	2024
-	Փաստացի	1,668.5				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*26.99%*				
2019	ՄԺԾԾ 2020-2022	1,479.9	1,568.3	1,680.0		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*21.2%*	*20.6%*	*20.2%*		
	2020թ. Պետական բյուջե	1,568.0				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.1%*				
2020	ՄԺԾԾ 2021-2023	1,628.0	1,629.0	1,699.9	1,836.7	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*25.0%*	*22.8%*	*21.6%*	*21.4%*	
	2021թ. Պետական բյուջե	1,622.7	1,634.6			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*26.7%*	*25.60%*			
2021	ՄԺԾԾ 2022-2024		1,738.9	1,708.3	1,827.3	1,958.1
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*25.3%*	*22.6%*	*22.4%*	*22.2%*

Աղյուսակ 2.7. Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)

Ընդունման տարին	Ծրագիր	2020	2021	2022	2023	2024
-	Փաստացի	226.2				

Ընդունման տարին	Ծրագիր	2020	2021	2022	2023	2024
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*3.66%*				
2019	ՄԺԾԾ 2020-2022	388.3	459.4	555.5		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*5.6%*	*6.0%*	*6.7%*		
	2020թ. Պետական բյուջե	287.7				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*4.1%*				
2020	ՄԺԾԾ 2021-2023	222.2	250.0	326.2	404.8	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*3.4%*	*3.5%*	*4.2%*	*4.7%*	
	2021թ. Պետական բյուջե	284.7	216.3			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*4.7%*	*3.40%*			
2021	ՄԺԾԾ 2022-2024		197.2	292.6	308.1	353.9
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*2.9%*	*3.9%*	*3.8%*	*4.0%*

Աղյուսակ 2.8. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)

Ընդունման տարին	Ծրագիր	2020	2021	2022	2023	2024
-	Փաստացի	334.0				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*5.40%*				
2019	ՄԺԾԾ 2020-2022	157.6	169.0	184.4		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*2.3%*	*2.2%*	*2.2%*		
	2020թ. Պետական բյուջե	160.7				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*2.3%*				
2020	ՄԺԾԾ 2021-2023	361.5	209.1	140.2	158.6	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*5.6%*	*2.9%*	*1.8%*	*1.8%*	
	2021թ. Պետական բյուջե	429.7	341.4			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*7.1%*	*5.30%*			
2021	ՄԺԾԾ 2022-2024		318.8	181.7	168.8	163.7
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*4.6%*	*2.4%*	*2.1%*	*1.9%*

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2022–2024ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՄԺԾԾ առանցքային հարցերից են պետական եկամուտների քաղաքականության ուղղությունները և դրանց կանխատեսելիությունը միջնաժամկետ հեռանկարում: Պետական ծախսերը ներքին ֆինանսական ռեսուրսներով ապահովելու պահանջը, ինչպես և նախորդ տարիներին, պետական եկամուտների քաղաքականության հիմնական խնդիրն է, որի լուծումը ՀՀ կառավարությանը հնարավորություն է ընձեռում ի հաշիվ սեփական ռեսուրսների իրականացնել արդյունավետ ծախսային քաղաքականություն: Այս թիրախի հասանելիության տեսանկյունից առավել ընդգծվում է հարկային քաղաքականության դերը:

Հարկային եկամուտների չափը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ հարկ վճարողների վարքագծից ու ՀՀ կառավարության վարչարարական միջոցառումների և օրենսդրական փոփոխությունների իրականացման արդյունավետությունից:

Եկամուտների քաղաքականության հիմնական նպատակները.

2022-2024 թվականների պետական եկամուտների քաղաքականությունը կիրականացվի ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված՝ 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով ամրագրված սկզբունքներին համապատասխան, ինչպես նաև 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1716-Լ որոշմամբ հաստատված՝ պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագրով ամրագրված միջոցառումներին, 2020 թվականի փետրվարի 18-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած խորհրդակցության արդյունքներով հավանության արժանացած՝ Հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգով ամրագրված ուղղություններին և ՀՀ վարչապետի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 1455-Լ որոշմամբ հաստատված՝ հարկային քաղաքականության ճեղքի կրճատմանն ուղղված միջոցառումներին համապատասխան:

Մասնավորապես, կարևորվելու են եկամուտների քաղաքականության հետևյալ ուղղությունները.

- հարկային արտոնությունների շրջանակի և հարկային ծախսերի կրճատման ուղղությամբ վերլուծությունների իրականացում և արդյունավետ չգնահատված հարկային արտոնությունները վերացնելու նպատակով առաջարկությունների ներկայացում,
- շրջանառության հարկի գծով հարկային բեռի վերանայում՝ նպատակ ունենալով վերացնել հարկման տարբեր համակարգերի միջև գոյություն ունեցող հարկային բեռի տարբերությունները,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման հետ կապված խնդիրների կարգավորում՝ նպատակ ունենալով ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման համար նոր՝ գործնականում կիրառելի փաստաթղթավորման համակարգ,

- տնտեսական շարժառիթների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրում, որի շրջանակներում ֆիզիկական անձինք, հարկման բազայից որոշակի նվազեցումներ կատարելու և տարվա ընթացքում այսպես կոչված «ավել վճարված» հարկի գումարը հետ ստանալու իրենց իրավունքից օգտվելու համար, տարեկան մեկ անգամ կներկայացնեն իրենց համախառն եկամուտների (այդ թվում՝ տարվա ընթացքում հարկային գործակալի կողմից հարկված) վերաբերյալ համախմբված հայտարարագիր:

Հարկային և մաքսային մարմինների ռազմավարական նպատակները.

ՊԵԿ հիմնական խնդիրներն են հարկային և մաքսային օրենսդրության ամբողջական և համահավասար կիրառումը, ՀՀ պետական բյուջեի եկամուտների ապահովումը, արդյունավետ հարկային և մաքսային հսկողության իրականացումը, ՀՀ տնտեսական անվտանգությանը նպաստումը, հարկ վճարողների և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների կողմից պարտավորությունների օրինաչափ և հարմարավետ կատարման նպատակով՝ ժամանակակից և մրցունակ համակարգերի միջոցով որակյալ ծառայությունների մատուցումը և սպասարկումը:

Կարևորվելու են հետևյալ ուղղությունները.

Ստվերային տնտեսության կրճատմանն ու մրցունակ բիզնես միջավայրի ձևավորմանն ուղղված հարկային քաղաքականության ուղղում տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը:

Հարկային քաղաքականությանը զուգահեռ՝ հարկային վարչարարության պարզեցման միջոցով ստվերի կրճատում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների գեներացում:

Հարկային վարչարարության խտրականության բացառում:

Ստվերային շրջանառությունների կրճատման նպատակով տնտեսությունում բոլոր գործարքների լիարժեք փաստաթղթավորման ապահովում:

Ներդրումային գրավչության բարձրացման նպատակով մաքսային սահմանի անցման գործընթացի հնարավորին չափ պարզեցում, <<Մեկ կանգառ, մեկ պատուհան>> համակարգի ներդրում:

Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովում առավելագույն հնարավորի սահմաններում:

3.2. ՀՀ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

ՀՀ 2022-2024 թվականների պետական բյուջեների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 1,819.2, 1,966.7 և 2,148.3 մլրդ դրամի չափով: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների:

Աղյուսակ 3.2.1. *2022-2024թթ ծրագրված եկամուտները (մլրդ դրամ)*

Եկամտատեսակը	2018թ	2019թ	2020թ	2021թ	2022թ	2023թ	2024թ
	Փաստ			Սպասում	Կանխատեսում		
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	1,341.7	1,565.5	1,560.7	1,617.3	1,819.2	1,966.7	2,148.3
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	22.3%	23.8%	25.2%	23.5%	24.0%	24.1%	24.3%
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,258.1	1,464.3	1,385.2	1,540.5	1,733.5	1,889.9	2,084.0
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	20.9%	22.3%	22.4%	22.4%	22.9%	23.1%	23.6%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	93.8%	93.5%	88.8%	95.3%	95.3%	96.1%	97.0%
2. Այլ եկամուտներ	72.4	88.8	122.8	51.0	59.2	57.9	55.3
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	1.2%	1.4%	2.0%	0.7%	0.8%	0.7%	0.6%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	5.4%	5.7%	7.8%	3.2%	3.3%	2.9%	2.6%
3. Պաշտոնական դրամաշնորհներ	11.2	12.4	53.2	25.8	26.5	18.9	9.0
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	0.2%	0.2%	0.9%	0.4%	0.4%	0.2%	0.1%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	0.8%	0.8%	3.4%	1.6%	1.5%	1.0%	0.4%

ՀՀ 2022-2024 թվականների պետական բյուջեների եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին եկամտատեսակների բազայի ձևավորման կամ հաշվարկման վրա: Առանձին դեպքերում հաշվի են առնվել նաև պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշները:

Հարկային եկամուտների գծով 2022-2024թթ բյուջետային մուտքերը ծրագրվել են հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի տարեկան միջինը 0.4 տոկոսային կետ աճ ապահովելու սկզբունքի հիման վրա: Հաշվարկներում լրացուցիչ ենթադրվել է, որ հարկերի գծով 2021 թվականի համար հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի սպասողական մակարդակը ապահովելու համար բավարար հիմքեր կստեղծեն առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական զարգացումները:

Անվանական ՀՆԱ-ի աճերը 2022-2024թթ համար ծրագրավորվել են համապատասխանաբար 10.0%, 7.9%, և 8.1%, որով պայմանավորված հարկային եկամուտների աճերը կկազմեն 2022թ.՝ 193.0 մլրդ դրամ, 2023թ.՝ 156.4 մլրդ դրամ և 2024թ.՝ 194.1 մլրդ դրամ:

Ըստ թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենարի[30] ՀՀ կառավարությունը 2022-2026թթ համար նպատակադրում է ապահովել տարեկան միջինում առնվազն 7.0% տնտեսական աճ՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների տարեկան միջինում շուրջ 0.7 տոկոսային կետով առաջանցիկ աճի բարելավմամբ: Նշված սցենարի իրագործման պայմաններում կստեղծվեն

[30] Թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենարը նկարագրված է Գլուխ 1-ի 1.3-ի կետի, 1.3.1 ենթակետում:

լրացուցիչ հնարավորություններ Հավելված N 6-ում ներկայացված 2022-2024թթ ծախսային առաջնահերթությունների իրականացման համար:

Գծապատկեր 3.2.1. ՀՀ 2018-2024թթ հարկային եկամուտները մլրդ դրամով և կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ



Պաշտոնական դրամաշնորհները 2022-2024թթ համար ծրագրվել են՝ հաշվի առնելով առկա պայմանագրերը, դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները և Եվրամիությունից ակնկալվող դրամաշնորհների դեպքում՝ սպասումները:

Աղյուսակ 3.2.2. *2022-2024թթ ծրագրված պաշտոնական դրամաշնորհները (մլրդ դրամ)*

Պաշտոնական դրամաշնորհներ	2022թ	2023թ	2024թ
	Կանխատեսում		
Ընդամենը, այդ թվում՝	**26.5**	**18.9**	**9.0**
1. ԵՄ (Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրեր)	5.6	-	-

Պաշտոնական դրամաշնորհներ	2022թ	2023թ	2024թ
	Կանխատեսում		
2. Այլ նպատակային դրամաշնորհներ	20.9	18.9	9.0

Արևելյան գործընկերության ՀՀ-ԵՄ համագործակցության նոր 5-ամյա փուլի շրջանակներում նախատեսվել է տարատեսակ ֆինանսական գործիքների միջոցով Հայաստանի Հանրապետությանը հատկացնել 1.6 մլրդ եվրո աջակցություն, որն ուղղվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության և ԵՄ-ի համատեղ սահմանած 5 առաջնահերթ նախաձեռնություններին, որոնք առընչվելու են փոքր ու միջին ձեռնարկությունների աջակցությանը, Հյուսիս-Հարավ մայրուղու և աջակցող ենթակառուցվածքների կառուցմանը, Հայաստանի Հանրապետության հարավային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանը, թվային կառավարմանը և նորարարության խթանմանը, ինչպես նաև Երևանի՝ որպես կանաչ և խելացի քաղաք զարգացմանը:

Այլ եկամուտները ներառում են բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները, պետական ձեռնարկությունների գույքի օգտագործման վճարները, պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսավճարները), իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերը, պետական մարմինների կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքերը և այլ եկամուտները:

Այլ եկամուտները 2022-2024թթ համար ծրագրվել են համապատասխանաբար 59.2 մլրդ դրամի, 57.9 մլրդ դրամի և 55.3 մլրդ դրամի չափով, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ 2022 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում համապատասխան հայտերով ներկայացված կանխատեսումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիներին արձանագրված միտումները:

Այլ եկամուտների ՄԺԾԾ կանխատեսումների ընդհանուր պատկերն ըստ եկամտի հիմնական աղբյուրների հետևյալն է.

Աղյուսակ 3.2.3 *Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2022-2024թթ ՄԺԾԾ շրջանակներում կատարված կանխատեսումները (մլրդ դրամ)*

Այլ եկամուտներ	2022թ	2023թ	2024թ
	Կանխատեսում		
Ընդամենը, այդ թվում՝	**59.2**	**57.9**	**55.3**
1. Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	6.7	7.5	7.6

2. Տոկոսավճարների և շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտներ	23.8	21.3	18.3
3. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	10.4	10.4	10.4
4. Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ, որից՝	16.9	17.2	17.5
5. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ	1.4	1.5	1.5

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

4.1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ

Պետական բյուջեի ձևավորումը առաջիկա տարիներին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2018-2024 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (տես Աղյուսակ 4.1.1):

Աղյուսակ 4.1.1. *ՀՀ 2018-2024 թթ պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)*

Ցուցանիշներ	2018թ	2019թ	2020թ	2021թ	2022թ	2023թ	2024թ
	Փաստ			Բյուջե	Կանխատեսում		
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները	105,392.4	63,947.9	333,991.8	341,414.6	181,699.1	168.804.3	163,723.6
Ա.Ներքին աղբյուրներ	69,364.0	(13,317.2)	359,379.0	138,686.6	298.878.9	284,811.9	296,048.7
Բ. Արտաքին աղբյուրներ	36,028.4	77,265.2	(25,387.2)	202,728.0	(117,179.8)	(116,007.6)	(132,325.1)

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2022-2024 թվականին կտատանվի ՀՆԱ-ի 2.4 %-ից 1.9% միջակայքում: Ինչպես նախորդ միջնաժամկետ ծախսային ծրագրերում, ՀՀ 2022-2024թթ ՄԺԾԾ-ում նույնպես պահպանվել է ՀՀ պետական բյուջեի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից):

Աղյուսակ 4.1.2. *Ընդհանուր և առաջնային դեֆիցիտները (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ) 2022-2024թթ*

Ցուցանիշներ	2022 կանխատեսում	2023 կանխատեսում	2024 կանխատեսում
Ընդհանուր դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը	2.4	2.1	1.9
Առաջնային դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի (առանց տոկոսավճարների) տարբերությունը	-0.4	-0.9	-1.2

Քանի որ պետական բյուջեի դեֆիցիտի զգալի մասը ֆինանսավորվում է փոխառու միջոցների հաշ-վին, ապա դրա մեծությունը և կառուցվածքը էապես առնչվում են պետական ներքին և արտաքին պարտքը բնութագրող ցուցանիշներին:

4.2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2022-2024ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ 2022-2024 թվականների պետական բյուջեների կանխատեսվող մուտքերի վերլուծությունից երևում է, որ 2021 թվականի սպասվող մակարդակի համեմատ, 2022 թվականի անվանական ՀՆԱ-ի շուրջ 10.0% աճի պայմաններում, ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի ծախսերի ծավալի ավելացումը ծրագրավորվում է շուրջ 71.6 մլրդ դրամով: Միաժամանակ, 2023 թվականին 2022 թվականի մակարդակի համեմատ պետական բյուջեի մուտքերի ծավալի 6.7 % աճ է կանխատեսվում (անվանական ՀՆԱ-ի 7.9% կանխատեսվող աճի պայմաններում), իսկ 2024 թվականին՝ 8.3 %-ով աճ 2023 թվականի մակարդակի համեմատ (անվանական ՀՆԱ-ի 8.1 % կանխատեսվող աճի պայմաններում):

Աղյուսակ 4.2.1. *Բյուջետային ռեսուրսների փաթեթում 2022-2024թթ կանխատեսվող փոփոխությունները*

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2022թ ծրագիր	2023թ ծրագիր	2024թ ծրագիր
1. Եկամուտներ	**1,819,212.1**	**1,966,651.7**	**2,148,323.3**
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	24.0	24.1	24.3
2. Դեֆիցիտի ֆինանսավորման զուտ աղբյուրներ	**181,699.1**	**168,804.3**	**163,723.6**
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.4	2.1	1.9
ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	**2,000,911.2**	**2,135,456.0**	**2,312,046.9**
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	26.4	26.1	26.2
ՆՈՒՅՆԸ՝ ԸՍՏ 2021-2023ԹԹ ՄԺԾԾ-ի	2,026,121.6	2,241,422.8	x
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	25.8%	26.1%	x

Նախորդ 2021-2023 թվականների համար հաստատված ՄԺԾԾ շրջանակի համեմատ 2021 թվականի մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակի հունվար ամսին վերագնահատման արդյունքում ի հայտ էին եկել նշանակալի փոփոխություններ: Վերջինս հիմք էր հանդիսացել 2022-2024 թվականների ՄԺԾԾ չափաքանակների սահմանման համար: 18.06.2021թ. մակրոշրջանակի վերանայման արդյունքում առաջացել է լրացուցիչ ծախսերի նախատեսման հնարավորություն 2022թ. համար՝ 186.5 մլրդ դրամ, 2023թ.՝ 198.4 մլրդ դրամ և 2024թ.՝ 377.2 մլրդ դրամ, ըստ ընթացիկ, կապիտալ և տոկոսավճարների գծով ծախսերի: Ընդ որում

ընթացիկ և կապիտալ ծախսերի լրացուցիչ գումարները նախատեսվել են որպես չբաշխված ծախսերում:

Արդյունքում 2022-2024 թվականների համար չբաշխված կապիտալ և ընթացիկ (այդ թվում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի) ծախսերը կազմում է համապատասխանաբար 334.6 մլրդ դրամ, 348.9 մլրդ դրամ և 483.1 մլրդ դրամ: Մասնավորապես.

2022թ-ի ընթացիկ ծախսերի գծով լրացուցիչ միջոցները համալրվել են ՀՀ կառավարության պահուստային ֆոնդը հասցնելով 100.4 մլրդ դրամ (պահպանելով օրենսդրության պահանջը՝ Կառավարության պահուստային ֆոնդի մեծությունը չի կարող գերազանցել տվյալ տարվա պետական բյուջեի մասին՝ օրենքով նախատեսված ծախսերի 5 տոկոսը), իսկ 5 տոկոսը գերազանցող գումարը՝ 52.7 մլրդ դրամը նախատեսվել է ընթացիկ չբաշխված ծախսերում, նմանատիպ մոտեցում կիրառվել է նաև 2023-2024թթ. համար:

Հարկաբյուջետային շրջանակով առաջարկվող կապիտալ ծախսերի ընդհանուր չափաքանակը 2022 թվականի համար գնահատվել է 274.2 մլրդ դրամ: 2022 թվականի համար նախատեսվել է՝

ներքին աղբյուրների հաշվին կատարվելիք կապիտալ ծախսերը, որոնց նախատեսման համար հիմք են հանդիսացել միջոցառումների շարունակական լինելու հանգամանքը, կազմում է 25.0 մլրդ դրամ:

արտաքին աղբյուրների հաշվին իրականացվելիք վարկային ծրագրերի գծով առաջարկվել է 46.9 մլրդ դրամ (որպես կողմնորոշիչ՝ ելակետ է ընդունվել 2020թ-ի փաստացի կատարողականը)

արտաքին աղբյուրների հաշվին իրականացվելիք դրամաշնորհային ծրագրերի գծով առաջարկվել է 20.7 մլրդ դրամ՝ եկամուտ/ծախս սկզբունքով:

Այսպիսով, 2022թ. համար 274.2 մլրդ դրամից 181.5 մլրդ դրամը դիտարկվում է որպես չբաշխված կապիտալ ծախս, որը կարող է ուղղվել ինչպես արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող վարկային ծրագրերին, այնպես էլ ներքին աղբյուրների հաշվին ՊՆ, ՏԿԵՆ-ի ճանապարհների հիմնանորոգման և նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությամբ կապիտալ ծախսերին: Նմանատիպ մոտեցում կիրառելով 2023-2024թթ. համար 2023թ. համար 184.5 մլրդ դրամը, իսկ 2024 թվականի համար 216,1 մլրդ դրամը դիտարկվում է որպես չբաշխված կապիտալ ծախս:

4.3. 2022-2024ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

2022-2024թթ ծախսային չափաքանակների հնարավորությունները մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումներով ճշգրտված՝ նախորդ հաստատված 2021-2023 թվականների բյուջետային ծախսերի չափաքանակների համեմատ բարձր են:

Գծապատկեր 4.3.1. *Միջնաժամկետ ծախսերի կանխատեսումների համեմատականը*



ՀՀ 2022-2024 թվականների պետական բյուջեների ծախսերի կանխատեսումները՝ ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված աղյուսակի ցուցանիշներով:

Աղյուսակ 4.3.1 *ՀՀ 2022-2024թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն դրամ)*

Ցուցանիշներ	2021թ հաստատված	2022թ ծրագիր	2023թ ծրագիր	2024թ ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ	**1,850,877.5**	**2,000,911.1**	**2,135,455.9**	**2,312,046.8**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	28.9	26.4	26.1	26.2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**397,085.4**	**402,115.4**	**441,191.2**	**465,346.5**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	6.2	5.3	5.4	5.3
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	21.5	20.0	20.7	20.1
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ[31]	**468,807.7**	**361,571.8**	**380,118.4**	**380,547.3**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	7.3	4.8	4.7	4.3

[31] Ոլորտի 2021 թվականի հաստատված պետական բյուջեի համեմատ 2022-2023 թվականների ՄԺԾԾ չափաքանակների նվազեցումը պայմանավորված է ընթացիկ ծախսերի գծով նվազեցումներով, ինչպես նաև կապիտալ ծախսերի գծով չբաշխված գումարներով: ՄԺԾԾ առաջնահերթությունների Հավելված 6-ում ՊՆ-ի գծով նախատեսվել են համապատասխանաբար՝ 2022թ.՝ 143,390. 7, 2023թ.՝ 148,182.7 և 2024թ.՝ 150,944.2 մլն դրամ:

Ցուցանիշներ	2021թ հաստատված	2022թ ծրագիր	2023թ ծրագիր	2024թ ծրագիր
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	25.3	18.1	17.8	16.5
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ	**174,531.2**	**130,238.0**	**169,853.8**	**187,449.5**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.7	1.7	2.1	2.1
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	9.4	6.5	8.0	8.1
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ	**806,603.0**	**765,023.9**	**799,685.8**	**795,921.4**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	12.6	10.1	9.8	9.0
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	43.6	38.2	37.5	34.4
ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	**3,850.0**	**341,961.9**	**344,606.6**	**482,782.0**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.1	4.5	4.2	5.5
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.2	17.1	16.1	20.9

ՀՀ 2022-2024 թվականների պետական բյուջեի ծախսերի ըստ ոլորտների կանխատեսումները գրաֆիկորեն ունեն հետևյալ տեսքը.

2022	2023	2024



Միջնաժամկետ կտրվածքում պետական բյուջեի ընդամենը ծախսերում գերակայելու են սոցիալական ոլորտի՝ (կրթություն, սոց,պաշտպանություն, առողջապահություն և այլն) միջինում 36.7,4%, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների՝ միջինում 20.4%, պաշտպանության, հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեությանն՝ միջինում 17.4%, տնտեսական ոլորտի՝ միջինում 7.5% ոլորտների ֆինանսավորումը:

Սոցիալական ոլորտի խմբում 2022-2024 թվականներին կարևորվելու է հատկապես սոցիալական ապահովության, կրթության և առողջապահության բնագավառների զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացումը:

Աղյուսակ 4.3.1 *Սոցիալական ոլորտի բյուջետային ծախսերը (մլն դրամ)*

Ցուցանիշներ	2021թ հաստատված	2022թ ծրագիր	2023թ ծրագիր	2024թ ծրագիր
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ ԸՆԴԱՄԵՆԸ	**806,603.0**	**765,023.9**	**799,685.8**	**795,921.4**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	12.6	10.1	9.8	9.0
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	43.6	38.2	37.4	34.4
այդ թվում՝				
1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ[32]	**153,593.3**	**154,625.8**	**149,195.2**	**148,648.9**

[32] Կրթության, առողջապահության ոլորտներում 2021 թվականի հաստատված պետական բյուջեի համեմատ 2022-2024 թվականների ՄԺԾԾ չափաքանակների նվազեցումը պայմանավորված է ընթացիկ ծախսերի գծով նվազեցումներով, ինչպես նաև կապիտալ ծախսերի գծով՝ չբաշխված գումարներով: ՄԺԾԾ առաջնահերթությունների Հավելված 6-ում ԿԳՄՍ նախարարության գծով նախատեսվել են՝

Ցուցանիշներ	2021թ հաստատված	2022թ ծրագիր	2023թ ծրագիր	2024թ ծրագիր
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.40	2.04	1.83	1.68
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.3	7.7	7.0	6.4
2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**504,875.9**	**473,206.0**	**503,914.5**	**502,282.7**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	7.89	6.25	6.17	5.68
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	27.3	23.6	23.6	21.7
3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	**117,548.5**	**108,735.8**	**116,761.6**	**114,955.9**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.84	1.44	1.43	1.30
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.4	5.4	5.5	5.0
4. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	**30,585.0**	**28,456.2**	**29,814.2**	**30,033.7**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.48	0.38	0.36	0.34
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.7	1.4	1.4	1.3

2022-2024 թթ. համար կրթության և առողջապահության ոլորտների բյուջետային ծախսերի չափաքանակները՝ պայմանավորված Կառավարության ծրագրի դեռևս քննարկման փուլում գտնվելու հանգամանքով՝ չնայած որ դիտվում են որպես բարձր առաջնահերթություն հայտարարված ոլորտներ, ունեն նվազման միտում, ինչը լրացուցիչ կամբողջացվի և կճշտվի 2022 թվականի բյուջեի նախագծի հաստատման ընթացքում:

Միջնաժամկետ կտրվածքում կրթության ոլորտին հատկացվող միջոցները նախատեսվում է համամասնորեն ուղղել կրթության առանձին տեսակների՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն, հետբուհական, ինչպես նաև կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ֆինանսավորմանը:

Առողջապահության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվել է 2022-2024 թթ համապատասխանաբար՝ 108,735.8, 116,761.6 և 114,955.9 մլն. դրամ: Հաշվի առնելով առողջապահության համակարգի համաշխարհային արդի մարտահրավերները՝ միջնաժամկետ հատվածում ոլորտի ֆինանսավորումն ուղղվելու է նոր իրավիճակներին ադապտացմանը, առողջապահական համակարգի ռիսկերին արագ և համարժեք արձագանքմանը, Covid-19

համապատասխանաբար 2022թ.՝ 65,372,1, 2023թ.՝ 64,977.1 և 2024թ.՝ 71,086,5 մլն դրամ, Առողջապահության նախարարության մասով՝ 2022թ.՝ 9,131.1, 2023թ.՝ 10,949.8 և 2024թ.՝ 10,949,8 մլն դրամ):

համավարակի տարածման կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը և պատվաստանյութերի նկատմամբ հանրության պահանջարկի բավարարմանը:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումը 2022-2024թթ միջնաժամկետ կտրվածքում նախատեսվում է 473,206.0, 503,914.5 և 502,282.7մլն. դրամի չափով: Սոցիալական պաշտպանության ոլորտի զգալի մասը (միջինում 77%) ուղղվելու են տարեցներին և հաշմանդամներին աջակցության տրամադրմանը, մնացած (միջինում 23%) ծախսերը նախատեսվում են ուղղվել գործազրկության, սոցիալական հատուկ արտոնությունների, բնակարային ապահովման, ընտանեկան նպաստների տրամադրման և այլ սոցիալական ծառայությունների ապահովմանը:

Աղյուսակ 4.3.2 *Տնտեսական ոլորտի 2022-2024թթ բյուջետային ծախսերը (մլն դրամ)*

Ցուցանիշներ	2021թ հաստատված	2022թ ծրագիր	2023թ ծրագիր	2024թ Ծրագիր
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ ԸՆԴԱՄԵՆԸ	**174,531.2**	**130,238.0**	**169,853.8**	**187,449.5**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.7	1.7	2.1	2.1
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	9.4	6.5	8.0	8.1
այդ թվում՝				
1.ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**148,944.2**	**106,528.9**	**135,249.6**	**176,111.7**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.33	1.41	1.66	1.99
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.05	5.32	6.33	7.62
2.**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**10,892.1**	**9,061.7**	**9,437.5**	**7,063.1**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.17	0.12	0.12	0.08
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.59	0.45	0.44	0.31
3. **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**14,694.9**	**14,647.2**	**25,166.6**	**4,274.6**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.23	0.19	0.31	0.05
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.79	0.73	1.18	0.18

Տնտեսության ճյուղերի 2022-2024 թվականների ծախսերը նպատակաուղղված են լինելու ենթակառուցվածքների, տնտեսության իրական հատվածի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող՝ արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսության կառուցմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

2022-2024թթ ժամանակահատվածում պետական բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալը որոշ կախվածության մեջ կլինի նաև արտաքին հոսքերից:

Աղյուսակ 4.3.3 *Արտաքին աղբյուրներից 2022-2024թթ ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհներ) հաշվին ֆինանսավորվող ծախսերը*

Ցուցանիշներ	2021թ հաստատված	2022թ ծրագիր	2023թ ծրագիր	2024թ ծրագիր
Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլն դրամ)	86,707,258.1	69,719,899.3	102,229,221.7	86,974,646.1
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.4%	0.9%	1.3%	1.0%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	5.7%	3.5%	4.8%	3.8%

Արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվելիք միջոցների հաշվին կանխատեսվող 2022-2024 թվականների ծախսերի միջին տարեկան տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 4.1% և ՀՆԱ-ի նկատմամբ՝ 1.1%:

4.4. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2022-2024 թվականների ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի 22.6 %-ից 22.2%-ի միջակայքում: Նույն ժամանակահատվածում ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի համապատասխանաբար 3.9%-ից 4.0% միջակայքում:

Աղյուսակ 4.4.1 *2021-2024թթ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և հարաբերակցության միտումները*

Ցուցանիշներ	2021թ հաստատված	2022թ ծրագիր	2023թ ծրագիր	2024թ Ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, (մլն դրամ)	**1,850,877.5**	**2,000,911.2**	**2,135,456.0**	**2,312,046.9**
այդ թվում՝				
- ընթացիկ ծախսեր, (մլն դրամ)	1,634,558.6	1,708,342.4	1,827,349.5	1,958,136.8
- %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	25.6%	22.6%	22.4%	22.2%
- ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսեր, (մլն դրամ)	216,318.9	292,568.8	308,106.5	353,910.1
%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	3.4%	3.9%	3.8%	4.0%

Գծապատկեր 4.4.1. *2021-2024թթ. ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները*



2022-2024 թվականների ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 85.2%-ը կկազմեն **ընթացիկ ծախսերը**, (2021 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 88.3%):

Դիտարկվող ժամանակահատվածում ընթացիկ ծախսերն ուղղված կլինի ծառայությունների մատուցման, տրանսֆերտների տրամադրման, ֆինանսավորման ծախսերի իրականացման և հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներին:

2021-2024թթ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ ներկայացված է ստորև:

Գծապատկեր 4.4.2. *2021-2024թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ*



2022-2024թթ. ժամանակահատվածում պետական բյուջեից աշխատավարձերին ուղղվող ծախսերը կկազմեն համապատասխանաբար՝ 179.9, 181.1 և 181.9 մլրդ դրամ:

2022-2024թթ. ժամանակահատվածում տոկոսավճարների գծով ծախսերը կազմում են համապատասխանաբար՝ 215.8, 243.5 և 268.1 մլրդ դրամ:

2022-2024թթ. ժամանակահատվածում պետական բյուջեից կազմակերպություններին նախատեսվում է տրամադրել համապատասխանաբար՝ 117.5, 125.7 և 128.1 մլրդ դրամի սուբսիդիաներ:

2022-2024թթ. ժամանակահատվածում սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարների գծով պետական բյուջեի ծախսերը կկազմեն համապատասխանաբար՝ 496.4, 529.9 և 530.0 մլրդ դրամ:

2022-2024թթ միջնաժամկետ ժամանակահատվածում պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել դրամաշնորհներ համապատասխանաբար 2022թ.՝ 148.8 մլրդ դրամ, 2023թ.՝ 156.5 մլրդ դրամ և 2024 թվականին՝ 162.8 մլրդ դրամ:

2022-2024 թվականների միջնաժամկետ ժամանակահատվածում «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ պայմանավորված նախատեսվել է պետական աջակցություն տրամադրել սահմանամերձ համայնքներին՝ յուրաքանչյուր տարվա համար 1.2 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 4.4.2 *2021-2024թթ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման կառուցվածը ըստ տնտեսագիտական դասակարգման*

մլն դրամ

Ցուցանիշներ	2021թ հաստատված	2022թ ծրագիր	2023թ ծրագիր	2024թ ծրագիր
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	**1,634,558.6**	**1,708,342.4**	**1,827,349.5**	**1,958,136.8**
այդ թվում՝				
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	181,075.3	179,872.7	181,135.0	181,873.1
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	169,135.5	154,814.1	166,590.0	168,141.6
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	194,700.1	215,758.8	243,468.2	268,062.1
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	122,370.1	117,504.8	125,685.9	128,086.5
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	162,913.5	148,777.8	156,453.5	162,847.2
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	527,872.8	496,362.0	529,917.8	529,991.4
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	276,491.4	395,252.2	424,099.0	519,134.9

2022-2024 թվականների ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 14.8 %-ը կկազմեն ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը:

2022-2024 թվականների ընթացքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքում արձանագրվում է արտաքին և ներքին աղբյուրների ծավալի ավելացում: Ընդ որում ներքին աղբյուրների ծավալի ավելացումը կրում է առաջանցիկ բնույթ:

Գծապատկեր 4.4.3. *2021-2024 թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը*



Ընդ որում միջնաժամկետ հատվածում ընդհանուր ծավալի կանխատեսվող 954.6 մլրդ դրամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շուրջ 32.1 %-ը (306.8 մլրդ դրամ) նախատեսվում է ֆինանսավորել արտաքին աղբյուրների, իսկ 67.9%-ը (647.8 մլրդ դրամ)՝ ներքին աղբյուրների հաշվին: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի իրականացման գերակայությունները հանդիսանալու են ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ սոցիալական ոլորտներում ներդրումները:

Աղյուսակ 4.4.3 *2021-2024թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածը ըստ արտաքին և ներքին աղբյուրների*

մլն դրամ

Ցուցանիշներ	2021թ. հաստատված	2022թ.	2023թ	2024թ.
Ընդամենը	**216,320.2**	**292,570.1**	**308,107.8**	**353,911.4**
- արտաքին աղբյուրներ	***83,311.1***	***67,601.2***	***113,380.0***	***125,858.5***
- ներքին աղբյուրներ	***133,009.1***	***25,036.7***	***10,207.9***	***8,106.2***
- չբաշխված	***0.0***	***199,932.2***	***184,519.9***	***219,946.7***
Տրանսպորտ, այդ թվում	**58,832.5**	**25,117.9**	**33,292.7**	**95,466.3**
- արտաքին աղբյուրներ	*24,692.3*	*25,117.9*	*33,292.7*	*95,466.3*
- ներքին աղբյուրներ	*34,140.2*	*0.0*	*0.0*	*0.0*
Էներգետիկա, այդ թվում	**1,207.0**	**765.5**	**1,013.3**	**1,936.0**
- արտաքին աղբյուրներ	*1,207.0*	*765.5*	*1,013.3*	*1,936.0*
- ներքին աղբյուրներ		*0.0*	*0.0*	*0.0*
Շրջակա միջավայր և գյուղատնտեսություն	**7,293.6**	**5,406.8**	**6,391.4**	**2,517.9**
- արտաքին աղբյուրներ	*6,754.1*	*5,124.2*	*6,108.8*	*2,235.3*
- ներքին աղբյուրներ	*539.5*	*282.6*	*282.6*	*282.6*
Ջրային տնտեսություն	**20,151.4**	**21,973.1**	**49,176.6**	**5,406.7**
- արտաքին աղբյուրներ	*18,464.4*	*19,963.7*	*47,346.8*	*4,506.7*
- ներքին աղբյուրներ	*1,687.0*	*2,009.4*	*1,829.8*	*900.0*
Առողջապահություն	**3,960.7**	**659.6**	**1,805.7**	**0.0**
- արտաքին աղբյուրներ	*960.7*	*659.6*	*1,805.7*	
- ներքին աղբյուրներ	*3,000.0*	*0.0*	*0.0*	*0.0*
Կրթություն, գիտություն մշակույթ և սպորտ	**9,976.8**	**16,714.8**	**2,730.6**	**2,147.5**
- արտաքին աղբյուրներ	*8,539.6*			
- ներքին աղբյուրներ	*1,437.2*	*16,714.8*	*2,730.6*	*2,147.5*
Սոցապ	**2,500.1**	**311.9**	**0.0**	**0.0**
- արտաքին աղբյուրներ	*1,209.5*			
- ներքին աղբյուրներ	*1,290.6*	*311.9*	*0.0*	*0.0*
Ուժային	**87,606.6**	**1,427.5**	**1,812.0**	**2,085.8**
- արտաքին աղբյուրներ				
- ներքին աղբյուրներ	*87,606.6*	*1,427.5*	*1,812.0*	*2,085.8*

Այլ	**24,791.5**	**20,260.8**	**27,365.6**	**24,404.5**
- արտաքին աղբյուրներ	*21,483.5*	*15,970.3*	*23,812.7*	*21,714.2*
- ներքին աղբյուրներ	*3,308.0*	*4,290.5*	*3,552.9*	*2,690.3*

4.5. 2022-2024ԹԹ ՄԺԾԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարության ծրագրին համապատասխան ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից միջնաժամկետ ժամանակահատվածում կարևորվում է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և ադյունավետ օգտագործումը, ինչի արդյունքում ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում աստիճանաբար հնարավորության սահմաններում կմեծանա մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը:

2022-2024թթ ՄԺԾԾ-ում առանձին հավելվածով ներկայացվել են առաջնահերթությունները՝ ԲԳԿ-ների կողմից ներկայացված հայտերի և ՄԺԾԾ առաջարկների տարբերության մասով, որոնք զետեղվել են 1.6 -րդ հավերվածում: 2022-2024 թ.թ. ՄԺԾԾ ԲԳԿ-ների կողմից ներկայացված առաջնահերթությունները 2022-2024թթ. բյուջեում լրացուցիչ ֆինանսական միջոցների առկայության պայմաններում (Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բարենպաստ միջավայրի և այլ գործոններով պայմանավորված), ինչպես նաև 2022-2024թթ ժամանակահատվածում բյուջեով նախատեսված ծախսերի կրճատման, ծախսային ուղղությունների գծով հնարավոր գերակայությունների (առաջնահերթությունների) փոփոխման արդյունքում վերաբաշխումների (փոխատեղումների), խնայողությունների առկայության, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի դեֆիցիտի սահմանաչափի ավելացման պարագայում վերջիններիս ֆինանսավորումը պետք է իրականացվեն առաջնահերթ կարգով՝ կապիտալ ծախսերի դեպքում հիմք ընդունելով համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա այդ աշխատանքների արժեքների ճշգրտումները:

2022-2024թթ միջնաժամկետ առաջնահերթությունների գծով ծախսերը կազմում են համապատասխանաբար ՝ 593.001,1, 451.616,3 և 407.349,1 մլն. դրամ (տե՛ս Հավելված 1.6):

Առաջնահերթություններում կարևորվում է նաև կապիտալ ծրագրերի դերը, որոնք իրենց ուրույն տեղն են գտել նաև ՊՖԿՀ բարեփոխումների ռազմավարությունում, որտեղ «Հանրային ներդրումների կառավարման» համակարգի ներդրումը դիտվում է որպես կապիտալ ծրագրերի գնահատման, առաջնահերթությունների որոշման և ֆինանսավորման համար անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկման առանցքային գործիքակազմի բաղադրիչներից մեկը: Այս միջոցառման իրականացումը ապագայում կնպաստի կապիտալ ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացմանը՝ խթանելով երկարաժամկետ տնտեսական աճի արագացումը:

4.6. 2022-2024ԹԹ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ

2022-2024թթ միջանաժամկետ ժամանակահատվածում պետական բյուջեից նախատեսվել է տրամադրել հատկացումներ ՀՀ համայնքներին, մասնավորապես՝ համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրման, օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով 2022 թվականին նախատեսվում է տրամադրել շուրջ 64,3 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 3.2 և ՀՆԱ-ի 0.8 տոկոսը, 2023 թվականին՝ 66,8 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 3.1 և ՀՆԱ-ի 0.8 տոկոսը իսկ 2024 թվականին 75,0 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 3.2 և ՀՆԱ-ի 0.8 տոկոսը: 2022-2024 թվականների ՄԺԾԾ նախատեսվել է համայնքներին տրամադրել նաև սուբվենցիաներ՝ 2022 թվականին՝ շուրջ 10.4 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.5 տոկոսը, 2023 թվականին՝ 14.4 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.7 տոկոսը և 2024 թվականին նույնպես 13.9 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.6 տոկոսը: Միջնաժամկետ ժամանակահատվածում «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ պայմանավորված նախատեսվել է պետական աջակցություն տրամադրել սահմանամերձ համայնքներին՝ յուրաքանչյուր տարվա համար շուրջ 1.2 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 4.6.1 *ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրվող հատկացումների վերաբերյալ*

հազ. դրամ

Ցուցանիշներ	2020թ փաստայի	2021թ հաստատված	2022թ ծրագիր	2023թ ծրագիր	2024թ ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ	**78,992,718.3**	**82,489,985.3**	**75,951,923.4**	**82,341,416.0**	**90,083,322.0**
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	55,378,535.0	64,596,984.0	64,349,123.0	66,781,987.1	75,042,858.5
Սուբվենցիաներ համայնքներին, այդ թվում	22,860,028.8	17,093,001.3	10,447,594.6	14,404,223.1	13,885,257.7
ընթացիկ սուբվենցիաներ	8,741,376.7	9,019,489.2	7,048,352.8	7,514,477.6	6,908,836.1
կապիտալ սուբվենցիաներ	14,118,652.1	8,073,512.1	3,399,241.8	6,889,745.5	6,976,421.6
«Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ պայմանավորված պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին	754,154.5	800,000.0	1,155,205.8	1,155,205.8	1,155,205.8

ՄԱՍ II. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ 2022-2024ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող փաստաթղթում ընդհանուր գծերով ներկայացվում են 2022-2024թթ. ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի ըստ բնագավառների քաղաքականության գերակայությունները: Այս գերակայությունները բխում են Կառավարության ընդհանուր ռազմավարական գերակայությունների համատեքստից (Կառավարության ծրագիր, տարբեր ոլորտներում Կառավարության կողմից ընդունված մի շարք միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր և այլն) և պետք է ծառայեն որպես հիմք՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման համար:

Ինչպես արդեն վերը նշվել էր Կառավարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է պետական բյուջեի հիմնական ծախսային հետևյալ գերակայությունները.

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառներում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտ

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 4.4-րդ կետի՝ կառավարության համար գերակա խնդիր է կրթության զարգացումը, ինչի շնորհիվ է միայն հնարավոր հասնել կայուն ու ներառական զարգացման և համընդհանուր բարեկեցության: Կրթության ոլորտը կարևոր դերակատարություն ունի ինչպես անհատի կայացման, այնպես էլ

հասարակության սոցիալական և տնտեսական զարգացման բոլոր ոլորտներում: Դրանով է պայմանավորված, որ այն դասվում է կառավարության ծրագրի գերակայությունների շարքում:

Կրթության ոլորտի գլխավոր հիմնախնդիրն է միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան որակի ապահովումը: Այս տեսանկյունից ոլորտային քաղաքականությունը ներառում է 3 հիմնական ուղղություններ.

դասավանդող անձնակազմի, մասնավորապես՝ ուսուցիչների, մասնագիտական որակական բարելավումը: Մասնավորապես նախատեսվում է, որ դասավանդող ուսուցիչների առնվազն 46%-ը կանցնի ատեստավորում մասնագիտական նոր չափանիշներին համապատասխան,

կրթական ծրագրերի բովանդակային արդիականացումն ու համապատասխանեցումը աշխատաշուկայի և տնտեսության զարգացող պահանջներին: Հաստատված հանրակրթական պետական չափորոշչի հիման վրա կվերանայվեն առարկայական չափորոշիչները, ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը՝ նպատակ ունենալով խթանել սովորողների քննական մտածողությունը, նորարարությունը, վերլուծական և ստեղծագործական հմտությունները, առանձնակի ուշադրություն կհատկացվի STEM առարկաների և օտար լեզուների դասավանդմանը: Մասնագիտական կրթության ոլորտում կմշակվեն և կներդրվեն տնտեսության ժամանակակից պահանջներից բխող նոր մասնագիտությունների կրթական ծրագրեր՝ մեծացնելով շրջանավարտների մրցունակությունն աշխատաշուկայում, բարձրագույն կրթության ծրագրերում կխթանվի գիտահետազոտական աշխատանքների իրականացումը,

ուսումնական հաստատությունների արդիական նյութատեխնիկական հենքի ապահովումը և սովորողակենտրոն միջավայրի ստեղծումը: Կշարունակվեն նախադպրոցական, դպրոցական և մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգման ու կառուցման աշխատանքները՝ ներառելով նաև գյուղական փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցները: Միաժամանակ, 2023 թվականին բոլոր մարզերի հանրակրթական դպրոցներում կներդրվի «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը:

Կրթության ոլորտի հաջորդ կարևոր խնդիրն է մատչելիության ապահովումը, որի ուղղությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- կընդլայնվի նախադպրոցական ծառայությունների մատուցման շրջանակը, համայնքներին ցուցաբերվող նպատակային օժանդակության շնորհիվ կմեծանա երեխաների ընդգրկվածությունը,
- մինչև 2022 թվականը բոլոր մարզերը կանցնեն համընդհանուր ներառական կրթության, մարզերում գործող հատուկ դպրոցները կվերակազմակերպվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների: Այն մարզերում, որտեղ չեն գործում հատուկ դպրոցներ, կլինի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների պատվիրակում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, կապահովվի վերապատրաստումների միջոցով ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացումը,
- մասնագիտական կրթության գծով միջոցները կուղղվեն խոցելի խմբերի երիտասարդների ընդգրկվածության մեծացմանը, կընդլայնվեն ուսման վարձի զեղչային համակարգից օգտվող շահառուների խմբերը:

Ելնելով վերոնշյալ նպատակներից՝ միջնաժամկետ հատվածում նախանշվել են ոլորտի հետևյալ հիմնական թիրախները.

- պարտադիր կրթության երեք մակարդակներում սովորողների համախառն ընդգրկվածության ցուցանիշի 99% ապահովում,
- տարրական և հիմնական դպրոցն ավարտելիս՝ սովորողների համամասնությունը, ըստ սեռի, ովքեր ձեռք են բերել առնվազն գիտելիքների նվազագույն մակարդակ ընթերցանությունից և մաթեմատիկայից, 2019 թվականի շուրջ 87%-ից 2024 թվականին հասցնել 100%-ի,
- նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների թիվը մասնագիտական կրթության (նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական) համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների ընդհանուր թվում 2019/2020 ուսումնական տարվա 54.4%-ից 2024 թվականին հասցնել 58%-ի,
- ՆՄՄԿ համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների թիվը հիմնական և միջնակարգ դպրոցների շրջանավարտների թվում 2018/2019 ուսումնական տարվա 25.2%-ից 2023 թվականին հասցնել 33%-ի,
- ուսումնառած մասնագիտության գծով ուսումնառության ավարտից հետո 6 ամսվա ընթացքում զբաղվածություն ունեցող շրջանավարտների թիվը (ներառված չեն բուհ տեղափոխված/ ընդունված, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության անցած, արտերկիր մեկնած, ոչ իրենց մասնագիտությամբ աշխատող) 2019/2020 ուսումնական տարվա 39.4%-ից 2024 թվականին հասցնել 45.2%-ի,
- նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ ուսումնառությունը բուհերում շարունակած շրջանավարտների թիվը 2018/2019 ուսումնական տարվա 24.6%-ից 2024 թվականին հասցնել 27%-ի,
- աշխատաշուկայի պահանջներից ելնելով՝ նոր մասնագիտությունների ներդրումը 2018/2019 ուսումնական տարվա 19-ից 2024 թվականին հասցնել 24-ի,
- ՆՄՄԿՈՒ ուսումնական գործընթացներում ներգրավված գործատուների թիվը 2020 թվականի 1406-ից 2024 թվականին հասցնել 1650-ի,
- վերապատրաստման ծրագրերն անցած ՆՄՄԿՈՒ հաստատությունների դասավանդողների մասնաբաժինը 2019/2020 ուսումնական տարվա 22.6%-ից 2024 թ.-ին հասցնել 33%-ի,
- աշխատանքի վրա հիմնված՝ դուալ ուսուցման փորձնական ծրագրեր իրականացնող ՆՄՄԿՈՒ հաստատությունների թիվը, ընդհանուր ՆՄՄԿՈՒ հաստատությունների թվի մեջ, 2019/2020 ուսումնական տարվա 15-ից 2024 թվականին հասցնել 23-ի,
- ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների տեսակարար կշիռը բարձրագույն կրթություն ստացողների մեջ 2020 թվականի 18%-ից 2024 թվականին հասցնել 20%-ի, իսկ սոցիալապես անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների ուսանողների տեսակարար կշիռն ընդհանուր ուսանողների թվաքանակի մեջ՝ 4.1%-ից՝ 5%-ի,

- արտադպրոցական դաստիարակության ծրագրերում 6-18 տարեկան երեխաների ընդգրկվածության մակարդակը 2020 թվականի 33.2%-ից 2024 թվականին հասցնել 36.2%-ի, այդ թվում՝ գյուղաբնակ երեխաներինը 19.4%-ից հասցնել 22.4%-ի,
- 2024 թվականին հանրապետության բոլոր մարզերի տարրական դասարանների և նախակրթարանների սովորողներին ապահովել կայուն դպրոցական սննդով,
- հանրակրթական դպրոցների՝ կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների թիվը 2024 թվականին հասցնել 46%-ի,
- հաշմանդամություն ունեցող աշակերտների համար հարմարեցված ենթակառուցվածքներ և նյութեր ունեցող դպրոցների թիվը 2020 թվականի 26-ից 2023 թվականին հասցնել 100-ի,
- հանրակրթական դպրոց հաճախող կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների տեսակարար կշիռը կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների ընդհանուր թվաքանակի մեջ 2021 թվականի 14%-ից 2023 թվականին հասցնել 95%-ի:
- օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասընթացների թիվը 2020 թվականի 10-ից 2024 թվականին հասցնել 12-ի,
- կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ներառված ուսումնական հաստատությունների մասնաբաժինը մինչև 2023 թվականը՝ 60-ից հասցնել 99%-ի,
- «Հայկական կրթական միջավայր» տեղեկատվական պորտալում ակտիվ ուսումնական հաստատությունների մասնաբաժինը 2020 թվականի 15%-ից 2024 թվականին հասցնել 50%-ի:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1. **«Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն»**

Ծրագրի նպատակն է՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը, կրթության մատչելիության ապահովումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 11,209.4; 12,000.2 և 11,790.6 մլն դրամ:

2. **«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր»**

Ծրագրի նպատակն է՝ մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ապահովումը:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մատչելիությունը: Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներից է պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերում մասնագետների պատրաստմանն աջակցելը, իսկ 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված է, որ պետությունն ապահովում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության զարգացում հետևյալ ձևերով.

1) պետության պահանջներին համապատասխան՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին ֆինանսական աջակցության ապահովում,

2) օրենքով սահմանված կարգով բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ուսանողներին և ասպիրանտներին պետական ֆինանսական օժանդակություն (կրթաթոշակներ, ուսման վարձի փոխհատուցում (լրիվ և մասնակի (զեղչ), կրթական դրամաշնորհներ, վարկեր):

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 11,113.9; 12,748.0 և 12,953.8 մլն դրամ:

3. **«Հանրակրթության ծրագիր»**

Ծրագրի նպատակն է՝ պարտադիր կրթության երեք մակարդակներում սովորողների ընդգրկվածության և գրագիտության ապահովումը:

Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել պարտադիր կրթության երեք մակարդակներում սովորողների ուսուցման գծով: ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ նախադպրոցահասակ երեխաների 70% ընդգրկվածության թիրախն ապահովելու համար կշարունակվի ծախսարդյունավետ նախադպրոցական ծառայությունների հիմնումը համայնքներում:

Կշարունակվի համընդհանուր ներառական կրթության ընդլայնման քաղաքականությունը: Մինչև 2023 թվականն ապահովվելու է հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում համընդհանուր ներառական հանրակրթությանն անցումը:

Ներկայումս հանրապետության 6 մարզերում (Արարատ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ, Շիրակ, Արագածոտն) իրականացվում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: Համավարակով պայմանավորված՝ 2020 թվականին Գեղարքունիքի մարզում նշված ծրագրին անցումը հետաձգվեց 2021 թվական: 2021-2023 թվականներին ծրագիրը նաև կներդրվի Արմավիրի, Լոռու և Կոտայքի մարզերում, արդյունքում՝ հանրապետության բոլոր մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններում տարրական դասարանների և նախակրթարանների սովորողները կստանան առողջ, կայուն և ապահով սնունդ:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 102,701.1; 104,847.0 և 104,395.2 մլն դրամ:

4. **«Արտադպրոցական դաստիարակության ծրագիր»**

Ծրագրի նպատակն է՝ նպաստել հանրակրթական ուսուցման համակարգում ընդգրկված երեխաների հոգևոր և գեղագիտական զարգացմանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը, որի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 3,431.2; 3,468.6 և 3,468.6 մլն դրամ:

5. **«Ապահով դպրոց»**

Ծրագրի նպատակն է՝ դպրոցներին սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացումը, դպրոցի անձնակազմի և աշակերտների անվտանգության ապահովման մակարդակի բարձրացումը՝ կիրառելով ներառական և երեխայակենտրոն

մոտեցումներ: Ծրագրի շրջանակներում կշարունակվեն փոքրաթիվ համակազմ ունեցող դպրոցների կառուցման աշխատանքները:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 10,396.0; 520.2 և 497.3 մլն դրամ:

6. «Կրթության որակի ապահովում»

Ծրագրի նպատակն է՝ ընթացիկ աշխատանքների, բարեփոխումների և նոր նախաձեռնությունների միջոցով ֆորմալ և ոչ-ֆորմալ կրթության ոլորտում իրականացվող միջոցառումների, մատուցվող ծառայությունների բովանդակության և կազմակերպման որակի շարունակական բարելավումը:

Որպես կրթության որակի ապահովման հիմնական գործոն նախարարության (կառավարության) ուշադրության կենտրոնում կլինի ուսուցիչների գործունեությունը. կստեղծվեն ուսուցիչների մասնագիտական առաջընթացը խթանող մեխանիզմներ և հնարավորություններ, 2021 թվականին վերանայվել է ուսուցիչների ատեստավորման համակարգը՝ այն կապելով լրացուցիչ վարձատրության հնարավորությունների հետ: Մշակվել է ուսուցիչների այլընտրանքային՝ կամավոր ատեստավորման համակարգ, որը կգործի պարտադիր ատեստավորմանը զուգահեռ և ուսուցիչների աշխատավարձի բարձրացման հնարավորություն կընձեռի:

Ուսուցիչների մասնագիտական առաջընթացի քաղաքականությունը կզուգորդվի մեկ այլ գերակա ուղղության՝ կրթության բովանդակային արդիականացմամբ, ինչը կիրականացվի Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «ԵՄ-ն հանուն նորարարության» դրամաշնորհային ծրագրի շրջանակում: Կրթության բովանդակային բարեփոխումներում հատուկ կարևորվում են STEM առարկաները, որոնց արդյունքում ձեռքբերված կարողություններն ու գիտելիքներն առանցքային են ժամանակակից աշխարհում:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 1,169.2; 1,181.8 և 1,076.2 մլն դրամ:

7. **«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում»**

Ծրագրի նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովումը՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան և անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով:

Մինչև 2023 թվականն ապահովվելու է անցումը համընդհանուր ներառական հանրակրթությանը, որով պայմանավորված հատուկ դպրոցները կվերակազմավորվեն մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, իսկ այնտեղ սովորող երեխաները կտեղափոխվեն հանրակրթական դպրոցներ: Կընդլայնվի հանրակրթական դպրոցների ներառական կրթության կարողությունների հզորացումը, լրացուցիչ ծրագրեր կիրականացվեն ուսուցիչների կարողությունների զարգացման ուղղությամբ: ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Ներառական կրթության համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագրով 100 դպրոցներում և 5 մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում կիրականացվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մատչելիության համար հարմարեցման վերանորոգման աշխատանքներ:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 2,469.2; 2,407.9 և 2,407.9 մլն դրամ:

8. «Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում»

Ծրագրի նպատակն է՝ կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, հայկական համայնքների հետ փոխհամագործակցության ապահովումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 1,046.9; 406.9 և 435.8 մլն դրամ:

9. «Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում»

Ծրագրի նպատակն է՝ կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը, որի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 397.4; 424.1 և 424.1 մլն դրամ:

Գիտության ոլորտ

ՀՀ գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են գիտության կայուն զարգացման ապահովումը, գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրումը, միջազգայնորեն մրցունակ հիմնարար ուսումնասիրությունների, տնտեսության պահանջներից բխող կիրառական հետազոտությունների, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների խթանումը, գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրումը, գիտության ենթակառուցվածքների արդիականացումը, կրթութուն-գիտություն կապի ամրապնդումը, գիտական արդյունքի առևտրայնացումը, միջազգային գիտական համագործակցության զարգացումը, մտավոր սեփականության արդյունավետ պաշտպանությունը, գիտության ֆինանսավորման բյուջետային և արտաբյուջետային միջոցների ավելացումը:

Այդ նպատակների ձեռքբերման ուղղությամբ 2022-2023 թվականների ընթացքում իրականացվելու են միջոցառումներ, որոնք ամրագրված են ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնում և ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում:

2022-2024 թվականներին շարունակվելու են՝

ՀՀ-ում միջազգայնորեն մրցունակ, Եվրոպական հետազոտական տարածքի հետ ինտեգրված և այդ հետազոտական տարածքում իր մասնագիտացման տիրույթը (խելացի մասնագիտացում) ունեցող, գիտական գերազանցությունը խթանող, հանրապետության տնտեսության պահանջներից բխող, պաշտպանունականության մակարդակի բարձրացմանը նպաստող և բարձր

տեխնոլոգիական արտադրանք ապահովող ազգային գիտական համակարգ ձևավորելու նպատակով՝

- «ԻԿՐԱՆԵՏ կենտրոն» միջազգային կազմակերպության, Աբդուս Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի (ICTP) փոխկապակցված կենտրոնի, Երևանի պետական համալսարանի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի ու Յենայի համալսարանի մարդու գենետիկայի ինստիտուտի հիման վրա ստեղծված հայ-գերմանական համատեղ գիտահետազոտական լաբորատորիայի, ինչպես նաև 2020 թվականին մեկնարկած Գիտության կոմիտեի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության երկրաշարժերի վարչության միջև «Երկրաշարժերի հետազոտության ոլորտում համագործակցության մասին» հուշագրի շրջանակներում հիմնադրված հայ-չինական համատեղ առաջին լաբորատորիայի ֆինանսավորումը,

- համաֆինանսավորման սկզբունքով իրականացվելու են հայ-ֆրանսիական, հայ-բելառուսական, հայ-ռուսական, հայ-գերմանական, հայ-իտալական համատեղ ծրագրեր: Միաժամանակ, ֆինանսավորվելու են մի շարք միջազգային գիտական կառույցների կամ համագործակցությունների մասնակցությունը՝ Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ–JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգ (ԲԷՍՀ–H.E.S.S.), «Հորիզոն Եվրոպա» ծրագրի անդամակցությունը և այլն:

Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման, ինչպես նաև գիտության ոլորտի ենթակառուցվածքների արդիականացման նպատակով՝

- Երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության երկամյա ծրագիրը:

- Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության անհատական խրախուսման ամենամյա ծրագիրը:

- Գիտական խմբերի մեկնարկային աջակցության եռամյա ծրագիրը:

- Գիտական խմբերի ամրապնդմանն ուղղված եռամյա ծրագիրը:

- Առաջատար հետազոտությունների աջակցության հնգամյա ծրագիրը:

- Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող, այդ թվում երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) անհատական խրախուսման ամենամյա ծրագիրը:

- «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցությունը:

- Գիտական սարքերի և սարքավորումների/լաբորատորիաների ձեռքբերման կամ ստեղծման ամենամյա դրամաշնորհային ծրագրերը:

Երկրի տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն ուղղված հետազոտությունների խթանման նպատակով՝

- Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված երկամյա ծրագրեր՝ արտաբյուջետային միջոցների պարտադիր ներգրավման պայմանով՝ համաֆինանսավորման սկզբունքով:

- Արհեստական բանականություն և տվյալագիտություն, քվանտային տեխնոլոգիաներ, ռոբոտատեխնիկա մասնագիտություններով հետազոտությունների աջակցության ծրագիրը:

- Երկակի նշանակության հետազոտությունների աջակցության ծրագիրը:

Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշման, 2022-2025 թվականներին գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձը աստիճանական կավելանա՝ հասնելով հանրապետության մասշտաբով պետական համակարգում համեմատելի և համադրելի արժեքների: Նշված գործընթացը կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, գիտական կադրերի սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավմանը, գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճին և գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովմանը:

ՀՀ գիտության ոլորտի 2022-2023 թվականների զարգացման հիմնական թիրախները շարադրված են ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019-2023 թվականների ծրագրի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնում և ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում:

Այդ թիրախներն են՝

- գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը,
- երկրի տնտեսության կարիքներից բխող և գիտական հետազոտությունների արդի պահանջներին համապատասխանող ուղղությունների զարգացումը,
- գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման մեխանիզմների ներդրումը, Հայաստանում իրականացվող ծրագրերում օտարերկրյա պետություններում գտնվող հայ գիտանականների ներգրավումը,
- բեկումնային զարգացում ապահովող որոշ տեխնոլոգիական ոլորտներում գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոնների ստեղծումը,
- կրթություն-գիտություն կապի սերտացումը՝ ձևավորելով բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ցանցեր՝ ըստ գիտական գործունեության բնագավառների և ապահովելով ուսանողների, պրոֆեսորդասախոսական կազմի և գիտաշխատողների տեղաշարժը ցանցի մաս կազմող բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտական կազմակերպություններում,
- հայագիտության ոլորտի առաջանցիկ զարգացումը,
- միջազգայնորեն մրցունակ, միջազգային գիտական նվաճումների միտված, երկրի տնտեսության մրցունակությանը և անվտանգությանն անմիջականորեն նպաստող գիտական համակարգի ստեղծումը:

Գիտության ոլորտի 2022-2024 թվականների ծախսային գերակայություններն ու դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներն են՝

- Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում (ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023

թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 171-րդ կետ):

- Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում, գիտության ենթակառուցվածքների արդիականացում (ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 172-րդ կետ):

- Գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոնների ստեղծումը, կրթութուն-գիտություն կապի ամրապնդումը (ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 173-րդ կետ):

- Հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում (ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 174-րդ կետ):

Ոլորտային ծախսային ծրագիրն է «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիրը»:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 12,798.4; 14,071.8 և 14,074.6 մլն դրամ:

Մշակույթի ոլորտ

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 4.5-րդ կետի, Կառավարությունը նպատակադրվել է ստեղծել ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայր, իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս, խթանել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրությունների և հնագիտական համալիր հետազոտական ծրագրերի իրականացումը, այդ ուսումնասիրությունների միջազգայնացումը և հանրահռչակումը, ստեղծել ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայր, իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս, աջակցել դեբյուտային ստեղծագործական ծրագրերին՝ արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսմամբ, ապահովել մշակութային ծառայությունների համաչափությունը, մատչելիությունը և հասանելիությունը Հայաստանի Հանրապետության մարզերում: Մշակույթի ոլորտում COVID-19 համավարակով և Արցախյան պատերազմով պայմանավորված 2020 թվականի ընթացքում նախատեսվող միջոցառումներն ենթարկվել են էական փոփոխությունների՝ չեղարկվել են ՀՀ պետական բյուջեով նախատեսված մի շարք միջոցառումներ, մշակութային օջախներում մշակվել և մեկնարկել են առցանց ներկայացումներ, ցուցադրություններ ու այցելություններ: Նախատեսվող կոնֆերանսներն ու հանդիպումներն հիմնականում իրականացվել են առցանց:

Մշակույթի ոլորտի հիմնական թիրախներն են.

- Կինոարվեստի, կինոարտադրության զարգացմանն աջակցություն, հայկական ավանդույթների շարունակականության ապահովում, կինոարվեստի հանրահռչակում,
- Մշակութային ժառանգության պահպանում, օգտագործում, համալրում և հանրահռչակում,
- Գրական դաշտի բոլոր օղակների հավասարաչափ զարգացում, գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանում, զարգացում, տարածում և հանրահռչակում, քաղաքացիական հասարակության ձևավորում, ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծում,
- Ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացում և հանրահռչակում,
- Երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտում և զարգացում,
- Մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացում,
- ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանության, համալրման, հաշվառման և օգտագործման ապահովում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Մշակույթի ոլորտում իրականացվում են հետևյալ 7 ծրագրերը՝

1.Կինեմատոգրաֆիայի ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ կինոարվեստի, կինոարտադրության զարգացմանն աջակցությունը, հայկական ավանդույթների շարունակականության ապահովումը, կինոարվեստի հանրահռչակումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 668.8; 714.1 և 714.1 մլն դրամ:

2.Մշակութային ժառանգության ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ մշակութային ժառանգության պետական հաշվառումը, պահպանումը, օգտագործումը և հանրահռչակումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ համապատասխանաբար՝ 2,979.5; 3,120.8 և 3,097.7 մլն դրամ:

3.Գրահրատարակչության և գրադարանների ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ գրական դաշտի բոլոր օղակների հավասարաչափ զարգացումը, գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանումը, զարգացումը, տարածումը և հանրահռչակումը, քաղաքացիական հասարակության ձևավորումը, ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը, միջազգային համագործակցության համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 1,671.2; 1,691.1 և 1,691.1 մլն դրամ:

4. Արվեստների ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ նպաստել ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացմանը և հանրահռչակմանը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 8,485.8; 8,695.4 և 8,695.4 մլն դրամ:

5. Մարզերի մշակութային զարգացման ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, յուրաքանչյուր տարի՝ 79.8 մլն դրամ:

6. Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտումը և զարգացումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 570.4; 608.1 և 608.1 մլն դրամ:

7. Ազգային արխիվի ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանության, համալրման, հաշվառման և օգտագործման ապահովումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, յուրաքանչյուր տարի՝ 590.2 մլն դրամ:

Սպորտի և երիտասարդության ոլորտ

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 4.6-րդ և 4.7-րդ կետերի՝ ՀՀ կառավարությունը նպատակ ունի՝

- **Սպորտի ոլորտում՝** ապահովել մանկապատանեկան սպորտի զարգացումը՝ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, մարզաձևերի ֆեդերացիաների, մարզական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ,
- **Երիտասարդության ոլորտում՝** բարձրացնել երիտասարդների հասարակական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային մասնակցության մակարդակը, ինչպես նաև մշակել երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմներ:

Միաժամանակ, երիտասարդության ոլորտում Կառավարության ծրագիրը նախատեսում է ներառական երիտասարդական քաղաքականության միջոցով ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ երիտասարդները կկարողանան լիարժեք ինքնադրսևորվել և կառուցել սեփական ապագան:

Սպորտի և երիտասարդության ոլորտի հիմնական թիրախներն են.

- ՀՀ առաջնություններին, տեղական և միջազգային մարզական միջոցառումներին հայ մարզիկների մասնակցության ընդլայնումը,

- Միջազգային մարզական միջոցառումներում հայ մարզիկների նվաճած մեդալների աճը, սպորտի ոլորտում ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացումը,
- Մասսայական սպորտային միջոցառումներին ՀՀ համայնքների և բնակչության մասնակցության ընդլայնումը, առողջ ապրելակերպի արմատավորումը,
- Հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցությունը, երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության խթանումը, երիտասարդների զբաղվածության հնարավորությունների մեծացումը,
- Երիտասարդական ծրագրերի շրջանակներում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելմանն ուղղված քարոզչական միջոցառումների իրականացումը,
- «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

*1.**Մեծ նվաճումների սպորտ***

Ծրագրի նպատակն է՝ նպաստել Հայաստանում մեծ սպորտի շարունակական զարգացմանը և միջազգային հարթակներում ՀՀ դիրքի բարելավմանը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 1,871.6; 2,223.4 և 2,229.7 մլն դրամ:

2.Մասսայական սպորտ

Մասսայական սպորտի ծրագրի նպատակն է՝ բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 1,498.9; 1,706.1 և 1,696.1 մլն դրամ:

3. Երիտասարդության ծրագիր

Երիտասարդության ծրագրի նպատակն է՝ նպաստել սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին երիտասարդների լիարժեք ներգրավմանը և նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորմանը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 1,721.5; 1,846.5 և 1,846.5 մլն դրամ:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գծով 2022-2024 թվականներին նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ **178,626.1** մլն դրամ,
2023 թվականի համար՝ **175,132.3** մլն դրամ,
2024 թվականի համար՝ **174,577.7** մլն դրամ:

2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտի հետագա զարգացումը, մատուցվող ծառայությունների մատչելիության ու որակի, բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների բարելավումը մեծապես կախված են ոլորտի ֆինանսավորման մակարդակից: Ծրագրային ժամանակահատվածում առողջապահության ոլորտը պետք է լինի պետական ծախսային առաջնահերթություններից մեկը, և ոլորտին հատկացումներն աճեն ավելի արագ, քան բյուջեի ընդհանուր ծախսերը:

Պետական առողջապահական ծախսերի նպատակայնության հետևողական բարձրացման, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման և մատուցվող ծառայությունների որակի կառավարման գործուն մեխանիզմների շարունակական բարելավման շնորհիվ առողջապահական համակարգի շահառուն ստիպված չի լինի հավելյալ վճարել պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող ծառայությունների համար և կստանա որակյալ բժշկական օգնություն և ծառայություններ: Անվճար բժշկական օգնությունը պետք է տրամադրվի միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա: Միաժամանակ պետությունը պետք է կանգնած լինի անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող ցանկացած մարդու կողքին:

Բնակչության առողջության առաջնային պահպանումը միջնաժամկետ հեռանկարում շարունակելու է մնալ ռազմավարական կարևոր ուղղություն: Միջնաժամկետ հատվածում շարունակականորեն ապահովել առաջնային օղակի դերի բարձրացումը և մատուցվող ծառայությունների որակի բարելավումն՝ ապահովվելու է որակյալ և մատչելի առաջնային բուժօգնություն, ինչպես նաև սոցիալական արդարության և հավասարության սկզբունքներ հանրապետության ողջ բնակչության համար՝ անկախ սեռից ու տարիքից:

Մոր և մանկան առողջությունը շարունակելու է առանցքային դեր խաղալ պետական ծախսային քաղաքականության մեջ: Հղիների նախածննդյան և ծննդյան որակյալ բուժօգնության տրամադրման, կանանց, հղիների և նորածինների լայնածավալ սքրինինգային ծրագրերի, կանանց համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների դեպքերի վաղ հայտնաբերման ու կանխարգելման, երեխաների պատվաստումներում ընդգրկվածության մեծացման արդյունում ակնկալվում է զգալի կրճատել մանկական և մայրական մահացության ցուցանիշները:

0-18 տարեկան երեխաների բժշկական օգնությունն ու սպասարկումը նախատեսվում է ամբողջապես վերցնել պետական հոգածության տակ և իրականացնել պետական պատվերի շրջանակներում:

Միջնաժամկետ ժամանակահատվածում շարունակվելու են լրացուցիչ միջոցներ ուղղվել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կյանք փրկող գլխուղեղի սուր և ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիա ծառայության զարգացմանը:

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը ռազմավարական մեկ այլ կարևոր նպատակ է, որի շրջանակներում ապահովվելու է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավում և այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատում, ինչպես նաև վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցում, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում:

Առողջապահության նախարարության հիմնական խնդիրներից է հանրապետությունում ուռուցքաբանական ծառայությունների շարունակական բարելավումը:

ՈՒԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Հանրային առողջության պահպանում ծրագրի նպատակն է՝ մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը և նվազեցումը՝ կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել համապատասխանաբար՝ 5,569.5 մլն դրամ:

Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագրի նպատակն է՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին առողջապահության համակարգի արդիականացման ու զարգացման իրականացումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. համար նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 991.4 մլն դրամ և 2,505.2 մլն դրամ, իսկ 2024թ. համար միջոցներ չեն նախատեսվել կապված վարկային և դրամաշնորհային միջոցների տրամադրման համաձայնագրերի բացակայության հետ:

Առողջության առաջնային պահպանում ծրագրի նպատակն է՝ բնակչությանը մատչելի և որակյալ առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ առողջության վատթարացման ռիսկի գործոնների վերհանումը և դրանց հնարավոր անբարենպաստ ազդեցության կանխարգելումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել 28,451.0 մլն դրամ:

Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի նպատակն է՝ մարդու և հանրության առողջության պահպանումը՝ բնակչության առողջության բարելավումը՝ հիվանդությունների կանխարգելում՝ հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազեցումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել 991.9 մլն դրամ:

Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական ծառայություններ ծրագրի նպատակն է՝ պաթանատոմիական կանխորոշումների հիման վրա ախտորոշման և բուժման արդյունավետության բարձրացումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել 490.0 մլն դրամ:

Դեղապահովում ծրագրի նպատակն է՝ դեղերի անվտանգության՝ արդյունավետության և որակի ապահովումը՝ ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա կենսականորեն անհրաժեշտ դեղերի

ֆիզիկական և տնտեսական մատչելիության բարձրացումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել 3,339.6 մլն դրամ:

Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ ծրագրի նպատակն է՝ բժշկական օգնության կազմակերպման ու որակի բարձրացման կարգավորման մասնագիտական՝ խորհրդատվական՝ կազմակերպամեթոդական ապահովումը՝ համակարգի գործունեության արդյունքների գնահատումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել 187.2 մլն դրամ:

Մոր և մանկան առողջության պահպանում ծրագրի նպատակն է՝ մոր և մանկան առողջության պահպանումը՝ կանանց և երեխաներին մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել 17,510.8 մլն դրամ:

Շտապ բժշկական օգնություն նպատակն է՝ Մարդու կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող վիճակներում որակյալ շտապ բժշկական օգնության ծառայությունների տրամադրումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել 5,000.0 մլն դրամ:

Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում ծրագրի նպատակն է՝ ոչ վարակիչ հիվանդությունների (մասնավորապես՛ սիրտանոթային՝ շաքարային դիաբետի և չարորակ նորագոյացությունների) բուժման արդյունավետության բարձրացումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել համապատասխանաբար՝ 15,105.9 մլն դրամ, 21,457.3 մլն դրամ և 22,156.8 մլն դրամ:

Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն ծրագրի նպատակն է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության հասանելիության և մատչելիության մակարդակի բարձրացումը՝ հիվանդանոցային որակյալ բժշկական օգնության ապահովումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել 27,302.8 մլն դրամ:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելում ծրագրի նպատակն է՝ վարակիչ և բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների (մալարիա՝ տուբերկուլյոզ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ և այլն) վաղ հայտնաբերումն՝ արդյունվետ հակազդումը և բժշկական օգնության ապահովումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարվա համար հատկացնել 2,157.4 մլն դրամ:

Առողջապահության նախարարության գծով ծախսերը միջնաժամկետ հատվածում ըստ տարիների կազմում են.

2022 թվականի համար՝ 107,097,732.5 հազար դրամ,

2023 թվականի համար՝ 114,962,831.1 հազար դրամ,

2024 թվականի համար՝ 113,157,119.1 հազար դրամ:

3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պաշտպանությունը պատմականորեն հանդիսացել և շարունակում է հանդես գալ որպես ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը: Վերոհիշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն, որն ուղղակի կամ անուղղակի առնչվում է Կրթության և գիտության, մշակույթի և սպորտի, Առողջապահության, Պաշտպանության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և այլ նախարարությունների հետ:

Խրախուսելով մասնավոր կազմակերպությունների մուտքը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտ՝ ձևավորել մրցակցային միջավայր, ներդնել ֆինանսավորման այլընտրանքային մոդելներ, խթանել սոցիալական ծառայությունների բազմազանությունը:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավումը խթանելու նպատակով կյանքի կոչել ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության ծրագրեր, իրագործել միջոցառումներ, որոնց արդյունքում ակնկալվում է, որ կբարձրանա ծնելիության գումարային գործակիցը:

Պարբերաբար բարձրացնել պետական կենսաթոշակների չափերը՝ ապահովելով գնաճի նկատմամբ միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ:

Բնակչության աղքատ խավի շրջանում կրթության և աշխատանքի քաջալերումը, գործարարությունը խթանող ծրագրերի իրականացումը, զբաղվածության կարգավորման ծրագրերի հասցեականության բարձրացումը, աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, գործազրկության մակարդակի նվազումը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացում՝ հնարավորինս բացառելով խտրականության դրսևորումը նրանց հանդեպ:

Հետևողական լինել երեխաների մուտքը մանկատներ կանխարգելելու, նրանց ընտանիք վերադարձնելու, ինչպես նաև մանկատնից դուրս եկող երիտասարդների անկախ կյանքի կազմակերպման գործընթացը սահուն կազմակերպելու հարցում:

Խնամքի ծառայությունների գծով հիմնական թիրախներն են.

- պետական միջոցների շրջանակում շահառուներին մատուցվող խնամքի ծառայությունների շարունակականության ապահովումը՝ խրախուսելով ծառայությունների պատվիրակումը մրցութային եղանակով ընտրված կազմակերպություններին,

- շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը,

- խնամքի ծառայությունների ապաինստիտուցիոնալացման գործընթացի համատեքստում այլընտրանքային ծառայությունների ընդլայնումը՝ ներգրավելով համայնքի ներուժը,

- վերը նշված գործընթացների իրականացումն ապահովելու նպատակով օրենսդրական դաշտի կատարելագործումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1. **Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագրի (1011)** նպատակն է օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 31,109.8 մլն դրամ, 31,097.5 մլն դրամ և 31,097.5 մլն դրամ:

2. Ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագրի (1068) նպատակն է խթանել ժողովրդագրական վիճակի բարելավումը:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 23,496,4 մլն դրամ, 24,755.2 մլն դրամ և 24,755.2 մլն դրամ:

3. Կենսաթոշակային ապահովության ծրագրի (1102) նպատակն է կենսաթոշակի իրավունքի իրացումը :

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 335,034.3 մլն դրամ, 361,172.3 մլն դրամ և 361,172.3 մլն դրամ:

4. Զբաղվածության ծրագրի (1088) նպատակն է կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովումը:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 1,945.0մլն դրամ, 2,049.9 մլն դրամ և 2,049.9 մլն դրամ:

5. Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց ծրագրի (1032) նպատակն է խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց բնականոն կենսագործունեության ապահովումը :

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 2,908.7 մլն դրամ, 3,067.1 մլն դրամ և 3,067.1 մլն դրամ:

6. Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ծրագրի (1160) նպատակն է աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը հասարակություն:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 1,118.1 մլն դրամ, 1,178.9 մլն դրամ և 1,178.9 մլն դրամ:

7. Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության ծրագրի (1141) նպատակն է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների՝ կանանց և երեխաների հիմնական պահանջմունքների, սոցիալական կարիքների բավարարումն և ինտեգրումը հասարակություն:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 3,460.6 մլն դրամ, 3,648.8 մլն դրամ և 3,648.8 մլն դրամ:

8. Պարգևավճարներ և պատվովճարներ ծրագրի (1005) նպատակն է պետական հոգածության դրսևորում՝ առանձին կատեգորիայի քաղաքացիներին և նրանց ընտանիքներին սոցիալական երաշխիքների տրամադրումը:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 10,449.7 մլն դրամ, 10,965.8 մլն դրամ և 10,965.8 մլն դրամ:

9. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի (1015) նպատակն է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների՝ հիպոթեքային վարկի ամսական վճարի, ուսման վճարի և հանգստի ապահովման գծով ծախսերի փոխհատուցումը:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 9,949.8 մլն դրամ, 10,491.4 մլն դրամ և 10,491.4 մլն դրամ:

10. Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում ծրագրի (1082) նպատակն է կորցրած եկամուտների մասնակի փոխհատուցումը:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 13,444.1 մլն դրամ, 14,178.7 մլն դրամ և 14,178.7 մլն դրամ:

11. Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագրի (1153) նպատակն է սոցիալական պաշտպանության ոլորտի քաղաքականության՝ ծրագրերի գիտահետազոտական և մասնագիտական կապիտալի զարգացման ապահովումը:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 120,2 մլն դրամ, 126,7 մլն դրամ և 126,7 մլն դրամ:

12. Ավանդների և այլ փոխհատուցումների ծրագրի (1153) նպատակն է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցումը:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 1,135.6 մլն դրամ, 1,197.4 մլն դրամ և 1,197.4 մլն դրամ:

13. Սոցիալական ապահովության ծրագրի (1205) նպատակն է սոցիալական ապահովության իրավունքի իրականացման ապահովումը :

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 28,913.0 մլն դրամ, 30,485.6 մլն դրամ և 30,485.6 մլն դրամ:

14. Բնակարանային ապահովման ծրագրի (1098) նպատակն է ոչ անվտանգ բնակության պայմաններում (վթարային շենքերում, ժամանակավոր կացարաններում, ոչ հիմնական շինություններում և այլն) բնակվող ընտանիքներին անվտանգ, պատշաճ, սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող բնակարաններով ապահովումը, ինչպես նաև զոհված (մահացած), զինվորական որևէ պատճառական կապով հաշմանդամ դարձած զինծառայողների բնակարանի կարիքավոր ընտանիքների բնակարանային պայմանների բարելավումը:

Ծրագրի գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 780.4 մլն դրամ, 494.0 մլն դրամ և 494.0 մլն դրամ:

15. Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծրագրի (1117) գծով 2022-2024թթ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 6,783.7 մլն դրամ, 6,888.2 մլն դրամ և 6,975.9 մլն դրամ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի գծով 2022-2024 թվականների ՄԺԾԾ-ում ընդգրկված ծախսային ծրագրերի գումարները կազմում են.

2022 թվականի համար՝ 470,939.6 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 501,797.5 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 501,885.1 մլն դրամ:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Շրջակա միջավայրի կառավարման քաղաքականությունն ուղղված է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանը, բարելավմանը, վերականգնմանը և ողջամիտ օգտագործմանը՝ հավասարակշռելով այն սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հետ:

Շրջակա միջավայրի կառավարման հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի՝ օդի, կլիմայի, ջրի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցությունները, բացառել բնական ռեսուրսների գերշահագործումը և ապօրինի օգտագործումը, ապահովել կանխարգելման միջոցառումների իրականացումը: Ելնելով նշվածից՝ շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություններն են՝

- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և պահպանությունը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունը և կառավարումը,

- անտառների կայուն կառավարումը, անտառածածկ տարածքների ընդլայնումը, անտառվերականգնումը և անատառապատումը, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացումը,

- կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման և կանխարգելման, ինչպես նաև հարմարվողականության գործողությունների իրականացումը՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների,

- բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը,

- կենսաբազմազանության պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը,

- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացի արդյունավետ իրականացումը,

- կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը,

- շրջակա միջավայրի կառավարման ոլորտում գործող միջազգային կառույցների հետ շարունակական համագործակցության ապահովումը,

- բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցումը ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դիրեկտիվներին և այդ համատեքստում միջազգային համագործակցության ընդլայնումը՝ ճանապարհային քարտեզով նախանշված գործողությունների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով,

-անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացումը,

- էկոլոգիական իրազեկման, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, էկոլոգիական գիտության դերի բարձրացումը:

Վերոհիշյալ ուղղությունները (թիրախները) բխում են ՀՀ կառավարության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4.8 կետում (Շրջակա միջավայրը) ամրագրված առաջնահերթ ուղղություններից:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է՝ նպաստել շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների) պահպանությանը: Ծրագրի գծով 2022-2024 թվականների միջնաժամկետ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսված է 1,663.1 մլն դրամ:

2. «Շրջակա միջավայրի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է՝ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակումը և իրականացումը: Ծրագրի գծով 2022-2024 թվականների համար համապատասխանաբար նախատեսված է 1,064.6 մլն դրամ, 1,075.7 մլն դրամ և 1,086.9 մլն դրամ:

3. **«Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում» ծրագիր.**

Ծրագրի նպատակն է՝ տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը պատճառված վնասների մեղմմանն ուղղված ծրագրերի իրականացման համակարգումը: Ծրագրի գծով 2022-2024 թվականների միջնաժամկետ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսված է 150.0 մլն դրամ:

4. **«Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում» ծրագիր.**

Ծրագրի նպատակն է՝ բնական պաշարների և կենսաբազմազանության արդյունավետ կառավարումն ու պահպանությունը: Ծրագրի գծով 2022-2024 թվականների միջնաժամկետ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսված է 1,254.2 մլն դրամ:

5. «Անտառների կառավարում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է՝ անտառային տարածքների կայուն կառավարումը: Ծրագրի գծով 2022-2024 թվականների համար համապատասխանաբար նախատեսված է 1,909.4 մլն դրամ, 1,978.4 մլն դրամ և 1,980.7 մլն դրամ:

6. «Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն» ծրագիր.

Ծրագրի նպատակն է՝ նպաստել բնապահպանական աշխարհայացքի ձևավորմանը, բնակչության էկոլոգիական դաստիարակությանը: Ծրագրի գծով 2022-2024 թվականների համար համապատասխանաբար նախատեսված է 344.9, մլն դրամ:

Ստորև ներկայացված են շրջակա միջավայրի բնագավառի 2022-2024թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 6,386.2 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 6,466.3 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 6,479.8 մլն դրամ:

5. ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը, համաձայն ՀՀ կառավարության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 7.1-րդ կետի, նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր: Այս նպատակին հասնելու և բարձր տեխնոլոգիաների զարգացումն ապահովելու համար կիրականացվեն նպատակային քայլեր: Մասնավորապես նախանշվել են ոլորտի հետևյալ հիմնական թիրախները.

•Տնտեսության միջնաժամկետ և երկարաժամկետ կայուն աճի շարժիչ ուժը պետք է հանդիսանա նորարարությունը և առաջադեմ տեխնոլոգիաների ստեղծումն ու կիրառումը:

•Ապահովել տեխնոլոգիական ընկերությունների կողմից ստեղծված բարձրորակ կրթական ծրագրերի լայն կիառումը ԲՈՒՀ-երում ինչպես նաև Հայաստանի տարբեր քաղաքներում գտնվող տեխնոլոգիական կենտրոններում և կրթական այլ հաստատություններում,

•Խրախուսել գիտության և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը, գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացումը՝ դրամաշնորհային ծրագրերի իրագործման և ներդրողների ներգրավման միջոցով,

•Ստարտափ էկոհամակարգի զարգացման և միջազգային շուկաներում հայկական ընկերությունների առաջխաղացման և ամրապնդման նպատակով օժանդակել ընկերություններին մասնակցել միջազգային հայտնի աքսելերացիոն կազմակերպությունների ուսուցողական ծրագրերին,

•Աջակցել միջազգային շուկաներում հայկական բարձր տեխնոլոգիական ընկերությունների, նրանց ստեղծած արտադրանքի և ծառայությունների պատշաճ ներկայացմանը և միջազգային համագործակցության պլատֆորմների զարգացմանը,

•ՀՀ մարզերի համահարթ զարգացման նպատակով խթանել մարզերում ժամանակակից հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեությունը, և ձեռնարկել միջոցներ հանրապետության տարածքում նոր կենտրոնների ստեղծման ուղղությամբ,

•Նպաստավոր պայմաններ ստեղծել միջազգային բարձր տեխնոլոգիական ընկերությունների Հայաստան մուտքի համար՝ գիտահետազոտական, արտադրական և կրթական կենտրոններ հիմնելու նպատակով:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1. «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր».

Ծրագրի նպատակն է Բարձր տեխնոլոգիաների ենթակառուցվածքների բարելավումը, որի շրջանակներում նախատեսվում է աջակցել ոլորտի կազմակերպություններին և անհատներին ստանալ որակյալ կրթություն՝ ձեռներեցության, կառավարման, վաճառքի և մարկետինգի ոլորտներում՝ համապատասխան տեղական և միջազգային ծրագրերով; դրամաշնորհներ տրամադրել գիտահետազոտական և փորձարարական խմբերին, ստարտափերին, տեխնոլոգիական ոլորտի կազմակերպություններին՝ անհրաժեշտ թեմաների շուրջ աշխատանքներ իրականացնելու համար; ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 2-ի N 297-Լ որոշմամբ հաստատված «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրով սահմանված նպատակների

շրջանակներում իրականացնել ձեռներեցների վերապատրաստման դասընթացներ, հիմնել «Հայաստան տարածաշրջանային տեխնոլոգիական հաբ» տեխնոլոգիական ընկերությունների հայաստանյան մասնաճյուղ՝ այդ ընկերությունների համար իրականացնել միջազգային աքսելերացիոն ծրագրեր, մարզերում կազմակերպել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ; խթանել հայկական ընկերությունների՝ ցուցահանդեսներին, սեմինարներին, երկկողմ գործարար ֆորումներին և այլ միջոցառումներին մասնակցելը, վերջիններս հնարավորություն ստանալով ներկայացնել իրենց արտադրանքը, ծառայությունները և դուրս գալ միջազգային շուկա:

Ծրագրի համար 2022-2024թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 1,915.4 մլն դրամ, 1,878.4 մլն դրամ և 1,798.4 մլն դրամ:

2. «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է բարձր տեխնոլոգիաների, ռազմարդյունաբերության, թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, կապի, փոստի, համացանցի և տիեզերական բնագավառներում պետական քաղաքականության մշակումը, ծրագրերի համակարգումն ու մոնիտորինգը:

Վերը նշված նպատակի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 1,052.2 մլն դրամ, 1,062.2 մլն դրամ և 1,072.2 մլն դրամ:

3. «Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ պաշտպանության և անվտանգության համակարգերի զարգացմանը, որի շրջանակներում նախատեսվում է պաշտպանության համակարգի ապահովման համար իրականացնել գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ:

Ծրագրի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 5,233.9 մլն դրամ, 5,707.8 մլն դրամ և 5,777.6 մլն դրամ:

4. «Հեռահաղորդակցության ապահովում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, մասնավորապես ՀՀ հաճախականությունների բաշխման աղյուսակի կազմումը, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը, ինչպես նաև ՀՀ-ում թվային հեռուստահեռարձակման ապահովման շրջանակներում հանրապետական սփռման մուլտիպլեքսի և արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալումը:

Վերը նշված նպատակի համար 2022-2024թթ յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել՝ 418.3 մլն դրամ:

Ստորև ներկայացված են Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառում 2022-2024թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 8,619.8 մլն դրամ,

2022 թվականի համար՝ 9,066.7 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 9,067.2 մլն դրամ:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը մշակում և իրականացնում է՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարձրացման, Երևանում տարածքային կառավարման իրականացման ապահովման, բնակչության տեղաշարժերի ընթացքում առաջացող իրավահարաբերությունների կարգավորման և պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: Մասնավորապես նախանշվել են ոլորտի հետևյալ հիմնական թիրախները.

- երկրի ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև տնտեսության և ազգաբնակչության պահանջների բավարարման որակի բարձրացման միջոցով՝ անվտանգ և արդյունավետ տրանսպորտային ծառայությունների ապահովումը,

- կայուն էներգետիկայի զարգացումը՝ էներգախնայողության, վերականգնվող էներգիայի, ինչպես նաև էներգետիկ անվտանգության ցուցանիշներին համապատասխան, ՝ Հայաստանի էներգետիկ անկախություն ապահովելու նպատակադրմամբ,

- ջրամատակարարման որակի բարձրացումը, յուրաքանչյուր սոցիալական խմբի և շահառուի համար ծառայությունների հասանելիության ապահովումը, ոռոգվող հողատարածքների ընդլայնումը, ինչպես նաև ջրային տնտեսության համակարգի զարգացման ու բարեփոխումների շարունակականությունը,

- միգրացիոն քաղաքականության շրջանակում ապահովել անձանց ազատ և անվտանգ տեղաշարժը՝ հավասարակշռելով այն երկրի ազգային անվտանգության ապահովման հետ, ինչպես նաև միգրանտների, այդ թվում՝ վերադարձող միգրանտների տնտեսական և մարդկային ներուժի ուղղորդումը երկրի զարգացման գործին,

- պետական գույքի կառավարման ապահովումը, այդ թվում առկա համակարգերի բարեփոխումը, պետական գույքի մասնավորեցման, օտարման գործընթացներում հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, վաճառքի կազմակերպման ժամանակակից ձևերի և մեթոդների կիրառումը, վարձակալության գործընթացի մեկ միասնական կանոնակարգով և մոտեցմամբ իրականացումը, վարչարարության պարզեցումը և կրճատումը, ինչպես նաև անհատույց օգտագործման տրամադրման գործընթացում մրցակցային դաշտի ապահովումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1. «Տարածքային կառավարման ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է տարածքային կառավարման բնագավառում պետական արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման ապահովումը, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 1,467.7 մլն դրամ, 1,484.3 մլն դրամ և 1,501.1 մլն դրամ:

2. «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ոռոգման ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովումը, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 19,039.3 մլն դրամ, 35,349.0 մլն դրամ և 10,238.7 մլն դրամ:

3. «Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի պահպանումն և շահագործումը, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել յուրաքանչյուր տարի 205.8 մլն դրամ:

4. «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր». ծրագիր.

Ծրագրի նպատակն է նպաստել տարածքներում բնակչության նյութական և ոչ նյութական բարեկեցության աճին, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 1,993.8 մլն դրամ, 4,569.4 մլն դրամ և 3,450.6 մլն դրամ:

5. «Կոլեկտորադրենաժային ծառայություններ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է կոլեկտորադրենաժային ցանցի միջոցով գրունտային ջրերի հեռացումն ու համակարգի կենսունակության բարելավումը, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 266.0 մլն դրամ, 290.9 մլն դրամ և 290.9 մլն դրամ:

6. «Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների աշխատանքի արդյունավետության բարելավումը, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 18.5 մլն դրամ, 18.1 մլն դրամ և 18.1 մլն դրամ:

7. «Կոշտ թափոնների կառավարում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է կենցաղային թափոնների արդյունավետ կառավարումը, սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծումը, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 4,439.4 մլն դրամ, 4,801.8 մլն դրամ և 2,413.8 մլն դրամ:

8. «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ճանապարհային ցանցի բարելավումն ու անվտանգ երթևեկության ապահովումը, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 37,668.8 մլն դրամ, 39,908.8 մլն դրամ և 109,543.8 մլն դրամ:

9. «Աջակցություն փախստականների ինտեգրմանը» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ապահովել փախստականների ինտեգրումը հասարակությանը, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 1,606.9 մլն դրամ, 161.1 մլն դրամ և 161.1 մլն դրամ:

10. «Ջրամատակարարաման և ջրահեռացման բարելավում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ջրամատակարարման ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովումը, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 10,632.8 մլն դրամ, 22,383.3 մլն դրամ և 2,000.0 մլն դրամ:

11. «Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ընդերքի օգտագործման արդյունավետության բարձրացումը, որի համար 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել համապատասխանաբար՝ 89.3 մլն դրամ, 16.9 մլն դրամ և 16.9 մլն դրամ:

12. «Երկաթուղային ցանցի զարգացում» ծրագիր.

Ծրագրի շրջանակում ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրման համար նախատեսվում է 2022-2024թթ. հատկացնել համապատասխանաբար՝ 423.0 մլն դրամ, 437.0 մլն դրամ և 444.0 մլն դրամ:

13. «Պետական գույքի կառավարում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է պետական գույքի համալիր և արդյունավետ կառավարման ապահովումը, որի համար նախատեսվում է 2022-2024թթ. հատկացնել համապատասխանաբար՝ 1,121.0 մլն դրամ, 1,149.3 մլն դրամ և 1,198.6 մլն դրամ:

14. «Միգրացիոն բնագավառում պետական քաղաքականության մշակում և իրականացում» և «Ջրային տնտեսության ոլորտում ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրեր.

Նշված ծրագրերի նպատակն է միգրացիոն պետական քաղաքականության մշակումն ու ջրային տնտեսության ոլորտում ծրագրերի համակարգում և մոնիտորինգը, որոնց համար նախատեսվում է 2022-2024թթ. հատկացնել համապատասխանաբար՝ 548.2 մլն դրամ, 553.6 մլն դրամ և 559.0 մլն դրամ:

15. «Այլընտրանքային աշխատանքային ծառայություն» ծրագիր.

Ծրագրի նպատակն է քաղաքացիական պարտքի կատարման այլընտրանքային տարբերակների ապահովումը, որի շրջանակում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և փոխհատուցման տրամադրման նպատակով նախատեսվում է 2022-2024թթ. հատկացնել համապատասխանաբար՝ 26.6 մլն դրամ, 12.1 մլն դրամ և 1.5 մլն դրամ:

16. «Քաղաքային զարգացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է քաղաքային ենթակառուցվածքների զարգացումը, որի համար նախատեսվում է 2022-2024թթ. հատկացնել համապատասխանաբար՝ 18,006.5 մլն դրամ, 25,215.9 մլն դրամ և 15,115.9 մլն դրամ:

17. «Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիր» ծրագիր.

Ծրագրի նպատակն է նպաստել էլեկտրաէներգետիկ համակարգի հուսալիության բարձրացմանը և էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման ապահովումը, որի համար

նախատեսվում է 2022-2024թթ. հատկացնել համապատասխանաբար՝ 1,004.8 մլն դրամ, 1,354.7 մլն դրամ և 2,453.6 մլն դրամ:

18. «Ռադիոակտիվ թափոնների կառավարում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ռադիոակտիվ թափոնների վնասակար ազդեցությունից բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը, որի համար նախատեսվում է 2022-2024թթ. յուրաքանչյուր տարի հատկացնել 37.0 մլն դրամ:

19. «Ավիացիայի բնագավառում վերահսկողության և կանոնակարգման ապահովում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ավիացիայի բնագավառում վերահսկողության և կանոնակարգման ապահովումն է, որի համար նախատեսվում է 2022-2024թթ. հատկացնել 1,126.6 մլն դրամ, 1,188.7 մլն դրամ և 1,264.1 մլն դրամ:

20. «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր» ծրագիր.

Ծրագրի նպատակն է նպաստել երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը, որի համար նախատեսվում է 2022-2024թթ. հատկացնել համապատասխանաբար՝ 2,910.0 մլն դրամ, 3,203.8 մլն դրամ և 3,179.0 մլն դրամ:

21. «Տարածքային զարգացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ՀՀ համայնքների կառավարման արդյունավետության բարձրացումն ու տնտեսական գործունեության խթանումը, որի համար նախատեսվում է 2022-2024թթ. հատկացնել 68,642.6 մլն դրամ, 74,566.0 մլն դրամ և 82,913.5 մլն դրամ:

Ստորև ներկայացված են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառի 2022-2024թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 171,274.8 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 216,907.5 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 237,007.2 մլն դրամ:

7. ԷԿՈՆՈՄԻԿԱ

Առաջիկա տարիներին տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը լինելու է Հայաստանի քաղաքացիների բարեկեցության բարձրացումը՝ տնտեսական կյանքում նրանց մասնակցային հնարավորությունների ավելացման միջոցով, ինչը դրսևորվելու է մրցունակ մասնավոր հատվածում աշխատատեղերի և յուրաքանչյուր մարդու աշխատանքային եկամուտների զգալի ավելացման ձևով: Նպատակի իրականացմանն ուղղված քաղաքականությունների շրջանակն ամփոփվում է մրցունակության բարձրացման գաղափարի ներքո, որի հիմքում ընկած է արտադրողականության աճը: Ցածր արտադրողականությունը հայաստանյան տնտեսության հիմնական ռիսկն է: Երկարաժամկետ կտրվածքով բնակչության բարեկեցությունը բարելավելու կարողությունը գրեթե լիովին կախված է լինելու մեկ աշխատողի հաշվով թողարկման մակարդակը բարձրացնելու ունակությունից:

Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածում կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը առաջիկա տարիներին կնպատակաուղղվի ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա

պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, բնակչության աղքատության մակարդակի կրճատման համար:

Կանխատեսելի և վստահելի գործարար միջավայրը լինելու է ներդրումների ներգրավման հիմնական գրավականը և ապահովելու է ինչպես ներքին գործարար ներուժի իրացման արդյունավետ կենսամիջավայր, այնպես էլ օտարերկրյա ներդրումների կայուն ներհոսք: Մեծ են հավակնությունները օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման ասպարեզում, որոնք ամրապնդվելու են ոչ միայն երկրի ու Կառավարության հանդեպ ձևավորված վստահության աննախադեպ պաշարով, այլև ինստիտուցիոնալ ու օրենսդրական դաշտում նոր նախաձեռնություններ մեկնարկելու և մեկնարկած մի շարք բարեփոխումների գծով արդյունավետ ու արագ ընթացք ապահովելու պատրաստակամությամբ:

Տնտեսական զարգացման շարժիչը լինելու են նորարարությունը և ստեղծագործելու ձիրքը, գործարար նախաձեռնողականությունը, արդյունավետություն փնտրող ներդրումները և տեխնոլոգիական տարածումը՝ այդպիսով ընդլայնելով հնարավորի սահմանները: Հիմնական նպատակը ներքին և արտաքին հնարավորությունները զարգացման իրական ներուժի վերածելու առումով տնտեսության արդյունավետության և ունակության բարձրացումն է:

Տնտեսական զարգացման քաղաքականությունը խարսխվելու է երեք հենասյուների վրա, որոնք ըստ էության նաև լավագույնս արտացոլում են այն լրջագույն մարտահրավերները, որոնց անտեսումը նշանակալի սպառնալիք կդառնա երկրի երկարաժամկետ կայուն զարգացման և տնտեսական անվտանգության ապահովման տեսակետից: Այսպես, առաջին հենասյունը արտադրողականությունն ու մրցունակությունն է՝ որպես առանցք ունենալով ինովացիոն զարգացման իրական հիմքերի ձևավորումը և ընդլայնելով տնտեսության առանձին ոլորտների՝ տեխնոլոգիական առաջընթացի ձեռքբերումները կլանելու ունակությունը: Հաջորդը ներառականությունն է՝ որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ դիտարկելով ձեռներեցությունը, ինքնազբաղվածությունը, փոքր և միջին ձեռնարկատիրությունը, երկրի ողջ տարածքի ներուժն ու տնտեսական, սոցիալական, աշխարհագրական, բնակլիմայական, պատմամշակութային բազմազանությունը: Մյուս հենասյունը արտահանման ուղղվածությունն է՝ ակտիվացնելով նպատակային ջանքերը, որպեսզի էապես ընդլայնվի տնտեսության ունակությունը՝ օգտագործելու միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների հնարավոր օգուտները:

ՓՄՁ սուբյեկտները, հատկապես սկսնակ գործարարները, ձեռնարկատիրական անհրաժեշտ կրթության և կարողությունների զարգացման կարիք ունեն նոր տեխնոլոգիաների, շուկայավարման, բիզնես պլանավորման, հաշվապահական հաշվառման, մարդկային ռեսուրսների և ֆինանսական կառավարման և այլ հարցերում:

Արդյունաբերական արտադրության ներկայիս կառուցվածքը պայմանավորված է հիմնականում ներքին պահանջարկի բնույթով և արտաքին շուկաներում կոնկրետ ապրանքների մրցունակությամբ, ինչպես նաև՝ արտադրական կարողությունների զարգացման մակարդակով: Տեղական արտադրանքի նկատմամբ արտաքին պահանջարկը հիմնականում պայմանավորված է մրցունակ արտադրանքի թողարկման առկա հնարավորություններով: Այնինչ, պակաս կարևոր չէ

միջազգային շուկաներում հայրենական ապրանքների պատշաճ ներկայացումը և արտահանման հետ կապված լոգիստիկ հիմնախնդիրների լուծումը:

ՀՀ կառավարության ծրագրով նպատակ է դրվել գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, արդի տեխնոլոգիաների ներմուծումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված բոլոր սուբյեկտների՝ փոքր տնային տնտեսությունների, գյուղացիական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամտաբերության բարձրացումը:

Նշված քաղաքականության իրականացման համար նախատեսվում է 2022-2024թթ. պետական բյուջեներով ծախսերը նպատակաուղղել հետևյալ գերակա ուղղություններին.

-Անասնաբուժություն և հակահամաճարակային միջոցառումներ (պատվաստուկների ձեռքբերում, պատվաստումների իրականացում, կարանտինային միջոցառումներ),

- գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում,

- պարենային անվտանգության մակարդակի բարձրացում,

- արդի տեխնոլոգիաների կիրառության բարձրացում, այդ թվում՝ կաթիլային և անձրևացման, կարկտապաշտպան համակարգերի ներդրման պետական աջակցություն,

-չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը նպատակայնորեն օգտագործման նպատակով նոր տեխնոլոգիաների կիրառման մատչելիություն,

- Սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, կենդանական ծագում ունեցող մթերքի և հումքի արտադրության, վերամշակման, պահման, իրացման բոլոր փուլերում, ինչպես նաև ներմուծման և արտահանման դեպքերում անասնաբուժասանիտարական պահանջների նկատմամբ անվտանգության վերահսկողության իրականացում,

- Նոր ախտորոշման մեթոդների կիրառման և արդիական սարքավորումների ներդրման միջոցով վարակիչ հիվանդությունների և սննդամթերքի անվտանգության անասնաբուժա-սանիտարական և բուսասանիտարական լաբորատոր հետազոտությունների արդյունավետության, որակի և հավաստիության բարձրացում,

-Տոհմային ԽԵԿ-ի ձեռքբերման մատչելիության ապահովման, ինչպես նաև անասնաշենքերի կառուցման, վերակառուցման, տեխնոլոգիական վերազինման նպատակով պետական աջակցություն:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1. «Գյուղատնտեսության խթանման ծրագիր».

Ծրագրի նպատակն է ավելացնել գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալները, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 7,047.8 մլն դրամ, 8,207.1 մլն դրամ և 11,227.4 մլն դրամ:

2. «Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է բարելավել սննդի անվտանգությունը և որակը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 70.5 մլն դրամ:

3. «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ապահովել էկոնոմիկայի ոլորտում պետական արդյունավետ քաղաքականության մշակումը և իրականացումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 2,305.6 մլն դրամ, 2,326.3 մլն դրամ և 2,347.2 մլն դրամ:

4. «Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» ծրագիր.

Ծրագրի նպատակն է բարելավել հողագործությունից ստացվող արդյունքները, որի ուղղությամբ 2022թ. նախատեսվում է հատկացնել 199.4 մլն դրամ, իսկ 2023-2024թթ.՝ յուրաքանչյուր տարի 210.2 մլն դրամ:

5. «Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է բարելավել արտադրանքի, ծառայությունների և գործընթացների անվտանգության մակարդակը և ինտեգրումը միջազգային ու տարածաշրջանային հավատարմագրման համակարգերին, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 30.8 մլն դրամ:

6. «Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ապահովել գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության աճը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 2,011.2 մլն դրամ, 3,572.8 մլն դրամ և 36.8 մլն դրամ:

7. «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը» ծրագիր.

Ծրագրի նպատակն է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն և ընդլայնումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 160.1 մլն դրամ:

8. «Անասնաբուժական ծառայություններ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է անասնահամաճարակային կայուն ֆոնի ապահովումը, որի ուղղությամբ 2022թ. նախատեսվում է հատկացնել 2,046.7 մլն դրամ, իսկ 2023-2024թթ.՝ յուրաքանչյուր տարի 2,064.6 մլն դրամ:

9. «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր

Ծրագրի նպատակն է բարելավել գյուղական ազգաբնակչության տնտեսական ու սոցիալական կարգավիճակը, ստեղծել զբաղվածության ապահովման կայուն մեխանիզմներ, զարգացնել արտադրական համակարգերը և կապը ապրանքային մշակաբույսերի արտադրության արժեշղթայի օղակների միջև, որի ուղղությամբ 2022-2023թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 1,410.3 մլն դրամ և 526.6 մլն դրամ:

10. «Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր».

Ծրագրի նպատակն է խթանել ներդրումների ներգրավումը և արտահանումը, որի ուղղությամբ 2022թ. նախատեսվում է հատկացնել 490.0 մլն դրամ, իսկ 2023-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 528.0 մլն դրամ:

11. «Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր».

Ծրագրի նպատակն է արդիականացնել գյուղատնտեսական տեխնիկական համակարգերը, աջակցել ինտենսիվ այգիների ներդրմանը և տոհմաբուծության մեջ նոր ցեղատեսակների բուծմանը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 2,407.2 մլն դրամ, 2,150.4 մլն դրամ և 1,516.8 մլն դրամ:

12. «Զբոսաշրջության զարգացման ծրագիր».

Ծրագրի նպատակն է բարձրացնել Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակությունն և ճանաչելիությունը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 4.579.5 մլն դրամ, 2,350.4 մլն դրամ և 10,106.1 մլն դրամ:

13. «Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է հակազդել բնակչության սանիտարահամաճարակային հետևանքները, որի ուղղությամբ 2022թ. նախատեսվում է հատկացնել 3,091.9 մլն դրամ, իսկ 2023-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 3,136.1 մլն դրամ:

Ստորև ներկայացված են էկոնոմիկայի բնագավառի 2022-2024թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 25,851.0 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 25,334.1 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 31,434.7 մլն դրամ:

8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը՝ արտակարգ իրավիճակների համակարգը, իրականացնում է հանրապետությունում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության մշակման, բնական, արհեստական և տեխնածին աղետներ առաջացնող երևույթների ուսումնասիրության, կանխարգելման, հակազդման, հետևանքների վերացման, բնակչության վաղաժամ իրազեկման և ուսուցման գործառույթները:

Արտակարգ իրավիճակներին դիմագրավելու համար ոլորտում գործում են Փրկարար ծառայությունը, Պետական ռեզերվների գրասենյակը, Սեյսմիկ պաշտպանության ծառայությունը, Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, և Ռուս հայկական մարդասիրական կենտրոնը: Նպատակը՝ աղետների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումն է, ինչպես նաև բնակչությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված գործառություններն են:

Ոլորտի հիմնական թիրախներն են՝ արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում, արտակարգ իրավիճակների արդյունավետ արձագանքում, արտակարգ իրավիճակների կանխում, հնարավոր հետևանքների նվազեցում և վերացում, քաղաքացիական պաշտպանություն, բնակչության և տնտեսության օբյեկտների (տարածքների) պաշտպանություն, փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և այլ աշխատանքների իրականացում, սեյսմիկ ռիսկերի գնահատում և նվազեցում, արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործմամբ պայմանավորված տեխնածին վթարների և դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը պատճառվող վնասների ռիսկերի նվազեցում, ճգնաժամային կառավարման կարողությունների

զարգացում, արտակարգ իրավիճակներում ռազմավարական նշանակության պաշարներով ապահովում և այլն, որոնք ներառված էն աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականցվող հիմնական ծրագրերն են.

1. «Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի նպատակն է արտակարգ իրավիճակների բնագավառում պետական արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման ապահովումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 1,426.2 մլն դրամ, 1,434.2 մլն դրամ և 1,447.6 մլն դրամ:

2. «Փրկարարական ծառայություններ» ծրագրի նպատակն է արտակարգ իրավիճակների հնարավոր դեպքերի կանխում, դրանց ժամանակին արձագանքում, հետևանքների նվազեցում և բնակչության պաշտպանություն, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել 2022թ՝ 11,300.6 մլն դրամ, 2023թ՝ 11,912.4 մլն դրամ և 2024թ՝ 11,899.5 մլն դրամ:

3. «Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում» ծրագրի նպատակն է արտակարգ իրավիճակներում ռազմավարական նշանակության պաշարներով ապահովումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 29.9 մլն դրամ:

4. «Սեյսմիկ պաշտպանություն» ծրագրի նպատակն է սեյսմիկ ռիսկերի գնահատումը և նվազեցումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել 2022թ. 752.9 մլն դրամ, իսկ 2023-2024թթ.՝ 793.8 մլն դրամ:

5. «Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրի նպատակն է արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործմամբ պայմանավորված տեխնածին վթարների և դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը պատճառվող վնասների ռիսկերի նվազեցումը որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել 2022թ. 43.4 մլն դրամ, 2023-2024թթ.՝ 45.7 մլն դրամ:

6. «Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների զարգացում» ծրագրի նպատակն է արտակարգ իրավիճակների և ճգնաժամային կառավարման կարողությունների զարգացումը, որի գծով 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել 2022թ՝ 114.8մլն դրամ, 2023թ՝ 121.0 մլն դրամ և 2024թ՝ 121.0 մլն դրամ:

Ստորև ներկայացվում է Արտակարգ իրավիճակների ոլորտում 2022-2024 թվականների յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 13,667.8 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 14,337.1 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 14,337.7 մլն դրամ:

9. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՄԺԾԾ ժամանակահատվածում արդարադատության ոլորտում ՀՀ արդարադատության նախարարությունը շարունակաբար մշակելու և իրականացնելու է կառավարության քաղաքականությունը, մասնավորապես՝ հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի հաշվառման, զանգվածային լրատվության միջոցների հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության, հակակոռուպցիոն և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ոլորտներում:

Վերոնշյալ ոլորտների շրջանակներում նախարարությունը առանձնացնում է ոլորտային քաղաքականության հիմնական թիրախները և դրանք արտացոլում Կառավարության ծրագրում: Մասնավորապես՝ հիմնական թիրախային ուղղությունները տեղ են գտել Կառավարության միջոցառումների ցանկում: Առանձնացվել է հակակոռուպցիոն բնագավառը, որի զարգացման նպատակով իրականացվելու են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի և հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը, կոռուպցիայի կանխարգելման (ներառյալ՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձանց գործունեության գույքի և եկամուտների թափանցիկության, տնտեսական գործունեության թափանցիկության ապահովում) և կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման մեխանիզմների բարեփոխումը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործիքակազմի ներդրումը, հանրային իրազեկման ծրագրերի շարունակական իրականացումը: Դատահիրավական բնագավառի զարգացման նպատակով իրականացվելու են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում առաջիկա 5 տարիների կտրվածքով իրականացվելիք իրավական և դատական բարեփոխումների պլանավորումը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը, Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծումը, դատավորների թվակազմի ավելացումը, դատավորների վարձատրության բարձրացումը, կատարողական վարույթի բարեփոխումը, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության բարեփոխումը: Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվելու են մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպանվածության և մարդու ազատ ստեղծագործելու, արժանապատիվ ու երջանիկ ապրելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, բոլորի՝ օրենքի առջև հավասարության երաշխավորում, խտրականության դրսևորումների կանխում, ինչպես նաև հավասար իրավունքների իրագործում, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն, օրենսդրական երաշխիքների ամրագրում, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակների ընդլայնում:

Քրեակատարողական և պրոբացիայի համակարգում իրավիճակը բարելավելու, ինչպես նաև քրեական պատիժների նպատակային իրագործումն առավել արդյունավետ դարձնելու համար թիրախավորվել են հետևյալ առանցքային նպատակները՝ միջազգային չափանիշներին համահունչ

մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմների կատարելագործումը, ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավումը, ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման պայմանների բարելավումը, ազատությունից զրկված և հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովումը, ազատությունից զրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման պայմանների բարելավումը, դատապարտյալների և պրոբացիայի շահառուների վերասոցիալականացումը, քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումն ու արդիականացումը, քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման մոդելի և կադրային քաղաքականության կատարելագործումը, կոռուպցիայի հաղթահարումը, պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության բարձրացումը, կադրային քաղաքականության վերանայումը *(բխում է ՀՀ* կառավարության ծրագրի «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» վերտառությամբ 4-րդ բաժնի «Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 4.1-րդ գլխում ամրագրված դրույթներից. «Կառավարությունը վճռական է նաև վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման հարցում. նշված սկզբունքներից բխում է, որ արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանը: Այս համատեքստում Կառավարությունը պետք է միջոցներ ձեռնարկի ազատազրկման այլընտրանք հանդիսացող պատիժների և կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների նախատեսման, դրանց գործնական կիրառման համար անհրաժեշտ միջոցների ապահովման ուղղությամբ, ինչպես նաև քաջալերի նման միջոցների կիրառումը: Միաժամանակ, կարևորելով ազատությունից զրկված անձանց իրավունքների անխոչընդոտ իրացումը՝ պետք է շարունակական քայլեր ձեռնարկել ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորման, ներառյալ՝ արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդման, պահման պայմանների բարելավման, նրանց տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացման, վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով:»):

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1. «Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է՝ արդարադատության ոլորտում քաղաքականության մշակումը, ծրագրերի համակարգումը, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացումը, նախարարության գործունեության արդյունավետության և նպատակաուղղվածության բարձրացումը, ինչպես նաև հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար առավել մատչելի դարձնելու նպատակով բարեփոխումների իրականացումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 1,699.5 մլն դրամ, 1,717.0 մլն դրամ և 1,665.1 մլն դրամ,

2. «Դատական և հանրային պաշտպանություն» ծրագիր.

Ծրագրի նպատակն է իրավունքի պաշտպանության հասանելիության և օբյեկտիվության ապահովումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 671.4 մլն դրամ, 672.1 մլն դրամ և 672.1 մլն դրամ:

3. «Քաղաքացիական կացության ակտերի գրանցում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ապահովել քաղաքացիական կացության ակտերի գրանցման, ակտային գրանցումների վերականգնման, ակտային գրանցումներում ուղղումների, փոփոխությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և սահմանված լիազորությունների իրականացումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 330.6 մլն դրամ,

4. «Քրեակատարողական ծառայություններ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է քրեակատարողական համակարգի կատարելագործումը, քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումը և արդիականացումը, արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդումը, պահման պայմանների բարելավման ապահովումը, քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկվածներին բժշկական ծառայությամբ ապահովումը, տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացումը, ինչպես նաև պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության բարձրացումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 11,811.5 մլն դրամ, 12,661.5 մլն դրամ և 12,695.8 մլն դրամ:

5. «Հարկադիր կատարման ծառայություններ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ապահովել հարկադիր կատարման ենթակա ակտերի՝ դատական ակտերի, կատարողական թերթերի, կատարողական մակագրության թերթերի և անբողոքարկելի վարչական ակտերի պահանջների կատարումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 2,319.0 մլն դրամ, 2,338.2 մլն դրամ և 2,357.7 մլն դրամ:

6. «Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է բարձրացնել հանրության իրազեկվածությունը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել յուրաքանչյուր տարի՝ 635.6 մլն դրամ:

7. «Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագիր.

Ծրագրի գծով 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 479.6 մլն դրամ:

Ստորև ներկայացվում է արդարադատության ոլորտում 2022-2024 թվականների յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 17,947.2 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 18,834.7 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 18,836.6 մլն դրամ:

Միաժամանակ 2022-2024թթ. ժամանակահատվածում ռազմավարություններից բխող ծախսային նոր նախաձեռնությունները, մասնավորապես Հակակոռուպցիոն կոմիտեի և հակակոռուպցիոն դատարանի ստեղծման, ինչպես նաև դատական համակարգի բարեփոխումների հետ կապված, դիտարկվում են որպես առաջնահերթություններ և զետեղվել են համապատասխանաբար N 6 հավելվածում:

10. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջիկա տարիներին արտաքին քաղաքականության ոլորտում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը շարունակելու է իրականացնել արտաքին գործերի, դիվանագիտական ծառայության, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի և իրավունքների ներկայացման, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների իրականացման, համաշխարհային քաղաքական և տնտեսական իրադրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացման, համաշխարհային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացման, Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ապահովման, պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման ոլորտներում կառավարության քաղաքականությունը:

ՀՀ արտաքին քաղաքականությունն ուղղված է ՀՀ ինքնիշխանության պաշտպանությանը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովմանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը, բոլոր պետությունների հետ փոխշահավետ և իրավահավասար հարաբերությունների շարունակական զարգացմանը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացմանը, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում համագործակցության խորացմանը՝ Հայաստանի կայուն զարգացմանը և տնտեսության արդիականացմանը, նոր շուկաներ մուտքի ապահովմանը, դեպի Հայաստան և Արցախ օտարերկրյա ներդրումների ավելացմանը:

Համաձայն կառավարության ծրագրի և նրանից բխող հնգամյա միջոցառումների ցանկի՝ ՀՀ ԱԳՆ գործունեության նպատակներն ու հիմնական թիրախներն են՝

- ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորումը՝ հիմնված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մասնավորապես՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի վրա:
- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում:
- Երկկողմ և բազմակողմ կապերի ակտիվացում՝ ելնելով Հայաստանի տնտեսական զարգացման օրակարգից. աշխատանք նպատակաուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների աճին,

միջազգային լավագույն օրինակների և փորձի փոխառմանը, հայրենական արտադրանքի համար նոր շուկաների բացահայտմանը և արտահանման ավելացմանը, դեպի Հայաստան զբոսաշրջության խթանմանը, սփյուռքի գործարար ներուժի լիարժեք ներգրավմանը, միջազգային տնտեսական ինտեգրացիոն կառույցների շրջանակում ՀՀ տնտեսական շահերի առաջմղմանը:

- Հայաստանում և միջազգային ասպարեզում ժողովրդավարական կառույցների առավել ամրապնդում, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, իրավունքի գերակայության և արդյունավետ կառավարման բնագավառներում միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ սերտ համագործակցություն:
- Ակտիվ մասնակցություն գլոբալ խաղաղության և անվտանգության ապահովման ուղղությամբ միջազգային հանրության ջանքերին, այդ թվում՝ չտարածման և սպառազինությունների վերահսկման, ահաբեկչության և անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի, միջազգային խաղաղության ամրապնդմանն ուղղված գործողությունների շրջանակում:
- Ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված ակտիվ գործունեություն միջազգային ասպարեզում, այդ թվում՝ էթնիկ, կրոնական, ռասայական հողի վրա խտրականության և անհանդուրժողականության դեմ պայքարի ուղղությամբ:
- Հայ ժողովրդի ինքնության պահպանման, քաղաքակրթական արժեքների և ժառանգության պաշտպանություն և հանրահռչակում:
- Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանություն: Արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին աջակցության ցուցաբերում:

- Համագործակցության բազմակողմ ձևաչափերում.

Եվրասիական տնտեսական միությանը և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը Հայաստանի անդամակցության արդյունավետության բարձրացում,

ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և միջազգային այլ կառույցներում Հայաստանի առավել ակտիվ ներգրավվածություն,

ԱՊՀ շրջանակներում համագործակցությանն ակտիվ մասնակցություն: ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում,

ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակում, Անհատական գործընկերության ծրագրի հետևողական իրագործում,

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը Հայաստանի ներգրավվածության խորացում, ՖՄԿ –ում Հայաստանի նախագահության բարձր մակարդակի իրականացում:

- Երկկողմ հարաբերություններում.

Ռուսաստանի Դաշնության հետ ամենատարբեր բնագավառներում ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների զարգացում,

ԱՄՆ-ի հետ տարբեր ոլորտներում բարեկամական գործընկերության հետևողական ամրապնդում և խորացում,

Եվրոպական երկրների հետ բարեկամական և գործընկերական հարաբերությունների խորացում և ընդլայնում: ԵՄ-ի հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ամբողջական կիրարկում,

Իրանի և Վրաստանի հետ առանձնահատուկ բարիդրացիական հարաբերությունների զարգացում՝ փորձելով դրանք զերծ պահել աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունից,

Չինաստանի հետ բարեկամական հարաբերություններին բնորոշ բազմաոլորտ լայն համագործակցության զարգացում,

Հնդկաստանի և Ճապոնիայի հետ բարեկամական և փոխշահավետ փոխգործակցության զարգացում և խորացում,

Փոխգործակցության ընդլայնում Մերձավոր Արեւելքի գործընկեր երկրների հետ,

Համագործակցության զարգացում Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի և Օվկիանիայի պետությունների հետ:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1. «Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակում և իրականացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է՝ ՀՀ ինքնիշխանության պաշտպանությունը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովումը, ՀՀ միջազգային հեղինակության բարձրացումը, ՀՀ կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցության ապահովումը, ինչպես նաև միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատումն ու զարգացումը, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի և իրավունքների ներկայացումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 1,953.4 մլն դրամ, 1,967.0 մլն դրամ և 1,983.9 մլն դրամ,

2. «Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է՝ միջազգային համագործակցության բազմակողմ ձևաչափերում ՀՀ ակտիվ ներգրավվածության միջոցով ՀՀ արտաքին քաղաքականության գերակայությունների իրագործումը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ և դրանց շրջանակներում բնականոն փոխհարաբերությունների ու արդյունավետ համագործակցության ապահովումն ու ընդլայնումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 2,428.6 մլն դրամ,

3. «Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է՝ ապահովել ՀՀ պաշտոնական ներկայությունն արտերկրում՝ նպաստելով ՀՀ ինքնիշխանության և շահերի պաշտպանությանը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովմանը, հակահայկական քարոզչության հակազդմանը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին ՀՀ ներգրավվածության ավելացմանը, ՀՀ կայուն

զարգացման և տնտեսական արդիականացման համար նպաստավոր պայմանների ձևավորմանը, արտերկրում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանությանը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 12,782.1 մլն դրամ,

4. «Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է՝ դիվանագիտական և պետական ծառայության արդյունավետության բարձրացումը, դիվանագիտական ծառայության համալրումը նոր և որակյալ մասնագետներով, պետական ծառայողների, այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների վերապատրաստումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 210.4 մլն դրամ,

5. «Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում և ՀՀ միջազգային հարաբերություններում պետական արարողակարգային կանոնների միասնական կիրառումն ու ապահովումը, ինչպես նաև միջազգային արարողակարգային չափանիշներին համապատասխան միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 183.6 մլն դրամ, 184.7 մլն դրամ և 185.8 մլն դրամ:

Ստորև ներկայացված են արտաքին քաղաքականության ոլորտի 2022-2024թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 17,558.0 մլն դրամ,
2023 թվականի համար՝ 17,572.7 մլն դրամ,
2024 թվականի համար՝ 17,590.8 մլն դրամ:

11. ՖԻՆԱՆՍՆԵՐ

Առաջիկա տարիներին ֆինանսների ոլորտում հիմնական նպատակը լինելու է կառավարության միասնական պետական քաղաքականության ապահովումը, պետական ֆինանսների և պետական պարտքի արդյունավետ կառավարումը, հարկաբյուջետային քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը, ներառյալ՝ բյուջետային գործընթացի կառավարումը, պետական գնումների արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական բարեփոխումների իրականացումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

«Պետական պարտքի կառավարում» ծրագրի նպատակն է կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումը՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը: Ծրագրի վերջնական արդյունքն է կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 215,720.1 մլն դրամ, 243,468.2 մլն դրամ և 268,062.1 մլն դրամ:

«Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում» ծրագրի նպատակն է հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների աշխատանքի արդյունավետության բարելավումը, հանրային ֆինանսների կառավարման նոր գիտելիքների և փորձի յուրացումը: Նախատեսվում է, որ ծրագրի շրջանակներում շարունակական վերապատրաստում կանցնեն և արդյունքում կապահովվի որակավորված ներքին աուդիտորների, ֆինանսական և ծրագրային մասնագետների, ինչպես նաև գնումների համակարգողների ամբողջական ընդգրկվածություն համապատասխան վերապատրաստման միջոցառումներում, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 22.1 մլն դրամ, 32.1 մլն դրամ և 32.8 մլն դրամ:

«Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի նպատակն է հարկաբյուջետային քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը, հանրային ֆինանսների արդյունավետ կառավարումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 2,541.1 մլն դրամ, 2,564.7 մլն դրամ և 2,588.5 մլն դրամ:

«Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում» ծրագրի նպատակն է հանրային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը: Ծրագրի գծով 2022-2024թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 127.1 մլն դրամ:

Ստորև ներկայացված են ֆինանսների բնագավառի 2022-2024թթ յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝	219,813.1	մլն դրամ,
2023 թվականի համար՝	248.869.0	մլն դրամ,
2024 թվականի համար՝	273,507.5	մլն դրամ:

12. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանության ապահովում, Ռազմաբժշկական սպասարկում և առողջապահական ծառայություններ, Ռազմական ուսուցում և վերապատրաստում, Միջազգային ռազմական համագործակցություն, Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայություններ, Աջակցություն ՀՀ ՊՆ կողմից իրականացվող և ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչության կողմից իրականացվող ծրագրերին (ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ):

Ստորև ներկայացված են պաշտպանության բնագավառի 2022-2024թթ յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 209,366.6 մլն դրամ,
2023 թվականի համար՝ 221.564.4 մլն դրամ,
2024 թվականի համար՝ 221.564.4 մլն դրամ:

13. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ոստիկանության մասին», «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով ամրագրված հիմնախնդիրներին համահունչ՝ ոստիկանությունը պարտավոր է ապահովել՝ մարդու անվտանգությունը, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, հանցագործությունների նախականխումը, խափանումը, հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործերով հետաքննությունը, հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը, ճանապարհային երթևեկության անվտանգությունը, սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը, զենքի պահպանման և օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը, անձնագրային ռեժիմի պահպանումը, օրենքով նախատեսված սահմաններում ֆիզիկական և իրավաբանական անձանց, իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելիս, օգնության ցուցաբերումը և այլն:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ոստիկանության խնդիրների և կանոնադրական գործառույթների համակարգված իրագործումը նախատեսվում է ապահովել ֆունկցիոնալ համապատասխանությամբ խմբավորված, հարաբերականորեն ինքնուրույն և ամբողջական հետևյալ ծախսային ծրագրերով.

1) «Ոստիկանության ոլորտների՝ կազմակերպաիրավական գործունեության, ծառայությունների մատուցման, հասարակական անվտանգության ապահովման և իրավախախտումների դեմ պայքարի քաղաքականության մշակում, մոնիտորինգ և կառավարում», որը միաժամանակ բաղկացած է հետևյալ քաղաքականության միջոցառումներից.

- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում»,

- «Հասարակական կարգի պահպանություն»,
- «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում»,
- «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար»
- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում, տրանսպորտային միջոցների պետական հաշվառում»
- «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում»
- «Առողջապահական ծառայությունների տրամադրում»
- «Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց»:

2) «Ոստիկանության կրթական ծառայություններ», որը միաժամանակ բաղկացած է հետևյալ քաղաքականության միջոցառումներից.
- «Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն»
- «Միջին մասնագիտական կրթության ծառայություն»
- «Նախնական մասնագիտական կրթության ծառայություն»

ՄԺԾԾ ժամանակահատվածում ոստիկանության ծախսային գերակայություններ են հանդիսանալու.

Ծառայողների (աշխատողների) աշխատանքի վարձատրության, ինչպես նաև ծառայությանն առնչվող ծախսերի փոխատուցման համակարգերի կատարելագործումը, որը կարևորվում է համակարգում ծառայողների (աշխատողների) մոտիվացման, աշխատանքի արդյունավետության բարձրացման և երկարաժամկետ հեռանկարում հակակոռուպցիոն ռազմավարության հաջող իրագործման տեսանկյունից: Այս առումով հատկանշական է. որակյալ աշխատանքի և (կամ) հատուկ հանձնարարությունների կատարման համար ամսական, ինչպես նաև դիտավորությամբ, ոչ ակնհայտ պայմաններում կատարված ՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի դասակարգված առանձին հանցագործությունների կանխման կամ բացահայտման համար տրվող՝ լրացուցիչ պարգևատրումները, Երևան քաղաքի և մարզային վարչությունների, դրանց ենթակա տարածքային բաժինների միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների (քրեական հետախուզության բաժանմունքների պետի տեղակալների, ավագ օպերլիազորների, օպերլիազորների, հետաքննության գծով ավագ տեսուչների, տեսուչների, համայնքային ոստիկանության ավագ տեսուչների, տեսուչների, անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ավագ օպերլիազորների, ավագ տեսուչների, օպերլիազորների և տեսուչների) տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը, Չինծառայողներին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում այլ բնակելի տարածք վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցման վճարների լիարժեք ապահովումը:

Ոստիկանության ստորաբաժանումների (առավելապես տարածքային ստորաբաժանումների) ընթացիկ գործունեության պատշաճ կազմակերպման և իրականացման նպատակով շենքերի, շինությունների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ պահպանման, շահագործման և սպասարկման ծախսերի, ինչպես նաև գրասենյակային, կենցաղային, տրանսպորտային նյութերի տարեկան նվազագույն պահանջարկի ապահովումը:

Ստորև ներկայացված են ոստիկանության բնագավառի 2022-2024 թթ յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝	60,282,158.7 մլն դրամ,
2023 թվականի համար՝	63,563,131.2 մլն դրամ,
2024 թվականի համար՝	63,563,131.2 մլն դրամ:

14. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացություն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Պետական պահպանության ծառայությունն իրականացնում է պետական պահպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովման և պետական օբյեկտների պաշտպանության ոլորտի գործառույթ, իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցմամբ:

Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին անվտանգության ապահովման կարևորագույն նախապայմանն անվտանգության միջավայրի համակողմանի գնահատման հիման վրա արտաքին, ներքին և պաշտպանական քաղաքականության ճկուն գործիքակազմի ձևավորումն է, ինչը հնարավորություն կտա Կառավարության քաղաքական առաջնահերթությունները կյանքի կոչելու համար ստեղծել կայուն և կանխատեսելի մթնոլորտ, իսկ արտաքին անվտանգության ապահովման երաշխիքների համար՝ բավարար կարողություններ: Կառավարության առաջնահերթությունների թվում են Հայաստանի Հանրապետության ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովումը, անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված խնդիրների և դրանցից բխող միջոցառումների իրականացումը:

Ազգային անվտանգության ծառայության նպատակներն են հետախուզական գործունեությունը, հակահետախուզական գործունեությունը, ռազմական հակահետախուզական գործունեությունը, պետական սահմանի պահպանությունը և պայքարը հանցագործությունների դեմ: Այս առումով վերջնական արդյունքներն են ՀՀ ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկությունների ստացումը և կանխարգելիչ միջոցառումների անցկացումը, օտարերկրյա

պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության բացահայտումը, կանխումը և խափանումը, օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հանցագործությունների բացահայտումը, կանխումը և խափանումը, ՀՀ պետական սահմանի անձեռնմխելիության ապահովումը, սահմանափակումների կանխումը և խափանումը:

Պետական պահպանության ծառայության նպատակներն են՝ իր իրավասության սահմաններում կազմակերպել պետական պահպանության ենթակա օբյեկտների անվտանգությունը, կանխատեսել և բացահայտել այդ օբյեկտներին սպառնացող վտանգը և նրանց կանխարգելման համար իրականացնել համալիր միջոցառումներ, պետական պահպանության օբյեկտների անվտանգությունն ապահովել նրանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրում, իր իրավասության շրջանակներում մասնակցել ահաբեկչության դեմ պայքարին, պաշտպանել պահպանվող օբյեկտները, կանխել և խափանել պահպանվող օբյեկտներում հանցագործությունները և այլ իրավախախտումները, ապահովել սահմանված անցագրային ռեժիմն ու կարգը:

Ազգային անվտանգության գերակա վերջնական արդյունքն է ազգային անվտանգության ապահովումը, իսկ պետական պահպանության ծառայության գերակա վերջնական արդյունքն է հատուկ պետական պաշտպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ազգային անվտանգության համակարգի զարգացման հիմնական միտումները նպատակաուղղված են ներքին և արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովման բարձրացմանը, տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիայի տարբեր դրսևորումների և տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների ակտիվացմանը, օպերատիվ գործունեության արդյունավետության բարձրացմանը, պետական սահմանի շուրջօրյա հսկման և պահպանման բարելավմանը, այդ թվում նաև էլեկտրոնային համակարգերով և ծառայողական կենդանիներով (շներ, ձիեր և այլն), հետախուզության, հակահետախուզության ոլորտի ընդլայնմանը, օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից օգտագործվող գործակալական ցանցի բացահայտման հետ կապված աշխատանքների զարգացմանը, գաղտնի տեղեկատվության անվտանգություն մակարդակի բարելավմանը, նոր համակարգի ներդրման ապահովմանը:

Պետական պահպանության ծառայության զարգացման հիմնական միտումները նպատակաուղղված են պետական պահպանության ծառայության հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց, ինչպես նաև մշտական և ժամանակավոր պահպանվող օբյեկտների անվտանգության ապահովման բարձրացմանը, պետական պահպանության ապահովման համար տեխնիկա-տնտեսական բազայի ամրապնդմանը, զենք զինամթերքի արդիականացմանը և ավելացմանը, անհրաժեշտ նյութական ռեսուրսներով ապահովմանը, զինծառայողների և զինվորական կոչում չունեցող աշխատակիցների ֆինանսական և սոցիալական վիճակի բարելավմանը, սեփական ուսումնական կենտրոնի և նրան կից անհրաժեշտ շինություններով, լրացուցիչ պահեստներով ապահովմանը, ինչպես նաև անձնակազմի մասնագիտական պատրաստականության բարձրացմանը:

1. «Ազգային անվտանգություն» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ներքին և արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովումը, որի ուղղությամբ 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 31,293.1 մլն դրամ, 32,866.5 մլն դրամ և 33,140.3 մլն դրամ:

2. «Պետական պահպանության ապահովում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է հատուկ պետական պաշտպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովումը, որի ուղղությամբ 2022 թվականին նախատեսվում է հատկացնել 3,562.0 մլն դրամ և 2023-2024թթ.՝ 3,751.0 մլն դրամ:

Ստորև ներկայացված են ազգային անվտանգության բնագավառի 2022-2024թթ . յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 34,855.1 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 36,617.5 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 36,891.3 մլն դրա

15.ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Առաջիկա տարիներին ՊԵԿ-ի կողմից իրականացվող հիմնական նպատակն է լինելու հարկային և մաքսային օրենսդրության ամբողջական և համահավասար կիրառումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

«1023. Հարկային և մաքսային ծառայություններ»

Ծրագրի նպատակն է՝

1. Հարկային և մաքսային վարչարարության պլանավորումը, մոնիտորինգը, հարկային և մաքսային օրենսդրության ամբողջական և համահավասար կիրառումը, ծրագրերի համակարգումը, գանձման, վերահսկողության և աջակցության ծառայությունները, որոնք նպաստում են ՀՀ-ում արդյունավետ հարկային և մաքսային վարչարարության իրականացմանը:

2. ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար տնտեսվարող սուբյեկտներին ակցիզային դրոշմանիշերով ապահովման դերը էական է հարկային եկամուտների հավաքագրման տեսանկյունից: Բացի այդ, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի և Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի համաձայն պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար դրոշմապիտակների տրամադրումն ունի ռազմավարական նշանակություն հարկերի հավաքագրման և բյուջետային եկամուտների ապահովման տեսանկյունից:

3. Հարկային և մաքսային ծառայությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով ապահովումը նպաստում է ՀՀ ՊԵԿ բնականոն գործունեության անխափան ընթացքին:

4. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Համաձայն ՀՀ Սամանադրության իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Յուրաքանչյուր տարի հարկային և մաքսային ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր վերապատրաստման: Վերջիններիս մասնագիտական որակների կատարելագործումը

միմիայն կնպաստի առավել որակյալ կադրային ապահովվածության իրականացմանը և որակյալ ծառայությունների մատուցմանը հասարակությանը:

5. ՀՀ ՊԵԿ-ի նոր շենքերի և շինությունների շինարարությունը (նախագծումը) նպաստում է համակարգի գործունեության ընդլայնմանը, բարելավում է աշխատակիցների աշխատանքային պայմանները, իսկ ազատ տնտեսական գոտիների ընդլայնումը խթան է հանդիսանում ՀՀ-ում ներդրումային միջավայրի գրավչության բարձրացման համար: Նշված գործոններում իր կարևոր դերն ունի սահմանային անցակետերում վերափոխված շենքային պայմանների բարելավումը, որը հնարավորություն կստեղծի ժամանակակից չափանիշներին համապատասխան ընթացակարգեր կիրառելուն՝ խթանելով բեռնափոխադրումների արագ սպասարկումը: «Մեղրիի անցակետի արդիականացմամբ կգործի «մեկ պատուհան» համակարգը, ինչի արդյունքում բեռնափոխադրողները և սահմանային անցակետը հատողները կշփվեն մեկ մարմնի հետ:

Ծրագրի գծով 2022-2024թթ. նախատեսված չափաքանակներն են՝

2022 թվականի համար՝ 32,644.9 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 35,265.1 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 33,923.2 մլն դրամ:

16. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ

Վերջին տարիներին անշարժ գույքի կադաստրի վարման միջազգային առաջադեմ փորձի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսումնասիրված երկրներում կադաստրի համակարգերի անվիճելի առավելությունը դրանց վարման գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման չափազանց բարձր մակարդակն է և համոզված լինելով, որ համակարգի հետագա զարգացումը, գործառույթների իրականացման որակի բարձրացումը և համակարգի գործունեության թափանցիկության ապահովումը, համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը հնարավոր չէ առանց համակարգում արմատական բարեփոխումների իրականացման:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

«**Անշարժ գույքի կադաստրի վարման բնագավառում պետական քաղաքականության իրականացում**».

Հասարակության տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով կոմիտեն 2022-2024 թվականների զարգացման հատվածում ամբողջապես կփորձի անցնելու առցանց ծառայությունների ինքնաշխատ համակարգի՝ հրաժարվելով թղթային փաստաթղթաշրջառանությունից: Համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով կիրականացվեն կառուցվածքային բարեփոխումներ, որի ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքներն առցանց, ինքնաշխատ, անթուղթ անշարժ գույքի կադաստրի ստեղծումն է:

Անշարժ գույքի հարկման համակարգի բարեփոխումների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում արդեն ներդրվել է անշարժ գույքի միասնական գնահատման և հարկման համակարգ, որը հնարավորություն է տալիս անշարժ գույքի հարկով արդարացի հարկման

մեխանիզմներ իրականացնելու, ապահովելով անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվական բազայի ստեղծմանը:

Բարեփոխումներ են իրականացնել նաև գույքի շուկայական գնահատման ոլորտում, մասնավորապես օրենսդրական փոփոխություններով կկարգավորվեն նաև ոչ միայն անշարժ գույքի, այլ նաև գույքի մյուս տեսակների՝ շարժական, բիզնեսի, ոչ նյութական ակտիվների և այլն շուկայական գնահատումները:

Նշված ռազմավարության պահանջների խթանումը գեոդեզիական, քարտեզագրական և երկրատեղեկատվական համակարգի հիման վրա ՀՀ ինտեգրված, միասնական կադաստրի ստեղծումն է:

Ստեղծված քարտեզագեոդեզիական հիմքով երկրատեղեկատվական համակարգը հանդիսանալու է գերատեսչական տարբեր ոլորտների և առանձին տարածքների զարգացման ու արդյունավետ պլանավորման համար որպես բազա: Գեոդեզիայի ու քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով նախատեսվում է ավարտել հանրապետության ամբողջ տարածքի օդալուսանկարահանման աշխատանքները:

Ստեղծված քարտեզագեոդեզիական հիմքով երկրատեղեկատվական համակարգը հանդիսանալու է գերատեսչական տարբեր ոլորտների և առանձին տարածքների զարգացման ու արդյունավետ պլանավորման համար՝ որպես բազա: Գեոդեզիայի ու քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով 2022-2024 թվականներին նախատեսվում է ավարտել հանրապետության ամբողջ տարածքի օդալուսանկարահանման աշխատանքները, իրականացնել Հայաստանի Հանրապետության սեյսմակտիվ շրջաններում երկրակեղևի գործող խզվածքների բացահայտման համար I դասի ընթացքների կրկնակի նիվելիրացման աշխատանքները, ՀՀ թվային տեղագրական քարտեզները ԵՏՀ միջավայրում ստեղծելու աշխատանքները, օրթոֆոտոհատակագծերով ծածկված համայնքների կադաստրային թաղամասերի ճշգրտման, թաղամասերի ուղղման նպատակով լրացուցիչ կետերի դիտարկման և թաղամասերի արտաքին սահմանների ամբողջական ուղղման աշխատանքները:

Ծրագրի համար 2022-2024թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 4,407.6 մլն դրամ, 4,437.6 մլն դրամ և 3,870.9 մլն դրամ:

17. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀՀ վարչապետի աշխատակազմը իրականացնում է **10** ծրագիր, որից 2-ը սփյուռքի գծով:

1. **«Պետական հատվածի արդիականացման ծրագիր»**-ի նպատակն է՝ հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը:

Ծրագրի գծով 2022-2023 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 1,871.6 և 2,688.0 մլն դրամ:

2. **«Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին»** ծրագրի նպատակն է՝ նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը, հասարակական կազմակերպություններին, կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին աջակցմանը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 195.5; 191.0 և 196.7 մլն դրամ:

3. **«Հանրային իրազեկում»** ծրագրի նպատակն է՝ ապահովել հանրային կապերի՝ պետական մարմինների թափանցիկությունը, տեղեկատվության մատչելիությունը:

Ծրագրով նախատեսված հատկացումները ուղղվելու են հանրային իրազեկման ապահովմանը, պետական մամուլի հրատարակմանը, «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճարմանը, տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունների իրականացմանը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 837.2; 860.5 և 886.2 մլն դրամ:

4. **«Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում»** ծրագրի նպատակն է՝ քաղաքացիական ծառայողների աշխատանքի արդյունավետության բարելավումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 16.2; 15.9 և 15.9 մլն դրամ:

5. **«ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»** ծրագրի նպատակն է՝ աջակցել կառավարության՝ վարչապետի և փոխվարչապետերի գործունեությանը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 10,325.8; 10,155.5 և 6,553.9 մլն դրամ:

6. **«Տեսչական վերահսկողության ծրագիր»**-ի նպատակն է՝ տեսչական վերահսկողության ապահովումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 5,178.3; 5,228.5 և 5,279.1 մլն դրամ:

7. **«Տոների և հիշատակի օրերի ծրագիր»**-ի նպատակն է՝ տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացումը՝ ի նպաստ Ազգային ինքնության պահպանմանը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել յուրաքանչյուր տարի՝ 190.0 մլն դրամ:

8. **«Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում»** ծրագրի նպատակն է՝ միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ վերաբերյալ գործընթացներում մասնակցությունը, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովումը:

Ծրագրի գծով 2022 թվականին նախատեսվում է հատկացնել 632.1 մլն դրամ:

Սփյուռք

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 2.4-րդ կետի, սփյուռքի ոլորտում Կառավարությունը՝

- որդեգրում է գիտական, մասնագիտական, կրթամշակութային, տնտեսական և այլ ոլորտներում համահայկական ցանցերի ստեղծման և զարգացման քաղաքականությունը,
- կարևորում է Հայաստանի զարգացմանը սփյուռքի ներուժի լիարժեք ներգրավումը, սփյուռքի հայ համայնքների՝ բնակության երկրի և Հայաստանի միջև կայուն հարաբերությունների կամրջող դերի մեծացումը, Հայաստան-սփյուռք գործակցության խորացման և ընդլայնման համար այնպիսի քայլերի ու ծրագրերի իրականացումը, որոնք կնպաստեն սփյուռքի մասնակցությանը՝ Հայաստանի հանրային կյանքին,
- առաջնահերթություն է համարում հայրենադարձության խթանումը, ինչպես նաև Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման գործընթացին աջակցումը.
- կարևորում է համահայկական ազգային, հոգևոր, գիտակրթական, մշակութային և այլ կառույցների ամրապնդումը և նրանց դերակատարումը համահայկական խնդիրների լուծման գործում և ջանքեր է գործադրելու սփյուռքը ներկայացնող ներկայացուցչական կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ:

Սփյուռքի գծով հիմնական թիրախներն են.

- Հայաստանի և հայկական սփյուռքի միջև կապերի ամրապնդմանը և զարգացմանը նպաստելը,
- Սփյուռքի ներուժի բացահայտումը, տեղեկատվական համակարգերի ստեղծումը, ՀՀ զարգացման գործընթացներում ներգրավվածությունը, Հայաստան- Սփյուռք համատեղ ծրագրերի իրականացումը, ըստ ոլորտների համահայկական մասնագիտական ցանցերի ստեղծումը:

Սփյուռքի գծով նախատեսված հատկացումները ուղղվելու են 2 ծրագրերի իրականացմանը՝ «Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագիր» և «ՀՀ զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավում»:

Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրի նպատակն է՝ նպաստել Հայաստանի և հայկական սփյուռքի միջև կապերի ամրապնդմանը և զարգացմանը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 585.2; 584.4 և 624.4 մլն դրամ:

ՀՀ զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավում ծրագրի նպատակն է՝ ապահովել Սփյուռքի ներուժի բացահայտումը, Սփյուռքի ներուժի վերաբերյալ տեղեկատվական համակարգերի ստեղծումը, Հայաստան-Սփյուռք համատեղ ծրագրերի իրականացումը, ըստ ոլորտների համահայկական մասնագիտական ցանցերի ստեղծումը:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 206.8; 75.0 և 247.5 մլն դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի համար 2022-2024 թվականներին նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 20,038.7 մլն դրամ;

2023 թվականի համար՝ 19,988.9 մլն դրամ;

2024թվականի համար՝ 13,993.7 մլն դրամ:

18. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման ոլորտը կարգավորվում է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով: Նույն օրենքի համաձայն՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) կառավարման մարմինը, և իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի աշխատակազմը «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկն է:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման ոլորտի հիմնական թիրախներն են.

- Ստեղծել և տարածել շուրջօրյա հեռուստատեսային, ռադիո և տեսալսողական տեղեկատվություն,
- Ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային բովանդակություն,
- Տրամադրել անաչառ լրատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին:

Արդյունքը. Բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային հեռուստատեսային և ռադիո հաղորդումների արտադրության և հեռարձակման ապահովում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվում է 1042 «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» բյուջետային ծրագիրը:

Ծրագրի նպատակն է՝ ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային հեռուստատեսային և ռադիո հաղորդումների արտադրություն և հեռարձակում:

Հանրային հեռարձակողի խորհրդի ծրագրի նպատակներն անմիջականորեն կապված են ՀՀ Կառավարության ծրագրի գրեթե բոլոր ուղղությունների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով: Մասնավորապես՝ Հանրայինի արբանյակային հեռարձակումը աջակցում է Սփյուռքի հետ կապերի զարգացմանը:

Հանրային հեռարձակողի խորհրդի համար 2022-2024 թվականներին նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 6,617.4 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 6,972.9 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 6,972.9 մլն դրամ:

19. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության ոլորտում իրականացվող ծախսային գերակայությունները բխում են կառավարության ծրագրից, Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված գործառույթներից, որոնք ուղղված են մարդու կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայրի ստեղծմանը: Ոլորտում առաջնահերթ ռազմավարական նպատակներից է՝

- միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ շինարարական նորմերի, տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտների, շինարարական նորմերի կանոնների հավաքածուների և այլ նորմատիվ փաստաթղթերի մշակումն ու բազայի ընդլայնումը՝ նպատակ ունենալով խթանել տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացմանն ու անվտանգության պահանջների ապահովմանը:
- քաղաքաշինական պլանավորման հիման վրա համայնքների տարածքային համաչափ զարգացման ապահովումը, նաև կիրառելով միկրոռեգիոնալ մակարդակի պլանավորում: Պլանավորման փաստաթղթերի հիման վրա տարածքային զարգացումը կապահովի՝

- մարդկանց կյանքի անվտանգությունը, բարենպաստ միջավայրի ձևավորումն ու պահպանումը,
- պլանավորման ու կառուցապատման որակական երաշխիքների ապահովումը,
- շենքերի, շինությունների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կայունության ու երաշխավորված շահագործման, քաղաքաշինական և բնական միջավայրերի միջև ներդաշնակության ապահովման համար նվազագույն պարտադիր պահանջների սահմանումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Քաղաքաշինության ոլորտում նախատեսված հատկացումներն ուղղվելու են «1103. Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության իրականացում և կանոնակարգում» ծրագրի իրականացմանը, որի հիմնական նպատակներն են ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումն ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավումը, բնակարանային խնդիրների լուծումը: Մասնավորապես.

- մասնակցություն ՀՀ կառավարության որդեգրած ռազմավարական ծրագրերի իրականացմանը, այդ թվում՝ տարածքների կայուն զարգացմանը, համայնքների խոշորացման պետական քաղաքականությանն, ինչի ապահովումը պայմանավորված է տարածքային զարգացման նպատակային ծրագրերի մշակմամբ և արդյունավետ իրականացմամբ:

- քաղաքաշինական քաղաքականության բարեփոխումների իրականացում՝ բնակավայրերի կառուցապատմանն ու տարածական զարգացմանն առնչվող հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ,

Նշված նպատակները բխում են «Քաղաքաշինության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, ՀՀ հողային օրենսգրքի դրույթներից, այլ օրենքներից և իրավական ակտերից, համահունչ են ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին, համապատասխանում են նշված բնագավառում միջազգային պրակտիկային, «Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի» գաղափարախոսությանը:

Ստորև ներկայացված են քաղաքաշինության ոլորտի 2022-2024թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 1,422.9 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 935.7 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 676.4 մլն դրամ:

20. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրության և տարածման գործառույթների մասով ազգային վիճակագրական համակարգի, այդ թվում՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կառավարման բարձրագույն մարմինը, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ վիճակագրության պետական խորհուրդն է:

ՀՀ վիճակագրական կոմիտեն ՀՀ պաշտոնական վիճակագրության գլխավոր արտադրողն է և համակարգում է ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ողջ գործունեությունը, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի:

Համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի Գլուխ 10-ի հոդված 33-ի, Կոմիտեն իր իրավասությունների շրջանակում ակտիվորեն մասնակցում է վիճակագրական ստանդարտների և ուղեցույցների մշակմանն ու ներդրմանն ուղղված միջազգային գործունեությանը, համակարգում է պաշտոնական վիճակագրության բնագավառում միջազգային համագործակցության բոլոր միջոցառումները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից Կոմիտեին տրվող բոլոր այն գնահատականները, որոնք վերաբերում են պաշտոնական վիճակագրությանը՝ անկախ վիճակագրության ոլորտից և արտադրողից:

Կոմիտեն համակարգում է պաշտոնական վիճակագրության տվյալների փոխանցումը միջազգային և այլ կազմակերպությունների:

Ոլորտի հետևյալ հիմնական թիրախներն են.

- Ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում՝ միջազգային վիճակագրական ստանդարտների (ներառյալ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտը) պահանջներին համապատասխան (այդ թվում՝ ռեսուրսների մասով, հոդված 13, մաս 1 և հոդված 14, մաս 2 և 3),
- Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագրի իրականացում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2022-2024թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում Կոմիտեի գոյություն ունեցող ծախսային ծրագրերն են.

«Ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է տնտեսական և հասարակական գործընթացների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրումն ու տարածումը: Որպես վերջնական արդյունք, նախատեսվում է ծրագրով նախատեսված ժամկետներով և պարբերականությամբ ամբողջական, համադրելի, արդիական և օգտատերերին հավասար մատչելիությամբ հասանելի պաշտոնական վիճակագրության ապահովում:

Ծրագրի գծով 2022-2024 թվականներին նախատեսվում է հատկացնել, ըստ տարիների՝ 2,897.0; 2,024.3 և 1,962.5 մլն դրամ:

«Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագիր» ծրագիր.

Ծրագրի նպատակն է միջազգային չափանիշներին համապատասխան Հայաստանի վիճակագրական համակարգի զարգացումը: Որպես վերջնական արդյունք, նախատեսվում է Հայաստանի վիճակագրական համակարգի կարողությունների և Կոմիտեի անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացումը:

Ծրագրի գծով 2022 թվականին նախատեսվում է հատկացնել 571.6 մլն դրամ:

Վիճակագրության գծով 2022-2024 թվականներին նախատեսված չափաքանակները.

2022 թվականի համար՝ 3,468.7 մլն դրամ,

2023 թվականի համար՝ 2,024.3 մլն դրամ,

2024 թվականի համար՝ 1,962.5 մլն դրամ:

21. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Ոլորտը ներառում է Սահմանադրությամբ և օրենքով ստեղծված պետական մարմինների պահպանմանն ուղղված բյուջետային ծրագրերի ու միջոցառումների շրջանակը, որն ընդգրկում է պետական իշխանության մարմինների (օրենսդիր, գործադիր և դատական), Սահմանադրությամբ և օրենքով ստեղծված ինքնավար և անկախ մարմինների ընթացիկ պահպանումը և տեխնիկական միջոցներով ապահովումը:

Ընդհանուր առմամբ, պետական կառավարման համակարգի բարեփոխումները միտված են պետական կառավարման համակարգում կոռուպցիոն երևույթների բացառմանը՝ միաժամանակ պետական իշխանության մարմինների գործունեության թափանցիկության, պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության աստիճանի բարձրացման և այլ մեխանիզմների գործարկմամբ:

Հանրային կառավարման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման, վարչական կոռուպցիայի հաղթահարման նպատակով կարևորվում է պետության կողմից ծառայությունների մատուցման ոլորտում էլեկտրոնային գործիքների ներդրման միջոցով քաղաքացի-պետություն շփման հնարավորինս սահմանափակումը, այդ թվում՝ մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցման նպատակով միասնական կենտրոնների ստեղծման և գործարկման միջոցով, պետական մարմինների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության, էլեկտրոնային տվյալների համակարգերի միասնականության և ավտոմատացման ապահովումը, ինչը կբարձրացնի որոշումների ընդունման ժամանակ կիրառվող տեղեկատվության հուսալիության և ամբողջականության աստիճանը:

Պետական կառավարման համակարգում Կառավարությունը դրսևորում է պետական ռեսուրսների կառավարումը արդյունավետ, օգտավետ և խնայողաբար իրականացնելու մոտեցում:

ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Պետական կառավարման համակարգի պահպանման գծով գոյություն ունեցող բյուջետային ծրագրերը՝ դրանք հանրային իշխանության մարմինների պահպանմանն ու տեխնիկական կարողությունների զարգացմանն ուղղված ծախսային ծրագրերն ու միջոցառումներն են, որոնց գծով ծախսերի մակարդակը կախված է պետական կառավարման համակարգում տեղի ունեցող փոփոխություններից, այդ թվում՝ կառուցվածքային կամ գործառութային փոփոխություններից, ինչպես նաև տնտեսության մեջ տեղի ունեցող գնային և սակագնային տարբեր գործոնների փոփոխություններից:

2022-2024թթ. ՄԺԾԾ չափաքանակները հաշվարկվել են հիմք ընդունելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ցուցանիշները և 2021 թվականի ընթացքում որոշակի իրավական կարգավորումների արդյունքում կատարված օրենսդրական փոփոխությունները: Հանրային իշխանության մարմինների պահպանման ծախսերը ծրագրավորվում են միասնական սկզբունքի կիրառմամբ:

Հանրային իշխանության մարմինների պահպանման համար պետական բյուջեով նախատեսված ծախսերի տեսակարար կշիռը 2022-2024թթ. ժամանակահատվածի համար կկազմի համապատասխանաբար՝

1. ՀՆԱ-ի 1.7%, 1.6% և 1.5%-ը (2021թ-ին՝ 2.0%-ը),
2. պետական բյուջեի՝ 6.4%, 6.1% և 5.7% (2021թ.՝ 7.1%):

Պետական իշխանության մարմինների գծով 2022-2024թթ. ժամանակահատվածի համար ծրագրավորված ծախսերը ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

(հազ դրամ)

	2022թ.	2023թ.	2024թ.
Հանրային իշխանության մարմինների պահպանման ծախսեր	128,868,864.5	129,983,328.5	130,792,960.6
Հերթական՝ մարդահամարի նախապատրաստման, անցկացման և ամփոփման աշխատանքներ	995,589.8	78,755.2	
Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ	828,024.0	828,024.0	828,024.0
Երևանի ավագանու հերթական ընտրություններ		706,681.1	

22. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22.1. ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության նախագահը, որպես պետության գլուխ, ունի Սահմանադրությամբ նախատեսված լիազորություններ:

Հանրապետության նախագահի աշխատակազմն իր կառուցվածքով և գործառույթներով ապահովում է Հանրապետության նախագահի լիազորությունների իրականացումը՝ օրենքի սահմաններում ստեղծելով անհրաժեշտ պայմաններ, իրականացնելով կազմակերպչական և այլ՝ օրենքից բխող գործողություններ:

Հանրապետության նախագահի աշխատակազմի առաքելությունն է ապահովել Հանրապետության նախագահին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը:

«Հանրապետության նախագահի աշխատակազմ» պետական մարմինը ձևավորվել է 2018թ. ապրիլի 9-ին՝ Ազգային Ժողովի կողմից Հանրապետության նախագահի ընտրությամբ: Նշված պետական մարմնի գործառույթներն ամրագրված են Հանրապետության նախագահի ապրիլի 18-ի ՆՀ-264-Լ հրամանագրով: Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, իր կնքած գործարքներով ձեռք է բերում ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ:

Հանրապետության նախագահի աշխատակազմի միջնաժամկետ նպատակներն են՝

1. Հանրության կողմից Հանրապետության նախագահի և նրա աշխատակազմի գործառույթների հստակ ընկալում, հանրության վստահության ձեռք բերում և ամրապնդում: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- Հանրապետության նախագահի և աշխատակազմի կողմից բարեգործական թիրախային ծրագրերի իրականացում, այդ ծրագրերի պատշաճ լուսաբանում,
- Պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով Նախագահի լիազորությունների հստակ և հանրամատչելի եղանակով ներկայացում, առանձին մանկական և/կամ երիտասարդական էջի ստեղծում,
- Նախագահի նստավայրում այցելուների կենտրոնի ստեղծում, մշակութային միջոցառումների կազմակերպում,
- Սոցիալական մեդիայում ակտիվ գործունեության շարունակություն, հետևորդների թվի ավելացում,
- Հանրապետության նախագահի և աշխատակազմի իրականացրած ծրագրերի վերաբերյալ հաշվետվողականության ապահովում, ընկալելի ձևով դրանց ներկայացում վերջնական արդյունքի ցուցադրմամբ,
- Նախագահին դիմած անձանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի ցուցաբերում, արագ արձագանքի ապահովում, հետևողականություն:

2. Նոր գաղափարներ գեներացնող և ռազմավարական ծրագրեր մշակող լոկոմոտիվի դերի ստանձնում և այդ դերի ճանաչելիություն հանրության կողմից: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- Հանդես գալ նախաձեռնություններով, հայեցակարգերով, զարգացման տեսլականներով տարբեր ոլորտների վերաբերյալ՝ առաջարկելով նորարար լուծումներ,
- Կազմակերպել թեմատիկ կոնֆերանսներ, գիտաժողովներ և քննարկումներ՝ լավագույն միջազգային փորձագետների և շահագրգիռ անձանց ներգրավմամբ,
- Մրցույթների միջոցով վեր հանել երկրի զարգացմանն ուղղված գաղափարները, աշխատել այդ գաղափարների իրագործման հայեցակարգերի մշակման ուղղությամբ:

3. ՀՀ-ի և Արցախի, ՀՀ-ի և սփյուռքի, ՀՀ-ի և այլ երկրների միջև առանձնահատուկ կամուրջի դերի ստանձնում և այդ դերի ճանաչելիություն հանրության կողմից:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- Համաշխարհային հարթակներում Հայաստանի ներկայացում, օրինակ՝ գիտաժողովներին, ցուցահանդեսներին մասնակցություն,
- Հայկական պատմամշակութային ժառանգությանն ու արժեքների պահպանությանը և դրանց ճանաչմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- Հայաստանի ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, միջազգային հեղինակավոր միջոցառումների հյուրընկալում Հայաստանում:

4. Նախագահի աշխատակազմի դիրքավորում՝ որպես ցանկալի աշխատավայր: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- Նախագահի աշխատակազմում ապահովել աշխատակցի հարմարավետության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ,
- Ստեղծել աշխատակիցների վերապատրաստման մեխանիզմներ, այդ թվում՝ հեռակա ուսուցման հնարավորությամբ,
- Ապահովել աշխատակցի առաջխաղացման մեխանիզմները և պարբերաբար գնահատել աշխատանքից բավարարվածությունը;

22.2. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական կառավարման երկիր է և Ազգային ժողովը ոչ միայն ժողովրդի ներկայացուցչական մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունը, այլև օժտված է իրականացնելու սահմանադրությամբ իրեն վերապահված գործադիր իշխանության գործունեության վերահսկողական գործառույթ: Որպես լեգիտիմ և ժողովրդավար խորհրդարան՝ Ազգային ժողովը ձգտում է հնարավորինս բաց և թափանցիկ լինել հանրության առջև՝ ապահովելով ՀՀ-ում արդյունավետ օրենսդրական դաշտ:

ՀՀ Ազգային ժողովը գործում է Սահմանադրությանը և իր կանոնակարգին համապատասխան՝ ձևավորելով և կատարելագործելով օրենսդրական դաշտը:

ՀՀ Ազգային ժողովի միջնաժամկետ նպատակներն են՝

- Իրականացնել ՀՀ ԱԺ դերի բարձրացման ուղղված միջոցառումներ ամրապնդելով խորհրդարանի և հանրության կապը,
- միջազգային խորհրդարանական կազմակերպությունների ներգրավմամբ համաշխարհային հարթակներում իրականացնել հայկական պատմամշակույթային ժառանգության և արժեքների պահպանման և ճանաչման ուղղված միջոցառումներ,
- հանդես գալ երկրի զարգացմանն ուղղված նոր գաղափարների և ռազմավարական ծրագրերի հայեցակարգերի մշակմամբ,
- ստեղծել այցելուների կենտրոն,
- բարձրացնել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական ներուժը խորհրդարանական վերահսկողության ոլորտում,
- իրականացնել ՀՀ Ազգային ժողովի տեխնիկական հագեցվածության և շենքային պայմանների բարելավման աշխատանքներ:

22.3. ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՀ դատախազության գործունեության հիմնական ոլորտներն են՝

1) Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտ
2) Քրեական հետապնդում հարուցելու ոլորտ
3) Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ոլորտ
4) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ոլորտ
5) Դատարանում մեղադրանքի պաշտպանության և վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման ոլորտներ
6) Պետական շահերի պաշտպանության ոլորտ
7) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտ

Կոռուպցիայի և կազմակերպված հանցագործության դեմ պայքարի ոլորտում ՀՀ դատախազության կողմից, մասնավորապես.

- ձեռնարկվելու են անհրաժեշտ միջոցառումներ՝ կոռուպցիոն բնույթի և կազմակերպված հանցագործությունները ժամանակին հայտնաբերելու և բացահայտելու հարցում այլ իրավապահ մարմինների հետ համագործակցությունը խորացնելու ուղղությամբ,
- իրականացվելու են համապատասխան միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող պայմանների, օրենսդրական թերի կարգավորումների հայտնաբերմանը՝ օրենսդրական բարեփոխումների իրականացմանը նպաստելու նպատակով,
- միջոցներ են ձեռնարկվելու կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու ուղղությամբ, այդ թվում՝ հասարակական հնչեղություն ունեցող կոռուպցիոն հանցագործությունների քննության ընթացքի և ավարտի մասին հանրությանն իրազեկելու միջոցով,

- ակտիվացվելու է համագործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գործունեություն իրականացնող մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ,

- շարունակվելու են միջոցներ ձեռնարկվել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Քրեական հետապնդում հարուցելու ոլորտում ՀՀ դատախազությունը.

- ապահովելու է առերևույթ հանցանք կատարած յուրաքանչյուր անձի նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով քրեական հետապնդման հարուցումը:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- ուժեղացվելու է հսկողությունը հետաքննության և նախաքննության մարմինների կողմից հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների գրանցման, հաշվառման և ընթացքը լուծելու նկատմամբ,

- հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության ապահովման նպատակով ուժեղացվելու է ըստ անհրաժեշտության դատախազական ներգործության միջոցների (ցուցումներ, միջնորդագրեր, միջնորդություններ և այլն) կիրառման պրակտիկան,

- հիշյալ ոլորտում դատախազական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, առաջնահերթությունները նախանշելու նպատակով շարունակաբար վերլուծվելու և ամփոփվելու են հանցավորության վիճակի, կառուցվածքի և շարժընթացի վերաբերյալ վիճակագրական տվյալները,

- միջոցներ են ձեռք առնվելու կոնվենցիոն ու քրեադատավարական հիմնադրույթների պահպանմամբ յուրաքանչյուր քրեական գործով արդյունավետ քննություն ապահովելու, միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու նպատակով իրավապահ բոլոր մարմինների ջանքների համախմբման ուղղությամբ:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- խստացվելու է հիշյալ ոլորտում դատախազական հսկողության առարկա հանդիսացող իրավական ակտերի և մյուս փաստաթղթերի օրինականության և հիմնավորվածության նկատմամբ հսկողությունը և, ըստ անհրաժեշտության, դատախազական ներգործության միջոցներ կիրառելու պրակտիկան,

- շարունակվելու են հետևողականորեն միջոցներ ձեռնարկվել՝ ուղղված ազատազրկման վայրերում կոռուպցիոն երևույթների հայտնաբերմանը և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելուն,

- ուժեղացվելու է հսկողությունը ազատազրկման վայրերում պահվող անձանց հիմնարար իրավունքների, հատկապես վերջիններիս բժշկական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու նկատմամբ,

- պարբերաբար ուսումնասիրվելու և ամփոփվելու է պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության ոլորտում դատախազական հսկողության պրակտիկան և, ըստ այդմ, կանխորոշվելու են պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտի գերակա ուղղությունները:

Դատարանում մեղադրանքի պաշտպանության և վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- բարձրացվելու է դատարանում մեղադրանքի պաշտպանության որակը,

- ապահովվելու է մեղադրանքի պաշտպանության գործառույթի ինքնուրույնությունը և ակտիվությունը՝ մինչդատական վարույթից դրա անբաժանելիությունը չափավոր բացառելու միջոցով,

- վեր են հանվելու մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման գործառույթների իրականացման հետ կապված իրավակարգավորման խնդիրները ու նախաձեռնողականություն է ցուցաբերվելու դրանք հստակ ուղղություններով լուծելու հարցում,

- սահմանվելու և ապահովվելու են վերահսկողության մեխանիզմներ մեղադրանքի պաշտպանության նկատմամբ՝ նկատի ունենալով այդ դատավարական փուլի առանձնահատկությունները,

- ապահովվելու է գործի ելքի վրա ազդող դատավարական գործողությունների՝ մեղադրանքը փոփոխելու և մեղադրանքից հրաժարվելու լիազորությունների օրինականությունը,

- իրականացվելու է միասնական պատժողական քաղաքականություն՝ ապահովելով պատիժների կիրառման համաչափությունը,

- ուժեղացվելու է վերահսկողությունը դատական ակտերի բողոքարկման ոլորտում՝ պատշաճ բողոքներ նախապատրաստելու և ներկայացնելու, վճռաբեկ բողոքարկման ոլորտում հատկապես իրավունքի զարգացման խնդիրներ առաջադրելու նպատակով:

Պետական շահերի պաշտպանության ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- ակտիվացվելու է օրենքով սահմանված կարգով և դեպքերում քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի, վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի և քրեական դատավարության կարգով հանցագործությամբ պետությանը ուղղակի պատճառված գույքային վնասի հատուցման հայց հարուցելու համար անհրաժեշտ ուսումնասիրությունների կատարման պրակտիկան,

- բարձրացվեու է դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից պետությանը պատճառված վնասի հատուցման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունը, հաշվի առնելով դատախազների ծանրաբեռնվածության աստիճանը՝ ակտիվացվելու է տարածքային դատախազությունների համագործակցությունը հանրապետական և տեղական հսկողական-տեսչական մարմինների հետ՝ դրանց ակտերով արձանագրված վնասների կապակցությամբ դատախազական ներգործության միջոցներ ձեռնարկելու միջոցով:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու նպատակով իրականացվելու են հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություններ, այդ նպատակով պահանջվելու են անհրաժեշտ իրավական

ակտեր, փաստաթղթեր, տեղեկություններ (այդ թվում՝ հարկային կամ մաքսային գաղտնիք համարվող), նախնական քննության տվյալներ,

- ուսումնասիրության արդյունքներով դիմումներ են ներկայացվելու առաջին ատյանի դատարան՝ հայցի նախնական ապահովման միջոցներ, ինչպես նաև ապացույցների նախնական ապահովում կիրառելու մասին.

- ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա կազմվելու են ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություններ, հարուցվելու են գույքի քաղաքացիական բռնագանձման հայցեր, կնքվելու են հաշտության համաձայնություններ.

- նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատական ակտի վերանայման բողոք նախապատրաստելու և ներկայացնելու նպատակով վերսկսվելու են ավարտված ուսումնասիրությունները:

22.4. ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՀ Քննչական կոմիտեի լիազորություններն են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմա-կերպումը և իրականացում: Որպես միջդատական վարույթ իրականացնող մարմին ՀՀ քննչական կոմիտեն սերտ փոխհամագործակցում է իրավապահ մյուս մարմինների հետ, ինչպես նաև մասնավորապես հետաքննության մարմինների, ինչպես նաև ՀՀ դատախազության հետ: Դատախազությունը հսկողություն է իրականացնում միջդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:

ՀՀ քննչական կոմիտեն՝ որպես նախաքննություն իրականացնող մարմին պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իր գործունեության արդյունքում քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի: ՀՀ քննչական կոմիտեի քննիչները քրեական գործի պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են մի շարք քննչական գործողություններ, այդ թվում՝ նշանակում փորձաքննություններ, դատավարական փաստաթղթերը ներկայացնում թարգմանության և այլն: Քննված քրեական գործերով հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների պարզումը և դրանք վերացնելու և կանխելու ուղղված միջոցների ձեռնարկելու նպատակով՝ համապատասխան մարմիններին միջնորդագրերի ներկայացնելը, հանցագործությունների քննության մեթոդիկայի ուսումնասիրությունը, քննության դրական փորձի ներդրումը քննչական պրակտիկայում, ստացված դիմումների և բողոքների քննարկումն ու լուծումը, ինչը վերջնական արդյունքում ձգտում է՝ քննության որակի, բազմակողմանիության, լրիվության, օբեկտիվության և արդյունավետության ապահովում, մարդու և քաղաքացու իրավունքների, հիմնարար ազատությունների, անձնական անձեռնմխելիության և մյուս իրավունքների պաշտպանության ապահովում, նախաքննության ժամկետների անհարկի ձգձգումների բացառում, պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասի վերականգնման ապահովում, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված քրեական

գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցերի լուծում, կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող պայմանների բացահայտման ու դրանց կանխմանն ուղղված գործուղությունների իրականացումը որը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրից:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է քրեական գործերի քննությունը, որի շրջանակներում կարող է անհրաժեշտություն առաջանալ նշանակել մի շարք փորձաքննություններ, դատավարական փաստաթղթերը ներկայացնել թարգմանության, իրավական օգնության համար կազմել և ուղարկել միջազգային հարցումներ՝ համապատասխան երկրի պաշտոնական լեզվով, քննիչներին վերապատրաստելու և պատրաստելու ուսուցումը կազմակերպելու համար ներգրավել մի շարք դասընթացներում, համապատասխան վերապատրաստման ծրագրերում, մասնագիտական պատրաստում անցնեղ ունկնդիրներին կրթաթոշակի տրամադրում և ՀՀ քննչական կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում:

22.5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության իրավակարգում ապահովելով Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը, որպես ռազմավարական առաջնահերթ խնդիր Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է սահմանադրական արդարադատություն:

ՀՀ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով շարունակելու է որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, ՏԻՄ որոշումների, մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը նրանցում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, ինչպես նաև լուծելու է հանրահավաքների արդյունքների ու պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը:

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրով նախատեսված ՀՀ սահմանադրական դատարանի առաջնահերթ ռազմավարական նպատակներն են.

- Բարձրացնել սահմանադրական արդարադատության արդյունավետությունը, ապահովել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը,
- իր գործունեությամբ նպաստել սահմանադրության և նրանում ամրագրված իրավունքների ու պարտավորությունների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը,
- սահմանված կարգով որոշում կայացնել օրենքների, Ազգային ժողովի որոշումների և այլ նորմատիվ ակտերի սահմանադրությանը համապատասխանության մասին,
- շարունակել Հանրապետությունում իրավունքի գերակայության ապահովման ուղղությամբ գործունեությունը:

Հիմնական գերակա վերջնական արդյունքները, որոնց վրա գերատեսչությունը ձգտում է ներազդել, նրանց իրագործման ռազմավարությունով ՀՀ սահմանադրական դատարանը հետամուտ կլինի հետևյալ արդյունքներին, մասնավորապես՝

Օրենքով սահմանված կարգով որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, այլ նորմատիվ ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, մինչև վավերացումը որոշել միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, լուծել հանրաքվեների հետ կապված վեճերը:

Սահմանադրական դատարանի այս լիազորությունը սահմանված է Սահմանադրությամբ և առաջնահերթ է հանդիսանում առաջիկա տարիների համար:

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրի իրականացման արդյունքնում ակնկալվում է Օրենքով սահմանված կարգով լուծելով ընդունված որոշումների, օրենքների, իրավական այլ ակտերի սահմանադրությանը համապատասխանությունը՝ ապահովելով նրանց արդյունավետ գործողությունը: Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանի որոշումներին բնորոշ են պարտադիրությունը, վերջնական լինելը, անմիջական գործողությունը:

ՍԴ-ի՝ գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձնաց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար ՀՀ-ի ամբողջ տարածքում: ՍԴ-ի խնդիրը վիճարկվող իրավական նորմի հետագա իրավաբանական ճակատագրի որոշումն է: Կախված ՍԴ-ի որոշումից՝ վիճարկվող իրավական ակտը կամ կորցնում է իր իրավաբանակն ուժը, կամ շարունակում է պահպանել իր գործողությունը: Այդ իսկ պատճառով ՍԴ-ի որոշումները տարածվում են ոչ միայն վիճարկվող նորմի կիրառման հետ կապված կոնկրետ գործի վրա. Վիճարկվող նորմատիվ ակտի հակասահմանադրականության վերաբերյալ ՍԴ-ի որոշումն ունի գործողության այնպիսի ոլորտ, ինչպիսին որ ունի նորաստեղծ մարմնի նորմատիվ ակտը:

22.6. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես անկախ սահմանադրական ինստիտուտ, հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ընդգրկում է հետևյալ հիմնական ուղղությունները.

- անհատական բողոքների և դիմումների քննարկում, մշտադիտարկման այցեր, դրանց արդյունքներով համակարգային խնդիրների վերհանում,
- մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավասու մարմին կարծիքների տրամադրում,
- մարդու իրավունքների ու ազատությունների ապահովմանն ուղղված օրենսդրական նախագծերի մշակում
- օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական

նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումների հասցեագրում,

- Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում,
- մարդու իրավունքների կրթությանն ու իրազեկմանն ուղղված շարունակական միջոցառումների անցկացում:

22.7. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը Սահմանադրությամբ և «ՀՀ դատական օրենսգրիք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Բարձրագույն դատական խորհրդի գլխավոր նպատակն է նախադրյալներ ստեղծել Հայաստանում ձևավորելու արդարադատության անկախության, անաչառության, մատչելիության, թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության նոր մշակույթ: Բարձրագույն դատական խորհրդի կողմից որդեգրվել են փոխկապակցված ու փոխլրացնող ռազմավարական ուղղություններ, մոտեցումը համակարգային է, հատվածական կամ այսրոպեական լուծումները չեն կարող ակնկալվող արդյունքներն ապահովել: Հստակ առանձնացվում են ճգնաժամային և ֆունկցիոնալ կառավարման խնդիրներ:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից մշակված արդյունավետ արդարադատության արդյունավետության ռազմավարական առաջնահերթությունների շրջանակներում նախատեսվում են օրենսդրական և կազմակերպչական բնույթի այնպիսի քայլեր, ինչպիսին են արդարադատության ծախսատարության կրճատումը, էլեկտրոնային արդարադատության փուլային ներդրումը, դատական գործերի կառավարման ժամանակակից թվայնացված համա-կարգի ներդրումը, արդարադատության համակարգային մշտադիտարկումը, դատական արխիվների և ընթացիկ գործերի ամբողջական թվայնացման համակարգի արմատավորումը, դատարանների շենքային ու նյութատեխնիկական պայմանների որակական բարելավումը, դատարանների ու դատավորների նյութական ու սոցիալական անկախու¬թյան անհրաժեշտ ու բավարար երաշխիքների ապահովումը, դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության ապահովումը:

«Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» ծրագրի նպատակն է Դատական իշխանության անկախության երաշխավորումը, բնականոն գործունեության և դատական պաշտպանության իրավունքի ապահովումը: Ծրագրի գծով 2022-2024թթ. համար սահմանվել են հետևյալ թիրախային ցուցանիշները՝

Չափորոշիչը	Ցուցանիշի մակարդակը
Ըստ WEF-ի ցուցանիշի՝ դատական համակարգի անկախությունը իշխանության այլ ճյուղերի, անհատների կամ ընկերությունների ազդեցությունից	6,3

ՄԺԾԾ ժամանակահատվածում հիմնական ծախսային գերակայություններն են.

1. Սահմանված ժամանակահատվածում, ինչպես նաև հաջորդող տարիներին թիրախային նպատակը համարվում է WEF-ի ցուցանիշի՝ դատական համակարգի անկախությունը իշխանության այլ ճյուղերի, անհատների կամ ընկերությունների ազդեցությունից, բարելավումը՝ միջազգային հարթակում դիրքի ամրապնդման համար, անկախ, անաչառ, մատչելի, արդյունավետ ու հաշվետու արդարադատություն ունենալու համար, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ՀՀ-ում մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը, մասնավորապես՝ զգալի կավելանան ներդրումները, ինչն էլ մեծապես կնպաստի ՀՆԱ-ի աճին:

22.8. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի գործունեության ոլորտն առնչվում է.

1. ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի N 1332-Ն որոշմամբ սահմանված կոռուպցիայի կանխարգելման քաղաքականությանը՝ ինստիտուցիոնալ համակարգի ներդրման և կայացման առումով,

2. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի կիրառումն ապահովող մեխանիզմների կիրառմանը,

3. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված հայտարարագրման համակարգին, ինչպես նաև

4. «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքով Հանձնաժողովի հետևյալ լիազորությունների իրականացմանը

- պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումների քննություն և որոշումների կայացում,
- հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործերի քննում,
- պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

- անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրության վարում,
- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծություն և դրանց վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ իրավասու մարմին,
- կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակում և դրանք ներկայացնում է Կառավարություն,
- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի և իրականացնում միջոցառումների մշակում,
- իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և դրանց իրականացման միջոցառումների ծրագրի (այդ թվում՝ ոլորտային) կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների մշակում, դրանց վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններ,
- «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության ուսումնասիրության իրականացում,
- պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների (կանոնագիրքը) ընդունում,

2022-2024 թվականների համար Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանել է հետևյալ հիմնական թիրախները՝

1. հայտարարագրերի վերլուծության և հնարավոր խախտումների հայտնաբերման մեխանիզմների արդյունավետության բարձրացում,
2. պետական կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման, անհամատեղելիության, վարքագծի կանոնների և այլ սահմանափակումների խախտումների նվազեցում,
3. պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության օրենսդրական և գործնական հնարավորությունների ընդլայնում,
4. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրանց արդյունքների հիման վրա կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման գործողությունների ծրագրեր մշակման համակարգի ներդրում,
5. կոռուպցիայի կանխարգելման և դրա հիմնական թիրախների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացում և կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ապահովում,
6. Հանձնաժողովի միջազգային համագործակցության խթանում
7. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մեխանիզմների արդյունավետ իրագործում (Հանձնաժողովի գործունեությանն առնչվող մասով):

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ծախսային ծրագրային գերակայությունները բխում են գործունեության հիմնական նպատակից, այն է՝ ապահովել պետական կառավարման և

տեղական ինքնակառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համակարգային և անհատական գործուն մեխանիզմների ներդրումն ու արդյունավետ շահագործումը:

22.9. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) Հանձնաժողովը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված նպատակի համաձայն՝ տնտեսական մրցակցության պաշտպանությունն իրականացնող մարմին է: Հանձնաժողովը համաձայն որդեգրված հրամայականի՝ ամրագրում է տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը, 2022-2024 թվականների ընթացքում իրականացվելիք մրցակցության պաշտպանության գերակա ուղղությունները, առկա հիմնախնդիրների հիման վրա սահմանում է ապրանքային շուկաներում մրցակցության խթանման համար անհրաժեշտ միջոցառումները, արդի պայմաններում մրցակցության խրախուսմանն ու զարգացմանն ուղղված կարգավորման մեխանիզմները: Հայաստանի Հանրապետությունում տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղությունը շարունակում է մնալ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն ու աջակցումը: Ծրագիրն ապահովում է Հանձնաժողովի 2021-2023թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի շարունակությունը:

Հանձնաժողովը, համաձայն ծրագրային բյուջետավորման գործընթացի, յուրաքանչյուր տարի պարտավոր է իրականացնել 100 ուսումնասիրություն և լայն սպառման պարենային և ոչ պարենային նշանակության ապրանքների և ծառայությունների հինգ շուկաների (ոլորտների) ուսումնասիրություններ: Ապրանքային շուկայի մրցակցային իրավիճակը գնահատող ուսումնասիրությունները սահմանում են ապրանքային շուկայի կառուցվածքը, կենտրոնացվածության աստիճանը, օրենսդրական խնդիրները և մրցակցությունը սահմանափակող երևույթները:

«Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի շրջանակներում Հանձնաժողովի ոլորտային ծախսերի գերակա ուղղություններն են.

- Տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում,
- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում և հարակից մի շարք օրենքներում կատարված փոփոխությունների և լրացումների հիման վրա նորմատիվ իրավական ակտերի լրամշակում և նոր նորմատիվ իրավական ակտերի ընդունում,
- Ապրանքային շուկաներում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված չարաշահումների սահմանափակումը, կանխումը, արգելումը, ձեռնարկատիրության զարգացման նպաստումը,
- Միջազգային համանման կառույցներին ինտեգրվելը և փորձի փոխանակումը:

22.10. ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովը սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և

բազմազանությունը, վերահսկում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, ցանցային և մուլտիպլեքս օպերատորների, ինչպես նաև տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

Հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

1) հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների անցկացում.

2) լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթների անցկացում.

3) մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթների անցկացում.

4) ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորում.

5) տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կարգավիճակի տրամադրում՝ հեղինակազորում.

6) տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատում.

7) լիցենզիա ստացած անձանց ցուցակի կազմում և հրապարակում, լիցենզիայում նշված պայմանների և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության իրականացում.

8) տեսալսողական հաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների ընտրանքային դիտարկման միջոցով օրենսդրության և լիցենզիայի պահանջներին դրանց համապատասխանության պարզում.

9) «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում պատասխանատվության միջոցների կիրառում.

10) տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն.

11) տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, ցանցային և մուլտիպլեքս օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեության վերաբերյալ բողոքների, առաջարկությունների և հարցումների ուսումնասիրում և պատասխանում կամ եզրակացության տրամադրում.

12) տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և ցանցային օպերատորների գործունեության մշտադիտարկում.

13) «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում ստուգումների և ուսումնասիրությունների իրականացում.

14) Հանրային հեռարձակողի ծրագրերում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման համար վերահսկողության իրականացում.

15) օրենքով սահմանված դեպքերում կարգերի, մեթոդաբանությունների և այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունում:

ՄԺԾԾ ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվելիք հիմնական ծրագրերն են՝

1. Տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության, ինչպես նաև լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկում, ինչը կնպաստի ոլորտային նպատակների իրագործմանը:

2. Տեսալսողական մեդիածառայությունների լիցենզավորման մրցույթների անցկացում, ներառյալ մարզային մրցույթների, ինչը տեղեկատվություն ստանալու ավելի լայն ընտրության հնարավորություն կտա սպառողներին, իսկ մարզերի բնակչությանը՝ մշտապես իրազեկ լինելու տեղական նորություններին և մարզերին առնչվող խնդիրներին:

3. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացում, ինչը կնպաստի տեսալսողական ծրագրերի հեռարձակման թվայնացման համակարգի կայուն գործարկմանը:

22.11. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանադրական կարգավիճակով օժտված անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:

Հանձնաժողովի աշխատանքներն ուղղված են ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպմանն ու անցկացմանը, դրանց բարելավմանն ու կատարելագործմանը, ընտրական իրավունքի և ընտրական գործընթացների վերաբերյալ ուսուցումների և դասընթացների կազմակերպմանը, դասավանդման նոր մեթոդաբանության, ուսուցման նոր հարթակների մշակմանն ու ներդրմանը և ընտրական գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման ապահովմանն ու ընդլայնմանը:

Վերոգրյալի ապահովման համար իրականացվում են վերլուծություններ, ուսումնասիրություններ, կազմակերպվում են Հանձնաժողովի անդամների և Հանձնաժողովի աշխատակիցների վերապատրաստումներ, անցկացվում են սեմինարներ, կոնֆերանսներ, ապահովվում են շփումներ շահագրգիռ մասնակիցների հետ (կուսակցությունների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, տարածքային ընտրական հանձնաժողովներ և այլն):

Հանձնաժողովը անդամակցում է Եվրոպայի ընտրական իշխանությունների ասոցիացիա (ACEEEO) կազմակերպությանը:

Հանձնաժողովը համագործակցել է՝

1) 2016-2017 թվականներին՝ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր «Աջակցություն ընտրական գործընթացին Հայաստանում» ծրագրի շրջանակներում,

2) 2018-2020 թվականներին՝ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր «Հայաստանում ընտրական գործընթացի աջակցություն» ծրագրի շրջանակներում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնադրության համաձայն՝ Հանձնաժողովի նպատակն է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների կազմակերպումն ու անցկացումը:

Հանձնաժողովի խնդիրներն են՝

1. կազմակերպել և անցկացնել Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ամփոփել արդյունքները,

2. կազմակերպել և անցկացնել հանրաքվեները, ամփոփել արդյունքները,

3. վերահսկողություն իրականացնել ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման և անցկացման օրինականության նկատմամբ:

Հանձնաժողովը համագործակցում է հասարակական կազմակերպությունների հետ՝ հաշվանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացներն առավել մատչելի դարձնելու ուղղությամբ: Նշված աշխատանքները կնպաստեն նաև ՀՀ կառավարության ծրագրով սահմանված նպատակին, ըստ որի՝ «վերահաստատելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված հետևողական ջանքերը՝ Կառավարությունը շարունակելու է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բացառելու համար հաշմանդամության հիմքով խտրականությունը կյանքի բոլոր ոլորտներում», և ՀՀ կառավարության ծրագրով սահմանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանությանը և նրանց սոցիալական ներառման ապահովման խնդրի լուծմանը:

Հանձնաժողովը ապահովում է կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և հավասար հնարավորությունները քաղաքական, տնտեսական և հանրային կյանքում որոշումների կայացման բոլոր մակարդակներում ղեկավար դիրք զբաղեցնելու համար (և՛ հանձնաժողովների անդամների, և՛ թեկնածուների շրջանում):

Հաշվի առնելով, որ քաղաքացիների իրազեկումը առաջնային է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկելու ընդլայնելու համար իրազեկման աշխատանքները (այդ թվում՝ բաց դասեր անցկացնելով, երիտասարդների ներգրավելով և այլն):

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր նպատակները սահմանելիս առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և այն միջազգային կազմակերպությունների ընդունած փաստաթղթերով և ծրագրերով, որոնց հետ Հանձնաժողովը համագործակցում է:
2016-2020 թվականների «Աջակցություն ընտրական գործընթացներին Հայաստանում» և «Հայաստանում ընտրական գործընթացների աջակցություն» ծրագրերի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվել են ծրագրատեխնիկական միջոցներ:

Նախատեսվող և մշակման փուլում են գտնվում հեռահար ուսուցման, մասնագիտական դասընթացների անցկացման, ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումների (VAD) ռեեստրի վարման ավտոմատացված համակարգերը, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Տվյալների կենտրոնի ծրագրատեխնիկական (սերվերային հավաքածու) միջոցների, դյուրակիր համակարգիչների (notebook) և բազմաֆունկցիոնալ տպող սարքերի ձեռք բերման նախագիծը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ծախսային գերակայություններն են՝

1.Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության ապահովումը, ընտրական ծրագրերի համակարգման, կազմակերպման, անցկացման և մոնիտորինգի իրականացումը, ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը.

2.Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպումը.

3. Երևանի ավագանու ընտրությունների կազմակերպումը.

4.Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպումը:

22.12. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առաջնահերթ գործառույթներից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը, և միջազգային առաջավոր փորձի վրա հիմնված բազմակողմանի և առավել ճկուն իրավական կարգավորումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից, հանրային ծառայությունների ոլորտում միջազգային համագործակցության անհրաժեշտությունից:

Հանձնաժողովն, իր կողմից հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության սահմանադրաիրավական մանդատի իրագործման ուղղված խնդիրների առավել համակողմանի և արդյունավետ լուծումների ապահովման, հանրային ծառայություններից օգտվող սպառողների և ոլորտի կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման և վերջիններիս նկատմամբ խտրականության բացառման անհրաժեշտությունից ելնելով, մշակել է «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքների նախագծերը:

Նշված օրենքների նախագծերը, համապատասխանաբար, ուղղված են Հանձնաժողովի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը (այդ թվում նաև՝ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների արդյունավետ իրականացման մեխանիզմների ստեղծմանն ուղղված իրավակարգավորումների ձևավորմանը), էներգետիկայի ոլորտում գործունեության խթանմանն ու դյուրինացմանը, կարգավորման պարտադիր վճար վճարողների ցանկի՝ հանրային ծառայությունների ոլորտներում կարգավորման ներկայիս քաղաքականությանը համահունչ ձևավորմանը և հանրային ծառայությունները կարգավորող մարմնի ֆինանսավորման մեխանիզմների բարելավմանը, ինչի արդյունքում համապատասխանաբար կավելանան պետական բյուջե վճարվող հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները: Օրենքների նախագծերի ընդունումը բխում է հանրային կարգավորման շահերից:

Կարգավորվող բնագավառների (համակարգերի) իրավական դաշտի կատարելագործումը շարունակական գործընթաց է և հանդիսանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը:

Հանձնաժողովը իրավական ոլորտի կարգավորման կատարելագործման գործընթացում որդեգրած քաղաքականության իրականացման սահմաններում 2021 թվականի ընթացքում շարունակելու է հետամուտ լինել կարգավորվող ոլորտների իրավական ակտերի լրամշակման աշխատանքներին:

Հանձնաժողովը, մասնավորապես, մասնակցելու է կարգավորման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի, իրավական ակտերի և այլ փաստաթղթերի մշակմանը, կատարելագործմանը և իրականացմանը:

Կշարունակվեն նաև ոլորտում ներդրումների խթանմանն ուղղված էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի կատարելագործման աշխատանքները:

2022-2024թթ. ևս շարունակվելու են աշխատանքները սակագնային քաղաքականության իրականացման ու կատարելագործման, էներգետիկայի բնագավառում իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման, համապատասխան կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանների վերլուծության և շուկայի ազատականացման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Մասնավորապես, հաշվի առնելով 2021թ. շուկայի կառավարման ծրագրի թեստավորման արդյունքները, ըստ անհրաժեշտության, կլրամշակվեն ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրային կանոնները և համապատասխան պայմանագրերի օրինակելի ձևերը:

2022-2024թթ. կշարունակվեն իրականացվել էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների, կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների, իրականացված ներդրումների և սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծության և էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների վերանայման աշխատանքները, կճշգրտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից և վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները:

2022-2024թթ. նախատեսվում է իրականացնել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից վարձակալության պայմանագրային հաշվետու տարվա համար ներկայացված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման (ճշգրտման) հայտի ուսումնասիրման, խմելու ջրի ծավալների մոնիթորինգի իրականացման աշխատանքներ և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) սակագների սահմանման աշխատանքներ:

Մատակարար-սպառող հարաբերություններում բաժանորդների կողմից բարձրացված խնդիրների ուսումնասիրության արդյունքում՝ սպառողներին մատուցվող ծառայությունների սպասարկման որակի ցուցանիշների բարելավման նպատակով 2021 թվականին կլրամշակվեն էլեկտրական էներգիայի, բնական գազի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները:

էլեկտրաէներգետիկական համակարգում ֆինանսական կայունություն և առաքված էլեկտրաէներգիայի և մատուցված ծառայությունների դիմաց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 100% վճարումներ ապահովելու նպատակով 2021 թվականին ևս հանձնաժողովը կշարունակի վերահսկել իր կողմից ներդրված հատուկ հաշվի մեխանիզմի բնականոն աշխատանքը՝ երաշխավորելով արտադրողներին և շուկային ծառայություններ մատուցող ընկերություններին վճարումների կատարումը:

Հաշվի առնելով, ՀՀ-ում սպառողների պահանջի աճը ինտերնետի նկատմամբ՝ հանձնաժողովը նախատեսում է շարունակել աշխատանքները, այդ թվում՝ օպերատորների հետ համագործակցության շրջանակում, ՀՀ բնակավայրերում ամրակցված (լարային և անլար տեխնոլոգիաների) լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնելու Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված կապի տեխնոլոգիաների ցանցերի փոխադարձ ներթափանցելիության և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցուցանիշները:

Ելնելով Հայաստանի Հանրապետության հեռահաղորդակցության ոլորտի առկա ձեռքբերումներից, հանրային շարժական կապի 4G տեխնոլոգիայից դեպի 5G տեխնոլոգիայի ցանցերի սահուն անցումն ապահովող LTE-A և LTE-A Pro ցանցերի զարգացման նկատառումներից, հանձնաժողովի նախաձեռնությամբ 800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի 791-801ՄՀց և 832-842ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերն առանձնացվել են՝ առևտրային նպատակով տրամադրման համար: Այս կապակցությամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության շարժական կապի շուկայի հնարավոր կառուցվածքային փոփոխությունների (կոնսոլիդացման) միտումները, հանձնաժողովը ոլորտի իրավասու և շահագրգիռ պետական այլ մարմինների հետ կքննարկի նշված տիրույթները մրցութային հիմունքներով տրամադելու հնարավորություններն ու տարբերակները:

Հաշվի առնելով հեռահաղորդակցության ոլորտի զարգացման միջազգային միտումները, հանձնաժողովի նախաձեռնությամբ նախատեսվում և շարունակվելու են քննարկումները ՀՀ շահագրգիռ պետական մարմինների հետ շարժական կապի լայնաշերտ 5G տեխնոլոգիայի ներդրման և դրա համար անհրաժեշտ 700 ՄՀց ՄՀց ռադիոհաճախականությունների ազատականացման հարցերը:

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավման Եվրոպական միության փորձը, ինչպես նաև ՀՀ և ԵՄ միջև ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում ամրագրված հանձնառությունները՝ հանձնաժողովը նախատեսում է նախաձեռնել էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող օրենսդրության, մասնավորապես՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ:

Միաժամանակ, հաշվի առնելով հանրային ամրակցված և շարժական կապի լայնաշերտ տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքները՝ հանձնաժողովը ԵՄ արևելյան գործընկերության երկրների հեռահաղորդակցության ոլորտի կարգավորողների խմբի շրջանակում շարունակելու է աշխատանքները ենթակառուցվածքների քարտեզագրման մշակմանն ուղղված աշխատանքներին:

ԵՄ արևելյան գործընկերության երկրների հեռահաղորդակցության ոլորտի կարգավորողների խմբի շրջանակում նախատեսվում են նաև կարգավորող մարմինների անկախության ամրապնդմանը, էլեկտրոնային հաղորդակցության շուկաների վերլուծությանը, ԵՄ արևելյան գործընկերության երկրների տարածաշրջանում միջազգային ռոումինգի միասնական տարածք ձևավորելուն և սակագների նվազեցմանն ուղված աշխատանքների շարունակական մասնակցություն: Բացի այդ, շարունակվելու են աշխատանքները նաև ԵԱՏՄ անդամ պետությունների կապի ոլորտում մրցակցության և խոչընդոտների վերացման հարցերով աշխատանքային խմբի շրջանակում, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետությունների կապի օպերատորների միջև տրաֆիկի անցման ծառայությունների գնագոյացման կարգավորման վերաբերյալ քննարկումներին:

22.13. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքով ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական վերահսկողության ոլորտում գործող վարչապետին ենթակա մարմին է, որն իրականացնում է սույն օրենքով իրեն վերապահված վերահսկողական լիազորություններ:

Ծառայությունը պետական վերահսկողության շրջանակներում և սույն օրենքով սահմանված կարգով՝

1) պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում իրականացնում է ուսումնասիրություններ.

2) Սահմանադրությամբ և օրենքներով ստեղծված, պետական կառավարման համակարգի մարմին չհանդիսացող մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների կառավարման օրինականության վերահսկողության նպատակով.

3) տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով.

4) պետական միջոցների ձևավորման գործառույթ իրականացնող լիազորված անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների ձևավորման օրինականության վերահսկողության նպատակով.

5) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության մասնակցությունից ծագող և լիազոր մարմնի, ինչպես նաև կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորություններից բխող վերահսկողության իրականացման նպատակով.

6) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքների կողմ հանդիսացող անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքներից բխող և դրանց պայմանների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով,

բացառությամբ պայմանագրից բխող ցուցումներ տալու, որն իրականացվում է պայմանագրով Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող լիազոր մարմնի միջոցով.

7) պետությունից, համայնքից, պետական, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից, պետության, համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության նպատակով.

8) Հայաստանի Հանրապետությունից սուբսիդիա և դրամաշնորհ ստացած անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոց տրամադրելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով.

9) պետական միջոցների կառավարման և ձևավորման հակաօրինական գործողությունների, չարաշահումների վտանգի և հնարավոր վնասների առաջացման ռիսկերի դեպքերում նշված ռիսկերի հիմնավորվածությունը պարզելու, գնահատելու կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով վարչապետի համաձայնությամբ իրավասու է առաջարկելու կասեցնել գործարքների կատարումը, ինչպես նաև դրանց կնքմանն ուղղված ընթացակարգերը կամ գործողությունները.

10) վարչապետի հանձնարարությամբ իրականացնում է կարգապահական վարույթներ.

11) ստացված դիմումները, բողոքները և առաջարկությունները հասցեագրում է իրավասու պետական կառավարման համակարգի մարմիններին և վերահսկում դրանց ընթացքը.

12) իրականացնում է հանդիպակաց ուսումնասիրություններ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով.

13) ներկայացնում է վերահսկողության արդյունքներից բխող պահանջվող միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ և իրականացնում դրանց իրականացման նկատմամբ հսկողություն.

14) համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների համապատասխան կառույցների հետ.

15) առաջարկություններ է ներկայացնում պետական կառավարման ոլորտում իրավական ակտերի նախագծերի և փոփոխությունների (լրացումների) վերաբերյալ:

ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության նպատակների և թիրախների հետ կապը կոռուպցիայի դեմ պայքարն է:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության քաղաքականության հիմնական թիրախներից է՝ ՀՀ պետական միջոցների կառավարման, ձևավորման և օգտագործման արդյունավետության և օրինականության բարձրացումը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության գործունեությունը նպաստում է ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակների և դրանց գծով սահմանված գլոբալ ցուցանիշների ապահովմանը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից կատարվող աշխատանքների գերակայություններն են.

1) պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում իրականացնում է ուսումնասիրություններ.

2) Սահմանադրությամբ և օրենքներով ստեղծված, պետական կառավարման համակարգի մարմին չհանդիսացող մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների կառավարման օրինականության վերահսկողության նպատակով.

3) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության մասնակցությունից ծագող և լիազոր մարմնի, ինչպես նաև կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորություններից բխող վերահսկողության իրականացման նպատակով.

4) Հայաստանի Հանրապետությունից սուբսիդիա և դրամաշնորհ ստացած անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոց տրամադրելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով:

22.14. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

Կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- Ատոմային էներգիայի օգտագործման ոլորտի միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում:

- Ճառագայթային և գեներացնող աղբյուրներ պարունակող ախտորոշիչ սարքերի լիցենզավորում:

- Միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանություն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ:

- Սահմանային անցակետերում միջուկային նյութերի և ճառագայթային աղբյուրների չարտոնված տեղափոխման հսկողություն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ:

- Բնակչության և ՀԱԷԿ-ի անձնակազմի պաշտպանություն միջուկային և ճառագայթային վթարների դեպքում, այդ թվում միջուկային տեղակայանքների հրդեհի առաջացման դեպքում՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ:

- ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտներին, Եվրոպական միության անվտանգության դիրեկտիվների՝ այդ թվում Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) անվտանգության պահանջներին, «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, պահանջների, ուղեցույցների, մեթոդների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը, անվտանգությանը վերաբերվող փաստաթղթերի քննարկումը, վերլուծությունը և գնահատումը:

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն իրականացնում է «Միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում» ծրագիրը:

Ծրագրի վերջնական արդյունքն է՝ ՀՀ բնակչության համար թույլատրելի տարեկան արդյունարար դոզայի արժեքի չգերազանցումը սահմանված չափաքանակներից: Վերջնական արդյունքին հասնելու գերակա ուղղությունները՝

- շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրումը՝ շրջակա միջավայրի հնարավոր ռադիոակտիվ աղտոտմամբ պայմանավորված բնակչության ճառագայթահարումը վերահսկելու համար

- կոմիտեի գիտատեխնիկական աջակցության զարգացում

- մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը, (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ)

- միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացում, միջուկային նյութի

Ծրագրի նպատակն է՝ ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության պետական կարգավորման ապահովումը, ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտներին և Եվրոպական միության անվտանգության դիրեկտիվներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց լիցենզավորումը, միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացումը, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործումը, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների կարգավորող վերահսկողության և տեսչական ստուգումների անցկացումը, շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրումը, վթարային հակազդման համակարգի զարգացումը:

Ծրագրի վերջնական արդյունքն է՝ բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից:

22.15. ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ հաշվեքննիչ պալատն արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմինն է:

Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակը հանրային ֆինանսների և սեփա-կանության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտա-գործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:

Նշված նպատակի ապահովման համար Հաշվեքննիչ պալատն իրականացնում է հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն (ստուգում) պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ:

Հաշվեքննության նպատակն է պարզել հաշվեքննության առարկայի օրինականութ¬յան ու տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքների պահպանումը:

Հաշվեքննությունն իրականացվում է պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և հիմնարկներում: Իրավաբանական անձանց մոտ ստուգում իրականացվում է հատուկ դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով:

Նկատի ունենալով սահմանադրորեն և օրենքով Հաշվեքննիչ պալատի անկախության համար սահմանված սկզբունքը, Հաշվեքննիչ պալատն ինքնուրույն է սահմանում իր հիմնական թիրախները, այնուամենայնիվ դրանք, ըստ էության, փոխկապակցված են հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում ՀՀ կառավարության հիմնական նպատակների և թիրախների հետ: Այդ մասով Հաշվեքննիչ պալատը նպատակադրված է հաշվեքննությունների միջոցով պարզել հաշվեքննության առարկայի օրինականության ու տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքների պահպանումը:

Այդ նպատակով Հաշվեքննիչ պալատն, իր գործունեության տարեկան ծրագրի հիման վրա իրականացնում է ֆինանսական, համապատասխանության և կատարողականի հաշվեքննություններ, իսկ հաշվեքննության թիրախները սահմանվում են ռիսկերի գնահատման մեթոդաբանությամբ: Այս առումով Հաշվեքննիչ պալատի գերակայություններից է ավելացնել հաշվեքննության թիրախների քանակը, որի իրականացման համար անհրաժեշտ են լրացուցիչ ռեսուրսներ:

Հաշվեքննիչ պալատի ֆինանսական, հսկողության և կառավարչական գործընթացների հետ կապված ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաշվեքննիչ պալատը նպատակադրված է ներսում ներդնել և զարգացնել որակի կառավարման համակարգ, ինչի իրագործման համար նույնպես պետք է ներգրավվի լրացուցիչ ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսներ, ինչպես նաև պետք է բարձրացվի Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի մասնագիտական կարողությունները:

Նպատակային թիրախներն ապահովելու և ծրագիրը հաջող ավարտելու նպատակով Հաշվեքննիչ պալատը ձգտում է հասնել վերջնական արդյունքներին հետևյալ ուղղությունների սահմաններում.

- Արտաքին պետական հաշվեքննության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրության բարելավում՝ նկատի ունենալով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով սահմանված ֆինանսական, գործառնական և կազմակերպչական անկախության հարցերը:

- Հաշվեքննության գործընթացի որակի բարձրացում՝ նկատի ունենալով նաև Հաշվեքննիչ պալատի SS ենթակառուցվածքների զարգացման հարցերը:

- Ազգային ժողովի, կառավարության և այլ շահառուների հետ համագործակցության զարգացում՝ հատկապես նկատի ունենալով հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքները՝ follow-up գործընթաց:

- Հաշվեքննիչ պալատում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում:

Հաշվեքննության ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի համար գերակա համարվող ուղղություններն են.

- Արտաքին պետական հաշվեքննության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրության բարելավում:
- Հաշվեքննիչ պալատում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում:
- Հաշվեքննության գործընթացի որակի բարձրացում՝ նկատի ունենալով նաև Հաշվեքննիչ պալատի SS ենթակառուցվածքների զարգացման հարցերը:
- Ազգային ժողովի, կառավարության և այլ շահառուների հետ համագործակցության զարգացում՝ հատկապես նկատի ունենալով հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքները (follow-up գործընթաց);

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագիրը ներկայացնում է ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների ներգրավման, ինչպես նաև ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ռիսկերի կառավարման ռազմավարությունը: Այն եռամյա ծրագիր է, որը վերանայվում և հրապարակվում է տարեկան պարբերականությամբ՝ նպաստելով կառավարության պարտքի կանխատեսելի և թափանցիկ կառավարման ապահովմանը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը պարզաբանում է պարտք ներգրավելու քաղաքականությունը՝ ներառելով կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշները, բացահայտում և գնահատում է կառավարության պարտքի կառավարման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև նախանշում է այն սկզբունքները, նպատակադրումներն ու իրականացվելիք միջոցառումները, որոնց ներքո չի վտանգվի հարկա-բյուջետային կայունությունը:

Պարտքի կառավարումը նշանակալի տեղ ունի պետական հատվածի ֆինանսների կառա-վարման գործընթացում, որտեղ ռեսուրսների սահմանափակության պայմաններում կառավարու-թյունը պարտք է ներգրավում՝ երկարաժամկետ և կայուն տնտեսական աճին նպաստող հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնելու նպատակով:

ՀՀ կառավարության պարտքի ընդունելի պորտֆելի ձևավորման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվում են ծախսերի և ռիսկերի վերլուծություններ՝ կիրառելով նաև միջազգային լավագույն փորձի հիման վրա հեղինակավոր միջազգային ֆինանսական կառույցների կողմից մշակված մոտեցումները: Վերլուծությունները հնարավորություն են ընձեռում գնահատել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ու ռիսկերի ցուցանիշները և դրանց վրա հնարավոր շոկերի ազդեցությունները: ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունում ներկայացվում և վերլուծվում են ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի շուկայական՝ փոխարժեքի և տոկոսադրույքի ռիսկերը, վերաֆինանսավորման ռիսկը, ինչպես նաև ոչ շուկայական՝ գործառնական ռիսկը: Ռազմավարությունը կազմելիս հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության պարտքի կառավարման այնպիսի սահմանափակումներ, ինչպիսիք են ներքին շուկայի կարողությունը կամ արտաքին վարկերից օգտվելու հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը ներկայացնում է ծախսերի և ռիսկերի համադրման հնարավոր տարբերակներից նախընտրելին, որի ընտրության հիմքում ընկած է ընդունելի ծախսերով ֆինանսական կարիքի բավարարումը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության նպատակները և ընդգրկման շրջանակը

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը մշակվում է 2008 թվականին ընդունված «Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան:

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակը կառավարության ֆինանսական կարիքի բավարարման մշտական հնարավորության ապահովումն է՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը: Քանի որ ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակի երկրորդ հատվածը ենթադրում է նաև գնահատել այն հավանական ռիսկերը, որոնք կարող են ազդել երկարաժամկետ կտրվածքով պարտքի սպասարկման կրճատման վրա, ապա այն կարելի է վերաձևակերպել՝ որպես պարտքի պորտֆելի այնպիսի կառուցվածքի ձևավորում, որը, հաշվի առնելով ֆինանսական ռիսկերը, նվազագույնի է հասցնում կառավարության կողմից փոխառություններ ներգրավելու ծախսերը:

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանվել են նաև պետական պարտքի ներգրավման այնպիսի նպատակներ, ինչպիսիք են պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը և ընթացիկ իրացվելիության ապահովումը, ներքին պետական պարտքի շուկայի պահպանումը և զարգացումը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունն ընդգրկում է միայն ՀՀ կառավարության պարտքը (ներառյալ ՀՀ կառավարության կողմից տրամադրված երաշխիքները), և կատարված վերլուծությունները չեն ներառում ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը: Վերջինս ստանձնվում է ՀՀ կենտրոնական բանկի անունից և կողմից: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Կենտրոնական բանկի պարտքի կառավարման նպատակները սահմանվում են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում 2020 թվականի տարեսկզբից արձանագրված զարգացումները

2020 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 63.5%, որն ավել է ծրագրային ցուցանիշից 4.9 տոկոսային կետով: Այն հատել է հարկաբյուջետային կանոններով սահմանված 60% սահմանային շեմը՝ հանգեցնելով հարկաբյուջետային կանոններով նախատեսված ամենախիստ պահանջների կիրառման:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման արդյունքում 2020-2022 թվականների ռազմավարական ծրագրով սահմանված բոլոր ուղենշային ցուցանիշները գտնվել են նախանշված միջակայքերում.

	Ուղենիշ	31.12.2020 փաստացի
Վերաֆինանսավորման ռիսկ		
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի	8.8 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%	11.5 %
Տոկոսադրույքի ռիսկ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	80.4 %
Փոխարժեքի ռիսկ		
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%	25.5 %
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%	24.4 %

2020 թվականի դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների) կազմել է 300.5 մլրդ դրամ կամ փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման 84.7%-ը, իսկ արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին՝ 54.1 մլրդ դրամ կամ փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման 15.3%-ը: 2020 թվականի դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների) հաստատված բյուջեով ծրագրված է եղել իրականացնել 145.0 մլրդ դրամի չափով, սակայն տարվա ընթացքում վերանայված ծրագրի շրջանակում փաստացի ցուցանիշը գերազանցել է սկզբնապես հաստատված ծրագրային մակարդակը ավելի քան երկու անգամ՝ պայմանավորված համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքով առաջացած ֆինանսական կարիքի բավարարման անհրաժեշտությամբ:

2020 թվականի ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 7.74%՝ նախորդ տարվա (8.97%) համեմատությամբ նվազելով 1.23 տոկոսային կետով:

2021 թվականի տարեսկզբին Հայաստանի Հանրապետությունը միջազգային կապիտալի շուկայում հաջողությամբ տեղաբաշխել է 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով, 10 տարի մարման ժամկետով և 3.875% եկամտաբերությամբ եվրապարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը ցածր է 2019 թվականին (4.2%) և 2015 թվականին (7.5%) թողարկված 10 տարի մարման ժամկետով եվրապարտատոմսերի եկամտաբերություններից: Նոր թողարկված եվրապարտատոմսերի արժեկտրոնի եկամտաբերությունը կազմել է 3.6%:

2020 թվականի սեպտեմբերի 30-ին մարվել է 2013 թվականի սեպտեմբերի 30-ին թողարկված և շրջանառության մեջ եղած 97.7 մլն ԱՄՆ դոլար ծավալով արտարժութային պետական պարտատոմսերը:

Զարգացման միջազգային ընկերակցությունը (ԶՄԸ՝ Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնող կառույց) իր անդամ-պետություններին վարկեր տրամադրելիս հաշվի է առնում և վարկային համաձայնագրերով էլ ամրագրում է, որ տրամադրված արտոնյալ վարկերի պայմանները կարող են վերանայվել՝ տվյալ երկրի մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամտի բարելավման դեպքում: Համաշխարհային բանկը, 2013 թվականին ուսումնասիրելով ՀՀ տնտեսական վիճակը, ինչպես նաև հաշվի առնելով, որ Հայաստանը վարկունակ է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վարկերից ֆինանսավորման համար ու 2015 թվականից այլևս ենթակա չի լինելու ԶՄԸ ռեսուրսներից վարկավորման, 2014 թվականի հուլիսի 1-ից իր կողմից տրամադրված վարկերի մեծամասնության գծով, ի լրումն գործող տոկոսադրույքի, սահմանել է լրացուցիչ տոկոսադրույք՝ տարեկան 1.7%-ի չափով: 2020 թվականի հունիսի 4-ին Համաշխարհային բանկը, հաշվի առնելով COVID-19 համավարակի հետևանքով Հայաստանում տնտեսական իրավիճակի հնարավոր վատթարացումը և հայկական կողմի խնդրանքը, տեղեկացրել է, որ ԶՄԸ-ի կողմից Հայաստանին տրամադրված վարկերից շատերի գծով գործող հավելյալ տոկոսադրույքը (1.7% դրույքաչափով) չի կիրառվելու Համաշխարհային բանկի 2021 թվականի ֆինանսական տարվա (2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը) ընթացքում, որը 2021 թվականի հունիսի 29-ին երկարացվել է ևս մեկ տարով:

ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի փետրվարի 7-ի թիվ 30-Ա հրամանով հաստատվել է «ՀՀ պետական պարտքի կառավարման կատարողականի բարելավման միջոցառումների ծրագիրը», որով նախատեսվում է կանոնակարգել պարտքի կառավարման առանձին գործառույթներ, ինչպես նաև բարձրացնել պարտքի կառավարման հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: 2020 թվականի ընթացքում արդեն իսկ իրականացվել են վերը նշված ծրագրով նախատեսված միջոցառումների մեծ մասը:

2020 թվականի ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի գծով իրականացվել են հետևյալ գործառնությունները.

2020	Տեղաբաշխված ծավալը	Տեղաբաշխումից մուտքը	Մարման և հետգնման ծավալը	Վճարված տոկոսագումարը
Պետական գանձա-պետական պարտատոմսեր, մլրդ դրամ	390.0	411.3	110.9	86.8

2020 թվականին արտաքին վարկերի գծով կատարված գործառնությունները.

2020	Մասհանման ծավալը	Մարման ծավալը	Վճարված տոկոսագումարը
Արտաքին վարկեր, մլն ԱՄՆ դոլար	416.1	214.0	101.6
Արտաքին վարկեր, մլրդ դրամ	203.8	103.1	48.6

2020 թվականի ընթացքում արտարժութային պետական պարտատոմսերի գծով իրականացված գործառնությունները.

2020	Թողարկման ծավալը	Տեղաբաշխումից մուտքը	Մարման և հետգնման ծավալը	Վճարված տոկոսագումարը
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլն ԱՄՆ դոլար	-	-	97.7	61.5
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլրդ դրամ	-	-	46.5	29.2

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ու ռիսկերի նկարագիրը

2020 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության ծախսերի և ռիսկերի ցուցանիշներն ունեցել են հետևյալ տեսքը.

Աղյուսակ 1. *ՀՀ կառավարության պարտքի ծախսերի և ռիսկերի ցուցանիշները 31.12.2020 թվականի դրությամբ*

		Արտարժութային պարտք	Դրամային պարտք	Ընդամենը
ՀՀ կառավարության պարտքի ծավալը (մլրդ դրամ)		2,965.1	958.8	3,923.9
ՀՀ կառավարության պարտքի ծավալը (մլն ԱՄՆ դոլար)		5,673.8	1,834.8	7,508.5
ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ, (%)		48.0	15.5	63.5
Ծախսի ցուցանիշներ	Տոկոսավճար/ՀՆԱ, (%)	1.3	1.4	2.7
	Միջին կշռված տոկոսադրույքը (%)	2.3	10.4	4.3
Վերաֆինանսավորման ռիսկ	Մինչև մարում միջին ժամկետը (տարի)	8.1	10.8	8.8
	Մեկ տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	4.0	11.5	5.8
Տոկոսադրույքի ռիսկ	Մինչև վերաֆիքսում միջին ժամկետը (տարի)	5.9	10.8	7.1
	Առաջիկա տարում վերաֆիքսվող պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	30.3	11.5	25.7
	ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	74.1	100.0	80.4
Փոխարժեքի ռիսկ	Արտարժութային պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	-	-	75.6
	Արտարժութային կարճաժամկետ պարտք (մարումներ)/միջազգային պահուստներ, (%)	-	-	8.7

Կառավարության պարտքի ծախսերը բնութագրելու համար կիրառվել են հետևյալ ցուցանիշները՝ պարտքի պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը, տոկոսավճարի կշիռը պետական բյուջեի եկամուտների մեջ և տոկոսավճարի կշիռը ՀՆԱ-ի մեջ:

2020 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 4.3%, ընդ որում՝ դրամային պարտքի համար այն կազմել է 10.4%, իսկ արտարժութային պարտքի համար՝ 2.3%:

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի միջին տոկոսադրույքը, որը հաշվարկվում է որպես 2020 թվականի ընթացքում վճարված ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճարի հարաբերություն նախորդ տարվա վերջի դրությամբ պարտքի մնացորդին, կազմել է 5.0%՝ 2019 թվականի 5.1%-ի դիմաց: Ըստ ռեզիդենտության տարանջատման դեպքում ՀՀ կառավարության արտաքին պարտքի միջին տոկոսադրույքը 2020 թվականի համար կազմել է 3.0%՝ 2019 թվականի 3.5%-ի դիմաց, իսկ ներքին պարտքի միջին տոկոսադրույքը՝ 12.1%՝ նախորդ տարվա 11.0%-ի դիմաց: Արտաքին վարկերի տոկոսադրույքներն ունեն աճման միտում, որովհետև միջին եկամուտ ունեցող երկրների շարքին դասվելու արդյունքում Հայաստանին այլևս հասանելի չեն միջազգային կառույցների կողմից տրամադրվող արտոնյալության բարձր աստիճան ունեցող վարկերը: Ավելին, Համաշխարհային բանկի ու Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվել է նախկինում տրամադրված արտոնյալ վարկերի տոկոսադրույքների վերանայում՝ բարձրացման ուղղությամբ: Ինչ վերաբերում է ներքին շուկայի միջին եկամտաբերությանը, ապա 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՊԳՊ-երի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10.4%, 2019 թվականի տարեվերջի 11.8% տոկոսի դիմաց:

Գծապատկեր 1. ՊԳՊ-երի եկամտաբերության դինամիկան 2018-2020 թվականներին



Տարվա արդյունքներով հաջողվել է միջին կշռված եկամտաբերությունը նվազեցնել 1.4 տոկոսային կետով, որին հիմնականում նպաստել են տնտեսության իրական հատվածում անորոշությունների աճի պայմաններում ֆինանսական կազմակերպությունների՝ նվազ ռիսկային ակտիվների նկատմամբ պահանջարկի աճը, ՀՀ ԿԲ-ի կողմից տարվա մեծ մասում դրամավարկային պայմանների շարունակական մեղմացումը, ինչպես նաև 2020 թվականի ընթացքում բարձր եկամտաբերությամբ ՊԳՊ-երի հետգնումն ու մարումը:

ՀՀ կառավարությունը 2020 թվականի ընթացքում պարտքի գծով վճարել է 164.7 մլրդ դրամ տոկոսավճար, որը կազմել է պետական բյուջեի եկամուտների 10.6%-ը, պետական բյուջեի ծախսերի 8.7%-ը և ՀՆԱ-ի 2.7%-ը: Այս ցուցանիշներն արտահայտում են ՀՀ կառավարության պարտքի ծախսերի չափավոր մակարդակ:

ՀՀ կառավարության պարտքի արդյունավետ կառավարման խնդրի լուծման տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի ռիսկերի կառավարումը:

Փոխարժեքի ռիսկ

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելում շուկայական ռիսկերից ամենաէականը փոխարժեքի ռիսկն է: Փոխարժեքի ռիսկը հիմնականում չափվում է հետևյալ երկու ցուցանիշներով՝ արտարժութային պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ և արտարժութային կարճաժամկետ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ:

ՀՀ կառավարության պարտքի ներկայիս պորտֆելը կրում է փոխարժեքի մեծ ռիսկ, քանի որ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքի գերակշիռ մասը՝ 75.6%-ը ներգրավված է արտարժույթով (նախորդ տարվա համեմատ նվազել է 3.65 տոկոսային կետով):

Գծապատկեր 2. ՀՀ կառավարության արտարժութային և դրամային պարտքերի հարաբերակցությունը 2019-2020 թվականներին (%)



ՀՀ կառավարության արտարժույթով ներգրավված պարտքի պորտֆելի արտարժութային կառուցվածքը ներկայացված է ստորև.

Գծապատկեր 3. ՀՀ կառավարության արտարժութային պարտքի պորտֆելի կառուցվածքը 2020 թվականի տարեվերջին



Աջ գծապատկերը ցույց է տալիս արտարժութային պարտքի պորտֆելի կառուցվածքը՝ SDR-ի համապատասխան արտարժույթների կշիռներով բաշխմամբ:

Արտարժութային կարճաժամկետ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ կազմել է 8.7%, ինչը նշանակում է, որ արտարժութային պարտքի մարումների իրականացման համար առկա է արտարժութային ակտիվների բավարար ծավալ:

Արտարժութային պարտքի մեծ կշիռը պարտքի պորտֆելում երկկողմ և բազմակողմ արտաքին վարկատուների կողմից տրամադրված փոխառությունների գերակայության, ինչպես նաև 1.0 մլրդ ԱՄՆ դոլար ծավալով շրջանառության մեջ գտնվող եվրապարտատոմսերի երկու թողարկումների առկայության հետևանք է: 2020 թվականին արտարժութային կարճաժամկետ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ ցուցանիշը նվազել է նախորդ տարվա նկատմամբ 1.8 տոկոսային կետով և կազմել է 8.7%:

Վերաֆինանսավորման ռիսկ

Կառավարության պարտքի պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկը գնահատվում է երեք ցուցանիշներով՝ մինչև մարում միջին ժամկետը, մեկ տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը և կառավարության պարտքի պորտֆելի մարման գրաֆիկը:

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8.8 տարի: Ընդ որում, ՀՀ կառավարության արտաքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը կազմել է 8.1 տարի՝ նախորդ ժամանակահատվածի 8.9 տարվա դիմաց, իսկ ներքին պարտքինը՝ 10.6 տարի՝ նախորդ ժամանակահատվածի 9.8 տարվա

դիմաց: ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկի տեսակետից այս երկու ցուցանիշներն էլ գտնվում են բարենպաստ միջակայքում:

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առաջիկա տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը կազմել է ընդամենը 5.8%: Նախորդ տարվա նկատմամբ այն նվազել է 1.2 տոկոսային կետով, որը հիմնականում պայմանավորված է 2020 թվականին իրականացված եվրապարտատոմսերի մարումով և առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի կշռի 1.1 տոկոսային կետով նվազմամբ: Ըստ ռեզիդենտության դիտարկելու դեպքում, ՀՀ կառավարության արտաքին պարտքի մեկ տարվա ընթացքում մարման կշիռը կազմել է 4.1%, իսկ ներքին պարտքի համար՝ 11.0%: Նշենք, որ ներքին պարտքի կշիռը 2019 թվականի տարեվերջին կազմել է 15.5%: ՀՀ կառավարության արտաքին և ներքին պարտքերի՝ մեկ տարվա ընթացքում մարման փոքր ծավալները հնարավոր է վերաֆինանսավորել առանց դժվարությունների, ինչը նշանակում է, որ ՀՀ կառավարության պարտքի պորտֆելը կրում է վերաֆինանսավորման ցածր ռիսկ:

Վերաֆինանսավորման ռիսկն առավել պատկերավոր է ներկայացված մարման գրաֆիկի միջոցով, որտեղ 2025 թվականի և 2029 թվականի մարման մեծ ծավալները պայմանավորված են թողարկված եվրապարտատոմսերի մարումներով, որոնք համապատասխանաբար կազմում են տվյալ տարում մարվող պարտքի 47.9%-ը և 46.6%-ը:

Գծապատկեր 4. Կառավարության պարտքի մարումների գրաֆիկն ըստ գործիքակազմի 31.12.2020 թվականի դրությամբ (մլրդ դրամ)



Կառավարության պարտքի մարումների գրաֆիկն ըստ ներքին և արտաքին պարտքերի տարանջատման, այսինքն ըստ ռեզիդենտության, ունի հետևյալ տեսքը.

Գծապատկեր 5. Կառավարության պարտքի մարումների գրաֆիկը 31.12.2020 թվականի դրությամբ



2020 թվականի տարեվերջին ձևավորված կառավարության արտաքին պարտքի մարումներն սփռված են մինչև 2054 թվականը, իսկ ներքին պարտքինը՝ մինչև 2050 թվականը:

Տոկոսադրույքի ռիսկ

Կառավարության պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկը գնահատվում է հիմնականում երեք ցուցանիշներով՝ ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ, առաջիկա տարում վերաֆիքսվող պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ և մինչև վերաֆիքսում միջին ժամկետը:

ՀՀ կառավարության պարտքի 80.4%-ը ֆիքսված տոկոսադրույքով է, ընդ որում արտաքին պարտքի 73.7%-ն է ֆիքսված տոկոսադրույքով, իսկ ներքին պարտքն՝ ամբողջությամբ: Այս պարագայում լողացող տոկոսադրույքով պարտքի տոկոսադրույքների աճը չի կարող հանգեցնել ծախսերի նշանակալի աճի:

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության պարտքի 25.7%-ը ենթակա է վերաֆիքսման 2021 թվականին, ուստի այս ցուցանիշի գծով տոկոսադրույքի ռիսկը չափավոր է:

Մինչև վերաֆիքսում միջին ժամկետի ցուցանիշը 2020 թվականի վերջին կազմել է 7.1 տարի, որը կարելի է գնահատել որպես պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի ցածր մակարդակ: Այս ցուցանիշն ավելի փոքր է, քան մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը, քանի որ պարտքի 19.6%-ը լողացող տոկոսադրույքով է, որը ևս ենթակա է վերաֆիքսման 2021 թվականի ընթացքում:

Արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող վարկային ծրագրերի գծով վերջին տարիներին արձանագրված կատարողականի դանդաղ տեմպերի և դրա հետևանքով վարկային միջոցների մասհանումների վերջնաժամկետների անընդհատ երկարաձգումների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ որ ավարտվում են մի շարք վարկերի արտոնյալ ժամկետները, սակայն վարկային

միջոցներն ամբողջությամբ չեն մասհանվել, իսկ որոշ դեպքերում՝ մասհանումներ գրեթե չեն կատարվել: Նման վարքագծի պահպանումը կարող է նպաստել պարտքի վերաֆինանսավորման և տոկոսադրույքի ռիսկերի ավելացմանը, քանի որ մյուս հավասար պայմաններում, եթե այդ վարկերի գծով մայր գումարի մարման վերջնաժամկետները մնան անփոփոխ և մասհանումները կատարվեն ավելի արագ տեմպերով, ապա զգալիորեն կկրճատվեն արտաքին վարկերի գծով մինչև մարումը և տոկոսադրույքի վերաֆիքսումը մնացած ժամկետները, ինչպես նաև կավելանան մեկ տարվա ընթացքում մարվող և վերաֆիքսվող պարտքի տեսակարար կշիռները:

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պարտքի առկա պորտֆելը ամենաշատը կրում է փոխարժեքի ռիսկի ազդեցությունը, ինչը հաստատվում է նաև ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի սույն ռազմավարության շրջանակներում կատարված զգայունության վերլուծություններով:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024 թվականների ռազմավարությունը

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Միջնաժամկետում հարկաբյուջետային քաղաքականությունը միտված կլինի կառավարության պարտքի բեռի նվազեցմանը և երկարաժամկետ տնտեսական աճի խթանմանը: Տնտեսության վերականգնմանը զուգահեռ նախատեսվում է սահուն կերպով նվազեցնել կառավարության պարտքի բեռը՝ ապահովելով հարկաբյուջետային կանոններով սահմանված՝ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության 60%-ից նվազեցնելու թիրախի ապահովումը: Հարկաբյուջետային կոնսոլիդացիային զուգահեռ վերադարձ կկատարվի հարկաբյուջետային կանոններով սահմանված պետական ֆինանսների «ոսկե կանոնների» տրամաբանությանը՝ կայուն հիմքեր ստեղծելով երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար և ապահովելով բյուջեի ծախսերի կառուցվածքի բարելավումը:

Մակրոտնտեսական կանխատեսումներն ու ենթադրությունները հակիրճ ամփոփված են հետևյալ կետերում.

- Ներկայումս աշխարհը դեռևս շարունակում է կրել համավարակի հետևանքները, սակայն բացասական ազդեցությունները աստիճանաբար թուլանում են: Հաշվի առնելով ընթացիկ զարգացումները և տարվա հաջորդ ամիսներին տնտեսական ակտիվության աճի ամրապնդման սպասումները՝ ԱՄՀ-ը 2021 թվականի համաշխարհային տնտեսական աճի կանխատեսումը վերանայել է դեպի վերև՝ 6% շրջանակներում: ԱՄՀ-ի ապրիլյան կանխատեսումներով ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունների համար գնահատվել է իրենց պոտենցիալ աճերից բարձր տնտեսական աճեր՝ նախանշելով վերականգնման գործընթացը, որը էական դրական ազդեցություն կունենա ՀՀ տնտեսական ակտիվության վրա:
- Համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունների մեղմմանն ու տնտեսության վերականգնմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացված և իրականացվող հարկաբյուջետային միջոցառումների, ինչպես նաև Համավարակի համաշխարհային ճգնաժամի աստիճանական հաղթահարման պայմաններում՝ բացասական ազդեցությունների աստիճանական չեզոքացման հետ

մեկտեղ, տնտեսական աճը 2021 թվականին կվերականգնվի, իսկ միջնաժամկետ հատվածում կմոտենա իր ներուժային մակարդակին: Այս պայմաններում, 2021 թվականին կանխատեսվում է 6.0%, իսկ միջնաժամկետում՝ միջինում 4.3% տնտեսական աճ: Սակայն, ՀՀ կառավարությունը մշակել է նաև թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենար, որով 2022-2026 թվականների համար նախանշում է միջինում 7% տնտեսական աճ՝ զուգորդվող տնտեսության կայուն առաջընթացով և մրցունակության բարձրացմամբ[33]:

- Տնտեսական ակտիվության և ներքին ու արտաքին պահանջարկների աստիճանական վերականգնման պայմաններում 2021 թվականին տեղի կունենա արտահանման և ներմուծման դոլարային ծավալների աճ: Հիմնականում դրամական փոխանցումների արագ վերականգնմամբ պայմանավորված 2021 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կբարելավվի՝ մոտենալով ՀՆԱ-ի 2.1% մակարդակի: Միջնաժամկետ հորիզոնում ընթացիկ հաշվի պակասուրդը կխորանա՝ ձգտելով իր հավասարակշիռ մակարդակին:
- 2021 թվականին ՀՀ Կառավարությունը կիրականացնի սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ նպատակ ունենալով չխաթարել տնտեսության վերականգնումը և ապահովել պարտքի բեռի նվազումը, իսկ միջնաժամկետում, տնտեսության վերականգնմանը զուգահեռ, հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի պարտքի մակարդակի նվազեցմանը և կայունության պահպանմանը, ինչպես նաև երկարաժամկետ տնտեսական աճի խթանմանը՝ շեշտադրվելով պետական ներդրումների մասնաբաժնի մեծացումը և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացումը:
- Կարճաժամկետ հատվածում ՀՀ ԿԲ-ը կշարունակի իրականացնել գնաճային սպասումների արագացման ռիսկերի չեզոքացմանն ուղղված դրամավարկային քաղաքականություն՝ միևնույն ժամանակ ապահովելով հնարավորին նպաստավոր պայմաններ ամբողջական պահանջարկի վերականգնման համար, իսկ միջնաժամկետ հատվածում, գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու նպատակով, ցանկացած ռիսկերի դրսևորման պարագայում պատրաստ է համապատասխանորեն արձագանքել:
- Համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը մեծապես կախված է COVID-19 համավարակի հաղթահարմանն ուղղված առողջապահական միջոցառումներից, աջակցության փաթեթներից և պատվաստումների ծրագրերից: Այս պայմաններում, ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումներում ռիսկերը գնահատվում են հավասարակշռված:

[33] Թիրախային տնտեսական աճի մակրոտնտեսական սցենարի նկարագրությանը, դրա ապահովման պայմաններին և հարկաբյուջետային սցենարին կարելի է ծանոթանալ 2022-2024 թվականների ՄԺԾԾ փաստաթղթի «1.3.1. Թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենար» ենթաբաժնում:

2022-2024 թվականների ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմքում ընկած հիմնական ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակում:

Աղյուսակ 2. *ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմքում ընկած հիմնական ցուցանիշները 2020-2024 թվականներին*

	2020 փաստ.	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
Իրական ՀՆԱ աճ (%)	-7.4	6.0	5.2	3.7	4.0
ՍԳԻ (ժամկետի միջինը, %)	1.2	5.3	4.1	4.0	4.0
ՀՀ կառավարության գործառնությունները (% ՀՆԱ-ի նկատմամբ)					
Եկամուտներ և դրամաշնորհներ	25.2	23.5	24.0	24.1	24.3
Ծախսեր	30.6	28.1	26.4	26.1	26.2
Պակասուրդ (-)	-5.4	-4.6	-2.4	-2.1	-1.9
ՀՀ կառավարության պարտք	63.5	62.3	60.5	58.7	56.8
Արտաքին հատված					
Ապրանքների և ծառայությունների արտահանում (մլն ԱՄՆ դոլար)	3,762.6	4,446.8	5,112.6	5,727.1	6,322.7
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	5,018.7	5,835.7	6,722.0	7,467.8	8,155.8
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (% ՀՆԱ-ի նկատմամբ)	-3.8	-2.1	-2.9	-3.5	-3.8
ՀՀ կառավարության պարտք (մլրդ դրամ)	3,923.9	4,286.3	4,579.8	4,794.8	5,018.3
Անվանական ՀՆԱ (միլիարդ դրամ)	6,181.7	6,880.2	7,570.8	8,171.1	8,835.4

ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը միջնաժամկետ հատվածում աստիճանաբար նվազում է, իսկ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կգտնվի «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված 60 տոկոս սահմանային շեմից ներքև: Քանի որ 2023-2024 թվականներին յուրաքանչյուր տարվա վերջին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը գերազանցելու է 50%-ը, ուստի, համաձայն «Պետական

պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետի, կիրառվելու են օրենսդրությամբ սահմանված համապատասխան հարկաբյուջետային կանոնները:

Քանի որ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական եռամյա ծրագիրը ներառվում է պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմում, ապա ՀՀ կառավարության պարտքի ռազմավարության հիմքում ընկած են 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական մակրոտնտեսական սցենարի հետ համահունչ մակրոտնտեսական կանխատեսումներ, որոնց ռիսկերը մակրոտնտեսական կայունության տեսակետից կառավարելի են: Մակրոտնտեսական ցուցանիշներն ու դրանց հետ կապված ռիսկերի վերլուծությունները մանրամասն ներկայացված են 2022-2024 թվականների ՄԺԾԾ-ի «Մակրոտնտեսական զարգացումներ և կանխատեսումներ» հատվածում:

Մակրոտնտեսական իրատեսական կանխատեսումների մուտքագրումը պարտքի ծախսերի և ռիսկերի վերլուծության ժամանակ առանցքային նշանակություն ունի, քանի որ դրանց շեղումները կարող են էականորեն փոխել ռիսկերի ցուցանիշների մակարդակը և ուղղվածությունը: Այլ կերպ ասած, ինչպես շուկայական փոփոխականների, այնպես էլ մակրոտնտեսական ցուցանիշների տատանումները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ ՀՀ կառավարության պարտքի ծախսերի և ռիսկերի ցուցանիշների վրա:

Ֆինանսավորման կարիքի կանխատեսումը հիմնական մակրոտնտեսական սցենարի ներքո հետևյալն է.

Աղյուսակ 3. *Ֆինանսավորման կարիք (մլրդ դրամ)*

	2020 փաստ	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
Պետական բյուջեի առաջնային պակասուրդ (դրականը՝ հավելուրդ)	(169.3)	(124.3)	34.0	74.7	104.3
ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար	164.7	194.5	215.7	243.5	268.1
ՀՀ կառավարության պարտքի մարում	260.5	272.4	312.8	373.4	701.2
Ֆինանսավորման կարիք	594.5	591.2	494.5	542.2	865.0
Ֆինանսավորման կարիք/ՀՆԱ, %	9.6	8.6	6.5	6.6	9.8

ՀՀ կառավարության պարտքի աճին զուգընթաց միջնաժամկետ հատվածում ավելանում են նաև տոկոսավճարներն ու մարումները: 2022–2024 թվականների պետական բյուջեի առաջնային հավելուրդները նվազեցնում են ֆինանսավորման կարիքը: Ֆինանսավորման կարիքի հարաբերակցությունը ՀՆԱ-ում նախորդ տարվա նկատմամբ 2022 թվականին նվազում է 2.1 տոկոսային կետով, իսկ 2023 և 2024 թվականներին աճում է համապատասխանաբար 0.1 և 3.2

տոկոսային կետով: 2024 թվականին ֆինանսավորման կարիքի կանխատեսված կտրուկ աճը պայմանավորված է 2025 թվականին մարվող 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով եվրապարտատոմսերի 2024 թվականին նախատեսված հետգնմամբ:

2022-2024 թվականների ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության իրագործման հիմքում ընկած են վերը նշված մակրոտնտեսական ենթադրությունները: Սակայն, արտաքին տնտեսական միջավայրից բխող շոկերի ի հայտ գալը որոշակի ռիսկեր կարող է առաջացնել ռազմավարությամբ նախատեսվող նպատակադրումների ապահովման տեսակետից:

ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- Միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, շուկայի մասնակիցների կազմի ու կառուցվածքի նպատակաուղղված փոփոխության և թվաքանակի էական մեծացման պայմաններում, կաճի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու զուտ միջոցների տեսակարար կշիռը: Այն միտված կլինի նվազեցնել փոխարժեքի ռիսկը, ինչպես նաև հիմքեր կստեղծի ֆինանսական շուկայում նոր գործիքների (լողացող, ինդեքսավորվող, նպատակային և այլն) կիրառման ու շուկայի հետագա զարգացման համար: Կենսաթոշակային և ապահովագրական բարեփոխումների ընթացքով պայմանավորված՝ հնարավոր կլինի արագացնել պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու զուտ միջոցների տեսակարար կշռի մեծացման գործընթացը:
- Որպես ներքին պետական պարտքի կառավարման նպատակադրում՝ կշարունակվի դիտարկվել պետական գանձապետական պարտատոմսերի իրացվելիության աճը՝ մեծացնելով շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը:
- Պետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումների ծավալների ավելացման միջոցով դրանց թողարկումները կկենտրոնացվեն 6 ամիս մարման ժամկետ ունեցող պարտատոմսերի շուրջ: Կարճաժամկետ պարտատոմսերի թողարկումների կենտրոնացումը 6 ամիս մարման ժամկետ ունեցող պարտատոմսերի շուրջ կնպաստի դրամային շուկայում իրացվելիության բարձրացմանը, ինչպես նաև հնարավորություն կտա ձևավորել ուղենիշ, որը կարևոր է կապիտալի շուկայի այլ հատվածների հետագա զարգացման համար:
- Ֆինանսական շուկաներում բարենպաստ զարգացումների պայմաններում կդիտարկվի ֆինանսական միջոցների որոշակի կուտակման և բուֆերի ապահովման հնարավորությունը: Ներքին և արտաքին շուկաներում անցանկալի գործընթացների դեպքում այն թույլ կտա ՀՀ պետական բյուջեի կատարումն իրականացնել առանց ցնցումների, ինչպես նաև հարկ եղած դեպքում ճշգրտել պետական գանձապետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման չափը:
- Միջազգային լավագույն փորձին համապատասխան կվերանայվի պարտքային գործառ-նությունները կարգավորող օրենսդրությունը, մասնավորապես, կվերանայվի «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը և այն կհամապատասխանեցվի միջազգային ֆինանսական կառույցների կողմից կիրառվող նոր չափանիշներին: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի բարելավումը, որպես միջոցառում, ներառվել է նաև ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1716-Լ որոշմամբ հաստատված «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունում» և «Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագրում»:
- Պարտքի արդյունավետ կառավարման կարևորագույն գործոններից է թափանցիկության ու հասարակության հետ մշտական հաղորդակցության ապահովումը: Այդ նպատակով կառավարությունը կշարունակի ներդրողների ու հանրության հետ բաց ու հրապարակային աշխատանքները և պարտքի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը:

- 2025 թվականին մարվող եվրապարտատոմսերը վերաֆինանսավորելու նպատակով 2024 թվականին նախատեսվում է իրականացնել նոր եվրապարտատոմսերի թողարկում, որից ստացված միջոցները կուղղվեն 2025 թվականին մարվող եվրապարտատոմսերի հետգնմանը: Այդ գործառնությունները 2024 թվականի ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման վրա ազդեցություն չեն ունենա:
- ՀՀ ֆինանսների նախարարությունը կշարունակի պետական գանձապետական պարտատոմ-սերի հետգնումների, փոխանակումների իրականացումը՝ նպատակ ունենալով հարթեցնել պարտքի մարման գրաֆիկը և նվազեցնել վերաֆինանսավորման ռիսկը, ինչպես նաև բարձ-րացնել տեղաբաշխվող պարտատոմսերի իրացվելիությունը և նպաստել երկրորդային շուկայի զարգացմանը:
- Կներդրվի պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդների կազմակերպման էլեկտրոնային համակարգ:
- Կարևորելով պետական գանձապետական պարտատոմսերի մանրածախ շուկայի զարգացումը՝ քայլեր կձեռնարկվեն խնայողական պարտատոմսերի ներդրողների շրջանակը մեծացնելու և ժամկետայնությունը երկարացնելու ուղղությամբ: Այս առումով, կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման ուղղությամբ քայլերին զուգահեռ, կիրականացվեն հանրային իրազեկման աշխատանքներ պոտենցիալ ներդրողների շրջանում:
- Համագործակցությունն արտաքին վարկատուների հետ կշարունակվի՝ նախապատվությունը տալով վարկավորման առավել բարենպաստ պայմաններով և ազատ փոխարկելի արժույթով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը, և աստիճանաբար անցում կկատարվի շուկայական գործիքներով պակասուրդի ֆինանսավորմանը:

ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է բացահայտել և գնահատել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելին բնորոշ ռիսկերը: Այդ պատճառով ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը սահմանում է պարտքի պորտֆելի ռիսկերի ուղենշային ցուցանիշներ, որոնց նպատակն է որոշակի սահմանափակումների միջոցով պահպանել փոխարժեքի, տոկոսադրույքի և վերաֆինանսավորման ռիսկերը վերահսկելիության շրջանակներում: Ուղենշային ցուցանիշները սահմանվել են՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության պարտքի կառավարման միջավայրին բնորոշ առանձնահատկություններն ու սահմանափակումները:

Աղյուսակ 4. *ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի 2021-2024 թվականների ուղենշային ցուցանիշները*

	Ուղենիշ
Վերաֆինանսավորման ռիսկ	
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%
Տոկոսադրույքի ռիսկ	
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%
Փոխարժեքի ռիսկ	
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 25%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 25%

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական ռիսկերը կառավարելիության շրջանակներում պահելու, և հատկապես փոխարժեքի բարձր ռիսկը նվազեցնելու նպատակով, որպես ռազմավարական նպատակադրում, դիտարկվում է ներքին պետական պարտքի շուկայի զարգացումը և կառավարության պարտքի մեջ ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշռի ավելացումը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ԱՄՀ-ի կողմից հրապարակված (մայիսի 9, 2013 թվական) կապիտալի շուկա մուտք ունեցող երկրների պետական պարտքի կայունության ուղեցույցում զարգացող երկրների համար պարտքի պորտֆելի ուղենշային ցուցանիշների շարքում ոչ ռեզիդենտների նկատմամբ պետական պարտքի մասնաբաժնի բարձր ռիսկային համարվող մակարդակը 60%-ն է, որն իր հերթին տարանջատվում է վաղ նախազգուշական ստորին (15%) և վերին (45%) շեմերի: Նույն ուղեցույցում զարգացող երկրների համար պարտքի պորտֆելի ուղենշային ցուցանիշների շարքում արտարժութային պետական պարտքի մասնաբաժնի բարձր ռիսկային համարվող մակարդակը 80%-ն է, որը տարանջատվում է վաղ նախազգուշական ստորին (20%) և վերին (60%) շեմերի:

Ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է մինչև մեկ տարի մարման ժամկետով պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր, 3 և 5 տարի մարման ժամկետով միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր, 10 և 30 տարի մարման ժամկետով երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր, ինչպես նաև 6 ամիս, 1, 2 և 3 տարի մարման ժամկետով խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր տեղաբաշխելու միջոցով:

Արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է երկկողմ և բազմակողմ միջազգային վարկատուներից նպատակային վարկեր ներգրավելու միջոցով:

Ստորև ներկայացվում է ծախսերի և ռիսկի տեսակետից ընտրված ռազմավարության (Ռ1) ու այլընտրանքային երկու ռազմավարությունների արդյունքները: Որպես այլընտրանքային երկրորդ ռազմավարություն (Ռ2) է դիտարկվել ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի կրկնակի ավել ծավալներով ֆինանսավորումը՝ ընտրված ռազմավարության նկատմամբ, և որպես այլընտրանքային երրորդ ռազմավարութուն (Ռ3) է դիտարկվել ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի կրկնակի պակաս ծավալներով ֆինանսավորումը, կամ որ նույնն է՝ արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին ավելի մեծ ծավալներով դեֆիցիտի ֆինանսավորումը: Արդյունքում ստացվել է հետևյալը.

Գծապատկեր 6. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2024 թվականին



Գծապատկերը ցույց է տալիս, որ նշված երեք ռազմավարություններից Ռ2-ի ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը, որպես ծախսի ցուցանիշ, 2024 թվականին կազմում է 58.0% և այն ամենաբարձրն է: Ռ2 ռազմավարությունը ծախսի տեսակետից Ռ1 ռազմավարությունից ավելի է 1.2 տոկոսային կետով, սակայն Ռ1 ռազմավարությունը պարունակում է 0.7 տոկոսային կետ ավելի ռիսկ: 2022 թվականին կիրառված փոխարժեքի 30% շոկի դեպքում ամենամեծ ռիսկը պարունակում է Ռ3 ռազմավարությունը, որը ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի ռիսկի տեսակետից Ռ1 ռազմավարությունից ավելի է 0.08 տոկոսային կետով, իսկ Ռ2 ռազմավարությունից՝ 0.15 տոկոսային կետով: Ռ1 ռազմավարությունը միանշանակ նախընտրելի է Ռ3 ռազմավարությունից, քանի որ այն պարունակում է պակաս ծախս և ռիսկ: Ավելին, Ռ3 ռազմավարությունը ենթադրում է արտարժութային պարտքի կշռի ավելացում, հետևաբար ավելի մեծ փոխարժեքի ռիսկ, որն արդեն իսկ կառավարության առկա պարտքի գծով ամենաէական ռիսկն է: Ռազմավարությունների ընտրությունը կատարվում է ծախսերի և ռիսկերի ցուցանիշների մի ամբողջ համակարգի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում:

Ավելացնենք, որ փոխարժեքի 30% արժեզրկման շոկը Համաշխարհային բանկի և ԱՄՀ կողմից մշակված պարտքի միջնաժամկետ ռազմավարության վերլուծական գործիքում կիրառվող ներքին արժույթի արժեզրկման տիպային առավելագույն շոկն է: ՀՀ դրամի արժեզրկման պատմական առավելագույն մեծությունը կազմել է 23.6%՝ 2009 թվականին (հիմք է ընդունվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի տարեվերջի դրությամբ ձևավորված փոխարժեքները):

Վերը նշված վերլուծությունը հավաստում է, որ անհրաժեշտ է զարգացնել ներքին պետական պարտքի շուկան և աստիճանաբար ավելացնել փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման մեջ ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կշիռը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը: Ուստի, համադրելով բոլոր գործոնները, նախընտրելի է համարվել Ռ1 ռազմավարությունը (հիմնական սցենարը):

Ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը նախատեսելիս հաշվի են առնվել տնտեսությունում մակրոմիջավայրի բարելավման միտումները, իրացվելիության առկա մակարդակն ու պետական գանձապետական պարտատոմսերի նկատմամբ ձևավորված կայուն պահանջարկը:

2021-2024 թվականների համար պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին նախատեսվում է իրականացնել հետևյալ կերպ.

Աղյուսակ 5. *Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին 2021-2024 թվականներին (մլրդ դրամ)*

	2021 պետբյուջե ի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին	478.0	552.7	173.4	199.2	208.1
որից՝					
Ներքին փոխառու զուտ միջոցներ (առանց մուրհակների)	209.9	203.5	220.0	240.0	260.0
Արտաքին փոխառու զուտ միջոցներ	268.1	349.2	(46.6)	(40.8)	(51.9)

Գծապատկեր 7. Ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը 2019-2024 թվականներին[34]



ՀՀ կառավարության արտաքին պարտքն աստիճանաբար ներքինով փոխարինելու դեպքում պարտքի սպասարկման ծախսերի էական աճ չի սպասվում: Ավելին, հաշվի առնելով այն, որ արտաքին աղբյուրներից ստացվող վարկային միջոցների արտոնյալությունը գնալով նվազում է, ինչպես նաև ներքին պարտքի կազմում արդեն իսկ առկա են մինչև 30 տարի մարման ժամկետով պարտատոմսեր, ապա ներքին պարտքի կշռի աստիճանական ավելացումը դրական է անդրադառնում նաև վերաֆինանսավորման ռիսկի ցուցանիշի վրա:

[34] Կանխատեսվում է, որ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը 2022-2024 թվականներին ոչ միայն ամբողջությամբ կիրականացվի ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին, այլ նաև ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին կֆինանսավորվեն արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման բացասական հոսքերը:

ԸՆՏՐՎԱԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ և ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կանխատեսված մակրոտնտեսական միջավայրի՝ 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական մակրոտնտեսական սցենարի պայմաններում ՀՀ կառավարության պարտքի ծախսի ցուցանիշներն էապես չեն փոխվի կանխատեսվող ժամանակահատվածում:

Աղյուսակ 6. *ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ցուցանիշների կանխատեսումները*

	2021 պետբյուջեի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի միջին տոկոսադրույքը (%)	5.0	5.0	5.0	5.3	5.6
Տոկոսավճար/պետական բյուջեի եկամուտներ(%)	12.9	12.0	11.9	12.4	12.5
Տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր (%)	10.5	10.0	10.8	11.4	11.6
Տոկոսավճար/ՀՆԱ (%)	3.0	2.8	2.8	3.0	3.0

Ընդհանուր առմամբ, կանխատեսվում է, որ միջնաժամկետ հատվածում՝ հիմնական մակրոտնտեսական սցենարի դեպքում տեղի կունենա ՀՆԱ-ի անվանական ծավալի առաջանցիկ աճ պարտքի ծավալի աճի նկատմամբ՝ հանգեցնելով ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազմանը, որը 2024 թվականի տարեվերջին կանխատեսվում է 56.8%: ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը կանխատեսվող ժամանակահատվածի վերջում կկազմի 5.6%: ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/պետական բյուջեի եկամուտներ, ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր և ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/ՀՆԱ ցուցանիշները միջնաժամկետ հատվածում աճում են՝ ժամանակահատվածի վերջում կազմելով համապատասխանաբար 12.5%, 11.6% և 3.0%:

Միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճարների միջին տարեկան աճն առաջանցիկ է պետական բյուջեի եկամուտների, պետական բյուջեի ծախսերի և անվանական ՀՆԱ-ի միջին տարեկան աճերի նկատմամբ: Միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճարների միջին աճի տեմպը կանխատեսվում է 11.3%, որը միջինում կգերազանցի պետական բյուջեի եկամուտների աճի տեմպին 1.3 տոկոսային կետով, պետական բյուջեի ծախսերի աճի տեմպին՝ 5.2 տոկոսային կետով և անվանական ՀՆԱ-ի աճի տեմպին՝ 2.6 տոկոսային կետով: Նշենք նաև, որ ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճարների տարեկան աճն արագանում է և 2023 թվականին կազմում է 12.9%՝ նախորդ տարվա 10.9%-ի դիմաց, սակայն կրկին դանդաղում է միջնաժամկետ հատվածի վերջում և 2024 թվականին կազմում է 10.1%:

Ռիսկերի կառավարման տեսակետից կարևորվել են փոխարժեքի, վերաֆինանսավորման, տոկոսադրույքի ու գործառնական ռիսկերը:

Փոխարժեքի ռիսկ

Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ ցուցանիշի մակարդակը միջնաժամկետ հատվածում կգտնվի սահմանված ուղենշային տիրույթում՝ ժամանակահատվածի վերջում հասնելով 38.5%-ի:

Աղյուսակ 7. *ՀՀ կառավարության ներքին պարտքի և ՀՀ դրամով ներգրավված պարտքի տեսակարար կշիռներն ընդամենը պարտքում*

	2021 պետբյուջեի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
Ներքին պարտք/Ընդամենը պարտք (%)	28.1	28.3	31.3	34.9	38.5
ՀՀ դրամով ներգրավված պարտք/Ընդամենը պարտք (%)	27.1	27.1	30.2	33.8	37.5

2024 թվականի վերջին արտարժութային պարտքի տեսակարար կշիռը միջնաժամկետ հատվածում նվազում է՝ կազմելով 62.5%, սակայն ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկը առաջիկա տարիներին դեռևս կմնա որպես հիմնական ռիսկ:

Աղյուսակ 8. *ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2021-2024 թվականներին տարեվերջի դրությամբ (տոկոս)*

	2021 պետբյուջեի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
USD	42.9	57.7	58.0	59.2	61.7
SDR	34.4	13.0	14.0	15.0	16.5
EUR	18.0	25.6	24.5	22.5	18.7
JPY	4.2	3.2	3.1	3.0	2.8
AED	0.1	0.1	0.0	0.0	0.0
CNY	0.4	0.3	0.3	0.3	0.3

ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքում ծավալով երկրորդը SDR-ով արտահայտված պարտքն է: Եթե SDR-ը, որը կազմված է հինգ արժույթներից, տարանջատում ենք այդ արժույթների կշիռներին համապատասխան՝ USD – 41.73%, EUR – 30.93%, GBP – 8.09%, JPY – 8.33% և CNY – 10.92%, ապա ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքն ստանում է հետևյալ տեսքը՝

Աղյուսակ 9. *ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2021-2024 թվականների տարեվերջի դրությամբ՝ SDR-ի տարանջատմամբ (տոկոս)*

	2021 պետբյուջե ի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
USD	57.3	63.2	63.8	65.4	68.6
EUR	28.6	29.7	28.9	27.2	23.8
GBP	2.8	1.1	1.1	1.2	1.3
JPY	7.0	4.3	4.3	4.2	4.2
AED	0.1	0.1	0.0	0.0	0.0
CNY	4.2	1.8	1.9	1.9	2.1

Փոխարժեքի ռիսկի նվազման և արդյունավետ կառավարման նպատակով նոր վարկերի պայմանները քննարկելիս, հնարավորության դեպքում, կնվազեցվի մեկ կամ մի քանի արժույթներից կախվածությունը: Միաժամանակ, փոխարժեքի շուկայի զարգացմանը զուգահեռ կօգտագործվեն հեջավորման տարբեր մոտեցումներ (օրինակ՝ արտարժութային սվոփներ):

ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքում կանխատեսվող ժամանակահատվածի վերջում 2020 թվականին փաստացի ցուցանիշի նկատմամբ հիմնական արժույթներից SDR–ի և ճապոնական իենի կշիռները նվազում են համապատասխանաբար 14.1 և 1.2 տոկոսային կետով, իսկ ԱՄՆ դոլարի և եվրոյի նույն ցուցանիշներն աճում են համապատասխանաբար 11.0 և 4.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 8. ՀՀ կառավարության արտարժութային պարտքի առաջիկա տարվա մարումների և տոկոսավճարների կշիռը տվյալ տարվա վերջի դրությամբ արտարժութային արտաքին ակտիվներում 2021-2024 թվականներին



ՀՀ կառավարության արտարժութային պարտքի առաջիկա տարվա մարումների և տոկոսավճարների կշիռը տվյալ տարվա վերջի դրությամբ արտարժութային արտաքին ակտիվներում ցուցանիշը 2023 թվականին էապես կաճի և կկազմի 40.7%՝ պայմանավորված 2025 թվականին մարվող եվրապարտատոմսերը վերաֆինանսավորելու նպատակով 2024 թվականին նախատեսված նոր եվրապարտատոմսերի թողարկումից ստացվելիք միջոցներով 2025 թվականին մարվող եվրապարտատոմսերի հետգնմամբ: 2024 թվականին այդ նույն ցուցանիշը կտրուկ կնվազի և կկազմի 14.5%: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ կառավարության հնարավորությունը սպասարկելու արտարժութային պարտքի մարումներն ու տոկոսագումարների վճարումներն՝ արտարժութային ակտիվների բավարար ծավալի առկայության տեսանկյունից:

Վերաֆինանսավորման ռիսկ

Վերաֆինանսավորման ռիսկը կարևորվում է՝ պայմանավորված առաջիկա տարիներին ՀՀ կառավարության պարտքի մարումների ծավալներով և միջազգային ու ներքին ֆինանսական շուկաներում հնարավոր բացասական զարգացումներով: Նոր պարտքի ներգրավման ընթացքում ՀՀ կառավարությունը միջոցներ է ձեռնարկում մարումների գրաֆիկը հարթեցնելու և վերաֆինանսավորման ռիսկը մեղմելու ուղղությամբ: Վերաֆինանսավորման ռիսկի նվազեցման նպատակով կիրառվում են նաև հետգնումներ:

Աղյուսակ 10. *ՀՀ կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկի ցուցանիշները 2021-2024 թվականներին*

	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	8.4	7.8	7.5	7.7
ՀՀ կառավարության արտաքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	7.7	7.0	6.4	6.8
ՀՀ կառավարության ներքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	10.3	9.7	9.4	9.0
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%)	6.1	7.1	13.6	9.7
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը (%)	3.9	5.5	15.2	7.2
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռը (%)	11.6	10.7	10.7	13.7

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը 2024 թվականի վերջին կնվազի մինչև 7.7 տարի, սակայն վերաֆինանսավորման ռիսկը կմնա չափավոր:

Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ ցուցանիշը 2024 թվականի տարեվերջին կկազմի 9.7%, ընդ որում մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը արտաքին պարտքում կկազմի 7.2%, իսկ մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռը ներքին պարտքում՝ 13.7%:

Ստորև ներկայացվում է նաև ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումների ցուցանիշը, որն իրենից ներկայացնում է տարվա ընթացքում մարումների և տոկոսավճարների հանրագումարը:

Գծապատկեր 9. ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումները 2019-2024 թվականների ընթացքում (մլրդ դրամ)



ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումների ցուցանիշը միջնաժամկետ հատվածում աճում է՝ 2024 թվականին կազմելով 969.3 մլրդ դրամ:

Աղյուսակ 11. *ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումներն ըստ գործիքակազմի*

(մլրդ դրամ)

	2021 պետբյուջեի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումներն ըստ գործիքակազմի, որից՝	480.4	466.9	528.6	616.9	969.3
արտաքին վարկեր և փոխառություններ	172.2	163.7	171.9	226.3	281.5
տոկոսավճար	46.2	46.0	45.2	49.6	48.8
մարում	126.1	117.8	126.7	176.6	232.7
պետական գանձապետական պարտատոմսեր	271.9	266.9	314.2	348.0	385.0
տոկոսավճար	112.3	112.3	128.0	151.2	176.3

	2021 պետբյուջեի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
մարում	159.6	154.6	186.2	196.8	208.6
արտարժութային պետական պարտատոմսեր	36.3	36.3	42.5	42.7	302.8
տոկոսավճար	36.3	36.3	42.5	42.7	42.9
մարում	-	-	-	-	259.9

ՀՀ կառավարությունը պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման գործիքների (հետգնումներ, ՀՀ կենտրոնական բանկում միջոցների ավանդադրում և այլն) կիրառմամբ վերահսկում է վերաֆինանսավորման հետ կապված ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի հետ կապված ռիսկերը արժանի են մեծ ուշադրության, քանի որ շուկայական պայմաններով ներգրավվող փոխառու միջոցների կշիռը գնալով աճում է: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակն է ապահովել կառավարության պարտքի այնպիսի կառուցվածք, որի դեպքում ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների փոփոխությունը հնարավորինս քիչ ազդեցություն կունենա կանխատեսվող տոկոսագումարների մակարդակի վրա: ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները կանխատեսվող ժամանակահատվածում մնում են կառավարելի:

Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը միջնաժամկետ հատվածում աստիճանաբար կաճի և 2024 թվականի տարեվերջին, ըստ կանխատեսման, կկազմի 85.4%: Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ավելացմանը էապես կնպաստի այն, որ ՀՀ կառավարության կողմից կանխատեսվող ժամանակահատվածում նախորդ տարիների համեմատ կավելանա թողարկվող ֆիքսված տոկոսադրույքով ներքին պարտքի ծավալը: Կանխատեսվում է, որ շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի ծավալի կշիռը միջնաժամկետ հատվածում կաճի՝ 2020 թվականի ՀՀ կառավարության պարտքի 24.4% փաստացի ցուցանիշի նկատմամբ 2024 թվականին կազմելով 37.5%-ը: Սակայն, մյուս կողմից էլ միջազգային վարկատուներն ավելի շատ լողացող տոկոսադրույքով նոր վարկեր են տրամադրելու, որն իր հերթին որոշ չափով կմեղմի ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի աճի տեմպը: Անհրաժեշտության դեպքում, տոկոսադրույքի ռիսկը կառավարելու նպատակով, արտաքին վարկատուների կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն, կիրականացվի լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի տոկոսադրույքի ֆիքսում:

Աղյուսակ 12. *ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ֆիքսված և լողացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը 2021-2024 թվականներին*

(տոկոս)

	2021 պետբյուջեի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
ՀՀ կառավարության պարտք,	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝					
Ֆիքսված տոկոսադրույքով	81.3	82.4	82.4	83.6	85.4
Լողացող տոկոսադրույքով	18.7	17.6	17.6	16.4	14.6
ՀՀ կառավարության արտաքին պարտք	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում					
Ֆիքսված տոկոսադրույքով	74.0	75.4	74.5	74.8	76.2
Լողացող տոկոսադրույքով	26.0	24.6	25.5	25.2	23.8
ՀՀ կառավարության ներքին պարտք	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում					
Ֆիքսված տոկոսադրույքով	100.0	100.0	100.0	100.0	100.0
Լողացող տոկոսադրույքով	0.0	0.0	0.0	0.0	0.0

ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետի ցուցանիշը ժամանակահատվածի վերջում կկազմի 6.7 տարի, իսկ մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի մասնաբաժինը՝ 22.5%:

Աղյուսակ 13. *ՀՀ կառավարության պարտքի տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները 2021-2024 թվականներին*

	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	7.2	6.7	6.4	6.7

	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
ՀՀ կառավարության արտաքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	5.9	5.3	4.8	5.3
ՀՀ կառավարության ներքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	10.3	9.7	9.4	9.0
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%)	23.2	23.2	27.5	22.5
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը (%)	27.7	28.9	36.5	28.1
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռը (%)	11.6	10.7	10.7	13.7

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը սահմանվում է որպես արտաքին գործոնների, տեխնոլոգիաների արդյունք, ինչպես նաև անձնակազմի, կազմակերպության, գործընթացների անբավարար գործունեության հետևանք: Գործառնական ռիսկը կառավարելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի տեղեկատվության անվտանգության ապահովումը՝ ներառյալ փաստաթղթերը և տեխնոլոգիական համակարգերը: Անհրաժեշտ է ապահովել պարտքի գրանցման և հաշվառման տվյալների բազայի այլընտրանքային պահպանումը՝ ֆորս մաժորային իրավիճակներում ամբողջական տեղեկատվության պահպանման և աշխատանքների ընթացքը չխաթարելու, պարտքային պարտավորությունները ժամանակին և անթերի իրականացնելու համար: ՀՀ կառավարության պարտքի կառավարման հետ կապված գործառնական ռիսկերը բացահայտելու, գնահատելու, կառավարելու և նվազեցնելու նպատակով կիրականացվեն ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության «Բիզնես գործընթացների շարունակականության ծրագրով» նախատեսված միջոցառումները:

ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մինչ այժմ կատարված ծախսերի և ռիսկերի վերլուծությունը հիմնված է եղել կանխատեսված մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշների վրա և իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմնական սցենար: Ստորև ներկայացվում է շուկայական փոփոխականների նկատմամբ կիրառված տարբեր շոկերի արդյունքում ծախսերի և ռիսկերի ցուցանիշների շեղման չափը հիմնական սցենարի արդյունքներից:

Գծապատկեր 10. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2021-2024 թվականներին



Գծապատկեր 11. Տոկոսավճար/ՀՆԱ ցուցանիշը 2021-2024 թվականներին



Փոխարժեքի շոկ

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելը պարունակում է փոխարժեքի էական ռիսկեր: Կիրառելով 30% շոկ՝ 2022 թվականին արժեզրկելով ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի, եվրոյի և SDR-ի նկատմամբ, ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2024 թվականի տարեվերջին հասնում է 68.0%-ի, որը 11.2 տոկոսային կետով ավելի է հիմնական սցենարի նույն ցուցանիշից:

Եթե 01.04.2021 թվականի դրությամբ ձևավորված փոխարժեքները, որոնց հիման վրա ՀՀ կառավարության արտարժութային պարտքը փոխարկվել է ԱՄՆ դոլարի, փոփոխվեն 1%-ով, ապա 2022-2024 թվականներին ընթացքում ՀՀ կառավարության արտարժութային պարտքը կփոփոխվի միջին հաշվով տարեկան 32.5 մլրդ դրամով կամ ՀՆԱ-ի 0.4%-ով:

Տոկոսադրույքի շոկ

Վերլուծելով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների տոկոսադրույքների 250 բազիսային կետի և ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների 500 բազիսային կետի չափով աճի շոկային սցենարը՝ պարզ է դառնում, որ տոկոսադրույքի շոկի ազդեցությունը ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վրա մնում է չափավոր: ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2024 թվականի տարեվերջին հիմնական սցենարի նույն ցուցանիշի նկատմամբ ավելանալով 2.1 տոկոսային կետով՝ կազմում է 58.9%: Տոկոսավճար/ՀՆԱ հարաբերակցությունն այս պարագայում կարող է ավելանալ 0.9 տոկոսային կետով:

Զուգահեռաբար ենթադրվել է նաև էական՝ 500 բազիսային կետի չափով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների տոկոսադրույքների և 1000 բազիսային կետի չափով ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների նկատմամբ շոկային սցենար, որի տեղի ունենալու հավանականությունը բավականին ցածր է: Տոկոսադրույքների նման շոկը ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը բազային սցենարի նկատմամբ կավելացնի 4.3 տոկոսային կետով՝ 2024 թվականի տարեվերջին հասցնելով 61.1%-ի: ՀՀ կառավարության պարտքի սպասարկման տեսակետից այսպիսի էական շոկը 2024 թվականի տարեվերջին Տոկոսավճար/ՀՆԱ ցուցանիշը կարող է ավելացնել 2.0 տոկոսային կետով:

Փոխարժեքի և տոկոսադրույքի համակցված շոկ

Կիրառելով 15% փոխարժեքի (2022 թվականին արժեզրկելով ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի, եվրոյի և SDR-ի նկատմամբ) և տոկոսադրույքի առաջին սցենարում նկարագրված համակցված շոկ՝ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2024 թվականի տարեվերջին հասնում է 64.7%-ի, որը 7.9 տոկոսային կետով ավելի է հիմնական սցենարի նույն ցուցանիշից: Տոկոսավճար/ՀՆԱ հարաբերակցությունն այս դեպքում կարող է ավելանալ 1.2 տոկոսային կետով:

Ստորև ներկայացվում է նաև լողացող տոկոսադրույքով պարտքի մեկ տոկոսային կետով աճի և ներքին տոկոսադրույքների մեկ տոկոսային կետով աճի ազդեցությունները:

Լողացող տոկոսադրույքների՝ 6-ամսյա ԱՄՆ դոլարի լիբորի և 6-ամսյա եվրիբորի մեկ տոկոսային կետի փոփոխության դեպքում 2022-2024 թվականներին ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը միջին հաշվով կփոփոխվեն տարեկան 6.4 մլրդ

դրամով: Մասնավորապես, լողացող տոկոսադրույքներից յուրաքանչյուրի ազդեցությունը ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկման ծախսերի վրա կանխատեսվող ժամանակաշրջանում կլինի հետևյալը.

Աղյուսակ 14. *Լողացող տոկոսադրույքների 1 տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարների վրա*

	2022	2023	2024
ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (մլրդ դրամ)	6.2	6.4	6.6
այդ թվում			
6-ամսյա ԱՄՆ դոլարի Libor (մլրդ դրամ)	5.4	5.4	5.5
6-ամսյա Euribor (մլրդ դրամ)	0.9	1.0	1.2
ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (%)	13.8	12.8	13.6
ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարի փոփոխության կշիռը պետբյուջեի սեփական եկամուտներում (առանց դրամաշնորհի) (%)	0.3	0.3	0.3

Ներքին պարտքի շուկայում, միջնաժամկետ հատվածի սկզբում, եկամտաբերության կորի մեկ տոկոսային կետով աճը 2022-2024 թվականների ընթացքում կավելացնի պարտքի տոկոսավճարները տարեկան միջինը 5.6 մլրդ դրամով:

Աղյուսակ 15. *Միջնաժամկետ հատվածի սկզբում ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսադրույքի մեկ տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի վրա*

	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (մլրդ դրամ)	1.8	5.5	9.6
ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (%)	1.4	3.6	5.4
ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի փոփոխության կշիռը պետբյուջեի սեփական եկամուտներում (առանց դրամաշնորհի) (%)	0.1	0.3	0.4

Իրականացված զգայունության վերլուծությունները թույլ են տալիս ենթադրել, որ ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վրա փոխարժեքի շոկի ազդեցությունը շատ ավելի մեծ է, քան տոկոսադրույքի շոկի ազդեցությունը: Դա հիմնականում պայմանավորված է մի կողմից ՀՀ կառավարության պարտքի պորտֆելում արտարժութային պարտքի մեծ տեսակարար կշռով և մյուս կողմից՝ ֆիքսված տոկոսադրույքով պարտքի գերակայությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ պարտքի պորտֆելն ամենաշատը ենթակա է փոխարժեքի ռիսկի ազդեցությանը: Այդ իսկ պատճառով, ՀՀ կառավարությունն առաջնային է համարում պետական գանձապետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացումը և ներքին շուկայից փոխառությունների ներգրավման ծավալի աճի միջոցով դրամային պարտքի մասնաբաժնի ավելացումը: 2022-2024 թվականներին նախատեսվում է ավելացնել ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կշիռը և միջնաժամկետ հատվածում փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումն ամբողջությամբ իրականացնել ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին:

Կարևոր է նշել, որ միայն ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում իրակա-նացվող միջոցառումները բավարար չեն ՀՀ կառավարության ներքին պարտքի շուկան էականորեն զարգացնելու համար: Ներքին պարտքի շուկայի զարգացման և ներդրողների բազայի ընդլայնման նախապայմաններից է նաև ֆինանսական շուկայի այլ հատվածների (կենսաթոշակային, ապահովագրական և այլն) հետագա զարգացումը:

ՀՀ կառավարությունը միջնաժամկետ հատվածում շարունակելու է ՀՀ կառավարության պարտքի մարման գրաֆիկի հարթեցման և վերաֆինանսավորման ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունները՝ կիրառելով իրացվելիության կառավարման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են կանխիկի բուֆերի ձևավորումը, հետգնումների ու փոխանակումների իրականացումը:

Հավելված

ՀՀ կառավարության պարտքը բնութագրող 2019-2020 թվականի փաստացի, 2021 թվականի պետական բյուջեի ծրագրային և 2021-2024 թվականների կանխատեսումային ցուցանիշները

Աղյուսակ 16. *ՀՀ կառավարության պարտքի հիմնական ցուցանիշները 2019-2024 թվականներին (մլրդ դրամ)*

	2019 փաստ.	2020 փաստ.	2021 պետբյուջե ի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
Կառավարության պարտք	3,277.3	3,923.9	4,345.7	4,286.3	4,579.8	4,794.8	5,018.3
% ՀՆԱ-ի նկատմամբ	50.1	63.5	66.5	62.3	60.5	58.7	56.8
Ըստ ռեզիդենտության							
կառավարության ներքին պարտք	737.2	1,000.9	1,221.3	1,212.2	1,433.5	1,673.0	1,932.4
կառավարության արտաքին պարտք	2,540.1	2,923.0	3,124.3	3,074.1	3,146.3	3,121.8	3,085.8
Ըստ գործիքակազմի							
արտաքին վարկեր և փոխառություններ	2,065.9	2,438.0	2,299.1	2,250.4	2,290.3	2,260.9	2,220.2
պետական գանձապետական պարտատոմսեր	681.0	958.8	1,178.1	1,162.3	1,382.3	1,622.3	1,882.3
արտարժութային պետական պարտատոմսեր	526.5	522.6	864.1	869.5	902.9	907.5	912.0
արտաքին երաշխիքներ	3.8	4.5	4.4	4.1	4.2	4.1	3.8
ներքին երաշխիքներ	-	-	-	-	-	-	-
Կառավարության պարտքի տոկոսավճար	157.5	164.7	194.7	194.5	215.7	243.5	268.1
Տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր (%)	9.7	8.7	10.5	10.0	10.8	11.4	11.6
Տոկոսավճար/պետական բյուջեի սեփական (առանց	10.1	10.9	13.1	12.2	12.0	12.5	12.5

	2019 փաստ.	2020 փաստ.	2021 պետբյուջե ի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
դրամաշնորհներ) եկամուտներ (%)							
Տոկոսավճար/ՀՆԱ (%)	2.4	2.7	3.0	2.8	2.8	3.0	3.0

Աղյուսակ 17. *Պետական պարտատոմսերի ցուցանիշները 2019-2024 թվականներին*

	2019 փաստ.	2020 փաստ.	2021 պետբյուջե ի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
Պետական գանձապետական պարտատոմսեր, մլրդ դրամ	681.0	958.8	1,178.1	1,162.3	1,382.3	1,622.3	1,882.3
% ՀՆԱ-ի նկատմամբ	10.4	15.5	18.0	16.9	18.3	19.9	21.3
ըստ մարման մնացած օրերի, մլրդ դրամ							
Մինչև 1 տարի	86.2	110.4	121.5	141.5	153.9	162.9	265.4
1-5 տարի	196.1	277.6	349.8	308.5	421.5	512.1	655.1
5-ից ավելի տարի	398.7	570.8	706.8	712.4	806.9	947.4	961.8
ըստ մարման մնացած օրերի կշիռը (%)	100	100	100	100	100	100	100
Մինչև 1 տարի	12.7	11.5	10.3	12.2	11.1	10.0	14.1
1-5 տարի	28.8	29.0	29.7	26.5	30.5	31.6	34.8
5-ից ավելի տարի	58.5	59.5	60.0	61.3	58.4	58.4	51.1
Միջին տոկոսադրույք (%)	11.8	10.4	9.6	10.1	10.0	10.0	9.9
Միջին ժամկետայնություն (տարի)	10.2	10.8	10.3	10.5	9.9	9.7	9.2
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլն ԱՄՆ դոլար	1,097.7	1,000.0	1,750.0	1,750.0	1,750.0	1,750.0	1,750.0
% ՀՆԱ-ի նկատմամբ	8.0	8.5	13.2	12.6	11.9	11.1	10.3
Միջին տոկոսադրույք (%)	5.9	5.9	5.6	5.0	5.0	5.0	4.1

	2019 փաստ.	2020 փաստ.	2021 պետբյուջե ի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
Միջին ժամկետայնություն (տարի)	6.9	6.5	7.3	7.0	6.0	5.0	6.8

Աղյուսակ 18. *ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների ցուցանիշները 2019-2024 թվականներին*

(մլն ԱՄՆ դոլար)

	2019 փաստ.	2020 փաստ.	2021 պետբյուջե ի ծրագիր	2021 կանխ.	2022 կանխ.	2023 կանխ.	2024 կանխ.
Կառավարության վարկեր և փոխառություններ	4,306.7	4,665.2	4,656.4	4,529.6	4,438.9	4,360.1	4,260.2
% ՀՆԱ-ի նկատմամբ	31.6	39.4	35.2	32.7	30.3	27.7	25.1
Ըստ ռեզիդենտության							
արտաքին վարկեր և փոխառություններ	4,306.7	4,665.2	4,656.4	4,529.6	4,438.9	4,360.1	4,260.2
ներքին վարկեր և փոխառություններ	-	-	-	-	-	-	-
Ըստ վարկատուի							
միջազգային ֆինանսական կառույցներից	3,237.4	3,588.2	3,625.4	3,511.7	3,452.3	3,398.0	3,303.8
օտարերկրյա պետություններից	1,048.9	1,056.5	1,014.1	1,000.5	971.5	949.2	945.9
առևտրային բանկերից	20.5	20.6	16.9	17.4	15.1	12.8	10.6
Միջին տոկոսադրույք (%)	2.3	1.5	2.0	1.6	2.0	2.2	2.2
Միջին ժամկետայնություն (տարի)	9.3	8.4	7.8	7.8	7.3	6.9	6.8

2. ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

Կանխատեսումներ: Աղյուսակում ներկայացված է ՀՀ ֆինանսների նախարարության և այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումների համեմատականը: Արժույթի միջազգային հիմնադրամի ապրիլ ամսվա կանխատեսումներով 2021թ. սպասվում է 1.0% աճ, իսկ Համաշխարհային բանկի հունիս ամսվա կանխատեսումներով՝ 3.4% աճ: ՀՀ կենտրոնական բանկի մարտ ամսվա կանխատեսումներով 2021թ. կանխատեսվում էր 1.4% աճ, սակայն հունիսի կանխատեսումներով սպասվում է ավելի բարձր՝ 4.6% տնտեսական աճ:

Աղյուսակ 2.1 *Այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները (%)*

	2021	2022	2023	2024
ՀՀ ֆինանսների նախարարություն (2021 հուլիս)	6.0	5.2	3.7	4.0
ՀՀ կենտրոնական բանկ (2021թ. հունիս)	4.6	2.8	3.8	-
Արժույթի միջազգային հիմնադրամ (2021 ապրիլ)	1.0	3.5	5.2	4.7
Համաշխարհային բանկ (2021 հունիս)	3.4	4.3	5.3	
Ֆիթչ (2021 մարտ)	3.2	4.0	-	-

Աղբյուրը՝ համապատասխան կառույցների հրապարակումներ
«-» տվյալները հասանելի չեն

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1. 2022-2024 թվականներին ՄԺԾԾ հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվածից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը

Միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը հիմնվել է ստորև նկարագրված **կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի** վրա:

1. Կանխատեսումների ռիսկ

Սովորաբար կանխատեսումներ իրականացնելիս ի հայտ են գալիս հանգամանքներ, որոնք կապված են լինում օգտագործվող կանխատեսման մոդելների տեղայնացումից և մասնավորեցումից, տնտեսության կառուցվածքային տեղաշարժերից[35], նոր երևույթներից (որի վերաբերյալ նախկինում տեղեկատվությունը բացակայել է) և այլն: Այս ռիսկերն ընդունված է անվանել կանխատեսման ռիսկեր: ՄԺԾԾ տեսանկյունից կարևորվում է ՀՆԱ-ի կանխատեսման ռիսկի գնահատումը, քանի որ ՄԺԾԾ սցենարի սահուն իրականացումը կախված է տնտեսությունում ստեղծված անվանական ՀՆԱ-ի մեծությունից: ՀՆԱ-ի գծով կանխատեսումների ռիսկը գնահատվել է հետճգնաժամային տարիներին միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիմքում դրվող ՀՆԱ-ի կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա:

ՀՆԱ-ի միջնաժամկետ կանխատեսումներից փաստացիի շեղումները նախաճգնաժամային 2003-2008 թվականների համար եղել են 7.1-ից 9.0-ը տոկոսային կետ, իսկ հետճգնաժամային 2010-2019 թվականների համար՝ 2.0-ից 2.6 տոկոսային կետ: Այս պարագայում, հաշվի առնելով կանխատեսվածից ցածր ՀՆԱ-ի ձևավորման վերոնկարագրյալ ռիսկերի գերակշռությունը, որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ-ի իրական աճի կանխատեսվածից 2.0 տոկոսային կետով ավելի ցածր ցուցանիշի ձևավորումը 2022 թվականին, 2.3 տոկոսային կետով ցածր՝ 2023 թվականին և 2.6 տոկոսային կետով ցածր՝ 2024 թվականին:

Արդյունքում, ՀՆԱ նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2022, 2023 և 2024 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 11.3, 14.6 և 17.9 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2. Ենթադրություններից շեղումների ռիսկ

[35]Սա որոշակիորեն կապված է նաև մոդելների սպեցիֆիկացիաների հետ, քանի որ ժամանակային շարքերի վրա հիմնված մոդելներն իրենց մեջ ներառում են տնտեսության նախորդ ժամանակահատվածի զարգացումների տեղեկատվությունը, իսկ կանխատեսվող տարում ի հայտ եկող տնտեսության կառուցվածքային տեղաշարժը միայն կարող է ներառվել հաջորդ տարվա կանխատեսումների մոդելներում:

ՄԺԾԾ հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են արտաքին գործոններից (օրինակ, ներքին տնտեսության գնաճը՝ միջազգային շուկաների գների կանխատեսվող վարքագծից): Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների հետ (օրինակ՝ նավթի համաշխարհային գների հնարավոր փոփոխությունները):

Ենթադրություններից շեղումների ռիսկ է նաև ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացումները: Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում մաքսատուրքերի մասնաբաժինը կարող է փոփոխվել նոր պետությունների ԵԱՏՄ-ին անդամակցությունից:

2.1. Գնաճի շեղման հնարավոր չափը

Գնաճի ցուցանիշի շեղման հնարավոր չափ է դիտարկվում ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության ծրագրում (գնաճի հաշվետվություններում) ներկայացվող գնաճի նպատակային ցուցանիշի կենտրոնական արժեքից շեղման առավելագույն չափը:

ՀՀ ԿԲ-ի կողմից միջնաժամկետ հորիզոնում կանխատեսվում է գնաճի կայունացում նպատակային ցուցանիշի շուրջ: Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերը միջնաժամկետ հորիզոնում գնահատվում են հավասարակշռված՝ գնաճի կենտրոնական արժեքից **դեպի ներքև՝ 1.5 տոկոսային կետի չափով** (այսինքն՝ գնաճի ներքին սահմանը 2.5% է) և **դեպի վերև շեղումը՝ 1.5 տոկոսային կետի չափով** (վերին սահմանը 5.5% է):

Գնաճի շեղման ռիսկը կարող է ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի և՛ եկամտային, և՛ ծախսային կատարողականների վրա՝ անուղղակի հարկերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի ուղղությամբ: Գնանկումային պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն և ընդհակառակը:

Արդյունքում, գների նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2022, 2023 և 2024 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 3.2, 3.6 և 3.9 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.2. Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

ՀՀ ԿԲ-ն և ՀՀ ՖՆ-ն փոխարժեքի կանխատեսումներ չեն իրականացնում և մակրոտնտեսական քաղաքականությունն իրականացվում է լողացող փոխարժեքի սկզբունքի հիման վրա, ընդ որում, յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ցուցանիշների կանխատեսումների հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակ: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն ներմուծումից ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմականորեն և՛ արժևորման, և՛ արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի տատանումների բացարձակ շեղման միջին չափը չի գերազանցել 4.0 տոկոսը՝ որպես ռիսկ է դիտարկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի առավելագույնը 4% արժեզրկումը:

Արդյունքում, փոխարժեքի 4 տոկոսով արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում, այլ հավասար պայմաններում, 2022, 2023 և 2024 թվականներին կարելի է ապահովել հարկային եկամուտների համապատասխանաբար 11.3, 12.4 և 13.4 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ մուտք:

2.3. Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը

Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից գանձվող անուղղակի հարկերը էական կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: Հետճգնաժամային տարիներին ՄԺԾԾ-ում ներմուծման գծով կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը սահմանվում է 11.8-20.0%-ի միջակայքում, ինչն էլ հաշվի է առնվել այս գործոնի ազդեցությունը գնահատելու համար: 2022, 2023 և 2024 թվականների համար ծրագրվածից համապատասխանաբար 11.8, 15.9 և 20.0% պակաս ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվում է համապատասխանաբար՝ 23.3, 33.9 և 45.4 մլրդ ՀՀ դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

Ամփոփելով վերը նկարագրված **կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի** գնահատականները, միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի ազդեցության քանակական ամփոփ գնահատականները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 3.1.1 Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն[36]

Ռիսկի տեսակը	Ազդեցության գնահատականը, մլրդ ՀՀ դրամ		
	2022	2023	2024
Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում			
1. Կանխատեսվածից 2.0-2.6 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-11.3	-14.6	-17.9
2. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	-3.2	-3.6	-3.9
3. Փոխարժեքի առավելագույնը 4.0 տոկոսով արժեզրկման ռիսկ	11.3	12.4	13.4
4. Ներմուծման 11.8-20.0 տոկոսով նվազման ռիսկ	-23.3	-33.9	-45.4
Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում	**-24.3**	**-40.4**	**-55.9**

[36]ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պատմական շարժի բացարձակ միջին սխալը:

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 24.3 մլրդ ՀՀ դրամ 2022 թվականին, 40.4 մլրդ ՀՀ դրամ 2023 թվականին և 55.9 մլրդ ՀՀ դրամ 2024 թվականին:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները, սակայն այս դեպքում դիտարկվում է հարկային եկամուտների աճի վրա ազդող գործոնների աճերի 1% փոփոխության ազդեցությունը, ինչը ներկայացված է հարկային եկամուտների զգայունության աղյուսակում:

Աղյուսակ 3.1.2 Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, տոկոս

	ՀՆԱ	Գնաճ	Փոխարժեք	Ներմուծում
Միջին տարեկան ազդեցություն	0.22	0.10	0.16	0.06

Ինչպես երևում է աղյուսակից, հարկերի հավաքագրման առումով առավել էական գործոններ են հանդիսանում ՀՆԱ-ի և փոխարժեքի փոփոխությունները:

Հարկային եկամուտների կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող հարկային եկամուտների հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես՝ Գծապատկեր 3.1 և Աղյուսակ 3.1.3)[37]: Հավանականային բաշխման գրաֆիկի կառուցման ժամանակ օգտագործվել է աղյուսակ 3.1.1-ում գնահատված ամբողջական ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում ի հայտ եկող բացասական ռիսկերը:

[37]Հարկային եկամուտների գծով ռիսկերի ազդեցության գնահատականը կառուցվել է ՀՀ ֆինանսների նախարարության ռիսկերի գնահատման համակարգի ներքո կառուցված մոդելի հիման վրա:

Գծապատկեր 3.1. Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը[38], տոկոս



Կանխատեսումների բաշխման հավանականություններն առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 3.1.3 Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը

Հարկային եկամուտների աճի միջակայքը	Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը		
	2022	**2023**	**2024**
3-7 տոկոս	0.08	0.34	0.27
7-11 տոկոս	0.36	***0.45***	***0.43***
11-15 տոկոս	***0.49***	0.08	0.18

Աղյուսակ 3.1.3-ի առաջին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի միջակայքերը, իսկ 2-ից 4-րդ սյուները՝ նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ միջնաժամկետ կանխատեսումների: Համաձայն գնահատականների, 2022 թվականին հարկային եկամուտների աճի տեմպի՝ 11-15% միջակայքում գտնվելու հավանականությունն ամենաբարձրն է, իսկ 2023 և 2024 թվականներին հարկային եկամուտների աճի տեմպը ամենաբարձր հավանականությամբ կգտնվի 7-11% միջակայքում (Գծապատկեր 3.1-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 3.1.3-ում՝ հոծ նշումով):

[38]Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է Ներդիրում:

Ներդիր

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցումը

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը ներկայացնող գծապատկերները ցույց են տալիս տնտեսության զարգացման ապագա ընթացքի վերաբերյալ կառավարության գնահատականները՝ տնտեսական աճի ծրագրային ցուցանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային եկամուտների հավաքագրման կանխատեսվող ընթացքը:

Կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր կանխատեսումները ինչ-որ չափով անորոշ են: Կարևոր է հաշվի առնել ոչ միայն կոնկրետ կանխատեսված արժեքները, այլ նաև բոլոր այն վերոնշյալ ռիսկերը, որոնց արդյունքում կարող են շեղումներ առաջանալ իրական ՀՆԱ-ի կանխատեսումների և հարկերի կանխատեսումների կենտրոնական արժեքներից: Հիմնվելով միայն կետային կանխատեսումների վրա հնարավոր չէ բավարար չափով տեղեկատվություն ներկայացնել դրանց հետ կապված անորոշությունների և դրանց աղբյուրների վերաբերյալ: Այդ պատճառով կարևորվում է որոշակի վստահության միջակայքի կառուցման խնդիրը, որը թույլ կտա գնահատել իրադարձությունների զարգացման հավանական ընթացքը: Իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման ներկայացված գծապատկերները հիմնվում են Անգլիայի բանկի կողմից մշակված մեթոդաբանության վրա և հաշվի է առնում կանխատեսումների հավանականային բաշխման ասիմետրիկության առկայությունը:

Հայաստանի համար իրական ՀՆԱ-ի և հարկերի աճի կանխատեսումների բաշխման գծապատկերները կառուցվել են երեք չափորոշիչների հիման վրա.

1. կենտրոնական արժեքները, 2. անորոշության չափը (դիսպերսիան), որը ստանալու համար հիմք են հանդիսացել փաստացի պատմական շարքերի կանխատեսումային սխալները և 3. ռիսկերի հարաբերական հաշվեկշիռը՝ անհամաչափության գործակցի գնահատման նպատակով:

Ունենալով կանխատեսված կենտրոնական արժեքները, անորոշության չափը (ցրվածքը) և ռիսկերի հաշվեկշիռը՝ կառուցվել են իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկները 2022-2024 թվականների համար (տես՝ Գծապատկեր 3.1):

ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսման գծապատկերներում կենտրոնական մուգ (կարմիր) ավելի նեղ միջակայքը ներառում է նաև կանխատեսման կենտրոնական սցենարը (կանխատեսված արժեքները): Որքան հավանականային կանխատեսումները հեռանում են կենտրոնական սցենարից, այնքան ավելի ցածր է դառնում դրանց իրագործման հավանականությունը, ինչը գծապատկերում արտահայտվում է ավելի թույլ գունավորմամբ: Ներկայացված բաշխումը սիմետրիկ չէ, քանի որ ապագայի համար առկա են տնտեսական աճի և հարկերի կենտրոնական կանխատեսումից ավելի ցածր մակարդակների ձևավորման ռիսկեր:

3.2. Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվածից շեղման ռիսկերի ազդեցության ընդհանուր գնահատականը և դրանց մեղմման հնարավորությունները

Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման:

Աղյուսակ 3.2.1 ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը[39]. (ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ ՀՀ դրամ

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող ռիսկեր	2022	2023	2024
1. Կանխատեսվածից 2.0-2.6 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-11.3	-14.6	-17.9
2. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	3.5	3.5	4.0
3. Փոխարժեքի առավելագույնը 5.0 տոկոսով արժեզրկման ռիսկ	9.1	8.8	10.1
4. Ներմուծման 11.8-20.0 տոկոսով նվազման ռիսկ	-23.3	-33.9	-45.4
Ընդամենը	**-22.0**	**-36.2**	**-49.3**

Աղյուսակ 3.2.1-ում ցույց են տրված գնահատված լրացուցիչ ռիսկերը, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: Ակնհայտորեն երևում է, որ գնաճի տատանումների հետևանքով կնվազի նախատեսված ֆինանսավորման պահանջը և համապատասխանաբար կփոփոխվեն նաև պետական բյուջեի ծախսերը՝ նվազման ուղղությամբ:

Եվրոպական Միության կողմից ՀՀ-ին խոշորածավալ դրամական օգնության տրամադրումը միջնաժամկետում կարող է հանդիսանալ դրական ռիսկ հարկաբյուջետային շրջանակի տեսանկյունից: Ս.թ. հուլիսի 2-ին Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակած աշխատանքային փաստաթղթում[40]՝ «Վերականգնում, կայունություն և բարեփոխումներ» խորագրով ծրագրի համաձայն՝ ԵՄ-ն առաջիկա հինգ տարիների ընթացքում շուրջ 2.6 մլրդ եվրոյի չափով ֆինանսավորում կտրամադրի Հայաստանին՝ փաստաթղթով նախատեսված մի շարք ծրագրերի իրականացման նպատակով: Նշված ծրագրերի իրականացումը զգալի ազդեցություն կունենա

[39] Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:

[40] Փաստաթուղթը հասանելի է հետևյալ էլ. հղումով՝
https://eeas.europa.eu/sites/default/files/swd_2021_186_f1_joint_staff_working_paper_en_v2_p1_1356457_0.pdf

հարկաբյուջետային ցուցանիշների վրա՝ առաջացնելով հարկաբյուջետային քաղաքականության վերանայման կարիք:

Հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող մակարդակից վերոնշյալ հնարավոր շեղումների ռիսկերի գնահատականները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2022-2024 թվականներին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի շուրջ 22.0–50.0 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.3-0.6%-ը:

4. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության պարտքը շարունակում է գնահատվել կայուն և կառավարելի, սակայն բավականին շոշափելի են պարտքի բեռի ներկա մակարդակից բխող ռիսկերը՝ հատկապես հաշվի առնելով ՀՀ տնտեսությանը բնորոշ շոկերի հավանականությունը: Պարտքի կայունության ապահովման համար հրամայական է հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացումը և պարտքի բեռի նվազեցումը պարտք/ՀՆԱ սահմանային 60%-ի շեմից, որի իրականացումը ևս որոշակի անորոշության է ենթակա՝ հաշվի առնելով պարտք ձևավորող գործոնների պատմական տատանողականությունը: Միաժամանակ, ՀՀ կառավարության պարտքի պորտֆելը՝ ձևավորումից սկսած, շարունակում է մնալ խոցելի՝ պայմանավորված արտարժութային և ոչ ռեզիդետների նկատմամբ պարտքի բարձր մասնաբաժիններով:

ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի ներկա մակարդակը՝ ՀՀ հարկաբյուջետային կանոնների համատեքստում, անհրաժեշտություն է դարձնում կոնկրետ գործողությունների իրականացումը, քանի որ այն գերազանցել է 60%-ի՝ ՀՀ տնտեսության ներկա հնարավորությունների տեսակետից սահմանային գնահատվող շեմը: Պետական պարտքի համար լրացուցիչ ռիսկեր են առաջացնում պարտքի միջին կշռված տոկոսադրույքների և սպասարկման բեռի բարձրացման միտումը (այդ թվում՝ ՀՆԱ աճի և պարտքի անվանական տոկոսադրույքի ճեղքի փոքրացումը վերջին տասնամյակում), ինչը զուգորդվում է նաև մասնավոր հատվածի արտաքին պարտքի աճի հետ և բարձրացնում տնտեսության խոցելիությունը ցնցումների նկատմամբ: Այս իրավիճակից բխում է ՀՀ հարկաբյուջետային կանոններին համահունչ հարկաբյուջետային կոնսոլիդացիայի քաղաքականության ընդունման և միջնաժամկետ հատվածում իրականացման անհրաժեշտությունը, ինչն ապահովվում է սույն Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով և ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագրով, և որի իրականացումը թույլ կտա նվազեցնել պարտքից բխող ռիսկերը և ֆինանսական «բարձիկ» ստեղծել հետագա հնարավոր ցնցումներին դիմակայելու համար:

Չնայած կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի ներկա մակարդակից բխող ռիսկերին, պարտքի կայունությունը գնահատելու առանցքային ուղենիշները ֆինանսական շուկաների վարքագիծը և պարտքի կանխատեսվող միտումներն են, որոնց համաձայն, հիմնվելով միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության վրա, կառավարության պարտքի և պարտքի սպասարկման ռիսկերը գնահատվում են ցածր, սակայն խիստ մոտ միջին ռիսկայնության գնահատվելու սահմանագծին: Սթրես թեստերի շրջանակներում ՀՀ կառավարության պարտքը ամենաշատը զգայուն է տնտեսական աճի և փոխարժեքի շոկերի նկատմամբ, որոնցից առաջինի ի հայտ գալու պարագայում 2023թ.-ին կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը հասնում է 69.7% մակարդակին՝ միջնաժամկետ հեռանկարում (մինչև 2026թ-ը) մնալով ՀՀ հարկաբյուջետային կանոններով սահմանված 60% սահմանային շեմից բարձր և պարտքի ռիսկայնության 70% շեմին ընդհուպ մոտ մակարդակում: Փոխարժեքի շոկի դեպքում կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը առավելագույն մակարդակին է հասնում 2022թ-ին՝ 62%, սակայն միջնաժամկետ հորիզոնում նվազում 60% շեմից: ՀՀ պետական

բյուջեի համախառն ֆինանսավորման կարիքը կանխատեսվող ժամակահատվածում իրականացված սթրես թեստերից ոչ մեկի դեպքում չի գերազանցում զարգացող երկրների համար ռիսկայնության համար ընդունված սահմանաչափը 15% սահմանաչափը:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը բարձր ռիսկային է գնահատվում, սակայն միջազգային շուկայի վարքագիծը գնահատվում է միջին ռիսկայնության տիրույթում: Մասնավորապես, ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում արտարժութային և ոչ ռեզիդենտների նկատմամբ պարտքի մասնաբաժինները բարձր ռիսկայնության տիրույթում են եղել 2021թ-ի մայիսի դրությամբ՝ կազմելով համապատասխանաբար 76.4% և 75.2%: Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության պարտքի համար միջազգային ֆինանսական շուկայի գնահատականը (ՀՀ երկրի ռիսկի հավելավճար՝ արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունների սփրեդը) 2021թ.-ի հունիսի վերջի դրությամբ միջին ռիսկայնության տիրույթում է գտնվել՝ առավել մոտենալով ցածր ռիսկայնության շեմին:

ՀՀ կառավարության պարտքի կանխատեսումները անորոշության բարձր աստիճան են պարունակում, քանի որ պարտք ձևավորող գործոնները պատմականորեն ունեն բարձր տատանողականություն: Այս նկարագիրը բացահայտվում է ստորև ներկայացված հավանականությունների բաշխման գրաֆիկում, ըստ որի՝ 2024թ.-ի համար 10-ից 90% հավանականային միջակայքում ուրվագծում է ՀՆԱ-ում 48%-ից 72%, իսկ 2026թ.-ի համար՝ 40%-ից 70% միջակայք:

Թիրախային (2022-26 թթ. համար միջինում առնվազն 7%) տնտեսական աճի սցենարի պարագայում պարտքի հետագիծն առավել բարենպաստ է: Չնայած ՄԺԾԾ մակրոտնտեսական սցենարի համեմատությամբ բյուջեի առավել խորը պակասուրդին, Թիրախային աճի սցենարում պարտքի ավելի մեծ նվազում է ապահովվում : Թիրախային աճի սցենարի (այդ թվում՝ դրա շրջանակներում ՀՀ կառավարության պարտքի ռիսկերի) վերաբերյալ առավել մանրամասն վերլուծությունների կիրականացվեն այդ սցենարի իրագործմանն ուղղված միջոցառումների նյութականացմանը զուգընթաց[41]:

[41] Թիրախային տնտեսական աճի մակրոտնտեսական սցենարի նկարագրությանը, դրա ապահովման պայմաններին և հարկաբյուջետային սցենարին կարելի է ծանոթանալ 2022-2024 թթ" ՄԺԾԾ փաստաթղթի «1"3"1" Թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենար» ենթաբաժնում:

Գծապատկեր 4.1. ՀՀ Կառավարության պարտքի տոկոսադրույքը և ՀՆԱ անվանական աճը



Գծապատկեր 4.2. ՀՀ Կառավարության պարտքի և համախառն ֆինանսավորման կարիքի սթրես թեստեր*



** 2025 և 2026թթ. կանխատեսումները հիմնվում են 2022-2026թթ. ՀՀ կառավարության պարտքի նվազեցման ծրագրի վրա*

Աղյուսակ 4.3. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ռիսկայնության ցուցանիշներ

	Շեմեր			ՀՀ ցուցանիշ
	Ցածր	Միջին	Բարձր	
ՀՀ երկրի ռիսկի հավելավճար, բազիսային կետ*	<200	200-600	>600	291.1
Ոչ ռեզիդենտների նկատմամբ պարտքի կշիռ, % ընդհանուր պարտքում**	<15	15-45	>45	75.2
Արտարժութային պարտքի կշիռ, % ընդհանուր պարտքում**	<20	20-60	>60	76.4

**Հաշվարկված է որպես 2021թ. մարտ-մայիս ամիսներին երկրորդային շուկայում 2029 և 2031թթ. մարվող ՀՀ եվրոբոնդերի եկամտաբերություններ՝ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի հետ միջին սփրեդ:*
***2021թ. մայիսի դրությամբ:*

Գծապատկեր 4.4. ՀՀ Կառավարության պարտքի կանխատեսումների հավանականությունների բաշխման գրաֆիկը



5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ներածություն

Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման բարելավման նպատակով Ասիական զարգացման բանկի հետ համատեղ մշակվել է ֆիսկալ ռիսկերի կառավարման բարելավման 2019-2023 թվականների ճանապարհային քարտեզը, որով նախանշված նպատակների իրականացման համար կատարվել է նաև ենթակառուցվածքային և այլ ոլորտների կազմակերպությունների (Ընկերություններ) գործունեությանն առնչվող հարկաբյուջետային ռիսկերի գնահատում: Այս համատեքստում, զուգահեռաբար, իր գործուն աջակցությունն է ցուցաբերել նաև Արժույթի միջազգային հիմնադրամը:

Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման նպատակը

Հարկաբյուջետային ռիսկերի այս գնահատման նպատակն է ֆինանսական վիճակի վերլուծության միջոցով գնահատել Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը, որը կարող է հանգեցնել պետական բյուջեից Ընկերություններին չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների տրամադրման, սեփական կապիտալի համալրման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտության, ինչպես նաև Ընկերությունների կողմից պետական բյուջե կանխատեսված շահութաբաժինների, ստացված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարման և մայր գումարների չմարման:

Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման մեթոդաբանություն

Ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառվել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից հրապարակված՝ «Կորպորատիվ հատվածից առաջացող ֆիսկալ ռիսկերի կառավարման ուղեցույց»-ում (այսուհետ՝ ԱՄՀ ուղեցույց), ինչպես նաև Ասիական զարգացման բանկի խորհրդատուի հետ մշակված և ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2018թ. N439-Ա հրամանով հաստատված «Ֆիսկալ ռիսկերի գնահատման ձեռնարկ»-ում ներկայացված մեթոդաբանությունը[42], ինչպես նաև ՀՀ կառավարության 06.11.2020թ. «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետության պայմանական պարտավորությունների հաշվարկման և գնահատման մեթոդաբանությունը սահմանելու մասին» N1785-Լ որոշմամբ սահմանված մեթոդաբանությունը:

Ընդհանուր պորտֆելի նկարագրություն

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տվյալների հիման վրա դիտանցման են ենթարկվել պետական և համայնքային բաժնեմասնակցությամբ թվով 229 ընկերություններ, որոնց

[42] Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը կանխատեսելու համար հաշվարկվել է միջազգայնորեն այդ նպատակով ընդունված Է. Ալթմանի «Z-միավոր» կոչվող հսկիչ ցուցանիշը: Զուգահեռաբար Ընկերությունների ֆինանսական հուսալիության մասին լրացուցիչ տեղեկատվության ստացման, ինչպես նաև «Z-միավոր»-ի ստուգաճշտման համար կիրառվել են լրացուցիչ ֆինանսական գործակիցներ (շահութաբերության, իրացվելիության, վճարունակության հաշվարկման համար), որոնք արտացոլում են կապը Ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների տարբեր հոդվածների միջև:

սեփական կապիտալի հանրագումարը կազմել է 323.4 մլրդ դրամ, իսկ ակտիվները՝ 843.5 մլրդ դրամ: 2019թ. ընթացքում այդ ընկերություններից վնասով աշխատել են թվով՝ 48-ը:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ սնանկացման կամ վերակազմակերպման գործընթացում են գտնվել թվով 31 ընկերություն: Ընկերությունների 61%-ը (թվով՝ 141 ընկերություն) գործում են տարածքային կառավարման մարմինների ենթակայությամբ, որոնց ակտիվների հանրագումարը կազմում է ընդհանուր դիտանցված ընկերությունների 10%-ը):

Աղյուսակ 5.1 Պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունները՝ ըստ կառավարող մարմինների

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	15
ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե	15
ՀՀ առողջապահության նախարարություն	13
ՀՀ կառավարություն	8
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	8
ՀՀ պաշտպանության նախարարություն	7
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	6
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	6
ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտե	3
ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	3
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	1
ՀՀ արդարադատության նախարարություն	1
ՀՀ ոստիկանություն	1
ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	1
Երևանի քաղաքապետարան	63
Շիրակի մարզպետարան	20
Լոռու մարզպետարան	14
Գեղարքունիքի մարզպետարան	8
Կոտայքի Մարզպետարան	8
Արարատի մարզպետարան	7
Սյունիքի մարզպետարան	7
Արմավիրի մարզպետարան	6
Տավուշի մարզպետարան	3
Վայոց Ձորի Մարզպետարան	3
Արագածոտնի մարզպետարան	2
ԸՆԴԱՄԵՆԸ	229

Գծապատկեր 5.1 Պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների ակտիվներն ըստ ոլորտների՝ 843.5 մլրդ դրամ



Պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների ակտիվների բաշխվածությունն ըստ ոլորտների հետևյալն է՝ էներգետիկ ոլորտի ընկերություններ՝ ակտիվները կազմում են 463.0 մլրդ դրամ, ջրային տնտեսության ոլորտի ընկերություններ՝ 105.0 մլրդ դրամ, իսկ առողջապահության ոլորտի ընկերություններինը՝ 93.8 մլրդ դրամ:

Գծապատկեր 5.2 Պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների սեփական կապիտալը, ըստ ոլորտների, 323.4 մլրդ դրամ



Ինչպես երևում է վերը ներկայացված գծապատկերից առավել էական սեփական կապիտալ ունեցող ընկերությունները գործում են էներգետիկայի, առողջապահության և ջրային ոլորտներում:

Գծապատկեր 5.3 Պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների պարտավորությունները, ըստ ոլորտների, 535.2 մլրդ դրամ



Գծապատկերի տվյալներից ակնհայտ է, որ պարտավորությունների բաշխվածությունն ըստ ոլորտների արտացոլում է էներգետիկայի ոլորտի զգալի գերակշռումը: Այդ ոլորտի ընկերությունների պարտք/սեփական կապիտալ գործակիցը 2020 թվականի արդյունքներով կազմում է 3.4: Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ էներգետիկայի ոլորտի ընկերություն-ները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել: Ընդ որում «Երևանի ՋԷԿ», «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ները հանդիսանում են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրակա-նացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով այդ ոլորտին տրամադրված վարկային միջոցների խոշորագույն ստացողներից: Բացի այդ, այդ ընկերությունները նաև գեներացնում են պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների եկամուտների զգալի մասը՝ 42% (աղյուսակ 2):

Աղյուսակ 5.2 Պետական մասնակցությամբ ընկերությունների եկամուտները՝ ըստ ոլորտների

մլն դրամ

Ոլորտ	2017	2018	2019	Տեսակարար կշիռ % (2019)
էներգետիկա	119,013.0	122,451.0	108,707.0	42%
Առողջապահություն	62,856.0	65,723.0	76,040.0	29%
Կրթություն	98,734.0	63,298.0	38,161.0	15%
Հեռուստառադիոհեռարձակում, կապ	8,302.0	8,534.0	8,675.0	3%
Փոստային կապի ազգային օպերատոր	7,251.0	6,759.0	7,811.0	3%
Ուղևորափոխադրում	3,793.0	3,955.0	4,275.0	2%

Ընդամենը	319,184.0	290,404.0	261,791.0	

Հարկաբյուջետային ռիսկեր պարունակող պետական մասնակցությամբ ընկերությունների վերլուծություն

Աղյուսակ 5.3 Բյուջետային վարկեր և երաշխիքներ ունեցող ՊՄԸ ցուցանիշները,

մլն դրամ

Ընկերության անվանումը	Բյուջետային վարկեր և երաշխիքներ	Իրացումից Հասույթ		Զուտ շահույթ			Կուտակված շահույթ	Պարտավորություններ	
	2019 թվականի վերջ	2018	2019	2018	2019	2020	2019	2019	Ֆիսկալ ռիկսի կարգավիճակ
«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ	116,817	94,238	74,975	41	1,262	(11,972)	(17,527)	145,619	Միջին
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	97,370	17,437	22,655	3,166)	(1,363)	(12,797)	30,671	129,767	Էական
«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	77,684	7,857	7,699	2,440	2,439	-	15,849	93,894	Ցածր
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	7,906	1,924	1,909	6	18	(839)	2,676	512	Ցածր
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	5,262	1,725	1,886	877	790	(1,220)	1,777	5,903	Ցածր
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ	3,247	3,671	4,945	(1,761)	39		(402)	5,741	Էական
«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ	2,196	-	-	(315)	(386)	(272)	(1,462)	2,889	Էական
«Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ	144	17	9	(13)	(25)	(28)	(811)	495	Էական
«Ավտոմատիկա» ՓԲԸ	135	-	-	(37)	(57)		(321)	338	Էական
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	76	1,332	1,687	(10)	4	(81.8)	(478)	1,169	Միջին
«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ	69	801	901	(57)	25		1	168	Միջին
«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ	24	458	591	10	22	6.8	(64)	181	Միջին
«Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ	24	326	406	1	14		4	237	Ցածր
«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ	21	441	643	-	26	5.1	(203)	750	Էական
«Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ	11	143	105	7	1		121	65	Ցածր
«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ	11	243	319	1	8		2	173	Ցածր

«Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲԸ	9	459	505	0	12		(25)	359	Ցածր
«Ավիաբուժ բժշկական կենտրոն» ՓԲԸ	2	114	111	3	2		3	40	Ցածր
«Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	1	281	356	6	17	(1.7)	(41)	39	Ցածր
«Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	1	146	194	(2)	(1)		(1)	5	Ցածր
Ընդամենը	311,011	131,616	119,897	(1,968)	1,584		29,769	388,341	

Աղյուսակում ներկայացված են այն պետական մասնակցությամբ ընկերությունները, որոնց հաշվեկշռում առկա է բյուջետային վարկ, կամ երաշխիք: Ընկերությունների ֆինանսական ցուցանիշներից ելնելով գնահատվել է յուրաքանչյուրի հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը:

Աղյուսակ 5.4 Խոշոր պարտավորություններ ունեցող պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների ցուցանիշները

մլն դրամ

	Պարտավորություններ			Ակտիվներ			Սեփական կապիտալ	
Անվանում	2019		2020	2019		2020	2019	2020
«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ	145,619	27%	154,294	148,776	18%	144,018	3,157	(10,276)
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	129,767	24%	138,842	177,642	21%	173,541	47,875	34,698
«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	93,894	18%	115,737	119,756	14%	131,548	25,862	15,811
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	19,631	4%	-	38,735	5%	-	19,104	-
«Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ	31,177	6%	-	24,879	3%	-	(6,298)	-
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	10,125	2%	10,178	16,104	2%	14,936	5,979	4,759
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	9,107	2%	10,346	13,809	2%	14,190	4,702	3,844
«Հայփոստ» ՓԲԸ	10,427	2%	-	24,342	3%	-	13,915	-
«Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ	8,607	2%	-	8,646	1%	-	39	-
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	5,680	1%	-	8,840	1%	-	3,160	-
«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ	5,312	1%	-	421	0%	-	(6,970)	-
«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	6,150	1%	-	6,150	1%	-	2,969	-
«Նաիրիտ-2» ՓԲԸ	6,110	1%	-	15,284	2%	-	9,174	-
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ	5,741	1%	-	5,822	1%	-	80	-
«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ	2,889	1%	4,545	2,470	0%	3,857	(419)	(688)
«Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ	2,483	0%		2,404	0%	-	2,383	-

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ	2,454	0%		11,617	1%	-	9,163	-
«Պրոֆեսոր Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ	2,126	0%		6,446	1%	-	4,320	-
«Հայավտոկայան» ՓԲԸ	1,246	0%		1,339	0%	-	93	-
«Շտապբուժօգնություն» ՓԲԸ	1,811	0%		3,520	0%	-	1,709	-
«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր ՓԲԸ	1,698	0%		2,307	0%	-	609	-
«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ	1,744	0%		1,020	0%	-	(723)	-

Աղյուսակ 5.5 Խոշոր պարտավորություններ ունեցող պետական մասնակցությամբ ընկերությունների ցուցանիշները (շարունակություն)

մլն դրամ

	Իրացումից Հասույթ			Զուտ շահույթ/վնաս		
Անվանում	**2018**	**2019**	**2020**	**2018**	**2019**	**2020**
«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ	94,238	74,975	77,310	41	1,262	(11,972)
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	17,437	22,655	29,410	(3,166)	(1,363)	(12,797)
«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	7,857	7,699	-	2,440	2,439	-
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	-	-	-	(4,759)	1,671	-
«Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ	61,482	36,162	-	(13,130)	3,622	-
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	1,725	4,805	3,861	877	790	(1,220)
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	1,924	1,909	2,029	6	18	(839)
«Հայփոստ» ՓԲԸ	6,759	7,811	-	339	(124)	-
«Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ	-	-	-	-	-	-
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	6,336	6,362	-	57	(254)	-

2020թ. առկա ցուցանիշների հիման վրա կարելի է որոշակիորեն արձանագրել ճգնաժամային տարվա ազդեցությունը, մասնավորապես արտարժույթով արտահայտված պարտավորությունների առկայությունը, ինչպես նաև փոխարժեքի տատանումը հանգեցրել են պարտավորությունների վերագնահատման և համապատասխանաբար փոխարժեքային տարբերությունից վնասների, որոնք արտահայտվել են շահութաբերության կտրուկ անկմամբ: Ինչ վերաբերում է հասույթներին, ապա էներգետիկ ոլորտում արձանագրվել է հասույթի ավելացում: Նույնը կարելի է դիտարկել նաև առողջապահության ոլորտի մասով, իսկ տրանսպորտի ոլորտը ներկայացնող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հասույթը նվազել է գրեթե 20%-ով:

Հաջորդիվ ներկայացված են խոշոր կուտակված վնասներ ունեցող պետական բաժնեմասնակցությամբ ընկերությունները:

Աղյուսակ 5.6 Առավելագույն կուտակված վնաս արձանագրված պետական մասնակցությամբ ընկերությունների ցուցանիշները

մլն դրամ

	Կուտակված վնաս		Իրացումից հասույթ		Զուտ շահույթ		Պարտավորություններ	
Անվանում	2019		2018	2019	2018	2019	2018	2019
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	(72,152)	38%	-	-	(4,759)	1,671	89,617	19,631
«Ջրառ» ՓԲԸ	(33,782)	18%	1,651	1,277	(4,170)	(3,093)	277	365
«Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ	(21,140)	11%	61,482	36,162	(13,130)	3,622	14,418	31,177
«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ	(17,527)	9%	94,238	74,975	41	1,262	149,214	145,619
«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ	(12,460)	7%	-	-	(1)	(0)	7,459	5,312
«Արմենիկում» ՓԲԸ	(14,190)	7%	127	89	1	(13)	1,523	1,523
«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ	(4,121)	2%	-	-	1	1,543	3,371	0
«Նոր Ակունք» ՓԲԸ	(4,183)	2%	-	-	(1)	56	1,788	38
«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ	(2,148)	1%	371	376	(271)	(175)	1,696	1,744
«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ	(1,462)	1%	-	-	(315)	(386)	2,746	2,889
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ	(1,316)	1%	1,824	1,958	(253)	(260)	1,762	1,004
«Երևանի ոսկերչական գործարան» ՓԲԸ	(1,633)	1%	3	29	-	-	148	166
«Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ	(811)	0%	17	9	(13)	(25)	490	495
«Նաիրիտ-2» ՓԲԸ	(736)	0%	528	6	(27)	(348)	6,112	6,110
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	(478)	0%	1,332	1,687	(10)	4	1,256	1,169
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ	(402)	0%	3,671	4,945	(1,761)	39	5,855	5,741
«Ավտոմատիկա» ՓԲԸ	(321)	0%	-	-	(37)	(57)	306	338
«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ	(203)	0%	441	643	-	26	808	750
Ընդամենը	(191,286)							

Էական կուտակված վնաս են արձանագրել մասնավորապես ջրային ոլորտի ընկերությունները: Այդ ոլորտի մասով արձանագրված վնասի առաջացման պատճառները հիմնականում պայմանավորված են ՀԾԿՀ-ի կողմից դեռևս 2007թ. հաստատված սակագներով, որոնց հաշվարկների մեջ ներառված չեն ամորտիզացիոն մասհանումները:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ջրային ոլորտի ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել:

2020 թվականի արդյունքներով որոշ խոշոր ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 5.7 Պետական մասնակցությամբ ընկերությունների ֆինանսական գործակիցները

Ընկերության անվանումը	Ծախսերի վերականգնման գործակից		Զուտ շահույթի մարժա(%)		Պարտքի սպասարկման գործակից		Վերաֆինանսավորման գործակից		Z- միավոր	
	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020
«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ	1.06	1.08	1.68	(15.49)	0.12	0.28	2.78	6.74	(0.67)	(1.44)
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	0.84	0.87	(11.13)	(43.51)	4.58	0.29	(6.41)	3.65	8.37	7.73
«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	1.42	1.60	49.15	(133.6)	0.20	0.21	2.06	2.11	1.11	0.32
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	1.05	1.25	0.94	(41.37)	0.03	0.02	0.28	0.24	1.20	0.60
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	1.21	0.95	22.68	(44.18)	0.03	0.10	0.68	3.22	1.58	0.27
«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ	0.54	0.40	-	(305.85)	-	-	(0.00)	(0.09)	(2.40)	(1.96)
«Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ	0.31	0.42	(268.4)	(218.7)	-	-	(2.89)	95.32	8.74	7.53
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	1.01	0.97	0.21	(5.18)	(0.16)	0.30	3.94	(10.36)	3.20	2.68
«Ջրառ» ՓԲԸ	0.43	0.71	(242.3)	(70.3)	0	-	(0.07)	(0.13)	169.37	157.9
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	0.81	0.87	(4.31)	(6.77)	-	-	2.40	4.70	2.33	2.25
«Հայավտոկայարան» ՓԲԸ	0.88	1.20	(16.59)	13.50	-	0.87	0.64	1.04	0.54	1.03
Թույլատրելի սահմանային նորմա	Առնվազն 1		Առնվազն 8%		Առավելագույնը 0.5		Առավելագույնը 1		Ապահով գոտի Z>2.6, Գորշ գոտի 1.1<Z<2.6, Ծանր գոտի Z<1.1	

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակից, սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» և «Հայավտոկայարան» ՓԲԸ-ների ֆինանսական վիճակի վատթարացման նշանակալի հավանականության մասին (գործակիցը գտնվում է սահմանված գորշ գոտում՝ Z<1.1):

Միաժամանակ, զուտ շահույթի մարժան դիտարկված ընկերություններում եղել է բացասական, պայմանավորված փոխարժեքային տատանումներից առաջացած վնասներով: Իսկ ծախսերի վերականգման գործակիցը գրեթե մոտ է միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում (2020թ.) էներգետիկայի ոլորտի դիտանցման ենթարկված մասնավոր ընկերությունների (թվով 4 Ընկերություններ) հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները նախորդ ժամանակաշրջանի (2019թ.) նկատմամբ ավելացել են 13.0 մլրդ դրամով և կազմել 476.1 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 451.7 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 436.3 մլրդ դրամի դիմաց կամ ավել 15.4 մլրդ դրամով (3.5%-ով):

Ընկերությունների 476.1 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 451.7 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում գործառնական շահույթը կազմել է 24.4 մլրդ դրամ:

Աղյուսակ 5.8 *Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը/վնասն ըստ տարիների*

հազ. դրամ

Մասնավոր ընկերություններ	2018թ.	2019թ.	2020թ.
ԸՆԴԱՄԵՆԸ	16,154,475.0	14,830,506.0	(9,130,092.0)
1. «Հրազդան ՋԷԿ» ԲԲԸ	2,835,161.0	2,382,469.0	(745,127.0)
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	14,920,000.0	524,000.0	(701,000.0)
3.«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	(12,353,723.0)	159,937.0	(3,107,451.0)
4. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	10,753,037.0	11,764,100.0	(4,576,514.0)

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել: Ընդ որում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ները հանդիսանում են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող

նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով ոլորտին տրամադրված վարկային միջոցների խոշորագույն ստացողներից:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ այդ Ընկերությունների ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 5.9 *Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային ֆինանսական գործակիցները*

Ցուցանիշ	2018թ.	2019թ.	2020թ.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.1	1.1	1.1	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա(%)	3.7	3.2	(1.9)	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	2.8	2.8	2.0	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	54.6	57.9	67.7	Առավելագույնը 60 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.1	0.1	0.1	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	1.0	0.7	1.8	Առավելագույնը 1
Z միավոր	1.23	1.4	0.2	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1<Z<2.6, Ծանր գոտի՝Z<1.1:

Ինչպես երևում է աղյուսակից հաշվետու ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման բարձր հավանականության մասին (Z=0.2 գտնվում է սահմանված ծանր գոտում Z<1.1):

Ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական վիճակի վատթարացման բարձր հավանականության մասին:

Զուտ շահույթի մարժան բնութագրում է բիզնեսի գործառնական արդյունավետությունը: Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ այս ցուցանիշը ցուցաբերել է նվազման դինամիկա և բավականին ցածր է պրակտիկայում կիրառվող նվազագույն նորմայից, ինչը պայմանավորված է արտարժութային տատանումներից կրած վնասներով:

Վերաֆինանսավորման գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել է 1.1 կետով և կազմել է 1.8, որը փաստում է, որ որոշ Ընկերություններ ի վիճակի են գործառնություններից ստացվող դրամական հոսքերի հաշվին կատարել իրենց ընթացիկ պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականության մասին (Z=0.2), իսկ լրացուցիչ վեց գործակիցներից երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակին, հետևաբար Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը նշանակալի է:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
ՍՊԵՑԻՖԻԿ ՖԻՍԿԱԼ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՇՐՋԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սպեցիֆիկ ֆիսկալ ռիսկերն առաջանում են պայմանական պարտավորությունների կամ այլ անորոշ իրադարձությունների նյութականացման արդյունքում: Այդ իրադարձություններից յուրաքանչյուրը կարող է ենթադրել անհապաղ և/կամ շարունակական ծախսեր՝ պայմանավորված կառավարության բացահայտ պարտավորություններով (պարտավորություններ, որոնք ունեն իրավական կամ պայմանագրային հիմք) կամ թաքնված պարտավորություններով, որոնք սահմանված չեն որևէ օրենքով կամ պայմանագրով:

Ստորև կատարված ուսումնասիրությունն արտացոլում է սպեցիֆիկ ֆիսկալ ռիսկերի ընդգրկուն շրջանակը, որի համար հիմք է հանդիսացել ԱԶԲ-ի հետ համատեղ մշակված ֆիսկալ ռիսկերի կառավարման բարելավման 2019-2023 թվականների ճանապարհային քարտեզը:

Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ձևաչափով գործող ընկերությունների պայմանագրերից բխող պայմանական պարտավորությունների վերլուծություն

Վերլուծության են ենթարկվել ստորև ներկայացված ՊՄԳ ձևաչափով գործող թվով երեք ընկերությունների պայմանագրերը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի գնման երեք խոշոր պայմանագրերը (որոնք նույնպես հանդիսանում են պայմանական պարտավորությունների աղբյուր, քանի որ պարունակում են երաշխավորած գնման պայմաններ):

Ստորև ներկայացվում է նշված 6 ընկերությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Աղյուսակ 5.10 *Գործող ՊՄԳ և ԷԳՊ պայմանագրերը*

Անվանում	Ոլորտ	Սկիզբ	Ավարտ	Պայմանական պարտավորությունների հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը	
				Մինչև COVID 19	**COVID-19 ի պայմաններում**
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	Տրանսպորտ	2008թ.	2038թ.	Միջին	Նշանակալի
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	Ջրամատակարարում և կեղտաջրերի հեռացում	2016թ.	2031թ.	Միջին	Նշանակալի
«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ	Տրանսպորտ	2002թ.	2032թ.	Ցածր	Նշանակալի
«Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ (Որոտան ՀԷԿ), ԷԳՊ	Էներգետիկա	2016թ.*	2038թ.	Միջին	Նշանակալի

«Արմփաուեր» ՓԲԸ, ԷԳՊ	Էներգետիկա	2019թ.*	2041թ.	Ցածր	Միջին
«Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ, Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային էլեկտրակայան, ԷԳՊ	Էներգետիկա	2021թ.*	2041թ.	Ցածր	Միջին

*գործարքի ֆինանսական պայմանների բավարարման տարի. ԷԳՊ պայմանագրերի փաստացի տևողությունը կազմում է մինչև 25 տարի՝ սկսած ստորագրման տարվանից:

ՊՄԳ պայմանագրերի վերլուծության արդյունքում նյութականացման ռիսկը մինչև COVID 19-ի ի հայտ գալը եղել է միջին կամ ցածր, սակայն COVID 19-ի ճգնաժամի հետևանքով ռիսկի աստիճանը բարձրացել է ՊՄԳ բոլոր պայմանագրերի համար, հաշվի առնելով, որ ճգնաժամը տարբեր ազդեցություններ է ունենում ընկերությունների դրամական հոսքերի վրա, ինչն իր հերթին մեծացնում է պայմանագրի վերաբանակցման (պայմանագրերում անհաղթահարելի ուժի ազդեցության և տնտեսական հավասարակշռության վերաբերյալ դրույթների հետևանքով) կամ պայմանագրի վաղաժամ դադարեցման (ԷԳՊ դեպքում՝ վաղաժամ հետ գնման) ռիսկերը: Շինարարության փուլում գտնվող ծրագրերի («Արմփաուեր» ՓԲԸ և «Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ) պարագայում ճգնաժամը հանգեցրել է էական ուշացումների, ինչն իր հերթին կարող է բարձրացնել էական գերածախսեր ունենալու ռիսկը:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

ՀՀ կառավարության 07.02.2008թ. N83-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008թ. կնքվել է «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը:

Ծառայությունների ծավալները և երթուղիները համաձայնեցվում են յուրաքանչյուր տարի՝ հաջորդող տարվա համար, հետևաբար պայմանագրի ֆինանսական տարբեր բաղադրիչների ապագա մակարդակները բարդ է կանխատեսել:

Կոնցեսիոն պայմանագիրը ներառում է վնասի սուբսիդավորում ուղևորափոխադրման ոչ շահութաբեր ուղղությունների համար, ինչն էլ նյութականացել է յուրաքանչյուր տարի: Սակայն վճարման ենթակա գումարների առավելագույն չափը սահմանափակվում է կոնցեսիոների կողմից վճարման ենթակա տարեկան կոնցեսիոն վճարի չափով: Համաձայն առկա պատմական տեղեկատվության, կոնցեսիոն պայմանագրի սկզբից ի վեր որևէ այլ պայմանական պարտավորության նյութականացում տեղի չի ունեցել, նույնիսկ՝ COVID 19-ի ճգնաժամի մեկնարկից հետո:

Կոնցեսիոն պայմանագիրը նախատեսում է նաև փոխհատուցումներ մի շարք դեպքերում, որոնց նյութականացման ռիսկի հավանականությունն ավելանում է՝ պայմանավորված համավարակի հետ կապված ճգնաժամով: Այդպիսի դեպքերից են՝

- Օրենսդրության անբարենպաստ փոփոխություն,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության մեղմման ծախսեր,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման հետ կապված վճարումներ,
- Կոնցեդենտի կողմից պարտավորությունների չկատարման հիմքով պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ,

- Փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ:

Կոնցեսիոն պայմանագրի վաղաժամ դադարեցման մասով պայմանական պարտավորությունները հիմնականում չափելի են և դրանց առավելագույն ազդեցությունը վատագույն սցենարի դեպքում ներկայում գնահատվում է մոտ 100 մլրդ դրամ[43], ընդ որում այդ հնարավոր գումարը կոնցեսիոն գործունեության ընթացքում աճում է՝ հաշվի առնելով պայմանագրի պայմանները:

Կոնցեսիոն պայմանագրի ֆիսկալ ռիսկայնության կարգավիճակը մինչև համավարակը գնահատվում էր միջին, իսկ համավարակի հետ կապված ճգնաժամով պայմանավորված՝ նշանակալի, չնայած նրան, որ ընկերությունը 2018թ. համեմատ 2019թ. կրկնապատկել է շահույթը, իսկ 2020թ. արձանագրել է նույնիսկ ավելի բարձր շահույթ՝ ի հեճուկս բեռնափոխադրման ծավալների աճի և այլ գործոնների (վնասաբեր ուղևորափոխադրման գործառնություններն էականորեն նվազել են 2020թ., իրականացվել է նաև ակտիվների վաճառք):

«Վեոլիա ջուր» ՓԲԸ

21.11.2016թ. ՀՀ կառավարության և «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր՝ 15 տարի ժամկետով (Վարձակալական պայմանագիր):

Վարձակալական պայմանագրի շրջանակներում առկա են մի շարք նշանակալի պայմանական պարտավորություններ, այդ թվում.

- Վարձակալի կողմից պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակից դուրս այլ աշխատանքների իրականացման դեպքում Վարձատուի կողմից համապատասխան գումարի փոխհատուցում,
- Բազային սակագնի երաշխիք, որն արդեն երկու անգամ կիրառվել է՝ ներառյալ վարձակալական վճարի կրճատում (արդեն երկու անգամ կիրառվել է),
- Վարձակալական պայմանագիրը պարունակում է վերաբանակցությունների և վաղաժամկետ դադարեցման բազմաթիվ դեպքեր: Առաջիկայում Վարձակալական պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ռիսկը համարվել էր ցածր՝ առնվազն մինչև 2025թ., ինչը պայմանավորված էր մինչև կորոնավիրուսի համավարակն իրականացված՝ պայմանագրի վերաբանակցմամբ: Պայմանագրի վաղաժամ դադարեցման գծով պայմանական պարտավորությունը մասնակի չափելի է և գնահատվել է 74.6 մլրդ դրամ՝ միջանկյալ սցենարի դեպքում, որտեղ նման վճարումը չի կարող գերազանցել ապագա ակնկալվող վարձակալական վճարների գումարը:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն աջակցություն է ստացել մայր ընկերությունից, ինչը փոխհատուցում է սպառողների որոշ խմբերից հասույթի հավաքագրման վատթարացման հետևանքով դրամական հոսքերի կրճատման ռիսկը:

1 Կիրառվել է Ասիական Զարգացման Բանկի կողմից մշակված մեթոդաբանությունը՝ ինչպես և սույն փաստաթղթում ներկայացվող այլ հաշվարկների դեպքում:

Մինչև COVID-19 համավարակը, Վարձակալական պայմանագրի գծով պայմանական պարտավորությունների ֆիսկալ ռիսկի կարգավիճակը գնահատվել է միջին, սակայն հաշվի առնելով թարմացված տեղեկատվությունը՝ հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը ներկայում նշանակալի է:

«Արմենիա Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ

Կոնցեսիոն պայմանագիրը գործում է 2002թ-ից՝ Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի համար, իսկ 2007թ-ից ներառում է նաև Գյումրու «Շիրակ» օդանավակայանը: Մայր ընկերությունը աշխարհի օդանավակայանների խոշորագույն օպերատորներից է՝ «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» ընկերությունն, որը ցուցակված է Նյու Յորքի ֆոնդային բորսայում:

Խումբը մինչև 2019 թվականը շահութաբերության բարձր ցուցանիշներ ուներ, իսկ ՀՀ-ի դուստր ձեռնարկությունը եղել է ամենաարդյունավետներից մեկը:

Պայմանագիրը Կոնցեսիոներին հնարավորություն է տալիս միակողմանիորեն երկարացնել կոնցեսիայի տևողությունը:

Հաշվի առնելով ընկերության բարձր շահութաբերությունը՝ պայմանագրի վաղաժամ դադարեցման պայմանական պարտավորությունը և ընկերության բիզնես ռիսկը գնահատվել են ցածր: Սակայն իրավիճակը փոխվել է պայմանավորված համավարակով, քանի որ աշխարհում օդանավակայանների ոլորտը ճգնաժամից առավել տուժածներից մեկն է:

Այս փաստը սկսեց արտացոլվել ընկերությունների խմբի կողմից հատկապես 2020թ. երկրորդ եռամսյակի համար հրապարակված ֆինանսական հաշվետվություններում: Ակնհայտ էր, որ ԱՄՕ ընկերությունը արագորեն սպառում է իր դրամական միջոցները և վերջիվերջո չի կարողանալու սպասարկել իր պարտքը: Ընկերությունը ստիպված եղավ հայցել պայմանագրի ֆինանսական քովենանթի չեղարկում, որը բավարարվեց ֆինանսավորողի կողմից:

Սկսած 3-րդ եռամսյակից՝ ոլորտում արձանագրվել է բարելավման միտում, սակայն ցուցանիշները շատ ավելի ցածր մակարդակում էին, քան մինչև Covid-19 համավարակով պայմանավորված ճգնաժամը: Վերջին եռամսյակում EBITDA (շահույթ՝ նախքան տոկոսավճարները, հարկերը, մաշվածությունը և ամորտիզացիան) ցուցանիշը դրական է եղել և ընկերությունը, կարծես թե, դանդաղեցրել է դրամական միջոցների սպառման տեմպը: Սակայն, ընկերության պարտքի հետվճարման կորը շարունակել է լուրջ մարտահրավեր ներկայացնել (առկա դրամական միջոցների ծավալը շատ ավելի փոքր էր առաջիկա ակնկալվող մարումներից): Ընկերությանը հաջողվել է վերաբանակցել իր սինդիկացված վարկի մարման ժամանակացույցը՝ մայր գումարի մարման 18-ամսյա հետաձգմամբ, այդ թվում՝ 2020թ. դեկտեմբերին նախատեսված հերթական մարման մասով, և շարունակել է վճարել տոկոսագումարները:

2020թ. ավարտին արդեն իսկ նկատվում էր EBITDA-ի փոքր դրական մակարդակ, իսկ 2021թ. 1-ին եռամսյակում արձանագրվել է EBITDA-ի բավականին բարձր՝ մոտ 35 տոկոս, մարժա՝ ոչ միայն ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալի վերականգնմամբ պայմանավորված հասույթի ավելացման, այլ նաև խնայողությունների շնորհիվ: Այնուամենայնիվ, դեռևս պահպանվում է 2022թ. նախատեսված հետվճարումների համար բավարար ծավալի դրամական միջոցներ գեներացնելու շուրջ անորոշությունը:

Այսպիսով, ժամանակավորապես նվազել է ռիսկն առ այն, որ միջազգային սինդիկացված վարկի շրջանակներում վարկատուները կարող են դեֆոլտ հայտարարել և արագացնել վարկի հետվճարումը և՝ հաշվի առնելով, որ ընկերության բաժնետոմսերը և ակտիվները գրավադրված են ի օգուտ վարկատուների, ՀՀ կառավարությունը կարող է պարտավորված լինել ստանձնելու վարկի մարումը: Պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում առկա են այլ, ավելի մեծ պարտավորություններ, որոնք սակայն չափելի չեն: Վերը նշված հանգամանքներից ելնելով, սույն ՊՄԳ պայմանագրի գծով պայմանական պարտավորությունների ֆիսկալ ռիսկի կարգավիճակը նշանակալի է:

«Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ

Ընկերությունը հանդիսանում է հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության առանցքային համալիր, նախկինում պետական մասնակցությամբ ընկերություն էր, որը մասնավորեցվել և վաճառվել է էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող «Քոնթուր Գլոբալ» խոշոր միջազգային խմբին: Ընկերությունն իր ամբողջ հզորությունը և փաստացի արտադրված էլեկտրաէներգիան վաճառում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (ՀԷՑ)՝ ՀԾԿՀ կողմից հաստատված սակագներով: ՀԷՑ ընկերությունը պարտավոր է գնել արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան, իսկ չգնելու դեպքում՝ վճարել փոխհատուցում, որը մինչ այժմ չի կիրառվել: Ամենախոշոր պայմանական պարտավորությունը դա պետության կողմից հիմնական միջոցների հետգնման պարտավորությունն է, որոնց արժեքը 2019թ. վերջին կազմել է 90.1 մլրդ դրամ, սակայն հիմնական միջոցների ավելացման հետևանքով այն կդառնա 99.6 մլրդ դրամ:

Նշենք նաև, որ ընկերությունը ներկայում մարում է Վերականգնման վարկերի բանկից (KfW) Եվրոյով ստացված վարկը, ինչպես նաև 3 այլ ՄՖՀ-ներից, այդ թվում՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայից, ԱՄՆ դոլարով ստացված վարկեր (մյուս երկու վարկերը կապված են Նիդերլանդների և Գերմանիայի կառավարությունների հետ), որոնք տրամադրվել են թե մինչ մասնավորեցումը և թե մասնավորեցումից հետո: Հարկ է նկատել նաև, որ 2020թ. ԱՄՆ դոլարի և Եվրոյի փոխարժեքները դրամի նկատմամբ աճել են:

2019թ. ընկերության գործունեությունը եղել է շահութաբեր: Սակայն, 2020թ. COVID-19 համավարակի հետևանքով տնտեսական ակտիվության կտրուկ նվազման հետ մեկտեղ, ընկերությունն արձանագրել է շատ ավելի ցածր հասույթի մակարդակ (մոտ 25 տոկոս կրճատում), ինչը խիստ ազդեցություն է ունեցել ընկերության գործունեության վրա (ցածր գործառնական շահույթի մակարդակ, դրամական հոսքերի և փոխառու կապիտալից ստացվող եկամտի նվազում): Ի լրումն, ավելացան նաև արտարժույթի փոխարժեքի հետ կապված վնասները՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ արժեզրկման հետևանքով, ինչը հանգեցրեց պարտքի սպասարկման առավել մեծ ծախսերի: Արդյունքում, 2020թ. զուտ վնասները գերազանցել են հասույթը և ընկերությունն արձանագրել է սեփական կապիտալի բացասական մակարդակ՝ չնայած բաժնետերերի կողմից հավելյալ սեփական կապիտալի ներարկմանը: Ընկերությունը շարունակում է սպասարկել իր վարկերը՝ շնորհիվ բաժնետերերի հավելյալ աջակցության, որոնք տրամադրել են ավելի քան 10 մլրդ դրամ ծավալով արտակարգ աջակցության վարկ (համարժեք է ընկերության 2020թ. հասույթին):

Հասույթի գեներացումը պետք է բարելավվի 2021թ., սակայն վերականգնման տեմպի մասով դեռևս անորոշություն կա: Ֆիսկալ ռիսկի կարգավիճակը նշանակալի է՝ հաշվի առնելով

ընկերության ֆինանսական վիճակը և այն փաստը, որ ընկերությանը չեն բավարարում հաստատված սակագները: Նախկինում ֆիսկալ ռիսկի կարգավիճակը եղել է միջին՝ հաշվի առնելով, որ շահույթը դեռևս փոքր էր, ինչպես նաև հաշվի է առնվել պարտքի մակարդակները: Ամեն դեպքում, մեղմացուցիչ գործոն է այն փաստը, որ բաժնետերերը, որոնք հանդիսացել և 2020թ. ընթացքում շարունակել են հանդիսանալ շահութաբեր ընկերությունների խումբ, 2020թ. ընթացքում աջակցել են ընկերությանը:

«Ռենկո Ս.Պ.Ա-ի և Արմփաուեր» ՓԲԸ (Երևանի նոր ՋԷԿ)

Ընկերությունը Երևան քաղաքում կառուցում է ջերմային էլեկտրակայան, հանդիսանում է աշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության խոշոր գործունեություն իրականացնող իտալական Ռենկո էներգետիկական խմբի և գերմանական Սիմենս խմբի դուստր ընկերություն: Ծրագիրը գտնվում է շինարարության փուլում: Ծրագրի գնահատված արժեքը կազմում է մոտ 300 միլիոն ԱՄՆ դոլար, որի 70 տոկոսը ֆինանսավորվում է ՄՖԿ վարկի միջոցով: Կոնցեսիայի ժամկետը կազմում է 20 տարի՝ սկսած առևտրային շահագործման մեկնարկից, որը նախատեսվում է 2022թ.: 2020թ. վերջի դրությամբ, ավարտված էին ծրագրի աշխատանքների 75 տոկոսը, իսկ 2021թ. մարտի վերջի դրությամբ՝ 78 տոկոսը: Փաստացի, COVID-19 համավարակի հետևանքով, շինարարության մասով եղել է 168 օր ուշացում, սակայն ընկերության կողմից ձեռնարկված վերջին միջոցները թույլ են տալիս նշված ուշացումը կրճատել 45 օրով: Այս ուշացումից առաջացող գերածախսերը գնահատվում են 6 մլն ԱՄՆ դոլար, իսկ կայանի շահագործման հանձնումը կհետաձգվի առնվազն 4 ամսով: Ենթադրվում է, որ հավելյալ ծախսերը ծածկվելու են բաժնետերերի կամ լրացուցիչ պարտքի ներգրավման միջոցով:

Հիմնական պայմանական պարտավորությունը ՀՀ կառավարության կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում կայանի հետգնման պարտավորությունն է (նյութականացման դեպքերն են՝ օտարումը, բռնագրավումը, զավթումը, կառավարությանն առնչվող անվճարունակության դեպքի տեղի ունենալը, պայմանագրի շրջանակներում պետության կողմից տրված հավաստիացումների և երաշխիքների էական խախտումը, ծրագրի կառուցման կամ շահագործման՝ Կառուցապատողի կարողության վրա էականորեն և անբարենպաստ կերպով ազդող օրենսդրական փոփոխությունը): Առաջին տարվանից հետո, պայմանական պարտավորության գումարին կավելանա 15 տոկոս հավելավճար՝ ի հավելումն ներդրման գումարի, իսկ այնուհետև գումարը կնվազի տարեկան 4 տոկոսով:

Առկա է նաև պետության կողմից երաշխավորված՝ ՀԷՑ ընկերության պարտավորություն՝ գնել արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան, իսկ չգնելու դեպքում՝ վճարել փոխհատուցում, սակայն այդ պայմանական պարտավորությունը դեռևս չի գործում, քանի որ կայանը դեռ շահագործման չի հանձնվել:

Քանի որ ծրագիրն այլևս հնարավոր չէ դադարեցնել կամ էլ ծրագրի իրականացումը ստանձնելու դեպքում պետությունը ստիպված կլինի այն ավարտին հասցնել, ապա ներկայում պայմանական պարտավորությունը սահմանափակվում է ներդրման 300 մլն ԱՄՆ դոլար գումարով: Առևտրային շահագործման մեկնարկից հետո այդ գումարը ժամանակավորապես կբարձրանա:

Հաշվի առնելով COVID-19 համավարակը, որը հանգեցրել է աշխատանքների էական ուշացման, ինչպես նաև ապագայում վաճառվելիք էլեկտրաէներգիայի հնարավոր ծավալների շուրջ անորոշության (ինչը բարձրացնում է վերը նշված ՀԷՑ-ի պարտավորության ռիսկայնությունը), ծրագրի ֆիսկալ ռիսկի կարգավիճակը գնահատվում է միջին:

«Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային կայան

Այս նախագծի շրջանակներում կառուցվում է առաջին ամենամեծ արևային էլեկտրակայանը՝ 55 Մվտ դրվածքային հզորությամբ: Այն պատկանում է La Providencia և FRV իսպանական մասնագիտացված խմբերին և ֆինանսավորվում է IFC-ի, EBRD-ի և Ֆինլանդիայի կառավարության վարկային միջոցներով: Ծրագրի ընդհանուր արժեքը 50.2 մլն ԱՄՆ դոլար է: Ֆինանսական փակումը տեղի է ունեցել 2020թ. հուլիսին, իսկ աշխատանքները նախատեսվում է ավարտել 2022թ-ին:

Նախագծի իրականացման արդյունքում առկա են մի շարք պայմանական պարտավորություններ, մասնավորապես արտադրվող էլեկտրաէներգիայի համար գնման երաշխիք ՀՀ կառավարության կողմից, և անբարենպաստ իրադարձությունների դիմաց լրացուցիչ հատուցման իրավունք, որը կարող է առաջանալ միայն շինարարության ավարտից մեկ տարվա ընթացքում:

Հիմնական պայմանական պարտավորությունը գործարքի ֆինանսական կայացումից հետո վաղաժամ դադարեցումն է՝ ՀՀ կառավարության գործողությունների հետևանքով, տարբեր հիմքերով (ա) Կառավարությունը չի կատարում իր կողմից պարտավորություն հանդիսացող որևէ վճար, (բ) որևէ պետական մարմնի կողմից էքսպրոպրիացիայի կամ հարկադիր ձեռքբերման է ենթարկվել ծրագրի տարածքը, կայանը, գ) Կառավարությանը վերաբերող անվճարունակության դեպք, դ) Օրենքի փոփոխություն կամ անբարենպաստ պայմանի դեպք, որը վերացված կամ փոփոխված չէ 180 (մեկ հարյուր ութսուն) օրվա ընթացքում և անհնար է դարձնում կայանի կառուցումը կամ շահագործումը: Կառուցապատողի կողմից. ե) Կառավարության կողմից Համաձայնագրի ցանկացած այլ էական խախտում, եթե այդ խախտումը չի վերացվել 180 օրվա ընթացքում:

Կիրառելի բանաձևը թույլ է տվել հաշվարկել առավելագույնը 26.2 մլրդ դրամի փոխհատուցում, որն այնուհետև կնվազի շինարարության ավարտից հետո: Ինչպես նշվեց, այլ պայմանական պարտավորությունները դեռ չեն կարող չափվել:

Հաշվի առնելով Covid-19 համավարակի հետևանքներից բխող անորոշությունների ներկա համատեքստը և հովանավորների ֆինանսական վիճակի ու շինարարության առաջընթացի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը, նախագծի ֆիսկալ ռիսկի կարգավիճակը դասակարգվում է միջին:

2020թ. դեկտեմբերի դրությամբ ՊՄԳ ծրագրերի գծով պայմանական պարտավորությունների ամփոփ աղյուսակ

Աղյուսակ 5.11 *Պայմանական պարտավորությունների ամփոփ հաշվարկ*

մլն դրամ

Ծրագրի անվանում	Այլ ՊՊ	Վաղաժամ դադարեցում	Ընդհանուր ՊՊ	ՀՆԱ նկատմամբ %
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ		100,024.0	100,024.0	1.6
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	18,200.0	74,585.0	92,785.0	1.5
«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ	35,776.0	Առկա չէ	35,776.0	0.6
«Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ		99,600.0	99,600.0	1.6
«Արմփաուեր» ՓԲԸ		156,000.0	156,000.0	2.5
«Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ		26,169.0	26,169.0	0.4
Ընդամենը	53,976.0	456,378.0	510,354.0	8.26

Հաշվարկը հիմնված է 2020թ. վերջին արդեն իսկ մշակված պարտավորությունների տվյալների բազայի թարմացված տարբերակի վրա: Հաշվարկների իրականացման համար իրենց գործուն աջակցությունն են ցուցաբերել նաև ԱԶԲ-ն և ԱՄՀ-ն:

Բնական և մարդածին աղետներից առաջացող ֆիսկալ ռիսկեր

Աղետների ռիսկերը կարող են ունենալ հիմնականում բնական պատճառներ, հատկապես՝ հիդրոօդերևութաբանական (ջրհեղեղներ, կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ, փոթորիկ), երկրաֆիզիկական (երկրաշարժ, հրաբխի ժայթքում, սողանք), կենսաբանական (համաճարակներ և պանդեմիաներ, սանիտարական այլ ճգնաժամեր), տիեզերական (հեռահաղորդակցության և էլեկտրաէներգետիկ խափանումների հանգեցնող արեգակնային փոթորիկներ): Սակայն, կարող են լինել նաև այլ պատճառներ, հատկապես՝ տեխնոլոգիական, բնատեխնածին:

2019թ. բնական աղետների (կարկտահարություն և ցրտահարություն) հետևանքով վնասվել է 15698 հա ցանքատարածություններ, որոնց հասցված ընդհանուր վնասը կազմել է 9,578 մլն դրամ: 50-100% տուժած հողօգտագործողներին տրամադրվել է 437.0 մլն դրամ գումարի փոխհատուցում: 2020թ. տեղի ունեցած բնական աղետների հետևանքով կրած վնասի փոխհատուցում չի նախատեսվել, քանի որ պետական աջակցության միջոցով իրականացվում է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիր:

2021թ. գյուղատնտեսական տարվա համար ապահովագրվող մշակաբույսերի ցանկը և ծրագիրն ընդգրկող մարզերի շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով կարտոֆիլ, սալոր և ձմերուկ/սեխ մշակաբույսերը: 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ ապահովագրական ընկերությունները կնքել են 2581 ապահովագրական պայմանագիր, ապահովագրավճարը կազմել է շուրջ 439.3 մլն դրամ, որից սուբսիդավորված գումարը՝ շուրջ 256.6 մլն դրամ: Կնքված պայմանագրերի

արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է 3952 հա: Գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրերի կնքման գործընթացը շարունակվում է: 2021թ. ՀՀ պետական բյուջեով միջոցառման համար նախատեսվող գումարի չափը կկազմի է 500 մլն դրամ:

Հայաստանը նաև մեծապես ենթարկվում է երկրաշարժի ռիսկի՝ ինչպես ցույց է տվել 1988թ. Սպիտակի երկրաշարժը: Երևանի տարածաշրջանը սեյսմագետների կողմից համարվում է բարձր ռիսկի գոտի, մասնավորապես՝ Գառնու խզվածքի պատճառով, և այստեղ առկա է խոշոր, ավերիչ երկրաշարժերի պատմություն: Այդ տարածքում խոշոր երկրաշարժը կարող է ծանր մակրոտնտեսական հետևանքներ ունենալ: Հայաստանը պատմականորեն խոցելի է եղել երկրաշարժերի տեսանկյունից: 1988թ. տեղի ունեցած վերջին ավերիչ երկրաշարժի հետևանքով երկրի հյուսիսային շրջաններում պատճառված տնտեսական վնասները կազմել են մոտավորապես 15-20 մլրդ ԱՄՆ դոլար: Նշված վնասները գերազանցում էին նախկին Հայկական ԽՍՀ ՀՆԱ-ն:

Համաձայն աղետների ռիսկի կառավարման վերաբերյալ ԱԶԲ 2014թ. զեկույցի, Երևանում 7.0 բալ ուժգնությամբ երկրաշարժի հետևանքով կարող է զոհվել մինչև 300 հազար մարդ, ինչը պայմանավորված է ոչ համարժեք, խորհրդային ժամանակաշրջանի մեծաթիվ շենքերի, հատկապես՝ խոշոր բազմաբնակարան շենքերի առկայությամբ:

Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսական վնասները կարող են կազմել մինչև ՀՆԱ 100 տոկոսը (Համաշխարհային Բանկ և ԱԶԲ):

Համաձայն Հայաստանում աղետների ռիսկի ֆինանսավորման վերաբերյալ Համաշխարհային բանկի 2017թ. զեկույցի, փաստ է, որ Սպիտակի երկրաշարժի հետևանքներից վերականգնումը շարունակելու ուղղությամբ ծախսեր իրականացվում էին առնվազն մինչև 2015թ.: Ակնհայտ է, որ խոշոր երկրաշարժի համար Հայաստանի ֆիսկալ ճկունությունը փոքր է, հետևաբար առավել քան անհրաժեշտ են նման իրադարձության ազդեցությունը (զոհեր, տնտեսական ու ֆիսկալ ազդեցություններ) նախօրոք նվազեցնելուն ուղղված՝ ռիսկերի կրճատման բոլոր ջանքերը, հատկապես՝ շենքերի արդիականացումը և ամրացումը, որի համար հնարավոր են ցածր ծախսատարությամբ լուծումներ և որի մասով Հայաստանն ունի փորձառություն:

2016թ. մեկնարկել է «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը», որը նախատեսված է ավարտել 2024 թվականի մայիս ամսին:

Ծրագիր շրջանակներում ընդգրկված են 46 դպրոցներ, որոնցից փաստացի կառուցվել և հանձնվել է շահագործման 6 դպրոց, 1 դպրոց գտնվում է շահագործման հանձման գործընթացում, 12 դպրոցներ գտնվում են շինարարության փուլում, 2 դպրոցների նախագծային աշխատանքները ավարտվել են, 13 դպրոցներ գտնվում է նախագծման տարբեր փուլերում, 2 դպրոցների համար իրականացվում է շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրության աշխատանքներ, ևս 10 դպրոցների ուղղությամբ դեռևս աշխատանքներ չեն կատարվում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է անվտանգ կրթական պայմաններ ստեղծել 19800 աշակերտների համար, ինչը կազմում է պետական դպրոցներում սովորող աշակերտների 5%:

ՀՀ 2021թ. պետական բյուջեով ծրագրի իրականացման համար նախատեսված է 4.1 մլրդ դրամ:

Կենսաբանական վտանգների առումով, ինչպես այլ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում, Covid-19 համավարակի տարածումը՝ չնայած վաղ ձեռնարկված միջոցառումներին այն տարբեր

կասկադային ազդեցությունների միջոցով վերածվեց տնտեսական և սոցիալական ճգնաժամի՝ 2020թ. տեղի ունեցած տնտեսական անկմամբ: Կորոնավիրուսային համավարակի տնտեսական ու սոցիալական հետևանքների չեզոքացման համար 2020թ. և 2021թ. նախատեսվել է համապատասխանաբար՝ 71.8 մլրդ ՀՀ դրամ և 23.7 մլրդ ՀՀ դրամ:

Պետության դեմ իրականացվող դատական վարույթներից առաջացող ֆիսկալ ռիսկեր

ՀՀ ՖՆ մասնակցությամբ պետության դեմ քննվող հայցերի քանակը 2021թ. մայիսի դրությամբ կազմում է 917, մոտ 11.7 մլրդ ՀՀ դրամի, 1.6 մլն ԱՄՆ դոլարի, 606.4 հազ. եվրոյի և 3.6 մլն չեխական կրոն հայցագնով:

Բացի վերը նշված հայցերից, առկա են առավել նշանակալի այլ հայցեր՝ ընդդեմ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի: Ներկայացված հայցերով ՀՀ դատարաններում վիճարկվում է 2943 դատական գործ՝ մոտ 126.8 մլրդ դրամ գումարի չափով:

Անհրաժեշտ է նշել, որ ռիսկի իրական մակարդակը շատ ավելի ցածր է, քանի որ հայցվորները ոչ բոլոր գործերն են հաղթում, իսկ հաղթելու պարագայում վճռով հաճախ սահմանվում են ավելի փոքր գումարներ:

Հնարավոր բնապահպանական պարտավորությունների հետևանքով առաջացող ֆիսկալ ռիսկեր

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) քարտեզագրման արդյունքում առկա է մոտ 2500 սողանքային տարածքներ և ներկայում խնդրի լուծման ֆինանսավորման աղբյուր դիտարկվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդը: Թունավոր թափոնների տեղամասերի հետ կապված ռիսկերից խուսափելու նպատակով նշված տարածքներում հանքարդյունաբերական գործունեության թույլտվություններ չեն տրամադրվում:

ՇՄՆ նույնականացրել է հնարավոր բնապահպանական պարտավորություններ ենթադրող 44 տեղամասեր, որոնք առաջացել են դեռևս խորհրդային ժամանակաշրջանում, հիմնականում հանքարդյունաբերական ծագումով: Վերականգնման նպատակով ՇՄՆ կողմից առաջնահերթ են համարվել 10 վայրեր, որից 2019թ. վերականգնել է միայն մեկ տեղամաս, իսկ 2020թ. նման աշխատանքներ չեն իրականացվել: ՇՄՆ նաև իրականացնում է ջրի խորքային հորերի որակի ուսումնասիրություններ՝ հնարավոր ռիսկերը բացահայտելու նպատակով:

Այսպիսի հնարավոր պարտավորությունները չափազանց բարդ է նախապես հաշվարկել, սակայն կարևորագույն խնդիրը՝ վերականգնման կարիք ունեցող տեղամասերի նույնականացումն ու մանրակրկիտ ուսումնասիրությունն է՝ ծախսերի նախնական հաշվարկներ կատարելու նպատակով: Այս առնչությամբ ՇՄՆ բարձրացրել է 4 առաջնահերթ խնդիրները.

- Սևանա լճի ջրածածկ և ճահճապատ անտառտնկարկների մաքրում: Մաքրման աշխատանքներն ընթանում են սկսած 2005թ.: ՇՄՆ հաշվարկների համաձայն 2021-2023թթ. ժամանակահատվածի համար պահանջվում է 706.0 մլն դրամ, որից 264 մլն դրամը՝ 2021թ.:
- Սևանա լճից մինչև 1901.5 մետր բացարձակ նիշում գտնվող շենքեր-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ: Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով

քանդման ենթակա են դարձել 68520 մ^2 ընդհանուր մակերեսով 1697 շենքեր և շինություններ: 2021 և 2022թթ. նախատեսվող աշխատանքների մոտավոր արժեքը կազմում է 1.464 մլն դրամ:

- Ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի նախագծային փաթեթների մշակման աշխատանքներ: Սա առնչվում է վերը նշված հին, շրջակա միջավայրն աղտոտող հանքարդյունաբերական և հարակից ոլորտների 44 տեղամասերին, որոնք ներառում են պոչամբարները: Վտանգավոր և առաջնահերթ համարվող 10 տեղամասերի ամբողջական մաքրման և ռեկուլտիվացիայի ծրագրի մոտավոր արժեքը գնահատվել է 2.216 մլն դրամ:

- Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ՝ անկախության ձեռքբերմանը հաջորդած ճգնաժամային տարիների ընթացքում անտառների մասշտաբային հատումների փոխհատուցմանն ու սողանքների ռիսկի կրճատմանն օժանդակելու նպատակով: Այս ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են դեռևս 2013թ., սակայն մասշտաբային բնույթ են ստացել 2020թ.՝ հաջորդող տարիների համար սահմանված հավակնոտ և աճող թիրախներով: 2021-2024թթ. ծրագրի համար հաշվարկվել է 3.368 մլն դրամ: Սահմանվել է վերջնական թիրախ՝ ՀՀ անտառածածկ տարածքը մինչև 2050թ. հասցնել ավելի քան 20 տոկոսի, (ենթադրելի է, որ անհրաժեշտ կլինի ներգրավել լրացուցիչ միջազգային ֆինանսավորում):

Այսպիսով, բնապահպանական վերականգման ծախսերի ընդհանուր գնահատված գումարը ներկայում կազմում է մոտ է 7.8 մլրդ դրամ, սակայն ծախսերը կարող են էականորեն ավելի բարձր լինել և կատարման համար երկար տարիներ պահանջել:

Ֆինանսական համակարգից առաջացող ֆիսկալ ռիսկեր

Վերջին տարիների ընթացքում, ՀՀ ԿԲ կողմից վերահսկվող առևտրային բանկերն զգալիորեն կապիտալացվել են և ներկայում ունեն հասանելի կապիտալի բուֆերներ: Ֆինանսական համակարգը բավականին ամուր է խիստ շոկերի դիմակայելու տեսանկյունից: ՀՀ տնտեսությունը 2020թ. կրել է միմյանց հաջորդած երկու շոկերի՝ համավարակի և ռազմական դրության ազդեցությունները: Վերջիններս մարտահրավերներ են ստեղծել նաև ֆինանսական համակարգի համար, որոնք էականորեն տարբերվում են նախորդ բոլոր ճգնաժամերի մարտահրավերներից:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության անհրաժեշտ մակարդակը տարվա ընթացքում պահպանվել է: Վարկավորման արձանագրված աճի և նյութականացված ռիսկերի կլանման պայմաններում կապիտալի համարժեքության ցուցանիշի նվազումը չափավոր է եղել:

Մակրոպրուդենցիալ քաղաքականության միջոցառումներն առավելապես ուղղված են եղել բանկային համակարգի՝ աճող ռիսկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը և ֆինանսական միջնորդության անընդհատության ապահովմանը: Տնտեսության վարկավորման անընդհատությունը և սահունությունն ապահովելու նպատակով ՀՀ ԿԲ ազդակներ է փոխանցել բանկերին ձևավորված կապիտալի բուֆերներն օգտագործելու հնարավորության վերաբերյալ: Միևնույն ժամանակ, կապիտալի հակացիկլիկ բուֆերի մակարդակը պահպանվել է անփոփոխ՝ 0% մակարդակում: Իրացվելիության պահանջարկի շոկերին դիմակայելու նպատակով ՀՀ ԿԲ-ն բանկերին տրամադրել է անհրաժեշտ դրամային և արտարժութային իրացվելիություն՝ իր գործիքակազմի միջոցով: Տարվա ընթացքում բոլոր բանկերը պահպանել են համախմբված

բուֆերի սահմանված մակարդակը՝ ռիսկերը կլանվել են պահանջվածից բարձր կապիտալի առկայության հաշվին:

2020թ. բանկային համակարգն աշխատել է շահույթով, այնուամենայնիվ ՀՀ ԿԲ գնահատականներով, դրսևորված ռիսկի հնարավոր հետևանքները մասնակի են կլանված: Հավանական է, որ ռիսկերի հետագա նյութականացումը կարտացոլվի նաև 2021թ. արդյունքներում:

Բանկերում խնդիրների ծագման հետևանքով Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին (երաշխավորում է մինչև 10 մլն ՀՀ դրամ՝ տեղական արժույթով ավանդների համար, և մինչև 5 մլն ՀՀ դրամ՝ արտարժութային ավանդների համար ֆինանսական միջոցների տրամադրման անհրաժեշտության ռիսկը ներկայում, թերևս, չափազանց սահմանափակ է, սակայն անորոշությունների մակարդակը մնում է բարձր՝ ինչպես նշվում է ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվությունում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերն՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և ըստ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների

Հավելված 2. Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հավելված 3. Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման

Հավելված 4. Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներն՝ ըստ առանձին տարրերի

Հավելված 5. Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների պետական բյուջեի ծախսային ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները

Հավելված 6. Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների ՄԺԾԾ առաջնահերթություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
հուլիսի 12-ի N 1171-Ն որոշման

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ 2022-2026ԹԹ. ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ և ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ 3
2. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 4
3. ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ 7
4. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 12

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ և ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների ծրագիրը մշակվել է ՀՀ հարկաբյուջետային կանոնների պահանջ ապահովելու և դրա իրականացմամբ ՀՀ-ում հարկաբյուջետային կայունությունը պահպանելու նպատակով:

Հարկաբյուջետային կանոնների գործող համակարգը ձևավորվել է 2017թ-ի դեկտեմբերի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և 2018թ. հունվարի 27-ից ուժի մեջ մտած «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների նախագծերով, և ամբողջականացվել 2018թ-ի օգոստոսի 23-ին՝ ՀՀ կառավարության N 942-Ն որոշմամբ:

Հարկաբյուջետային կանոններն իրենց արտացոլումն են գտել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.2, 8.3 և 8.4 մասերում, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում, ինչպես նաև կառավարության համապատասխան որոշման մեջ: Սույն ծրագրի ներկայացումը բխում է վերոնշյալ իրավական կարգավորումներից, մասնավորապես՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.4 մասի «բ» կետից և ՀՀ կառավարության 2018թ-ի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշումից:

Համակարգի հիմնական կանոններն են.

- Երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն պետական բյուջեի պակասուրդից:
- Կառավարության պարտք/ՀՆԱ 50-60% միջակայքում ընթացիկ առաջնային ծախսերի (ընթացիկ ծախսեր՝ առանց տոկոսավճարների) աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում Կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:
- Երբ Կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև Կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:

- Ներկայացված սահմանափակումները չեն գործում կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների առկայությամբ:

2. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

2000-2008 թվականների ընթացքում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը զգալիորեն նվազել է, իսկ 2009-2020 թվականներին աճի ընդհանուր միտում ունեցել՝ 2020թ.-ին գրանցելով կուտակային առավելագույն ցուցանիշը:

Գծապատկեր 1. ՀՀ կառավարության պարտքի դինամիկան 2000-2020թթ.[1]



Նախաճգնաժամային շրջանում տնտեսական բարձր աճի տեմպերի պայմաններում նվազման միտում դրսևորելուց հետո ՀՀ կառավարության պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ կտրուկ աճել է 2009 թ.-ին, երբ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի՝ ՀՀ մակրոտնտեսական զարգացումների վրա ունեցած բացասական ազդեցություններին հակազդելու համար ՀՀ կառավարությունը վարել է հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականություն և պետական պակասուրդի հաշվին մեծածավալ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներարկել տնտեսություն: Տնտեսության անկմանը հակազդելու համար կառավարությունն ընդլայնել է թե՛ ամբողջական պահանջարկը՝

[1] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն և վիճակագրական կոմիտե:

մեծացնելով պետական սպառման և ներդրումների կշիռը ՀՆԱ-ում և թե՛ ամբողջական առաջարկը՝ օժանդակելով տարբեր մակարդակներում գործարարությանը: Այս գործողությունների արդյունքում ՀՀ կառավարության պարտքը 2009թ-ին ավելացել է գրեթե 1.5 մլրդ ԱՄՆ դոլարով՝ հասնելով ՀՆԱ-ի 32.4%-ին 13.9% մակարդակից:

2014-2016թթ կառավարության պարտքի նշանակալի աճի հաջորդ ժամանակահատվածն է եղել, երբ պարտքը 3 տարվա ընթացքում աճել է ՀՆԱ-ի մեջ շուրջ 15.6 տոկոսային կետով՝ պայմանավորված տարածաշրջանային բացասական զարգացումների պայմաններում Հայաստանի տնտեսություն ներթափանցած շոկերին հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականությամբ արձագանքելու հանգամանքով:

2017-2019 թվականներին տնտեսական աճի վերականգնումը հնարավորություն է տվել ՀՀ կառավարությանը իրականացնել հարկաբյուջետային ճշգրտում: 2017թ.-ին պակասուրդի որոշակի նվազումը դանդաղեցրել է պարտք/ՀՆԱ ցուցանիշի աճը, իսկ 2018 և 2019 թվականներին պակասուրդի էական նվազման պայմաններում պարտք/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 3.6%-ային կետով՝ 2019 թվականի վերջին կազմելով 50.1% 2017թ.-ի 53.7% ցուցանիշի դիմաց:

ՀՀ կառավարության պարտքի գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ 2009թ.-ի տնտեսական ճգնաժամին հաջորդող ժամանակահատվածում, երբ պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը աճի միտում է ունեցել, աճի հիմնական գործոններն են եղել պետական բյուջեի առաջնային պակասուրդը, պետական բյուջեից զուտ վարկավորումը և դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը, իսկ ինչպես հետճգնաժամային, այնպես էլ դիտարկվող ամբողջ ժամանակահատվածի համար պարտքը նվազեցնող հիմնական գործոնը եղել է տնտեսական աճը:

Գծապատկեր 2. ՀՀ կառավարության պարտք առաջացնող գործոնների դինամիկան, % ՀՆԱ-ում[2]



2009թ. ճգնաժամին արձագանքման հետևանքով՝ պետական բյուջեի առաջնային պակասուրդի աճը ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ-ի աճի հիմնական գործոնն է եղել: Պարտքի աճին նպաստել են նաև տնտեսական խորը անկումը և փոխարժեքի արժեզրկումը:

2014թ-ին արտաքին ցնցումների ազդեցությամբ ՀՀ դրամը կտրուկ արժեզրկվել է, և չնայած դոլարային արտահայտությամբ կառավարության պարտքի նվազմանը, դրամային արտահայտությամբ պարտքն աճել է մոտ 15 տոկոսով, իսկ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 3 տոկոսային կետով՝ գրեթե ամբողջությամբ այդ գործոնով պայմանավորված:

2015-2016թթ. մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակով պետական բյուջեի առաջնային պակասուրդը զգալի ավելացվել է, ինչով բացատրվում է ՀՀ կառավարության պարտքի աճի հիմնական մասը: Իսկ 2016 թվականին, բացի առաջնային պակասուրդից, այդ տարվա ընթացքում պարտքի ավելացմանն էականորեն նպաստել է նաև իրական տոկոսադրույքի աճը, և կառավարության պարտքը հասել է ՀՆԱ-ի 51.9 տոկոսին:

2017թ.-ի առաջնային պակասուրդը պահպանվել է, սակայն վերջինին հակազդել է համեմատաբար բարձր տնտեսական աճը, ինչի շնորհիվ պարտքի աճի տեմպը դանդաղել է: 2018 և 2019 թվականներին կառավարությունը ապահովել է առաջնային հավելուրդներ, իսկ տնտեսական աճը շարունակել է հետճգնաժամային հատվածի միջինից բարձր մնալ: Արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը նվազել է գրեթե 4%-ային կետով:

[2] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներ:

2020 թվականին կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի շոկերի պայմաններում բյուջեի պակասուրդի ընդլայնումը, արձանագրված տնտեսական անկումը և ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը հանգեցրին պարտք/ՀՆԱ ցուցանիշի 13.4%-ային կետով ավելացմանը, ինչի արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 63.5%:

3. ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը գերազանցել է ՀՆԱ 60%-ը՝ կազմելով 63.5%: Հիմք ընդունելով ՀՀ հարկաբյուջետային կանոնների, որոնք ներկայացված են Բաժին 1-ում, սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ կառավարության պարտքը մինչև 2026թ. նվազեցնելով ՀՆԱ-ի 60%-ից: Հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ապահովմանն ուղղված հարկայուջետային շրջանակը, ներառյալ բյուջեի եկամուտների, ծախսերի և մյուս ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 1-ում: Ընդ որում, ծրագրի ցուցանիշներից 2021թ-ը ՀՀ ֆինանսների նախարարության սպասումներն են, 2022-2024թթ. ՄԺԾԾ հիմքում ընկած կանխատեսումներն են, իսկ 2025-2026թ. ցուցանիշները՝ ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսումները:

Մասնավորապես, Ծրագրով նախատեսվում է աստիճանաբար բարելավել եկամուտ-ներ/ՀՆԱ ցուցանիշը՝ հարկային եկամուտների միջոցով: Իսկ ծախսային մասում նախատեսվում է ՀՆԱ-ի մեջ աստիճանաբար ավելացնել երկարաժամկետ տնտեսական աճ ստեղծող կապիտալ ծախսերը և միաժամանակ նվազեցնել ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը:

Աղյուսակ 1. Ծրագրի կանխատեսումների համառոտագիր

ՀՆԱ-ի նկատմամբ %	**2021**	**2022**	**2023**	**2024**	**2025**	**2026**
Պետական բյուջեի եկամուտներ	**23.5**	**24.0**	**24.1**	**24.3**	**24.8**	**25.1**
Պետական բյուջեի ծախսեր	**28.1**	**26.5**	**26.1**	**26.2**	**26.7**	**27.0**
Ընթացիկ ծախսեր	25.3	22.7	22.4	22.2	21.8	21.4
Կապիտալ ծախսեր	2.9	3.9	3.8	4.0	5.0	5.7
Պետական բյուջեի պակասուրդ	**-4.6**	**-2.5**	**-2.1**	**-1.9**	**-1.9**	**-1.9**
Կառավարության պարտք	**62.3**	**60.5**	**58.7**	**56.8**	**55.2**	**53.8**

Կանխատեսումները և դրանց ճշգրտումները ինչպես 2019-2023թթ պարտքի նվազեցման ծրագրի, ինչպես նաև 2021թ-ի պետական բյուջեի նկատմամբ ներկայացված են

Ներգիր 1-ում: Մասնավորապես, համեմատությունը ցույց է տալիս, որ 2020թ.-ի ճգնաժամից հետո բյուջեի եկամուտների և կապիտալ ծախսերի կանխատեսումները վերանայվել են դեպի ներքև, իսկ ընթացիկ ծախսերի, բյուջեի պակասուրդի և կառավարության պարտքի կանխատեսումները՝ դեպի վեր:

Ներգիր 1

Հարկաբյուջետային կանխատեսումների համեմատական

Բյուջեի եկամուտներ		**2021**	**2022**	**2023**
ՄԺԾԾ 2020-2022 (2023թ.-ը՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ վերանայված ծրագիր)		24.4	24.7	25.0
Բյուջե 2021		23.6		
ՄԺԾԾ 2022-2024 (2025 և 2026թթ.՝ 2022-2026թթ. պարտքի նվազեցման ծրագիր)		23.5	24.0	24.1
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	ՄԺԾԾ 2020-2022-ից ՄԺԾԾ 2022-2024	-0.9	-0.7	-0.9
	Բյուջե 2021-ից ՄԺԾԾ 2022-2024	-0.1		

Ընթացիկ ծախսեր		**2021**	**2022**	**2023**
ՄԺԾԾ 2020-2022 (2023թ.-ը՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ վերանայված ծրագիր)		20.6	20.2	19.9
Բյուջե 2021		25.6		
ՄԺԾԾ 2022-2024 (2025 և 2026թթ.՝ 2022-2026թթ. պարտքի նվազեցման ծրագիր)		25.3	22.7	22.4
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	ՄԺԾԾ 2020-2022-ից ՄԺԾԾ 2022-2024	4.7	2.5	2.5
	Բյուջե 2021-ից ՄԺԾԾ 2022-2024	-0.3		

Կապիտալ ծախսեր	**2021**	**2022**	**2023**

ՄԺԾԾ 2020-2022 (2023թ.-ը՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ վերանայված ծրագիր)		6.0	6.7	7.4
Բյուջե 2021		3.4		
ՄԺԾԾ 2022-2024 (2025 և 2026թթ.՝ 2022-2026թթ. պարտքի նվազեցման ծրագիր)		2.9	3.9	3.8
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	ՄԺԾԾ 2020-2022-ից ՄԺԾԾ 2022-2024	-3.1	-2.8	-3.6
	Բյուջե 2021-ից ՄԺԾԾ 2022-2024	-0.5		

Պակասուրդ		**2021**	**2022**	**2023**
ՄԺԾԾ 2020-2022 (2023թ.-ը՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ վերանայված ծրագիր)		-2.2	-2.2	-2.2
Բյուջե 2021		-5.3		
ՄԺԾԾ 2022-2024 (2025 և 2026թթ.՝ 2022-2026թթ. պարտքի նվազեցման ծրագիր)		-4.6	-2.5	-2.1
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	ՄԺԾԾ 2020-2022-ից ՄԺԾԾ 2022-2024	-2.4	-0.3	0.1
	Բյուջե 2021-ից ՄԺԾԾ 2022-2024	0.7		

Կառավարության պարտք	**2021**	**2022**	**2023**
ՄԺԾԾ 2020-2022 (2023թ.-ը՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ վերանայված ծրագիր)	51.3	50.5	49.7
Բյուջե 2021	61.5		
ՄԺԾԾ 2022-2024 (2025 և 2026թթ.՝ 2022-2026թթ. պարտքի նվազեցման ծրագիր)	62.3	60.5	58.7

Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	ՄԺԾԾ 2020-2022-ից ՄԺԾԾ 2022-2024	11.0	10.0	9.0
	Բյուջե 2021-ից ՄԺԾԾ 2022-2024	0.8		

Չնայած այս ծրագիրը հենվում է մակրոտնտեսական կայունության համար կառավարելի ռիսկեր պարունակող 2022-2024թթ. ՄԺԾԾ կանխատեսումների վրա՝ կարևոր է նաև ներկայացնել, թե ՀՀ կառավարության պարտքի բեռը ինչպիսի հետագիծ կունենա ՀՀ կառավարության՝ միջնաժամկետում միջինում 7% տնտեսական աճի թիրախի և դրա ապահովմանն ուղղված մշակվելիք ծրագրերի և միջոցառումների իրագործման արդյունքում: Այսպես, թիրախային (2022-26 թթ. միջինում 7%) տնտեսական աճի սցենարի պայմաններում ՀՆԱ 60%-ի սահմանային շեմից կառավարության պարտքի նվազումը կրկին տեղի է ունենում 2023 թ.-ին, իսկ 2026 թ.-ին պարտքը հասնում է 52.1%-ի՝ Պարտքի բեռի նվազեցման 2022-26 թթ. ծրագրով նախանշված ցուցանիշից ցածր 1.7%-ային կետով: Սակայն Թիրախային տնտեսական աճի սցենարի պայմաններում պարտքի նվազեցումը տեղի է ունենում ավելի բարձր ընթացիկ և կապիտալ ծախսերի մակարդակների պայմաններում, ինչը հնարավորություն է տալիս հարկաբյուջետային կայունության ապահովմանը զուգահեռ առավել մեծ ռեսուրսների առկայություն պետության կարճաժամկետ և երկարաժամկետ հիմնախնդիրների լուծման տեսակետից[3]:

Ծրագրի ռիսկերը

Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի ամենահավանական հետագիծը և կանխատեսումների շուրջ անորոշությունը պատկերավոր ներկայացնելու համար կառուցվել է կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկ (fan chart): Գրաֆիկը կառուցվել է ՀՀ կառավարության պարտքի վրա ազդեցություն ունեցող համապատասխան մակրոտնտեսական փոփոխականների (բյուջեի առաջնային պակասուրդ, տնտեսական աճ, պարտքի իրական տոկոսադրույք, իրական փոխարժեք) վրա ցուցանիշների պատմական էվոլյուցիայից պրոյեկտված շոկերի սիմուլյացիաներով, և ցույց է տալիս կանխատեսվող ժամանակահատվածում պարտք/ՀՆԱ հարաբերակցության որոշակի միջակայքերում գտնվելու հավանականությունները: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի հավանական հետագծերը կառուցվել են՝ հաշվի առնելով նշված փոփոխականների պատմական ժամանակային շարքերի վիճակագրական հատկությունները

[3] Թիրախային տնտեսական աճի մակրոտնտեսական սցենարի նկարագրությանը, դրա ապահովման պայմաններին և հարկաբյուջետային սցենարին կարելի է ծանոթանալ 2022-2024 թթ. ՄԺԾԾ փաստաթղթի «1.3.1. Թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենար» ենթաբաժնում:

և փոխադարձ կապերը, ինչպես նաև վերջիններիս կանխատեսումները[4]:

Ստորև պատկերված հավանականությունների բաշխման գրաֆիկը ցույց է տալիս Ծրագրի վերանայված սցենարի՝ մինչև 2026թ-ը Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազեցման ռիսկերը:

Գծապատկեր 3. ՀՀ կառավարության պարտքի կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկը (Fan Chart)[5]



Համաձայն իրականացված սիմուլյացիաների, 10%-ից 90% հավանականային միջակայքում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2026թ-ին կգտնվի 40%-ից 70% միջակայքում, իսկ 25%-ից 75% հավանականային միջակայքում՝ 46%-ից 61%: Գրեթե 70% հավանականությամբ ՀՀ կառավարության պարտքը 2026թ-ին չի գերազանցի ՀՆԱ 60%-ը:

Հավանականությունների բաշխմանը կարելի է ծանոթանալ նաև ներքոհիշյալ աղյուսակում:

Աղյուսակ 2. Կառավարության պարտք/ՀՆԱ հետագծի հավանականային բաշխումը

Հավանականային միջակայքը	Տրված հավանականային միջակայքում կառավարության պարտք/ՀՆԱ առավելագույն մակարդակը					
	2021	**2022**	**2023**	**2024**	**2025**	**2026**

[4] Գրաֆիկը կառուցման մեթոդաբանության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս ԱՄՀ կողմից հրապարակված «Staff Guidance Note For Public Debt Sustainability Analysis In Market-Access Countries» (2013) փաստաթղթում, հետևյալ հղմամբ՝ https://www.imf.org/external/np/pp/eng/2013/050913.pdf:

[5] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներ:

Մինչև 10%	56%	51%	48%	45%	43%	40%
10%-25%	59%	55%	53%	50%	48%	46%
25%-50%	62%	61%	59%	57%	55%	54%
50%-75%	65%	64%	64%	63%	61%	61%
75%-90%	70%	71%	72%	71%	71%	70%

Ծրագրի ռիսկերի ուսումնասիրությունը կառավարության պարտքը ձևավորող գործոնների պատմական միտումների հիման վրա ցույց տվեց, որ ծրագրված սցենարը ռիսկեր է պարունակում պարտքի թիրախային ցուցանիշի ապահովման տեսանկյունից: Այդ ռիսկերը նվազեցնելու համար ՀՀ կառավարությունը ներկայացնում է կանխատեսվող ժամանակահատվածի համար ծրագրված միջոցառումները, որոնք վերաբերում են պետական բյուջեի եկամուտների ձևավորմանը, ծախսերի իրականացմանը և պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը: Ներկայացվող միջոցառումները միտված են մի կողմից կանխատեսվող հորիզոնում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի թիրախային ցուցանիշի ապահովմանը, մյուս կողմից՝ երկարաժամկետ տնտեսական աճին և հարկաբյուջետային կայունության ամրապնդմանը՝ ապահովելու պարտքի կայունությունը երակարաժամկետ հատվածում:

4. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի հիմքում ընկած կանխատեսումների սցենարին համահունչ ստորև ներկայացվում են Ծրագրի հիմնական միջոցառումների ուղղությունները:

4.1. Պետական բյուջեի եկամուտներ

ՀՀ կառավարությունը կառավարության պարտքի բեռի նվազեցման Ծրագրի իրագործման նպատակով ծրագրում է իրականացնել պետական բյուջեի եկամուտների քաղաքականության միջոցառումներ, որոնք ներառում են հարկային օրենսդրությունը և հարկային վարչարարությունը: Հարկային օրենսդրության միջոցառումները ներառում են եկամտային հարկի դրույքաչափի աստիճանական նվազում՝ տարեկան 1.0 տոկոսային կետով մինչև 2023 թվականը, ինչպես նաև ակցիզային հարկերի բեռի բարձրացումը: Առաջին միջոցառման (նախկինում շահութահարկի դրույքաչափի նվազեցման հետ միասին) նպատակը արտահանելի հատվածի և երկարաժամկետ տնտեսական աճի խթանումն է, իսկ երկրորդինը՝ տնտեսության վրա նվազագույն խեղաթյուրող ազդեցություններով լրացուցիչ հարկային եկամուտների գեներացումը, որոնք հեռանկարում թույլ կտան նվազեցնել պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը: Հարկային օրենսդրության միջոցառումների զուտ ազդեցությունը հարկային եկամուտների վրա դրական է գնահատվում 2022 թվականին և բացասական՝ 2023 թվականին: Վերջինս փոխհատուցվում է հարկային վարչարարության

միջոցառումների իրականացմամբ: Ավելին՝ ծրագրված հարկային վարչարարության միջոցառումները թույլ կտան միաժամանակ արձանագրել հարկերի և տուրքերի շարունակական բարելավում ՀՆԱ նկատմամբ՝ հնարավորություն տալով պարտքի երկարաժամկետ կայունությանը նպաստելուն զուգահեռ սահմանված ժամանակահատվածում հասնել կառավարության պարտք/ՀՆԱ թիրախային ցուցանիշին:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտների գծով իրականացվող միջոցառումներն ըստ ուղղությունների

	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը ավելացում, %-ային կետ
Բյուջեի եկամուտների ավելացում, %-ային կետ ՀՆԱ-ում	0.52	0.04	0.25	0.51	0.30	1.62
Հարկերի և տուրքերի ավելացում, %-ային կետ ՀՆԱ-ում	0.51	0.23	0.46	0.30	0.30	1.80
Հարկային օրենսդրություն, %-ային կետ ՀՆԱ-ում	0.11	(0.20)	-	-	-	(0.09)
Հարկային վարչարարություն, %-ային կետ ՀՆԱ-ում	0.40	0.43	0.46	0.30	0.30	1.89

4.2. Պետական բյուջեի ծախսեր

ՀՀ կառավարությունը պարտքի բեռի նվազեցման ծրագրի իրականացման համար ծրագրում է 2022-2026թթ նվազեցնել պետական բյուջեի ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում՝ գումարային առումով 1.1 տոկոսի չափով: Ծախսերի նվազեցումը նախատեսվում է իրականացնել հարկաբյուջետային կանոններին համահունչ ընթացիկ ծախսերի գծով նվազեցման միջոցով, որոնց կշիռը ՀՆԱ-ում կնվազի շուրջ 3.9 տոկոսային կետով մինչև 2026 թվականը: Միաժամանակ, նախատեսվում է ընթացիկ ծախսերի կշռի նվազեցմանը զուգահեռ մեծացնել տնտեսության երկարաժամկետ աճին նպաստող կապիտալ ծախսերի կշիռը՝ մինչև 2026 թվականը հասցնելով դրանք ՀՆԱ-ի 5.7%-ին (ընդհանուր առմամբ բարձրացնելով ՀՆԱ-ի 2.8 տոկոսային կետի չափով 2021թ.-ի համեմատ), ինչը հնարավորություն կտա տնտեսական աճի արագացման շնորհիվ նվազեցնել կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը:

Աղյուսակ 3. Ընթացիկ և կապիտալ ծախսերի ծրագրված ուղղությունները

	2022	2023	2024	2025	2026	Ընդհանուր նվազեցում, %-ային կետ ՀՆԱ-ում
Պետական բյուջեի ծախսերի կրճատում, %-ային կետ ՀՆԱ-ում	1.6	0.4	0.0	-0.6	-0.3	**1.1**
ընթացիկ ծախսերի գծով	2.6	0.3	0.2	0.4	0.4	**3.9**
կապիտալ ծախսերի գծով	-1.0	0.1	-0.2	-1.0	-0.7	**-2.8**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագերն՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և ըստ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների

Ծրագրային դասիչը		Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների, ծրագրերի և միջոցառումների անվանումները	2022 թ.	2023 թ.	2024 թ.
		ԸՆԴԱՄԵՆԸ	2,000,911,191.7	###########	###########
		Հանրապետության նախագահի աշխատակազմ	**1,592,457.2**	**1,599,475.7**	**1,606,564.6**
1154		*Ծրագրի անվանումը՝*	1,592,457.2	1,599,475.7	1,606,564.6
		Հանրապետության նախագահի լիազորությունների իրականացման			
		Ծրագրի նպատակը՝			
		Աջակցել Հանրապետության նախագահի լիազորությունների իրականացման ապահովմանը			
		Վերջնական արդյունքի նկարագրությունը՝			
		ՀՀ նախագահի Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների իրականացման ապահովումը			
		ՀՀ Ազգային ժողով	**5,579,916.5**	**5,619,431.9**	**5,659,342.6**
1024		*Ծրագրի անվանումը՝*	5,579,916.5	5,619,431.9	5,659,342.6
		ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում			
		Ծրագրի նպատակը՝			
		Օրենսդրական դաշտի ձևավորում և կատարելագործում			
		Վերջնական արդյունքի նկարագրությունը՝			
		Արդյունավետ օրենսդրական դաշտի ապահովում			
		ՀՀ վարչապետի աշխատակազմ	**20,038,737.5**	**19,988,888.1**	**13,993,738.2**
1018		*Ծրագրի անվանումը՝*	1,871,631.0	2,687,999.5	-
		Պետական հատվածի արդիականացման ծրագիր			
		Ծրագրի նպատակը՝			
		Հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների			
		Վերջնական արդյունքի նկարագրությունը՝			
		Հանրային ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգերի բարելավում, ծառայությունների մատուցման էլեկտրոնային կառավարման լուծումների իրագործում, հանրային հատվածի արդիականացման և			
1033		*Ծրագրի անվանումը՝*	195,538.6	190,971.6	196,723.6
		Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և առհիմություններին			
		Ծրագրի նպատակը՝			
		Քաղաքացիական հասարակության զարգացում			
		Վերջնական արդյունքի նկարագրությունը՝			
		Քաղաքացիական հասարակության կառույցների և նրանց կարողությունների զարգացում, տնտեսական և քաղաքական կյանքում ՔՀԿ-ների			
1091		*Ծրագրի անվանումը՝*	837,168.2	860,527.2	886,222.2
		Հանրային իրազեկում			
		Ծրագրի նպատակը՝			
		Հանրային կապերի, պետական մարմինների թափանցիկության, տեղեկատվության մատչելիության ապահովում			
		Վերջնական արդյունքի նկարագրությունը՝			
		Հանրության իրազեկվածության մակարդակի բարելավում, ՀՀ համար կարևոր նշանակություն ունեցող հիմնադրություններ ներգրավում			
